Տ. Առշակ եպս. Խաչատրյան

ՈՐՈՆՈՒՄՆԵՐ...

Ս. Էջմիածին

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԻԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՄԱՆԱՒ

ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹԻՒՆ

Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ Բ

ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԵՒ ՎԵՀԱՓԱՌ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԱՐՇԱԿ ԵՊՍ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՐՈՆՈՒՄՆԵՐ

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
Ս. Էջմիածին - 2019

ՀՏԴ 27
ԳՄԴ 86.37
Ա 921

Տպագրվում է երաշխավորությամբ
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
Հրատարակչական խորհրդի

Խմբագիր՝ Տ. Արարատ քահանա Պողոսյան

ԱՐՇԱԿ ԵՊՍ. ԽԱՉԱՏՐՅԱՆ
Ա 921 Որոնումներ/ Արշակ եպս. Խաչատրյան; Խմբ.՝ Տ. Արարատ քահանա Պողոսյան.- Էջմիածին: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատարակչություն, 2019.– 200+4 ներդիր էջ:

Քարոզների հետ այստեղ ի մի են բերված տարբեր տարիներին քրիստոնեական հավատի ամենատարբեր հարցերի, ազգային-եկեղեցական իրադարձությունների, տոների մասին հեղինակի մտորումները:

Նախատեսված է ընթերցողների լայն շրջանակի համար:

ՀՏԴ 27
ԳՄԴ 86.37

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է ՄԵԿԵՆԱՍՈՒԹՅԱՄԲ
«ՍԱՐԳԻՍ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

ISBN 978-9939-59-239-8 © Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2019

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Կյանքի ողջ ընթացքին մարդն իր աշխարհընկալման ու աշխարհայացքի սահմաններում ձգտում է գտնել ու զանազանել կարևորն ու անկարևորը, օգտակարն ու անօգտակարը, բարին ու չարը՝ փորձելով հասկանալ նաև իր տեղն ու առաքելությունը արարչագործության մեջ: Ինքնության փնտրտուքի այս ընթացքը քրիստոնյայի համար կոչվում է աստվածճանաչողության ճանապարհ, որի վերջնական նպատակը Տիրոջ կենարար կամքն ընդունելն է և նրանով ապրելն ու արարելը երկրի վրա ու երկնքում:

«Որոնումներ» գրքում ամփոփված են Մայր Աթոռի դիվանապետ Գերաշնորհ Տ. Արշակ Եպիսկոպոս Խաչատրյանի քարոզները՝ խոսված 1998-2019 թթ., որոնցում մեկնվում են սուրբգրային հատվածներ կամ եկեղեցական սրբազան ավանդության դրվագներ՝ նրանց լույսի ներքո քննության առնելով մեր ներկա կյանքի իրողությունները՝ բազմաթիվ նուրբ ու խրթին հարցեր, որոնք պարբերաբար ծնվում են մարդկային մտքում:

Քարոզների պատգամներն ու լուսավոր խորհուրդները, վստահ ենք, պիտի ջերմացնեն ընթերցողների հոգիները, լցնեն լուսավոր գաղափարներով և օգնեն՝ հավատքը, հույսն ու սերը դարձնելու կյանքի ընթացք, ինչպես առաքյալն է պատգամում. *«Հաստատուն կացէք ի հաւատս, ժրացարուք, կօրացարուք: Ամենայն ինչ ձեր սիրով լիցի»* (Ա Կորնթ. ԺԶ 3):

Արարատ քհն. Պողոսյան

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Հրատարակչական բաժնի
և «Վաչե և Թամար Մանուկյան» Մատենադարանի տնօրեն



ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Որոնումներ... Ինչո՞ւ որոնումներ:

«Որոնումներ» վերնագրեցի այս գիրքը, որովհետև նրանում ամփոփված մտորումներն ու խորհրդածությունները արդյունք են փնտրտուքների, ներքին ոգորումների, որոնումներ՝ կյանքի նպատակը գտնելու հույսով: Նարեկացու բնորոշմամբ.

«Զգում եմ իմ մեջ էությունս հուլող շարժումներ ներհակ
Ու խուռն ամբոխվող խռովություններ:
Եվ չար ու բարի խորհուրդներ կինված սուր ու սուսերով՝
Բախվում են ընդդեմ իրարու դարձյալ,
Ինձ մահվան գերի դարձնելով համակ,
Ինչպես երբեմն, երբ դեռ չէր հասել քո շնորհը ինձ:

(Մատեան ողբերգութեան, Բան Ա):

«Ո՞րն է մարդկային կյանքի նպատակը». այս է հարցերի հարցը, որ երբեմն շրջանցում ենք ներքին վախի ազդեցության ներքո, իսկ երբեմն էլ՝ սխալ պատասխաններ գտնում: Մինչդեռ՝ եթե չկա կյանքի իրական նպատակ, ուրեմն չկա և ինքը՝ կյանքը:

Իհարկե, հնարավոր է կյանքի նպատակը ժամանակավորապես տեղավորել սոցիալական դիրքի, աշխատանքային առաջընթացի, հանրային ճանաչվածության և կամ նյութական բարեկեցության համակարգի մեջ: Սակայն հստակ է, որ սրանցից և ո՛չ մեկը, այլև նյութական ու զգացական աշխարհի և ո՛չ մի արժեք չի կարող դառնալ մարդկային կյանքի իրական նպատակ, թեկուզ և պարզ պատճառով, որ այն բացարձակապես ի զորու չի լինելու հանգստություն ու խաղաղություն բերել մարդկային հոգուն: Այսրաշխարհային, այսպես կոչված, «նպատակները» ընդամենը առկայծող ու փոշիացող մխիթարություններ են դառնում իրական կատարելագործման ու փրկության ձգտող մարդկային հոգիների համար: Մոտալուտ մահվան ամեն մի շունչ ուղղակի անխուսափելի է դարձնում կյանքի իրական նպատակի մասին ուղիղ ու համապարփակ պատասխան գտնելու անհրաժեշտությունը:

Հավատքը բանալին է այդ պատասխանի: Հավատք՝ ուղղված Աստծու գոյությանը և մանավանդ այն ճշմարտությանը, որ Աստված ամեն վայրկյան մասնակից է մեր կյանքին: Սակայն հավատքն առանց հավիտենական կյանքի, առանց հոգու փրկության գաղափարի ընդունման՝ անէանում է: Փրկության հասնելու հույսը՝ մնայուն ու չհնացող կյանքի ձգտումն է միայն, որ իմաստ ու բովանդակություն է հաղորդում մարդկային կյանքին: «Հարություն», «դատաստան», «հատուցում», «փրկություն» բառերը վերացական ու ոչ շոշափելի հասկացություններ չեն, այլ՝ կենտրոնական ու իրական գաղափարներ քրիստոնեական մտածողության մեջ: Այս իսկ պատճառով սույն գրքում շատ կհանդիպեք այս բառերին:

Իմ որոնումները խարսխված են այն հաստատ հավատքի վրա, որ մարդու կյանքի տևողությունը ավելին է, քան նրա երկրավոր կյանքի տարիները, այն ձգվում է մահվանից անդին, և մարդն ի զորու է Աստծու ողորմածությամբ դառնալ անմահ:

«Աստվածներ եք դուք...» (Սաղ. 82:6), - խոսքն ուղղելով մարդկանց՝ ասում է սաղմոսերգուն: Քրիստոնեության ամբողջ հմայքն ու էությունն այն է, որ սահմանափակ ու անզոր մարդու առջև անսահմանափակ ու ամենազոր դառնալու ճանապարհն է բացում՝ բացահայտելով Աստծու անսահման սերն ու հավատարմությունը մարդկանց նկատմամբ: Եվ մարդը միայն Աստծու նկատմամբ իր հավատարմությամբ կարող է դառնալ «աստված»:

Սիրելի՛ ընթերցող,

«Որոնումներ» վերնագրված այս գրքում զետեղված են տարբեր տարիներին Հայաստանյայց Եկեղեցու խորաններից խոսված քարոզներ, այլև՝ տարբեր արարողությունների առիթով մտորումներ ու խորհրդածություններ:

Մեր երախտագիտությունն ենք հայտնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ գրքի հրատարակությանն իր հայրական օրհնությունը բերելու համար:

Շնորհակալություն ենք ցանկանում հայտնել նաև մեր սիրելի եղբայրներին՝ Արժ. Տ. Գաբրիել քահանա Վարդանյանին և Արժ. Տ. Արարատ քահանա Պողոսյանին՝ գիրքը խմբագրելու և հրատարակության պատրաստելու համար:

ՈՐՈՆՈՒՄՆԵՐ



ՃՇՄԱՐԻՏ ՃԱՆԱՊԱՐՀ ԱՌ ԱՍՏՎԱԾ

(ԱՆԴՐԱՆԻԿ ՔԱՐՈԶ)

Մայր Աթոռ Սբ. Էջմիածին
25 հունվարի, 1998 թ.

«...Մեղքն ձեր որոշեն ի մէջ ձեր և ի մէջ Աստուծոյ...
Չիք ոք որ խօսի զարդարութիւն, ...յուսացեալ են ի
սնոտիս և խօսին զունայնութիւն...»:
(Եսայի ԾԹ 2, 4)

Սիրելի՛ հավատացյալ քույրեր և եղբայրներ,

Եսայի մարգարեն հայտարարում է, թե Աստծու ժողովրդի և Աստծու՝ Արարչի և արարածի միջև գոյություն ունեցած կապի խաթարման միակ մեղավորը մարդն է: Իսրայելի ժողովրդի ուսերին է ծանրացած պատասխանատվությունն այն մղձավանջային իրականության, որի պատճառը անհնազանդությունը, ինքնահաճությունն ու կամակորությունն են:

– Ինչպե՞ս պոռնկացավ հավատարիմ քաղաք Սիոնը, ինչպե՞ս անձնական ձգտումների, երկրավոր ու անցողիկ հրապույրներին հետամուտ լինելով՝ խոտորվեց Աստծու ժողովուրդը, – շվարած ու վշտացած աղաղակում է կայծակնաշուրթ մարգարեն:

Մարգարեի խորը տառապանքի պատճառն այն է, որ Աստծու ժողովուրդը հակվել է մեղքին, ապաբարոյական մղումները թափանցել են բոլոր հարաբերությունների մեջ: Վաճառականները խաբեությամբ են զբաղվում, իշխաններն ու մեծատունները գողությամբ ու կաշառակերությամբ են պարարտանում. միով բանիվ՝ ոչ ոք չկա, որ արդարություն խոսի: Ամենքը հույսները դրել են սնոտիների վրա և ունայնախոս դարձել:

Սիրելի՛ հավատացյալներ, քույրեր ու եղբայրներ ի Քրիստոս, ձեզնից ո՞ւմ մեջ այնպիսի տպավորություն ստեղծվեց, որ Եսայի մարգարեի՝ Աստծու մաքրամաքուր խոսնակի զայրույթն ու վիշտը միայն այն ժամանակվա համար էր, ո՞վ կպնդի, որ մարգարեի շանթող խոսքերը, որոնք բարոյական ու հոգևոր ուշիմության հիմն են հնչեցնում մեր ականջներին, այսօրվա համար չեն ասված նաև:

Փոխենք անուններն ու անվանումները և կտեսնենք, որ մեր առջև կանգնած է այսօրվա մարդկությանը՝ մեղադրանքը շուրթերին դիմող Աստվածային մի պատգամախոս, որ շարունակ կրկնում է.

– Ո՛վ մարդ, ո՛վ ժողովուրդ, Արարչիդ հետ կտրված կապիդ միակ պատասխանատուն դու ես: Մեղքերի բազմահրապույր քամիներին տուրք տալդ է քեզ զրկում Աստծու հաճությունից:

Եվ հիրավի, այսօր քանի՛-քանի՛ ազնիվ հոգիներ եթե գտնվեին՝ մարգարեներ կդառնային՝ ի տես այն չարաշահումների, ի տես այն անարդարությունների, որոնք տեղ են գտել մեր իրականությունում:

Մի՞թե այսօր մենք բարոյապես ավելի բարվոք վիճակում ենք, քան սրանից 2700 տարի առաջ մի ժողովուրդ, որին Եսային մեղադրում էր: Մի՞թե այդ մեղադրականին մենք կարող ենք այսօր ուշադրություն չդարձնել և ընդամենը պատմական մի եղելություն նկատել:

– Մենք ո՛ւր, հրեաներն ո՛ւր, մեր ժողովուրդն ուրիշ է, լավն է, – կմտածեն ազգային սնապարծության կրողները:

Ժողովուրդները, ազգերը տարբեր են միմյանցից, տարբեր են լեզվով, մշակույթով, կենսաբանական առանձնահատկություններով, սակայն բոլորը մի են մեղքի հանդեպ հակվածությամբ:

Մենք ևս ընկել ենք մեղքի ճիրանների մեջ, հույսներս դրել ենք սնոտի բաների վրա և դարձել ունայնախոս: Մեզ-

նից ամեն մեկն իր համար առատ խորհրդածության նյութ է գտնում՝ սեփական ապագան լուսավոր ու նյութական փառահեղ պայմաններում ուրվագծելու մեջ: Ողորմելի ու չնչին մահկանացուներ լինելով՝ մեզանից շատերը մեզ կառքով երկինք սլացող արքայազներ ենք կարծում: Ի՞նչ է մեր այսօրվա կյանքը: Նյութապաշտության մի մրցավազք: Ամեն մեկը ձգտում է դրամի, հարստության, ունեցվածքի, բարեկեցության...

«Ուր գանձք ձեր են, անդ և սիրտք ձեր եղիցին» (Մատթ. Զ 21),-ասում է Փրկիչը: Այն պահից սկսած, երբ մենք կամովին մեր ինքնակառավարման ղեկը կհանձնենք դրամի, հարստության ու բարեկեցության մեր մեջ եղած մոլուցքին, հենց այդ պահից ինքներս էլ կդառնանք մեր բարոյական ուշիմության գերեզմանափորը:

Այն օրվանից, երբ մենք մեր հոգու ու մտքի առագաստները լայնորեն կբացենք նյութապաշտության մրրիկների առաջ, այդ օրվանից իսկ հույսներս դրած կլինենք մի սին ու սնամեջ իրականության վրա:

Մենք կդառնանք ունայնախոս և արդեն իսկ ե՛նք, որովհետև մեր՝ իմ, քո և բոլորիս ամենօրյա խոսակցություններից հաճոյասիրություն, փափկասիրություն ու ցուցամոլություն է բուրում: Մեր ժողովրդի ամենակենսունակ տարրի՝ երիտասարդության շրթներից հազիվ թե ունկնդրին հաջողվի լսել մի նախադասություն, մի պարբերություն, ուր չշոշափվեն հաճույքը փառաբանող թեմաներ, ուր ամեն րոպե չխնկարկվի դրամի ու իշխանության «ամենակարող» ուժը:

Այո՛, կարելի է և այսպես ապրել: Բայց մի պահ անդրադառնանք, միայն մի րոպե հույսներս կտրենք սնոտիներից, դադարենք ունայնախոսությամբ զբաղվելուց և հարցնենք ինքներս մեզ.

– Ո՞ւր ենք գնում, ո՞րն է իմաստը մեր կյանքի:

Իրապես, ո՞րն է մեր կյանքի իմաստը: Արդյո՞ք մենք ծնվել ենք, որ զուտ քարշ տանք մեր այսրաշխարհային գոյությունը, աշխարհ ենք եկել միայն, որ, անցնելով հաճույքի պարտեզի միջով, քայլենք ու մեկ առ մեկ ըմբոշխնենք վայելքի վարդերի անուշ բուրմո՞ւնքը: Այո՛, կարելի է այսպե՛ս էլ ապրել և ո՛չ միայն կարելի է, եթե այդպես ապրածներից ու ապրողներից որևէ մեկը հավաստի այդպիսի կյանքի ճշմարտացիությունը: Բայց ասա՛ ինձ, դո՛ւ, դո՛ւ, որ ճաշակել ես այդ բարիքները, ինքդ քեզ լիովին բավարարված զգացե՞լ ես: Թող Սողոմոն Իմաստունն ասի, նա, ով մահկանացուների մեջ ամենից շատն է ճաշակել հաճույքի խաբուսիկ վայելքը: Բայց տեսե՛ք, տեսե՛ք, նա ինչ է ասում. «Ունայնութիւն ունայնութեանց, ամենայն ինչ ընդունայն է» (Ժող. Ա 2), ամեն ինչ «ի ձեռանէ Աստուծոյ է» (Ժող. Բ 24): Ամեն ինչի նախասկիզբը Աստված է, և Նրանից պետք է օրհնություն հայցենք և իբրև այդ օրհնության արդյունք ու շնորհ՝ վայելենք այն բարիքները, որոնք Աստվածաստեղծ են:

Այս իսկ պատճառով, ինչպես ասում է Աստվածորդին. «Աստծու արքայությունն ու արդարությունը նախ փնտրեցեք, և ամեն ինչ ձեզ ավելիով կտրվի» (Ղուկ. ԺԲ 31): Ամեն օր, երբ ծագում է արեգակը, երբ մենք աչքներս բացում ենք լույսին ու տեսնում աշխարհը, Աստծու շնո՛րհն է մեզ տրված, և այդ շնորհը մեզ տրվում է ո՛չ թե նրա համար, որ մենք հույսեր կապենք այլ և այլ սնոտի բաների հետ, ունայնախոսությամբ լցնենք մեր ժամանակը, տրվում է ո՛չ նրա համար, որ մեր նյութական բարիքները կրկնապատկելու մոլուցքով տառապենք ու ամենօրյա ցոփությամբ ընկղմվենք հաճոյապաշտական ցեխի մեջ, այլ Աստված մեզ ժամանակ ու հնարավորություն է տալիս՝ անդրադառնալու և մեր խոտոր ընթացքից տրամագծորեն շրջվելու համար: Բազմիցս մենք վճռել ու երդվել ենք, որ պետք է վերածնվենք ու վերանորոգվենք, բայց նույնքան անգամ էլ, մոռացության մատնելով մեր սկզբունքն

ու վճիռը, մի բարոյական ապտակ հասցնելով ինքներս մեզ, նորից դարձել ենք միևնույն սխալներին, միևնույն մեղքին, ինչպես շունն է դառնում իր փսխածին: Մեզնից յուրաքանչյուրը, սիրելի՛ հավատացյալներ, կյանքում ունի իր կրելիք խաչը, ամեն մեկիս սրբազան պարտականությունն է հսկել սեփական բարոյական կերպարը, յուրաքանչյուրիս պարտքն է հսկել իր հոգու աչքերը, որպեսզի նրանց պարզությունից հոգին լուսավոր լինի: Մենք պարտավորություն ունենք ինքներս մեր և Աստծու առջև ուշիմություն հանդես բերելու և Աստծուն մերձենալու մեր վճիռները չլուծանելու ու չմոռանալու՝ կրկին տեղքայլ չկատարելու համար: Սա բարդ առաքելություն է: Համակ մաքառում ու ջանք է պահանջում հոգևոր առաջընթացը: Պայքարել ու պայքարել է պետք՝ բարոյական արիության և ուշիմության հասնելու համար, որպեսզի վերանա այն պատնեշը, որը գոյացել է մեր և Աստծու միջև, որպեսզի կամրջվի այն անջրպետը, որը բաժանում է արարածին իր Արարչից: Ահա այս սրբազան առաքելության շավիղներում իր ծառայության առանձնակի ու կարևոր նշանակությունն ունի հոգևորականը: Այսպիսի մի ծառայության կոչվեցին սրանից 40 օրեր առաջ, անցյալ տարվա դեկտեմբերի 14-ին, մեր սրբություն սրբոց Տաճարի Խորանի վրա ծնրադրած ու կուսակրոն քահանայի օծում ու ձեռնադրություն ստացած երեք ճեմարանավարտ սարկավագներ. մեկը՝ խոսքերիս նվաստ հեղինակը, երկրորդը՝ Տ. Խորեն աբեղան և երրորդը՝ Տ. Արշեն աբեղան:

Սիրելի՛ք ի Քրիստոս, աղոթեցե՛ք մեզ համար, որ մենք արժանի լինենք սպասավորելու մի Եկեղեցու, արժանի լինենք մեր անարժան գլուխները դնելու մի զոհասեղանի վրա, որը սրբագործվել է մեր լուսապսակյալ նահատակ նախահարց արյունով ու քրտինքով: Անսահման մեծ է մեզ վրա դրված պատասխանատվությունը, անչափելի է արժեքը քահանայական աստիճանի, որ կոչված է լինելու ամրության հսկիչն այն

կամրջի, որ տանում է դեպի Աստված՝ հաղթահարելով մեղաց անջրպետը:

Այսպիսի «ահաւոր ու փառաւորեալ պաշտօն»-ի մերձենալու և արժանանալու համար երախտագիտության զգացումներս եմ հայտնում Ամենայն Հայոց Հայրապետ Գարեգին Ա Կաթողիկոսին՝ հավաստիացումով, որ գլխիս հետ Հայ Եկեղեցու զոհասեղանին եմ թողնում նաև նվիրումս ու համոզմունքս, սերս ու հավատքս:

Խորապես զգացված ու շնորհակալական ապրումներով լեցուն է սիրտս առ այն սիրահոժար քայլը, որով մեզ ընդառաջեցին մեր Եկեղեցու երկու բարձրաստիճան հոգևորականներ Տ. Զավեն արքեպս. Զինչինյանը և Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը՝ դառնալով մեր հոգևոր ծնողները:

Զեմ կարող ջերմ ու սիրալիր խոսքեր չհղել միաբանակից եղբայրներիս, որոնց ջերմագին գգվանքների ներքո աճեցինք Մայր Եկեղեցու անդաստանում:

Շնորհակալություններս ձեզ, սիրելի՛ հավատացյալներ: Ձեր աղոթքներում հիշեցե՛ք նաև ինձ, որպեսզի, լինելով մեր Եկեղեցու նվաստ սպասավորն ու զինվորը, մի օր արժանի լինեմ իրականացնելու Տերունի այն պատգամը, թե «Հովիւ քաջ զանձն իւր դնէ ի վերայ ոչխարաց» (Հովհ. Ժ 11). ամեն:

ՀՐԱՎԷՐ ՓՐԿՈՒԹՅԱՆ

Մայր Աթոռ Սբ. Էջմիածին
26 հուլիսի, 1998 թ.

«Եկն Որդի Մարդոյ կեցուցանել զկորուսեալսն»
(Մատթ. ԺԸ 12)

Ահա երկու հազար տարիներ մեղավոր մարդկության ականջներին հնչում են այս խոսքերը, հնչում են, սակայն, չգիտես ինչո՞ւ, ամեն մեկն իրեն չվերաբերող և սոսկ Քրիստոսի գալստյան բուն պատճառը ներկայացնող մի արտահայտություն է տեսնում այս կապակցության մեջ: Մարդիկ շարունակում են ընթանալ իրենց նախկին շավիղներով. առևտրականն իր գեղծարարությունից չի հրաժարվում, բարձրաստիճան պաշտոնյան՝ իր ամբարտավանությունից, պաշտոնամոլը՝ քծնանքից:

Այո՛, սիրելի՛ հավատացյալներ, ոչ մեկի համար գաղտնիք չէ, և դա գիտեն նույնիսկ նրանք, ովքեր Ավետարանը ձեռքներն իսկ չեն առել, որ Քրիստոս եկավ մեղավոր մարդկությանը փրկելու: Քրիստոսի առաքելության նպատակը մարդկանց վերափոխությունն է: Սա էր պատճառը, որ Աստծու Որդին Իր ուշադրության կենտրոնում էր պահում հատկապես նրանց, ովքեր մեղավորներ ու մերժվածներ էին համարվում իրենց միջավայրի կողմից: Աստծու Որդու այս մոտեցումը բուռն ընդդիմություն էր առաջ բերում ժամանակաշրջանի աստիճանավորների մեջ:

- Ահա՛, տեսե՛ք, այս նազովրեցին ուտում է, խմում, հարաբերություններ հաստատում մաքսավորների հետ,-դժգոհում էին փարիսեցիները և այդ հանգամանքն իրենց կովան

դարձնում Քրիստոսի՝ կեղծ մարգարե լինելը փաստելու համար: Սակայն Քրիստոս անհողդողդ է:

- Մարդու որդին եկավ մեղավորների և ոչ թե արդարների համար, քանզի առողջները բժշկի կարիք չունեն, այլ՝ մեղավորները, - ասում է Փրկիչը:

Այո՛, Աստված եկավ փրկելու կորուսյալներին, սակայն այդ կորուսյալները ոչ թե երկուսն էին, երեքը, այլ՝ ողջ մարդկությունը: Մարդը մեղավոր է այն չափով, ինչ չափով որ կատարյալ չէ: Ամեն մարդ մեղավոր է, քանզի ամեն մեկն էլ իր չափով հեռու է կատարելությունից. «Ո՛չ գոյ մարդ որ ոչ մեղանչէ» (Բ Մնաց. Զ 36):

Քրիստոս եկել էր բոլորի համար, սակայն Աստվածային Խոսքը լսելու շնորհն ստացան նրանք, ովքեր սեփական թերություններն ու թուլությունները պախարակված տեսնելու քաջությունն ունեցան: Մինչդեռ մյուս անձանց համար, ովքեր արդարության կարծեցյալ պատմուճանով սիգաճեմ քայլում էին մարդաշատ փողոցներով ու հրապարակներով, Քրիստոսի աշխարհ գալուստը, առաքելության սկիզբը ոչ այլ ինչ էր, եթե ոչ մի արհամարհելի նազովրեցու արկածախնդրություն, մի հյուսնի որդու շրջագայություն:

Այդպես էին մտածում շատ-շատերը՝ փարիսեցիներ, սադուկեցիներ, անտարբերներ ու անտարբերության համակիրներ: Եվ մենք, ամեն անգամ ընթերցելով ու ականջալուր լինելով, թե ինչպես էր անտեսվում Քրիստոսի գալուստը, թե ինչպես մարդիկ արևի առջև պատուհան էին փակում և թե ինչպես հարվածում էին Քրիստոսին, փորձում սև բծեր գտնել արևի մեջ, որ եկել էր իրենց ջերմացնելու, և Կենդանարար ջրում, որ կամենում էր իրենց հագեցնել, պղտորության հետքեր որոնել, ատամներ ենք կրճտացնում, բռունցքներս ենք հավաքում, իբրև թե վրդովվում ու խռովվում ենք, սակայն չենք դադարում լինելուց, ինչ որ էինք:

Այո՛, սիրելի՛ հավատացյալներ, «ի կարգս քրիստոնէութեան կոչեցալք և գործովք անարժան գտաք»: Մենք պատրաստ ենք ցեխ ու քար նետելու կորուսյալների ու մեղավորների վրա: Մենք երդվում ու ջղագրգիռ շարժումների հավաստումներով խոստանում ենք ավելի լավը լինել ու ավելի սրբագրել ինքներս մեզ, սակայն, ավա՜ղ: Խորապես անդրադառնալուց հետո տեսնում ենք, որ այն, ինչ լավ էր մեր մեջ, անցյալում է մնացել, իսկ ապագան մշուշոտ է այն չափով, որքանով մեր միտքն ու հոգին է այդպիսին, խավար, որքանով վստահությունը բացակա է առ Աստված: Եվ սա շարունակական ընթացք է, որով և բնորոշվում է մեղավորի ու կորուսյալի վարքը: Երբ մեղքը նկատում ենք մեզնից դուրս, երբ մարդկանց սրտերը անհյուրընկալ ենք գտնում Քրիստոսի առջև, խորապես զղջում ու բարկանում ենք, սակայն ինչպիսի՞ն ենք մենք: Երկու հազար տարի առաջ է եկել Քրիստոս, սակայն կորուսյալները չեն դադարում գոյատևել: Միլիոնավոր անգամներ հնչել է մարդկանց ունկերին, թե ինչու է եկել Քրիստոս, բայց մեղավոր մարդիկս մեր տեղից չենք շարժվում՝ միամտաբար կարծելով ու մտածելով, թե մարդ է, եկե՛լ-գնացե՛լ է:

Սակայն վա՜յ մեզ առավել, քան Սոդոմի ու Գոմորի բնակիչներին, քանզի այդ «ձեռնտու», անձի մարմնական փափկությունը սնուցող «միամտությունը» հանդերձյալ կյանքում մեզ մահ է արժենալու: Այս աշխարհում, եթե իսկ անմահություն գտնելու և կամ ձեռք բերելու հնարավորություն ստանանք, միևնույն է, քայլող դիակի, զարդարուն, պճնազարդած գերեզմանից ավելին չենք լինելու: Չենք լինելու, քանզի ոչինչ չարժե կյանքը նրա, ով կյանքի ուսուցչի՝ Քրիստոսի փրկության կոչն անտեսում է:

Մեր կողքին կան մարդիկ, ովքեր պատրաստ են գլխապատառ ու խելակորույս օդանավակայան շտապելու՝ դիմավորելու համար քիչ թե շատ ազդեցիկ եկվորին: Կան նաև

ուրիշներ, ովքեր համակ անհամբերությամբ պատրաստվում են դիմավորել բարձրաստիճան մարդու: Նրանք ամենուր աղաղակում են, թե ազնիվ են, ամենուր տարփողում են իրենց արժանապատվության մասին, գոռում-գոչում են, թե դրամը ձեռքի կեղտ է, բայց ճակատի պսակ են դարձնում և կքանստած ու կորաքամակ դիմավորում ամեն մի խաբեբայի, ում գալուստը նույնիսկ փոքր չափով կբարձրացնի իրենց աստիճանը և կամ կհաստացնի քսակը: Սակայն մի օր, մի՛ օր երբ վերջապես կհասնի ժամանակը հասկանալու, որ չարյաց գործերի հատուցումը անխուսափելի է, մենք խորապես կզղջանք, որ ավելի վաղ հասու չենք եղել, թե միմիայն Աստծուց պետք է երկյուղ ունենանք, միմիայն Աստծուն ձգտենք հաճելի լինել և միմիայն անհամբեր լինենք Աստծուն դիմավորելիս:

Սիրելի՛ հավատացյալներ, սիրելի՛ քրիստոնյա եղբայրներ և քույրեր, այլևս բավ է, հինավուրց քրիստոնյա մի ժողովրդի զավակ լինելով, լոկ տեսականորեն ըմբռնենք Քրիստոսի՝ առ մեղավորները կատարած քայլը, այլևս բավ է Քրիստոսի կոչն անպատասխան մնա և «Եկայք առ իս, ամենայն վաստակեալք և բեռնաւորք և ես հանգուցից զձեզ» (Մատթ. ԺԱ 28) հիասքանչ հրավերն անտեսվի: Բոլո՛ր հրավերները, բոլո՛ր կոչերը կարելի է անտեսել և առ ոչինչ համարել, բայց միայն՝ ո՛չ այդ: Անարժեք ու փուչ են բոլոր գալուստները և բոլոր առաքելությունները՝ հանդեպ Աստվածորդու առաքելության: Նա միայն կարող է մեզ փրկել, ուստի մեզնից յուրաքանչյուրի մշտական պատգամը թող լինի՝ ուղղված հենց իրեն. «Միայն Աստուծոյ հնազանդ լեր, անձն իմ, զի ի նմանէ է ինձ փրկութիւն» (Սղմ. ԿԱ 2):

ՔՐԻՍՏՈՍԻ ԾՆՈՒՆԴԸ

(ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՇՐԱԳԱԼՈՒՅՑԻ ԱՌԻԹՈՎ)

Մայր Աթոռ Սբ. Էջմիածին
5 հունվարի, 2002 թ.

Սիրելի՛ հավատացյալներ,

Այսօր Աստծու կողմից ստեղծված սովորական օրերից մեկն է, օր, որը, սակայն, իր շքեղության մեջ և, ինչպես ամենքդ տեսնում եք, իր հատկական լուսավորությամբ, իր պայծառությամբ, տարբերվում է մյուս բոլոր օրերից: Սակայն այս շքեղության հետ այն ունի նաև մի ներքին խորը խորհուրդ:

Այսօր Ծնունդ է, և այն մեզ մղում է խորհրդածության՝ գնահատելու դրա արժեքը, խորհրդածելու դրա՝ մարդկային քաղաքակրթության վրա ունեցած ազդեցության մասին: Արդարև, մարդու ծնունդը չափազանց նման է մի լեռան. որքան հեռանում ես այդ լեռից, այնքան այն ավելի փոքրանում է, ստվերվում և աղոտանում, և սա օրինաչափություն է. որքան մեզ ժամանակը ավելի ու ավելի շատ է բաժանում կյանքից հեռացած մարդուց, այնքան նրա կերպարն ավելի մշուշվում է, ավելի փոքրանում:

Սակայն կա մի Ծնունդ, որին նույնիսկ ժամանակն ու հեռավորությունն ի զորու չեն փոքրացնել, որովհետև այն նման է ոչ թե լեռան, այլ՝ հորիզոնի, որին որքան մոտենում ես, այնքան այն հեռանում է, և որքան հեռանում ես, այնքան այն մոտենում է՝ մնալով նույնը, նույն անպարագրելին, մեծը, հսկան և որևէ բանից չստվերվողը: Եվ այս մեծությունը

բնորոշ է այն ծնունդին, որի նախատոնակը այսօր մենք կատարում ենք՝ Քրիստոսի Ծնունդին:

Բազում խոսքեր են ասվել և բազում ուսումնասիրություններ գրվել այս Ծնունդի և այս Կյանքի մասին: Բայցևայնպես, երբևէ չի սպառվել Նրա կյանքի պատմությունը: Նրա մասին մարգարեն արտահայտվում էր որպես Հավիտենական Թագավորի, որպես Խաղաղության Իշխանի, և ամբողջ մի ժողովուրդ դարեդար սպասում էր Նրան, լցվել էր սպասումով և ակնկալությամբ՝ իր Մեսիային, իր Փրկչին դիմավորելու: Եվ սակայն, հակառակ այդ սպասումի, որ գալու է մարմնավոր մի իշխան, որ գալու է մարմնավոր մի ազատիչ, այդ Փրկիչը, Նա, որի Ծնունդը տոնախմբում ենք մենք այսօր, անակնկալորեն և բոլորի համար անսպասելի ծնվեց որպես անպաշտպան թվացող մի երեխա՝ խեղճ և աշխարհից մոռացված ու լքված հյուղակում, որը հովիվների համար կացարան էր ծառայում: Եվ բացի մի քանի խոնարհ հոգիներից, որոնք ունեին սրտի սրբություն Նրան ճանաչելու, ո՛չ ոք, ո՛չ ոք չկարողացավ ճանաչել Նրան: Եվ բացի նրանցից, ովքեր այդ սրտի սրբությամբ եկել էին Իրեն երկրպագելու, ոչ ոք ծունր չկրկնեց Նրա առջև:

Այսօր Քրիստոսի ճակատը պատած փշե պսակի տեղ ծաղկել են վարդեր, որոնք, ինչպես տեսնում եք, զարդարում են ամեն մի եկեղեցու սուրբ խորանը: Հասկանալու համար այն ազդեցությունը, որ գործեց Հիսուսի ծնունդը, այդ Մանկան ծնունդը ամբողջ աշխարհի, ամբողջ քաղաքակրթության վրա, բավական է հպանցիկ հայացք նետել, հայացքով ընդգրկել մեր անցած ուղին և մարդկության պատմությունը: Արդյոք արվեստներն ու գիտությունը և, ընդհանրապես, մարդկային քաղաքակրթությունը պիտի լինե՞ն, եթե չծնվեր այդ Փոքրիկը, այդ Մանուկը, որ իր կյանքի պատմությամբ հեղաշրջում առաջ բերեց մարդկային կյանքում:

Եթե չլիներ Քրիստոսի ծնունդը և եթե չլիներ Իր կյանքը սեփական ժողովրդին սեփական լեզվով թարգմանելու անհրաժեշտությունը, արդյո՞ք հայ ժողովուրդը և մի շարք այլ ժողովուրդներ կունենային իրենց դպրությունը, գիրը և գրականությունը:

Նրա ծնունդը դարձավ ներշնչման աղբյուր, և ստեղծվեցին գլուխգործոցներ, որոնցում պատկերված է Սուրբ Ծննդյան գեղեցիկ, խոնարհ և ճոխության մեջ չփայլող, բայց իր ներքին խորհրդով, ներքին պարունակությամբ ամենքին ցնցող Աստվածահայտնություն պատկերող տեսարանը: Բայց ամենից նշանակալից ներդրումը, ամենից նշանակալից հեղաշրջումը կատարվեց մարդկության բարոյական կյանքում:

Բարոյականություն, որն այդ շրջանին, ինչպես չափազանց շատ է ասվել, չափազանց շատ է կրկնվել, ծանր վիճակի ու կացության մեջ էր: Եվ եթե դարեր առաջ, Քրիստոսի ծննդից առաջ տղամարդու և կնոջ միջև տարբերությունը հսկայական էր, այսօր արդեն նրանց հնարավորություն է ընձեռնվել որպես ազատ անձ, որպես Աստծու պատկեր՝ հավասար դիրքեր ունենալու հասարակության մեջ:

Առաջ է եկել քրիստոնեական եղբայրասիրությունը և ամրապնդվել, ամուր հիմքերի վրա է դրվել սույն օրինակով մարդասիրությունը, որ Քրիստոս տածեց մարդու նկատմամբ: Քրիստոսի ծնունդով մարդկությունը պարգև ստացավ արդարության կշեռքը:

Քրիստոս եկավ և ծնվեց, որպեսզի հաստատի, որ արդարությունը ոչ թե գրքերում է միայն պարփակված, այլ՝ յուրաքանչյուրի մեջ, յուրաքանչյուր քրիստոնյայի հոգում: Եվ ինքը, Եսայի մարգարեի բնորոշմամբ, որպես Արդարության Արեգակ մշտապես ջերմացնելու է բոլոր քրիստոնյանների հոգիները, ովքեր իրապես ձգտում ունեն արդարության հասնելու:

Արդարությունը հեռու չէ, յոթ սարից այն կողմ չէ, արդարությունը մեզանից յուրաքանչյուրին մոտ է այնքան, որքան մեզանից յուրաքանչյուրը մոտ է Քրիստոսին, և որքան ինքն է ձգտում արդարության:

Եվ այսօր, սիրելի՛ հավատացյալներ, Քրիստոսի Ծննդյան տոնը արդարության ծննդյան և արդարության փառաբանության օրն է:

Ես այս զգացումով, սիրելի՛ հավատացյալներ, մաղթում եմ, որպեսզի Տիրոջ Սուրբ Ծնունդը արդարության որոնման նոր մղիչ ուժ, նոր խթան դառնա ամենքիս համար մեր կյանքի բոլոր ընթացքներում: Հայցում եմ Երկնային Փրկչի առատ օրհնություններն ամենքիս և բերկրանքով, հոգու բերկրանքով վերստին ավետիսը տալիս Սուրբ Ծննդյան.

Քրիստոս ծնավ և հայտնեցավ. ձեզ, մեզ և ամենեքյան մեծ ավետիս:

ՓՐԿՈՒԹՅԱՆ ՍՊԱՍՈՒՄՈՎ
(ՏՅԱՌՆԸՆԴԱՌԱՋԻ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ)

Մայր Աթոռ Սբ. Էջմիածին
14 փետրվարի, 2002 թ.

«Լոյս ի յայտնութիւն հեթանոսաց,
և փառս ժողովրդեան քում՝ Իսրայելի»:
(Ղուկ. Բ 32)

Ինչպես մատնանշում է Տոնացույցը, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին այսօր տոնախմբում է քառասնօրյա Տիրոջ՝ Տաճար գալստյան տոնը: Ղուկաս ավետարանիչը հանգամանալից ներկայացնում է Քրիստոսի կյանքի այն դրվագը, որը հետագայում ներառվեց մեր եկեղեցական ծիսաարարողական կյանքից ներս՝ ստանալով «Տօն քառասնօրեայ գալստեանն Քրիստոսի ի Տաճարն» անվանումը և կամ, ինչպես ժողովուրդն է ասում, Տրնդեզ: Այս տոնի շեշտադրումը Տիրոջն ընդառաջ գնալու պատմական իրադարձության վրա է:

Հրեական ավանդույթի համաձայն՝ յուրաքանչյուր արու զավակ ունեցող զույգ պարտավոր էր մանկան ծնվելուց ութ օր հետո կատարել թլփատությունը, որից հետո՝ քառասունքը լրանալուն պես, տանել Տաճար՝ կատարելու ընծայման արարողությունը, քանի որ ավանդույթի համաձայն՝ տակավին հրեաների՝ Եգիպտոսում գտնվելու շրջանում յուրաքանչյուր արու զավակ ընծայվելու էր Տիրոջ պաշտամունքին: Հետագայում, երբ Աստծու տան մեջ սպասավորություն մատուցելու համար ընտրվեց Իսրայելի տասներկու ցեղերից մեկը՝ Ղևիի ցեղը, մյուս տասնմեկ ցեղերի անդրանիկներն

ազատ կացուցվեցին Տիրոջ պաշտանմունքին նվիրվելուց, որի համար նրանք արդեն պետք է փրկագին վճարեին իրենց անդրանիկների համար: Այս ավանդույթին հետևելով՝ նաև Հիսուս իր ծնողների կողմից տարվեց Տաճար՝ ընծայումը և մաքրության արարողությունը կատարելու, քանի որ մայրը՝ ծննդաբերած մայրը, Տաճարում պետք է անցներ նաև մաքրագործման արարողությունը, մաքրագործման ծեսը:

Երբ Հովսեփն ու Մարիամն իրենց զավակի հետ մուտք գործեցին Տաճար, այնտեղ նրանց դիմավորեցին Սիմեոն ծերունին և Աննա մարգարեուհին:

Այստեղ Սիմեոն մարգարեն արտասանում է իր հայտնի խոսքերը. «Արդ, արձակիր ինձ, ով Տեր, որովհետև իմ աչքերը տեսան այն փրկությունը, որ Դու նախապատրաստում ես Քո ժողովրդի համար»: Նույն հոգևոր բերկրանքով է դիմավորում Տիրոջը՝ Փրկչին, նաև Աննա մարգարեուհին, և Փրկչի ծնողները, ինչպես ներկայացնում է Ավետարանիչը, զարմացած էին, թե ինչպիսի խոսքերով են դիմում իրենց զավակին, որովհետև տակավին նրանց համար էլ հասանելի չէր իրենց զավակի ով լինելը:

Այս պատումն է կազմում հիմքը Տյառնընդառաջի տոնի, որի շուրջ հյուսվել են գեղեցիկ ժողովրդական ավանդություններ ու ավանդույթներ: Այստեղ, ավետարանական սույն դրվագի մեջ, Տիրոջն ընդառաջ ելնելու այս պատկերի մեջ հատկապես հատկանշական են երկու պարագաներ:

Առաջինը, որ նրանք սպասումով էին լցված Քրիստոսի գալստյան նկատմամբ, սպասում, որը ես ուզում եմ կոչել «սրբազան սպասում», որովհետև նրանք չէին սպասում որևէ այլ բանի, քան միայն Քրիստոսի գալստյան: Երկրորդը, որ ուզում եմ ընդգծել, նրանց լավատեսությունն էր, վստահությունը և փրկությանը հասնելու վճռակամությունը:

Սիրելի՛ հավատացյալներ, ընդհանրապես մարդկությունը սպասումի մեջ է, յուրաքանչյուր անձ սպասում է: Հրեաները սպասում էին Մեսիայի գալստյանը, ով իրենց պի-

տի փրկեր, ով իրենց պիտի շնորհեր համաշխարհային տիրապետություն: Ընչազուրկը սպասում է ավելի բարօր մի կյանք ժառանգելու, իրավազրկվածը սպասում է՝ երբ պիտի վերականգնվեն իր իրավունքները, և բոլոր նրանք, ովքեր վշտացած են, սպասում են, թե երբ պիտի սփոփվեն, և այդ սպասումներով համակված ենք նաև ինքներս: Նարեկացու բնորոշմամբ, երբ հեծյալ ենք տեսնում, սպասում ենք, թե հենց մեզ լուր պիտի տա, և այդ սպասումը մեզանից յուրաքանչյուրի մեջ առկա է նաև այսօր:

Մենք, վերջապես, սպասում ենք, թե երբ պիտի տասնամյա կյանք ունեցող երիտասարդ մեր պետությունը վերջապես դուրս գա խանձարուրից և մեզ առաջնորդի դեպի ավելի լուսավոր մի ապագա, և այդ սպասումը մեր մեջ ծնունդ է առել դարերի հոլովույթից, և մենք այդ ձայնը բարձրացնում ենք՝ նաև մեր հայրերի սրտի միջից քաղելով:

Տակավին 16-17-րդ դարերում մեր պատմիչներից մեկը, լավ կյանք ժառանգելու սպասումով, ասում է. «Ամբողջ աշխարհը խաղաղության մեջ է գտնվում, և արդ, մենք արյան ծովի և սովի մեջ կոտորվում ենք», և սա ոչ այլ ինչ է, եթե ոչ՝ նույն սպասումի, լավ ու բարօր մի կյանք ժառանգելու ակնկալություն և սպասում:

Երկրորդ պարագան, որ ընդգծեցի Սիմեոն ծերունու և Աննա մարգարեուհու կերպարի մեջ, նրանց՝ փրկությանը հասնելու ճիգն էր, վճռականությունը: Ինչպես Ավետարանում է ասվում Երկնքի Արքայության մասին. «Բռունք յափշտակեն զնա» (Մատթ. ԺԱ 12):

Այո՛, այն անձերն են հասնում Երկնքի Արքայության, ովքեր համառություն են դրսևորում այդ փրկությանը հասնելու, որովհետև Սիմեոն ծերունին և Աննան կանգ չառան՝ սպասելով, թե երբ պիտի փրկությունը գա: Նրանք ընդառաջ գնացին այդ փրկությանը: Եվ նրանք, ովքեր ունեն այդ վստահությունը, ունեն այդ վճռականությունը, հոսան-

քին անգամ հակառակ ընթանալով, նրանք պիտի հասնեն փրկության:

Այսօր, այս դժվարությունների մեջ, մեր ժողովրդի համար սպասումներով, բարի սպասումներով լեցուն այս ժամանակաշրջանում մեզանից յուրաքանչյուրին անհրաժեշտ է փրկությանը հասնելու այդ վճռականությունը, որովհետև փրկությունը մեզանից յոթ սարեր այն կողմ չէ, փրկությունը մեր մեջ է և պարզապես պետք է, որ մենք ձեռքներս մեկնենք դեպի փրկությունը, քանզի Փրկչի ձեռքը մշտապես մեկնված է դեպի մեզ, և այդ փրկությանն ընդառաջ գնալու պատրաստակամության մեջ մեզանից ամեն մեկը, որպես Եկեղեցու հավատավոր ու բարեպաշտ անդամ, պիտի Սիմեոն ծերունու նման բաց ճակատով կանգնի հրաշակերտ այս կոթողներից մեկի և բացականչի. «Լույս ի հայտնություն հեթանոսաց և ի փառս տանն Հայաստանյան, ի սփյուռս աշխարհի սփռված հայության, այժմ և հավիտյանս, ամեն»:

ՏԻՐԱՄՈՐ ԺԱՌԱՆԳՈՐԴՆԵՐ
(ԱՎԵՏՄԱՆ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ)

Մայր Աթոռ Սբ. Էջմիածին
7 ապրիլի, 2002 թ.

Սիրելի՛ հավատացյալներ, այսօր եկեղեցական մեր Տոնացույցով Նոր կիրակին է, քանզի Քրիստոսի Հրաշափառ Հարությունից՝ Սուրբ Զատկից հետո առաջին կիրակին է: Միաժամանակ գեղեցիկ զուգադիպությամբ այս օրը համընկել է նաև Ս. Աստվածածնի Ավետման տոնին, որը մշտապես կայուն կերպով մեր Եկեղեցում տոնակատարվում է ապրիլի 7-ին: Շատ գեղեցիկ, շատ խորհրդանշական զուգադիպություն է, որ Տիրոջ Հրաշափառ Հարության հաջորդ իսկ կիրակին վերստին մեր եկեղեցական կյանքից ներս նշանավորվելու է Տիրամոր բարեխոսության հայցումով՝ մեր քույրերի, մեր մայրերի և բոլոր կանանց համար:

«Ուրախ լեր, բերկրեալդ»:

Ահա այս խոսքերը հնչեցին Ամենասրբուհի Կույսի ունկերին հրեշտակի կողմից, երբ նա տակավին դեռատի աղջնակ էր և Նախախնամության կամքով կոչվեց լինելու մարդկության Փրկչի՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի մայրը:

Բազում անձանց, որոնց լիարժեք երջանկության համար կարծեք թե ոչինչ չի պակասել, բախտ չի վիճակվել լսելու այս խոսքերը, թե «ուրախ լեր», Տերը քեզ հետ է: Շատ ունկեր այրվել են այն սպասումով, որ Տիրոջից լսեն այն հավաստումը, թե Աստված իր զորակցությունը, իր հովանավորությունը պարգևում է իրենց: Շատեր նաև լսել են այս խոսքերը, սակայն չեն կարողացել արժևորել, չեն գիտակցել այն

ուժը, այն բարյացակամությունը, այն վերաբերմունքը, այն գնահատանքը, որ պարունակում են այդ խոսքերն Աստծու կողմից՝ հանդեպ իրենց անձերը: Եվ այդ խոսքերը հնչեցին Մարիամ Աստվածամոր ունկերին և բնական է, որ տասնհինգամյա դեռատի մի կույս պետք է շփոթվեր, երբ հրեշտակը հայտնվեց իրեն՝ ասելով, թե դու պիտի հղիանաս և ծնես մի որդի, ով «Աստծու Որդի» պիտի կոչվի:

Ինչպես նշում է Ավետարանիչը, այս խոսքերից ունեցած առաջին զգացումը խռովության, շփոթմունքի մատնեց Մարիամին, թե՝ ինչպես ես, տակավին որևէ այր չտեսած, պիտի հղիանամ և որդի ծնեմ: Այնուհետև, երբ հրեշտակապետը մեկնում է իր խոսքերը՝ ասելով, թե Սուրբ Հոգին պիտի այցելի քեզ, և նա, ով պիտի ծնվի քեզնից, «Աստծու Որդի» պիտի կոչվի, Մարիամն այլևս չի ընդդիմանում, բայց միայն խոնարհությամբ ու հնազանդությամբ ասում է. «Ահավասի՛կ ես մնում եմ Տիրոջ աղախինը, թող քո խոսքի համաձայն լինի ինձ» (Ղուկ Ա 38): Ճիշտ այն բառերը, որ ընդգրկված են Տերունական աղոթքի մեջ. «Եղիցի կամք քո»՝ թող քո կամքը լինի: Լիարժեք վստահություն, լիարժեք հանձնառություն, լիարժեք հնազանդություն Աստծու կամքի նկատմամբ:

Սիրելի՛ հավատացյալներ, դարեր շարունակ՝ շուրջ ահա երկու հազար տարիներ, քրիստոնյա ողջ աշխարհը Մարիամ Աստվածածնին համարում է մայրության, կանացիության խորհրդանիշ: Տիրամորը նվիրված գրականության և արվեստի բոլոր ստեղծագործությունները կոչված են արտացոլելու կանացիությունը, նրբությունը, քնքշությունը, հնազանդությունը և այն ամենը, ինչ բնորոշ է կնոջը, այն ամենը, ինչ բնորոշ է մորը, այն ամենը, ինչ բնորոշ է քրոջը: Եվ ահա այսօր կոչված ենք վերստին մեր խոնարհումը բերելու այդ կանացիությանը, մայրությանը, մեր հարգանքը մատուցելու, մեր աղոթքը բարձրացնելու առ Աստված, որպեսզի

մեր հոգիներում մշտապես զորանա հարգանքը մայրության նկատմամբ:

Տարբեր ժամանակներում մայրության և կանանց հանդեպ տարբեր է եղել վերաբերմունքը, տարբեր են եղել կարծիքները, տարբեր են եղել հասարակության մեջ նրանց զբաղեցրած դերի վերաբերյալ եղած տեսակետները: Մեկը կանանց վերապահել է միայն որդեծնության դերը, որպեսզի իր բանակին զինվորներ մատակարարեն, մեկ ուրիշը կանանց վերապահել է խոհանոցը: Սակայն մեր հայրենական ավանդույթի մեջ կանանց կարևորագույն և գլխավորագույն պարտականությունը սեպվել է օջախի պահպանությունը, կրակի պահպանությունը, տան պահպանությունը, այսինքն՝ կնոջ առաքելությունը ընտանիքի սյուն լինելն է:

Շատ հետաքրքիր էր, սիրելի՛ հավատացյալներ, երբ երեկ, ապրիլի 7-ի՝ կանանց տոնի առիթով, մի հայ կին հեռուստացույցով ելույթ ունենալիս նշում էր, որ անհրաժեշտ է՝ այն ամենը, ինչ վերապահված է այսօր հայրենական կյանքում մեր կանանց, համալրվի նաև մեկ ուրիշ գործառույթով՝ կինը դառնա ոչ միայն ընտանիքի մայր, ոչ միայն լինի խոհանոցում, ոչ միայն ծառայություն մատուցի իր զավակներին, այլև լինի եռանդուն հասարակական-քաղաքական գործիչ:

Անշուշտ, Եկեղեցին չի արգելում, այլ, ընդհակառակը, խրախուսում է կանանց ներգրավվածությունը հասարակական կյանքի ամենատարբեր ոլորտների մեջ: Բայց մեր Եկեղեցին խրախուսում է, քաջալերում է, որ կանայք կոչված լինեն իրենց հիմնական սուրբ առաքելության իրականացմանը, այն է՝ ընտանիքի անաղարտության, սրբության երաշխավորի առաքելության կատարմանը:

Ահա այս մտածումներն են, որ այսօր ուզում էի փոխանցել ձեզ, սիրելի՛ հավատացյալներ՝ վստահ լինելով, որ ամեն մեկս քաջ գիտակցում ենք մայրերի, քույրերի, կանանց բարձր դերակատարությունը մեր կյանքից ներս: Քանի՞-քա-

նիսն են հերոսացել՝ ի սեր կանանց, ի սեր մայրերի: Աղոթում եմ առ Աստված, որպեսզի այդ սերը զորանալով՝ նորանոր արդյունքներ բերի, նորանոր նվաճումներ արձանագրի մեր կյանքից ներս, քանզի յուրաքանչյուր ազգ, ինչպես մի մեծ գրող է ասել, զորավոր է այն չափով, որ չափով զորավոր են և իրենց ընտանիքի պահպանության մեջ նախանձախնդիր այն կանայք, ովքեր սնուցում են այդ ազգի զավակներին:

Այս մտածումներով և այս զգացումով մաղթում եմ և հայցում Սուրբ Հոգու առատաբաշխ շնորհներն ամենքիս, այժմ և հավիտյանս հավիտենից. ամեն:

ԸՆՄԱՅ «ՏԵՍԻԼՔ»

Մայր Աթոռ Սբ. Էջմիածին
22 սեպտեմբերի, 2002 թ.

«Եւ եղիցի յաւուր յայնմիկ, հանգուսցէ զքեզ Տէր ի ցաւոց և ի սրտմտութենէ քումմէ» (Եսայի ԺԴ 3)

Քիչ առաջ այս Սրբազան կամարների ներքո, սուրբգրային ընթերցվածների ժամանակ, ընթերցվեց Եսայու մարգարեության ԺԴ գլխի 3-17-րդ համարներում ամփոփված հատվածը, որի մեջ ընդգրկված են նաև այս խոսքերը:

Իրապես, հրեա ժողովուրդը դառն ճակատագրով մի ժամանակաշրջան ապրեց, որի ընթացքին գերեվարվեց նաև Բաբելոնյան պետության կողմից, որը գտնվում էր Միջագետքում՝ այժմյան Իրաքի տարածքում, և հզոր մի տերություն էր դարձել՝ շնորհիվ իր կատարած ռազմական հաջող արշավանքների: Եվ ահա այդ պետությունը Ք. ա. 490-489 թթ. հարձակվեց նաև Իսրայելի վրա: Հրեաները գերեվարվեցին Բաբելոն:

Այդ գերեվարությունը տևեց շուրջ 40 տարի, երբ ի վերջո, Ք. ա. 448 թ. Իսրայելի ժողովուրդն ազատագրվեց իր բազմամյա գերությունից: Եվ Եսայի մարգարեի խոսքերը գալիս են սփոփելու, մխիթարելու հրեա ժողովրդին, թե հեռու չէ այն օրը, երբ Աստծո ժողովուրդը պիտի ազատագրվի այդ գերությունից և պիտի հանգստանա իր կրած բազում զրկանքներից, տառապանքներից և ցավերից: Այս խոսքերը, այս ներշնչումը, ինչպես որ արձանագրված է Սուրբ Գրքի մեջ, Եսայի մարգարեն ստացավ տեսիլքի միջոցով:

Տիրոջ գաղտնի խորհուրդներն ու խորհրդածությունները մշտապես իր ընտրյալներին ընծայվում, բացահայտվում են այդպիսի տեսիլքների միջոցով, և եթե Աստվածաշունչը

կարելի է այլ խոսքերով ևս բնորոշել, ապա՝ այն «Պատմութիւն Տեսլեաց»՝ Տեսիլքների Պատմություն է, որում Աստված մշտապես հայտնվում էր Իր ընտրյալ ժողովրդին, Իր ընտրյալ զավակներին՝ առաջնորդելու Իր հոտը դեպի փրկություն, դեպի Ավետյաց երկիր:

Իրապես, սիրելի՛ հավատացյալներ, հրեա ժողովուրդը՝ Աստվածաշնչի ժողովուրդը, դառնությամբ լի մի կյանք ապրեց, և Աստվածաշունչն այդ պատմության արձանագրումն է, պատմություն, որը ներկայացնում է այդ ժողովրդի կյանքն իր վայրիվերումներով, ելևէջումներով, իր ամբողջ ներկապնակով՝ թափառումներից սկսյալ մինչև պետականության կերտում, պետականության անկումից հետո՝ վերստին դեգերումներ: Այն շատ բանով մեզ հիշեցնում է պատմությունը մի ժողովրդի, որի զավակն ենք մենք:

Մեր ժողովուրդը ևս իր պատմության ընթացքին բազմաթիվ աղետներ, բազմաթիվ ավերածություններ, բազում տառապանքներ ու զրկանքներ է տեսել, և չէր կարող շարունակվել մեր ժողովրդի ընթացքը դեպի հավերժություն, եթե չլինեին այն անձինք, ովքեր Տիրոջից ստացած տեսիլքով առաջնորդեցին մեր ժողովրդին դեպի Տիրոջ՝ մեզ համար նախապատրաստված ցանկալի և բաղձալի նավահանգիստը:

Ահա այդ ընտրյալներից մեկը՝ Գրիգոր Լուսավորիչը, տեսիլքի մեջ տեսավ Էջքը Միածին Որդու, որ ուռն ի ձեռին՝ հարվածեց ճիշտ այն վայրին, որտեղ ներկայիս կառուցված և կանգնեցված է Տիրոջ Իջման Սուրբ Սեղանը: Ահա այսպես է պատմիչը ներկայացնում Միածնի Էջքը Լուսավորչի տեսիլքում: Տիրոջ Միածին Որդին իջավ՝ ուռով հարվածելով գետնին: Այնուհետև պատկերվեցին լուսավոր ուրվագծումները եկեղեցիների: Ինչո՞ւ է տեսիլքի մեջ լույս: Լույս, քանզի տեսիլքն ինքնին լույս է, լույսը Տիրոջ զգեստն է, իսկ Տերն ինքնին կյանք է, այսինքն՝ տեսիլքն ինքը կյանքի պարգևման, կյանքի շարունակման երաշխիք և գրավական է դառնում մեր ժողովրդի կյանքում:

Հաջորդը, որ հավերժագնա դարձրեց մեր ժողովրդի ճանապարհը և ուղին, տեսիլքն էր Ս. Մեսրոպ Մաշտոցի, տեսիլք, որում ի վերուստ իրեն պարգևվեցին հանճար, իմաստություն՝ ստեղծելու հայոց գրերը: Մաշտոցն իրագործեց Աստուծո խոսքը սեփական լեզվով թարգմանելու առաքելությունը:

Ուրիշ մի տեսիլք, որ վերստին առաջնորդեց, վերստին ամրապնդեց մեր ժողովրդի գոյությունն ու ինքնությունը, եղավ 15-րդ դարում, երբ Հայոց Հայրապետական Աթոռը տակավին գտնվում էր Կիլիկիո լեռների մերձակայքում՝ Սիսում, և Թովմա Մեծոփեցի անունով մի վարդապետ, ով նաև պատմիչ էր, իր տեսիլքի մեջ տեսավ կանթեղը, որն աստիճանաբար լուսավառում է, աստիճանաբար առատացնում է իր լույսը, որը և, պատմիչի բնորոշմամբ, խորհրդանշում է, թե «կանթեղը լույսն է Էջմիածնի, որը Տիրոջ ողորմությամբ վերստին աստիճանաբար պիտի բոցավառվի՝ Հայրապետական Աթոռում՝ Սուրբ Էջմիածնում դրվելով»: Եվ Հայրապետական Աթոռը 1441 թ. վերստին հանդրվանում է իր բնուստ հիմնադրված վայրում: Եվ ահա, սիրելի՛ հավատացյալներ, այս տեսիլքները՝ Աստծուց ընծայված պարգևները, աղբյուր են հանդիսացել մեր ժողովրդի կյանքի ու գոյատևման, և մշտապես այդ տեսիլքով է, այդ գաղափարականով և այդ նպատակով է, որ պիտի կարող լինենք ապրել ու գոյատևել:

Տեսիլքն իր բուն արտահայտության մեջ որոշակի ձև ու կերպարանք ունեցող գրական ժանր և ստեղծագործություն է, սակայն այսօրվա մեր հասկացողության մեջ այն ավելին է, քան ժանրը: Այն մեզնից յուրաքանչյուրի համար նպատակ է, առաքելություն, և եթե երբևէ որևէ ժողովուրդ դադարի տեսլապաշտ լինել, դադարի տեսիլք ունենալ այս կյանքում, կդադարի գոյություն ունենալ:

Տեսիլքի նկատմամբ մեր ժողովրդի հավատքն է, որ այսօր արդյունավորվել է Հայաստանի պետականության վերակերտումով, և այդ վերակերտումը լինելով տեսիլքի արդյունքը,

վերստին մեզ տեսլապաշտության է մղում, որ այս անգամ մեր մեջ սնուցենք տեսիլքը՝ մեր պետությունը զորացնելու, մեր ժողովրդի կյանքը բարելավելու և նրա հոգևոր-բարոյական արժեքներն առավել ևս պանծացնելու և պայծառացնելու համար:

Այս տեսիլքով է, որ Ազգիս Վեհափառ Հայրապետ Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ այսօր Վեհարանի հանդիսասրահում կատարվելու է բացումը Անիի Մայր տաճարի հիմնադրության 1000-ամյակի հոբելյանական տոնակատարությանց:

Մենք չենք կարող երբեք առաջ նայել, եթե հետ չնայենք: Մենք չենք կարող լավ հասկանալ ապագան, եթե երբեք չկարողանանք գնահատել անցյալը: Ահա այս է տեսլականը և այս է գաղափարը, որ այսօր մենք հայացքով հետ ենք դառնում շուրջ 1000 տարիներ՝ հպարտանալու այն արժեքով, որն իր մեջ կրում է Անիի Մայր տաճարը, գնահատելու այն գործոնները, որոնք պատճառ դարձան հոյակերտի փլուզմանը, եզրահանգելու, թե ինչպես պետք է անենք, որ նման տաճարներն այլևս անփլուզելի և անխորտակելի լինեն: Հանդիսությունների շրջագծում հայ ուխտավորները Ախուրյանի ափից պիտի տեսնեն Անիի ավերակները, նորոգեն իրենց մեջ ուժն ու վճռականությունը՝ տեսնելու տաճարն ամենահմա իր խոյանքով:

Ահա այս մտածումներով ցանկանում եմ հայցել Տիրոջ ամենագութ ողորմությունն ամենքիս, որպեսզի մշտապես լցվենք մեր արժեքների զորացման ոգով՝ մեր անցյալը վերագնահատելու և ապագան կերտելու վճռականությամբ:

«Շնորհք, սէր և խաղաղութիւն Տեառն մերոյ և Փրկչին Յիսուսի Քրիստոսի եղիցի ընդ ձեզ և ընդ ամենեսեանս. ամէն»:

ՓՐԿՈՒԹՅԱՆ ԲԱՂՁԱԼԻ ՈՒՂԻՆ

(ՏՅԱՌՆԸՆԴԱՌԱՋԻ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ)

Մայր Աթոռ Սբ. Էջմիածին
14 փետրվարի, 2003 թ.

«Արդ արձակեա զծառայս քո, Տէր, ըստ բանի քում ի խաղաղութիւն,
զի տեսին աչք իմ զփրկութիւն քո՝
զոր պատրաստեցեր առաջի ամենայն ժողովրդոց»:
(Ղուկ. Բ 29-30)

Սիրելի՛ հավատացյալներ.

Քառասուն օրական մանուկ Հիսուսին ընդառաջ ելնելիս Սիմեոն Ծերունու շրթներից հնչեցին ահա այս խոսքերը, որ գոհունակության հիմն են շեփորում քրիստոնյաների հոգիներում: Ծերունին տարիներ-տարիներ էր սպասել Տիրոջ խոստացյալ Մեսիային, և ահա իրականություն է բաղձալին. Փրկիչն ինքն է եկել Սիմեոնին ընդառաջ: Հիսուսի ծնողները բարեպաշտության ավանդույթով Տաճար էին բերել Նրան, բերել էին ընծայելու Բարձրյալին:

Ահա Քառասնօրյա Փրկչի գալուստն ի տաճար, տնօրինական կյանքի տոնախմբությունների շարքում, առանձնահատուկ դեր և նշանակություն է ստացել Եկեղեցու տոնակարգի մեջ՝ կոչվելով «Տյառնընդառաջ»:

Տակավին երեկ՝ հետժամերգության, ամենքս թե՛ Մայր Աթոռ Ս. Էջմիածնում՝ գլխավորությամբ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի և մասնակցությամբ հոգևոր մեր հայրերի ու բարեպաշտ հավատացյալների, և թե՛ մեր մյուս եկեղեցիներում նշեցինք Տյառնընդառաջի տոնը: Տների բակերում կրակներ վառեցինք և այդ կրակի լույսը ընկալեցինք իբրև Քրիստոսի ներկայությունը մեր կյանքում:

Այսօր Սրբազան այս Պատարագով և այն հոգեկան հրճվանքով, որով մենք ամենքս ճայնակից ու սրտակից ենք Սիմեոն Ծերունուն, շարունակվում է Տյառնընդառաջի մեր ուրախությունը, քանզի ամենքս ենք այժմ ընդառաջ ելնում Տիրոջը:

«Արդ, խաղաղությամբ արձակիր քո ծառային, ո՛վ Տեր, ըստ քո խոսքի, որովհետև աչքերս տեսան քո փրկությունը, որ պատրաստեցիր բոլոր ժողովուրդների առջև»:

Տևական սպասումից հետո մանուկ Հիսուսին տեսնելն իսկ ծերունին կատարումն է համարում իր իղձերի և Տիրոջից խնդրում, որ ազատի, արձակի իրեն: Եվ հետաքրքրական է իր գործածած բառը, երբ ասում է. «Տե՛ր, արձակի՛ր ինձ»: Արձակվում են նրանք, ովքեր կապանքների ու բանտարգելության մեջ են գտնվում: Ուրեմն՝ ծերունին ուներ այն համոզումը, որ այս կյանքը և նրա բերած դժվարությունները կաշկանդում և կապանքների մեջ են դնում մարդուն: Տեսնելուց հետո Տիրոջը, Ում հետ նա կապում էր փրկության իր բոլոր հույսերը, Սիմեոնն այլևս հանգիստ է առնում և խաղաղված՝ Տիրոջից խնդրում հոգին երկինք փոխադրել, որովհետև այլևս կատարվել էր իր գերագույն իղձը:

Սիրելի՛ հավատացյալներ, շատ հաճախ մենք բազմաթիվ դժվարությունների, տվայտանքների մեջ և անհաղթահարելի թվացող ուժի ներգործության առջև երբեմն-երբեմն հուսահատվում ենք ու տկարանում և շատ հաճախ Տիրոջից խնդրում. «Ո՛վ Աստված, երանի թե այս պահին հոգիս առնեիր, և ավարտվեին իմ տանջանքները, ավարտվեին կրածս դժբախտություններն ու փորձությունները»: Սակայն շատ քիչ է պատահում, երբ ուրախության մեջ մենք նույն խնդրանքով դիմենք Տիրոջը:

Մինչդեռ Սիմեոն Ծերունին իր ուրախության մեջ, իր հավատքի գերագույն դրսևորման մեջ Տիրոջից խնդրեց իր կյանքը ավարտին հասցնել: Եվ, բնականաբար, հարց ենք

տալիս՝ ինչո՞ւ. արդյո՞ք այդպիսի կատարյալ ուրախության մեջ, երբ ուղղակիորեն ճաշակում ես Տիրոջ ներկայությունը և ունես վստահությունը, որ Նա է Փրկիչն ամենայնի, ինչո՞ւ հանկարծ խնդրես Տիրոջից՝ դադարեցնել քո կյանքը: Ավետարանը շատ հստակ պատասխանում է այս հարցին: Նրանք, ովքեր ճաշակել են Տիրոջ ներկայությունը, նրանք, ովքեր գիտեն Տիրոջ ներգործության ուժը, ովքեր փափագելով փափագում են միայն Տիրոջ հետ բարեկամություն ունենալ, գիտեն, որ այս աշխարհը, այս աշխարհի կյանքն ընդամենը արձագանքն ու ստվերն է, ընդամենը փոշին՝ այն կյանքի, որը մենք կոչված ենք ժառանգելու: Ուստի այն դժվարություններն ու տառապանքները, այն կաշկանդումներն ու կապանքները, որոնք մենք հարկադրված ենք այս աշխարհում տանելու, բնականաբար, անցանկալի, անբաղձալի պիտի լինեն որևէ մեկի համար, երբ նա իրապես ճաշակել է մյուս՝ իրական կյանքի քաղցրությունը: Այս զգացումն է, որ Սիմեոն Ծերունուն մղում է՝ ասելու. «Արդ արձակես, Տէր, զծառայս քո»:

Եվ այսօր, սիրելի՛ հավատացյալներ, մենք, տեղի տալով այս աշխարհի հոգսերին, երբեմն ասում ենք, թե հոգնել ենք կյանքից: Այս խոսքերը, սակայն, լինելով հուսահատության, ապրելու կամքն ու կորովը այլևս կորցնող մարդու արտահայտություններ, չեն կարող ընդունելի լինել: Այլ բան է, երբ մենք ուրախության և Տիրոջ ներկայությունը ճաշակելու հրճվանքի մեջ ցանկալով ցանկանանք միանալ Իրեն՝ ելնելով մեր մարմնավոր կաղապարից: Բոլորովին այլ է սակայն, երբ ցանկանում ենք մահանալ, ցանկանում ենք, որ վերջ գտնեն մեր տառապանքները, երբ այլևս հոգնած ենք, երբ արդեն հուսահատ ենք, ու այլևս ոչինչ չի կարող մեզ կապել այս աշխարհի հետ: Եվ Աստվածաշունչը վերստին պատասխանում է այս հարցին: Տիրոջ հետ փարատվում է մեր հուսահատության մեգը, և մեր առջև բացվում է ճանապարհը,

որով կարող ենք հաղթահարել ցանկացած հուսահատություն, ցանկացած ընկրկում, ցանկացած փորձություն:

«Տէր լոյս իմ և կեանք իմ, ես յումէ՞ երկեայց. Տէր ապաւէն կենաց իմոց, ես յումէ՞ դողացայց...: Թէ պատրաստեսցի ի վերայ իմ պատերազմ, ոչ երկիցէ սիրտ իմ. թէ յարիցէ ի վերայ իմ ճակատամարտ, սակայն և այսուիկ ի քեզ, Տէր, յուսացայ» (Սաղմ. ԻԶ 1, 3): Ահա սաղմոսերգուի պատգամը: Պատերազմների ու ճակատամարտերի մեջ իսկ իմ հույսը Դո՛ւ ես, ո՛վ Աստված: Ամեն պատերազմ ու ճակատամարտ չէ, որ տեսանելի է: Լինում են և աներևույթ և մարդկանց ոչ տեսանելի ճակատամարտեր ու պատերազմներ: Եվ մեր ներքին կյանքի այդ պատերազմների մեջ Աստված է մեր ապավենը, և մենք ոչնչից չպետք է երկյուղ կրենք և չպետք է ընկրկենք որևէ դժվարության ու տառապանքի առջև:

Ահա, սիրելի՛ հավատացյալներ, այսօրվա տոնի խորհուրդը Տիրոջն ընդառաջ գնալն է և այս զգացումով փորձությունների առջև չընկրկելու կոչն է: Վստահ եմ, որ մեր մեջ պիտի զորանա այս գիտակցությունը, քանզի մենք ամենքս այսօր ճամփորդ ենք. ճամփորդ ենք դեպի Աստված, և այս ուղեգնացությունը, վստահ եմ, որ բարեհաջող ընթացք պիտի ունենա: Քանզի եթե Աստված մեզ հետ է, ո՞վ կարող է մեզ ընդդիմանալ, եթե Աստված է մեր ապավենը, ումի՞ց մենք պետք է երկյուղ կրենք: Եվ ահա այս զգացումով աղոթում եմ, որ Տերը յուրաքանչյուրիս մեջ զորացնի չընկրկելու, չհուսահատվելու ոգին, լավատեսությամբ, վճռակամությամբ ելնելու Տիրոջն ընդառաջ՝ ի փառս մեր Սուրբ Եկեղեցու այժմ և հավիտյանս հավիտենից. ամեն:

ՔՐԻՍՏՈՍԻ ԾՆՆԴՅԱՆ ՀԱՅՏԵԼՈՒ ՍՐՋԵԿ

(ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՁՐԱԳԱԼՈՒՅՑԻ ԱՌԻԹՈՎ)

Մայր Աթոռ Սբ. Էջմիածին
5 հունվարի, 2004 թ

Այսօր ամենքս մասնակիցն ենք Սուրբ Ծննդյան հանդիսությանը, մենք՝ իբրև եկեղեցականներ, որ կոչված ենք սպասարկելու այս Սուրբ Սեղանը, և դուք՝ իբրև հավատացյալ ժողովուրդ, որ կոչված եք մասնակիցը լինելու և ճաշակելու մեզ հետ այս Ս. Սեղանից մատուցվող և բաշխվող Տիրոջ Սուրբ Մարմինը և Արյունը: Ամենքս լցված ենք Ծննդյան ուրախությամբ և ցնծությամբ: Ուրախ ենք և մխիթարված անչափ, քանզի այսօրվա Ծնունդը առանձնահատուկ է, առանձնահատուկ է նրանով նաև, որ մենք՝ իբրև հրավիրյալներ, նվեր մատուցելու փոխարեն նվեր ենք ստանում: Եվ այդ նվերը ամենից թանկն ու ամենից անփոխարինելին է: Մեր Տեր Հիսուս Քրիստոս է այսօրվա Նվերը, որ Հայր Աստծո կողմից ընծայվեց Իր ժողովրդին: Եվ որպես Ծնունդի մասնակից՝ առաջին հարցը, որ ուղղում է մեզանից յուրաքանչյուրն ինքն իրեն, այն է, թե ինչ Ծնունդ է արդյոք այս, որ այսպես համախմբել է մեզ այս Սուրբ Տաճարում: Առաջին պատկերը, որ արտացոլվում է մեր հայացքի առջև, Փրկչի՝ մանուկ Հիսուսի ծննդյան դրվագն է, պատկեր, որը տակավին 2000 տարի առաջ շատ քչերին պիտի վստահեցներ, թե ծնվողը իրապես Աստված է, թե ծնվողը իրապես Ամենազոր Փրկիչն է, Ով փրկելու է Տիրոջը հուսացող հոգիներին: Քանզի Փրկիչը ծնվեց մի անշուք, մարդկանցից ան-

տեսված, քաղաքակրթությունից հեռու մի օրրանում՝ մսուրի մեջ, անբան կենդանիների հարևանությամբ: Նրա ծննդյանը ներկա էին միմիայն հովիվները: Ահա Հիսուսի Ծննդյան արտաքին նշանները և հանգամանքները, որոնք պաճուճանքի վարժված մարդկանց ոչնչով չէին կարող հուշել, թե ծնվողը իրապես Թագավոր է, Աստված և Տերը ողջերի ու մեռածների:

Երկրորդ հարցը, որ ծագում է մեր մտքում, այն է, թե ինչով է առանձնանում այս Ծնունդը մյուս բոլոր ծնունդներից, որոնք, ճիշտ է, տոնակատարում ենք, բայց ոչ այն գիտակցությամբ, որ այդ ծնունդը էական ներգործություն կարող է ունենալ մեր կյանքի մեջ:

Մենք այս Ծնունդը՝ Քրիստոսի Ծնունդը, կոչում ենք «խորհուրդ»: Սրբազան մեր հայրերը, նկարագրելու համար Քրիստոսի Ծնունդը, օգտագործում են հետևյալ բառերը. «Անպարագրելին պարագրեցավ, Անսահմանելին սահմանների մեջ եկավ»: Այսինքն՝ անսահմանն Աստված եկավ սահմանների մեջ: Եվ իրապես, եթե մեր այսօրվա լեզվամտածողությամբ արտահայտելու լինենք այս իրողությունը, Աստծո համար մարդանալը նույնն էր, ինչ այսօր մեզանից յուրաքանչյուրի համար՝ կամավոր ազատազրկումը: Աստված, Ով անսահման էր, անսահմանների Թագավոր, ազատության Իշխան, եկավ սահմանավոր մարմնի մեջ, կաղապարի մեջ, որպեսզի այդ մարմնի մեջ Իր ձեռքը հպի մարդկանց ձեռքերին, քայլի այն ավազների վրա, որտեղով քայլում էին մարդիկ, որպեսզի մարդկանց ցույց տա այն ճանապարհը, որով նրանք կոչված են քայլելու: Քրիստոսի Ծնունդը նվեր է մարդկությանը, մարդկային տրամաբանությունից, մարդկային վերլուծող մտքից վեր մի նվեր:

Մարդիկ սովորաբար նվերներ մատուցում են այն անձանց, որոնց նկատմամբ մեծ համակրանք, սեր և հարգանք ունեն: Սակայն Քրիստոսի Ծնունդը գալիս է հավաստելու,

որ Քրիստոս ծնվեց այն ժամանակ, երբ մարդիկ այլևս լցրել էին ժամանակն իրենց անօրենությամբ, այսինքն՝ մարդկանց կողմից չէ՛ր վաստակվել այդ սերը, պարզապես Աստված Ինքն արժանի տեսավ այդ բոլոր անօրենությունները փոխհատուցել սիրով: Եվ հատկանշական է, որ Աստված Իր բողոքը մարդկության գործած անօրենությունների դեմ արտահայտեց բացառիկ կերպով. Նա նվիրեց մարդկանց ամենանվիրականը և ամենաթանկագինը՝ Իր Միածին Որդուն:

Հաջորդ հարցումը, որ մենք, որպես հավատացյալ ժողովուրդ, որպես մասնակիցներ Ծննդյան այս խրախճանքի և ուրախության, պետք է ուղղենք մեզ, այն է, թե ի՛նչ արդյունք տվեց Աստծո Միածին Որդու ընծայաբերումը մարդկանց: Երբ Քրիստոս աշխարհ եկավ, հրեշտակի ավետիսը մարդկանց հետևյալն էր. «Յերկիր խաղաղութիւն և ի մարդիկ հաճութիւն»:

Քրիստոս, սակայն, ակնարկելով Երկրորդ Գալուստը, Իր երկրային կյանքի ընթացքին իսկ հարց է տալիս. «Երբ մարդու Որդին գա, արդյոք երկրի վրա հավատ կգտնի՞» (Ղուկ. ԺԹ 8): Ի՞նչն էր արդյոք Փրկչի մոտ նման տարակույս առաջացրել: Հասկանալի է. Քրիստոս, ինչպես Իր ամբողջ առաքելության ընթացքին, այժմ ևս ներքին ողբերգություն, ներքին ցավ է ապրում, երբ տեսնում է, որ Իր ծնունդ առնելուց հետո կարծես թե ոչինչ չի փոխվել մարդկանց մեջ: Թագավորները շարունակում են կառավարել նույն ձևով, հպատակները շարունակում են ենթարկվել նախկինի պես, վաճառականները շարունակում են վաճառականությամբ զբաղվել նույն ձևով, իշխանները շարունակում են իշխանաբար ճեմել: Կարծես թե ամեն ինչ նույնն է, Մարդու Որդին վերստին տարակուսում է՝ արդյոք կգտնվի՞ հավատք, արդյոք կհաստատվի՞ խաղաղություն երկրում և համերաշխություն՝ մարդկանց միջև:

Եվ այսօր, Քրիստոսի Ծննդից 2000 տարիներ անց, նույն տարակուսանքով ու այժմեականությամբ է հնչում նույն

հարցը՝ «գտանիցէ արդեօք Որդի Մարդոյ հաւատս յերկրի»: Մեզանից շատերը կպատասխանեն՝ անշուշտ կգտնի: Եվ իրապես՝ այդ հավատքի վկայությունն է այսօրվա մեր համախմբումն այս Տաճարում: Սակայն ի՞նչ ենք հասկանում մենք «հավատք» ասելով: Գիտակցաբար մենք ամենքս ընդունում ենք Աստծո գոյությունը, սակայն այն կամքը, որ պիտի արտահայտենք մեր հնազանդությամբ առ Աստծո պատգամներն ու պատվիրանները, երբեմն թուլանում և տկարանում է մեր մեջ, և այն գիտակցությունը, որը մեզ շնորհված է աստվածճանաչողության համար, նսեմանում է այդ կամքի թուլության հետ: Եվ շատ բնական մի հարց էլ այսօր կարող է առաջանալ. եթե Քրիստոս եկավ, և մենք այսօր խաղաղություն չունենք աշխարհում, մարդկանց միջև համերաշխությունը տակավին կաղում է, մարդկանց միջև հարաբերությունները կառուցվում են շահախնդրության հիմքի վրա, արդյոք աննպատակ չէ՞ր Քրիստոսի գալուստը: Առաջին հայացքից այս հարցը շատ բնական և տրամաբանական կարող է թվալ:

Ես չեմ կարող ասել, թե ինչպիսի ազդեցություն ունեցավ հայելու գյուտը մարդկանց կյանքում, բայց վստահ եմ, որ Քրիստոսի հայտնությամբ մարդիկ կարողացան Քրիստոսի Անձի մեջ տեսնել իրենց, Քրիստոսի մեծության մեջ մարդիկ կարողացան տեսնել իրենց փոքրությունը, Քրիստոսի անսահմանության մեջ՝ իրենց սահմանավորությունը, Քրիստոսի անհունության մեջ՝ իրենց հունավորությունը, Քրիստոսի մարդկության մեջ՝ իրենց մարդկության չափը, և Քրիստոսի Աստվածության մեջ՝ դեպի Աստվածություն ընթանալու իրենց հնարավորությունը: Քրիստոսի մեջ մենք տեսնում ենք ինքներս մեզ, Իր լույսի մեջ՝ մեր խավարը, Իր անբծության մեջ՝ մեր բծերը: Եվ ահա այս է տարբերությունը Քրիստոսից հետո և առաջ ընկած ժամանակաշրջանի: Եվ մի՞թե սա տոն

չէ, որ կարող ենք ճանաչել մեզ, տեսնել ճանապարհը, որ պիտի կտրենք, ճանաչել նպատակը, որին պիտի ձգտենք:

Սիրելի՛ քույրեր և եղբայրներ, մենք լավ գիտենք մեզ, մենք գիտենք, որ արագ ենք հակվում դեպի չարը և ամեն անգամ առաջին անգամվա պես ինքներս մեզ համոզում, որ շտկվելու ենք, փոխվելու առ Բարին, բայց՝ ապարդյուն: Դրա համար է, որ, հույսներս կտրած ինքներս մեզնից, Կատարյալին ենք փարվում, Փրկչին ապավինում և այդ ապավինությամբ փառաբանում.

Ո՛վ Քրիստոս Փրկիչ, օրհնյա՛լ է Ծնունդը Քո, օրհնյա՛լ և փառավորյա՛լ հայտնությունը Քո, անպակաս արա մեր սրտերից ու մտքերից ներկայությունը Քո, որպեսզի ավելի խորը զգանք Կամքը Քո և ընդառաջ ելնենք երկրում խաղաղության և մարդկանց միջև համերաշխության Քո հրավերին:

.

ՍՐԴՍՐՈՑՆ՝ ԿՅԱՆՔ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ

Մայր Աթոռ Սբ. Էջմիածին
28 մարտի, 2004 թ.

«Գալոց է նովին մարմնովն և փառօք
Հօր ի դարել զկենդանիս և զմեռեալս»
(Նիկիական հանգանակ)

Ահա այս ըմբռնումն է ընկած հիմքում այս Կիրակի օրվա խորհրդի, որը եկեղեցական մեր Տոնացույցում անվանվում է Գալստյան կիրակի՝ առանցքում ունենալով մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի Երկրորդ Գալստյան նկատմամբ հավատը: Վստահաբար դժվար պիտի լինի ընկալել Երկրորդ Գալստյան խորհուրդը՝ առանց անդրադառնալու Մեծի պահոց այս շրջանի կիրակիների վրա բաշխված մյուս տոների խորհուրդներին: Ուստի և անդրադառնանք այդ կիրակիներին:

Ոսկե այս շղթայում առաջին կիրակին կոչվում է Բուն Բարեկենդան՝ մատնանշելով աստվածաշնչյան այն իրողությունը, երբ մեր նախահայրեր Ադամն ու Եվան դրախտում վայելում էին Աստծո ներկայությունը: Սակայն երկար չտևեց այդ վայելքը, քանի որ նրանք մեղանչեցին Աստծո դեմ և արտաքսվեցին դրախտից: Արտաքսման այս դեպքն է ընկած երկրորդ կիրակի օրվա հիմքում, որը կոչվում է Արտաքսման կիրակի:

Եվ քանի որ մարդու հոգևոր կյանքի զարգացումներին ներդաշնակ են հարափոփոխ ելևէջումները, կրկին մարդկությունը փորձեց վերադառնալ դեպի դրախտ՝ վերստին հաստատելու իր աստվածաստեղծ պատկերը, իր ինքնությունը:

Այս պատճառով է, որ երրորդ կիրակին կոչվում է Անառակ որդու կիրակի, որում ներկայացվում է անառակ որդու, անհնազանդ որդու հեռացումն իր հայրական հարկից և ապա նաև զղջմամբ և ապաշխարությամբ վերադարձը: Սրանում արտահայտվում է մարդկության՝ դեպի իր արմատները վերադառնալու բուռն ձգտումը՝ վերադարձ դեպի Աստծո ներկայությունը:

Վերադարձի ճանապարհին գործադրվելիք միջոցների ուսուցումներն են արտացոլված չորրորդ կիրակի օրվա խորհրդում, որը կոչվում է Տնտեսի կիրակի, երբ Քրիստոս ուսուցանում է, թե դեպի Աստված վերադառնալու ճանապարհին ինչպես պետք է վարվեն նյութի հետ, նյութ, որ ընդամենը ծառայեցվում է որպես միջոց մեր վերադարձը դեպի Աստված ապահովելու նպատակով:

Հինգերորդ կիրակին, որը կոչվում է Դատավորի կիրակի, խորհրդանիշն է հարատև աղոթքի, ինչու չէ՝ նաև համառության՝ մեր վերադարձի ճանապարհին չընկրկելու, չտատամսելու, երբեք երկմտանք չապրելու, այնպես, ինչպես այն այրի կինը, որ նույնիսկ անիրավ դատավորի առջև չկորցրեց երբեք իր հույսը, այլ տևական համառությամբ հետամուտ եղավ իր խնդրի լուծմանը:

Եվ այսօր՝ Մեծի պահոց շրջանի վեցերորդ այս կիրակին կոչվում է Գալստյան կիրակի: Այն ամենը, ինչ արտահայտված են նախորդ կիրակիների խորհուրդներում՝ Բուն Բարեկենդանը, Արտաքսումը, Անառակ որդու վերադարձը, Տնտեսի ու Անիրավ դատավորի արարքները իրական կյանքից քաղված պատմական իրողություններ են: Սրանք պատմական իրադարձություն և դեպք լինելու հետ մեկտեղ՝ նաև անձի հոգևոր կյանքի զարգացումների հանգրվաններ են:

Այնպես, ինչպես մարդկությունը մեղանչեց՝ զրկվելով Աստծու բարեհաճությունից, այնուհետև արտաքսվեց իր մեղանչումի հետևանքով, ապա կրկին վերադարձավ՝ ճա-

նապարհներ որոնելով իր վերադարձն ապահովելու, այնպես և յուրաքանչյուր անձ իր ներքին՝ հոգևոր կյանքի զարգացումներում և ճանապարհներին ամեն անգամ ունենում է նման ելևէջումներ. մերթ անսահման մոտ է Աստված և ինքը՝ Աստծուն, մերթ հեռանում է Աստծուց՝ իր մեղանչումների հետևանքով, և այսպես շարունակ:

Ահա վեցերորդ՝ Գալստյան կիրակին մեր առջև շատ բարդ և լուրջ խնդիր է հարուցում: Այն ամենը, ինչ կապված է մարդու անցյալի և ներկայի հետ, մեզ հնարավորություններ է տալիս խոսելու և դատողություններ անելու: Բայց այն, ինչ կապված է ապագայի հետ, ինչպես և Քրիստոս ասաց, մարդկանց տրված չէ քննելու: Մարդկային կարողությունները, իմացական հնարավորությունները սահմանափակ են և թույլ չեն տալիս ապագայի մասին կանխագուշակումներ անելու, ավելին՝ դա նույնիսկ անհրաժեշտ չէ մեր փրկության համար, քանի որ Երկրորդ Գալստյան մասին, ինչպես Քրիստոս ասաց, գիտի միայն Աստված, Ով ամենքի Հայրն է:

Ի՞նչ է Երկրորդ Գալուստը: Հիսուս այս աշխարհից ելնելուց առաջ առաքյալներին այլաբանական խորհրդով ասաց, թե՝ այս սերունդը չպետք է անցնի, մինչև ես գամ, որի համար Քրիստոսի հարությունից տակավին մի քանի տարի անց, ինչպես առաքյալները, այնպես էլ մյուս հավատացյալներն արդեն սպասում էին Երկրորդ Գալստյանը՝ մեծ ջերմեռանդությամբ:

Երկրորդ Գալստյանը սպասել են նաև առաքյալներից հետո ուրիշներ, ինչպես 1000 թվականին, երբ մարդկության սպասումի զգացումը սրված էր: Նաև մեր օրերին այն շահարկման նյութ է դարձել շատ-շատերի կողմից՝ մարդկանց լարվածության, պրկվածության մեջ պահելու համար: Սակայն, ինչպես պարզ և մեկին ասաց Քրիստոս, պետք չէ մտահոգվել՝ Երկրորդ Գալստյան ժամանակը կռահելու վրա ջանքեր վատնելով: Մեզանից պահանջվելիքն ընդամենը մեկ

բան է՝ մշտապես պատրաստ լինել Երկրորդ Գալստյանը: Եվ Քրիստոս չափազանց պատկերավոր կերպով արտահայտեց այս գաղափարը. «Եթե տանտերը գիտենար, թե որ ժամին գող կգա, կհսկեր և չէր թողնի, որ իր տունը մտնեն: Դրա համար դուք էլ պատրաստ եղեք, որովհետև այն ժամին, երբ դուք չեք սպասում, մարդու Որդին կգա» (Մատթ. ԻԴ 43-44):

Երկրորդ Գալստյան հետ կապված կարևորագույն կետն այն է, որ նրա հիմքում ընկած է հատուցման գաղափարը: Մեր Հավատո խոստովանության մեջ մենք արձանագրում ենք, որ «արդարներին լինելու է կյանք հավիտենական, իսկ մեղավորներին՝ տանջանք հավիտենական»: Եվ իրապես, հատուցման գաղափարն է, որ գերիշխում է քրիստոնեական մեր մտածողության վրա:

Երբեմն մարդիկ փորձում են Ավետարանի մեջ տեսնել բարոյական դրույթների մի համակարգ: Երբե՛ք ու երբեք Աստվածաշունչը սոսկ բարոյագիտական խնդիրների առաջնահերթություն ունեցող մի գիրք չէ: Եթե քրիստոնեական մեր ընկալումներից դուրս բերենք Երկրորդ Գալստյան իրողությունը, եթե երբևէ մեր քրիստոնեական ընկալումների միջից դուրս բերենք երկրային կյանքից հետո հատուցման գաղափարի իսկությունը, ապա խարխուլ շենքի պես կփլչի բարոյագիտական ամբողջ համակարգը: Քրիստոնեությունը միմիայն և ընդամենը բարոյական հասկացողությունների համակարգ չէ. այն հիմնված է Աստծու գոյության և Երկրորդ Գալստյան իրողության վրա:

Եվ հատուցման գաղափարը, անկախ նրանից՝ անձը հավատացյալ թե անհավատ է նկատում ինքն իրեն, իր ներքին զգացումների մեջ անպայմանորեն առկա է և զգալի: Մեզանից շատերը հոգևոր կյանքի իրենց փորձառությամբ հաճախ հանդիպել են պահերի և համոզվել, որ այս կամ այն արարքի դիմաց իրենց հատուցումը չի ուշանում նաև հենց այս կյան-

քում: Եվ սա պարբերաբար կրկնվում է՝ նախատիպը դառնալով այն հատուցման, որ լինելու է Երկրորդ Գալուստին:

Աստված թույլ չի տալիս, որ իր հավատացյալը միանգամից, մեկեն հանդիպի Երկրորդ Գալստյան իրողությանը, այլ այս կյանքի մեջ հնարավորություն է տալիս այդպիսի դրսևորումներով համոզվելու, որ իրապես Երկրորդ Գալուստը գոյություն ունի, Երկրորդ Գալստյան ժամանակ հատուցման իրողությունը հավաստի է, Երկրորդ Գալստյան ժամանակ հիրավի արդարները մեղավորներից զատվելու են: Եվ դրա համար է, որ այս կյանքի մեջ մեր այս կամ այն արարքի դիմաց մենք զգում ենք, մեր ներքին ապրումներով համոզվում ենք, որ հատուցում իրապես լինում է, հատուցումը լինում է մեզանից յուրաքանչյուրի կյանքում: Համոզվում ենք, որ հատուցում լինում է նաև այն անձանց կյանքում, ովքեր մեր առջև կանգնած են, և սակայն, չգիտես ինչու, մեզ թվում էր, թե հատուցում միայն մենք ենք ապրում, դժբախտություններն ու անհաջողությունները միայն մեզ են հետապնդում: Ամեն անձ ինքը գիտի, թե իր ներքին կյանքում ինչպիսի ապրումներ է ունենում: Ահա այս նկատառումով է, որ յուրաքանչյուր քրիստոնյա իր կյանքը պետք է կառուցի հատուցման իրողության լույսի ներքո: Եթե երբևէ հատուցման գաղափարը դուրս բերվի քրիստոնեական մեր մտածողությունից, ապա այլևս որևէ պատճառ չի մնալու, որպեսզի մենք շարունակենք լինել բարոյական, լինել ազնիվ, լինել բարի և ավելի լավը: Եվ միայն այս ձգտումն է, հավիտենական կյանքը ժառանգելու այս ձգտումն է, որ մեզ մղում է բարոյականության:

Այսօր հասարակությունների մեջ փորձ է արվում ձևավորել անվտանգության անխոցելի թվացող համակարգեր, պայքարել սոցիալական այս կամ այն չարիքի դեմ, դիցուք Հայաստանի մեջ պայքարել աղքատության դեմ: Մշակվում են ծրագրեր, ստեղծվում են համակարգեր, մտածվում են մե-

խանիզմներ՝ ինչպես կարելի է հասնել չարիքի վերացմանը: Ցավոք, սակայն, մոռացվում է ամենակարևորը՝ մարդու հոգեփոխությունը: Մինչդեռ շեշտը մշտապես պետք է դնել մարդկանց հոգեբանության մեջ, մարդկանց մտածողության մեջ այս կյանքի անցողիկության և ունայնության գաղափարի ամրապնդման վրա:

Ներքին բարեշրջությունը, հոգևոր բարեշրջությունը միայն կարող է երաշխիք հանդիսանալ հասարակական այս կամ այն չարիքի վերացման, մարդկանց համար իրապես անվտանգության համակարգ ստեղծելու համար: Եվ այս ճանապարհին է, որ մարդկանց սևեռակետը պետք է լինի, մեր ամենքիս սևեռակետը պետք է լինի Երկրորդ Գալստյան իրողությունը, որովհետև ամենքիս ձգտումը ոչ թե ինքնին այսրաշխարհային անվտանգությունն է, այլ այնպիսի անվտանգությունը, որով հնարավոր կլինի հասնել փափագելիներից փափագելիին՝ մեր փրկությանը:

Բարոյական կատարյալ համակարգ, անվտանգության իրական երաշխիքներ հնարավոր է ստեղծել միայն ու միայն այն ժամանակ, երբ մարդկանց մտածողությունը բեկվի Երկրորդ Գալստյան իրողության միջոցով: Եվ միայն այդ պարագային են իրագործելի փափագելի այն հասկացությունները, որոնք կոչվում են «հավասարություն, եղբայրություն, արդարություն, իրավունք»: Սրանք կմնան սոսկ բառեր, եթե մենք իրապես ներքին բարեշրջություն և Երկրորդ Գալստյան իրողության վրա խարսխած կյանք և մտածողություն չունենանք:

Եվ ահա Մեծի պահոց շրջանի վեցերորդ կիրակին անվանվել է Գալստյան կիրակի, որպեսզի այս գիտակցությամբ մենք մուտք գործենք Տիրոջ հետ Ծաղկազարդին Երուսաղեմ և որպեսզի Տիրոջ հետ նաև ընթանանք Գողգոթայի ճանապարհով և հարություն առնենք: Եվ միայն այս մտածումը, այս սևեռակետն ունենալով է, որ մենք իրապես կկարողա-

նանք զղջում ապրել, կկարողանանք ընթանալ այնպիսի ուղիով, որն ի վերջո Տիրոջ հետ հարության է արժանացնելու ամենքիս:

Ուստի, սիրելի՛ քույրեր և եղբայրներ, այսօր վերստին մեր մեջ արծարծելով քրիստոնեական ապրումի լավագույն դրսևորումները, վերստին արժևորելով այն շնորհը, որ տրվել է մեզ Աստծուց՝ զանազանել չարը բարուց, ուղենիշ ունենալ ստուգապես այն կյանքը, որը կոչված ենք ժառանգելու, անհրաժեշտ է վերստին և վերստին նորոգել քրիստոնեական մեր զգացումները, մեզ սևեռակետ ունենալ Տիրոջ Երկրորդ Գալստյան իրողությունը և երբեք չմտահոգվել, թե երբ կլինի այդ Գալուստը:

Մեզանից պահանջվածը մշտապես պատրաստ լինելն է Երկրորդ Գալստյանը, պատրաստ լինելն է՝ մեր արդար գործերով, բարի կամեցողությամբ, բարեգործություններով, մեկմեկու հանդեպ դրսևորած սիրով ու լավին ձգտելու աստվածապարգև շնորհով:

Թող Տերը զորացնի մեզ մեր առաքելության մեջ՝ ի փառս մեր Սուրբ Եկեղեցու, այժմ և հավիտյանս հավիտենից. ամեն:

ՈՒԽՏ ՀԻՇԱՏԱԿԻ

(ՄԵԾ ԵՂԵՌՆԻ 89-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻ ԱՌԻԹՈՎ)

Մայր Աթոռ Սբ. Էջմիածին
24 ապրիլի, 2004 թ.

«Որդի մարդոյ երթայ՝ որպէս գրեալ է վասն նորա. բայց վա՛յ մարդոյն այնմիկ՝ յոյր ձեռն որդին մարդոյ մատնեսցի. լաւ էր նմա՝ թէ չէր ծնեալ մարդն այն» (Մատթ. ԻԶ 24):

Սիրելի՛ հավատացյալ քույրեր և եղբայրներ.

Հայոց Մեծ եղեռնի ապրիլքսանչորսյան հիշատակության այս օրը Մատթեոսի Ավետարանի ԻԶ գլխի 24-րդ համարում արձանագրված այս խոսքերն են այսօր խոսում մեր սրտերին, խոսքեր, որոնք Քրիստոս ասաց, երբ Իր աշակերտների հետ Վերնատանը վերջին Ընթրիքին էր նստած: Քրիստոս սովորաբար Իր մասին արտահայտվում էր երրորդ դեմքով՝ իբրև Անձ, Որ կողքից է դիտում և շատ հաճախ Ինքն Իրեն անվանում էր Մարդու Որդի: Եվ ահա այդպես Ինքը, խոսելով Իր առաքելության մասին, աշակերտներին մեկնելով, բացատրելով տակավին սպասվելիք բաները, հաստատում է, որ Մարդու Որդին պիտի մեկնի այս աշխարհից, պիտի մահանա, բայց վա՛յ այն անձին, որի միջոցով, որի դավադիր ձեռքով Ինքը պիտի մեկնի այս աշխարհից: Այդպիսի մարդու համար լավ կլիներ, որ նա ծնված չլիներ (Մատթ. ԻԶ, 24):

Բոլոր մարդիկս այնպես, ինչպես Ս. Գրոց մեջ արձանագրված է, մեր կյանքերն անցկացնում ենք ինչպես դաշտի խոտերը և դաշտի բույսերը: Ապրում ենք որոշ ժամանակահատված և դրանից հետո թառամելով՝ մեկնում այս աշխարհից: Ահա յուրաքանչյուրս մեզ հասանելիք կյանքը այս աշխարհի մեջ ապրելով, վաստակելով, ծառայելով, տքնելով՝

այլևս դադարում ենք գոյություն ունենալ: Բայց վա՜յ այն անձերին, ովքեր բռնությամբ խլում են մարդկային կյանքեր:

Ահա Ավետարանական այս խոսքի լույսի ներքո է բացահայտվում մեզ ապրիլի 24-ը: Այսօր վերստին այն օրն է, երբ յուրաքանչյուր անձ, յուրաքանչյուր քրիստոնյա, քաղաքակիրթ աշխարհի յուրաքանչյուր ներկայացուցիչ իր ձայնը պիտի բարձրացնի՝ դատապարտելու այն ոճիրը, որի պատճառով շուրջ 89 տարիներ առաջ մեկ և կես միլիոն մեր ազգակիցներ բռնությամբ զրկվեցին Աստծուց պարգևված իրենց կյանքերից:

Անցել են 89 տարիներ Օսմանյան կայսրությունում հայ ժողովրդի հանդեպ իրականացված մեծագույն այդ եղեռնագործությունները հավաքաբար ամփոփող օրվանից՝ ապրիլ 24-ից, երբ սպանեցին շուրջ մեկ և կես միլիոն հայեր՝ մանուկներ, երիտասարդներ և ծերեր՝ անմեղ ու անզեն մարդիկ: Եվ ինչպես Փրկչի համար՝ Նրա բարերարություններն ուրացած ապերախտ ու գազազած ամբոխը գոչում էր, թե՝ «Խաչը հանիր, խաչը հանիր Դրան» (Հովհ. ԺԹ 6), նույնպես և քաղաքակիրթ կոչվող աշխարհը լռելյայն, անձայն և անխոս թույլ տվեց ոճիրը և սպանդը մի ժողովրդի նկատմամբ, որը բազում ծառայություններ ուներ քաղաքակրթություններ տեսած ժողովուրդների կյանքում և ընդհանրապես քաղաքակրթություն ձևավորելու առաքելության մեջ, մի ժողովուրդ, որը եթե երբևէ մարտաշունչ ու ռազմատենչ է եղել, իր գրչով ու դպրությամբ, իր մատյաններով ու մագաղաթներով է եղել:

«Մարդու Որդին պիտի մեկնի, բայց վա՜յ նրան, ում միջոցով, ում ձեռքով Ինքը պիտի մատնվի». ահա վերստին հիշում ենք այդ խոսքը, վերստին հիշում ենք Հայոց Եղեռնի անմեղ զոհերին և վերստին մեր աղոթքը բարձրացնում նրանց հոգիների համար: Եղեռնի անմեղ զոհերը, հարկավ, տարիներ հետո յուրաքանչյուրը, իր ժամանակի հասնելուն պես, պիտի մեկներ այս աշխարհից, ինչպես մեռան, ինչպես

իրենց վախճանը գտան եղեռնից մազապուրծ շատ ու շատ հայեր՝ ցավ ու կսկիծ, հայրենյաց կարոտ ու տենչանք հոգիներում: Բայց վերստին վա՜յ և վա՜յ այն անձերին, որոնց ձեռքով մեռան այդ մարդիկ, նահատակվեցին, սպանվեցին: Եվ իսկապես, լավ կլիներ, որ չարագործները ծնված չլինեին և չժառանգեին ծնող ու զավակ կորցրած մի ողջ ժողովրդի նզովք և անեծք, ծնված չլինեին և չդառնային խարան մարդկության խղճին:

Սիրելի՛ քույրեր և եղբայրներ, այսօր վերստին վերապրումի օրն է սոսկալի այդ արհավիրքի: Հայոց Հայրապետը՝ եկեղեցականների շքախմբով և հայրենի մեր երկրի պետական ավագանին՝ Հանրապետության նախագահի գլխավորությամբ, այցելում են Ծիծեռնակաբերդ՝ ուխտավորները լինելով եղեռնի անմեղ զոհերի շիրիմներին:

Մենք ազգովի՝ ողջ ժողովրդով ժամադրության ենք այսօր Ապրիլյան նահատակների հետ, գլուխ ենք խոնարհում նրանց հիշատակին, Հոգեհանգստյան պաշտամունք ենք մատուցում և վերստին ու վերստին հիշում խողխողված նահատակներին, առևանգված ու անարգված կույսերին, գլխատված մտավորականներին, յաթաղանված ալեզարդ ծերունիներին ու մայրերին: Հիշում ենք նաև այդ դժնի օրերի ժամանակակից Գարեգին Առաջին Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Հովսեփյանի նկարագրությունը տարագրված հայերի մասին, որոնք Արևմտյան Հայաստանից հրաշքով փրկվեցին և մի կերպ հասան էջմիածին, Արարատյան աշխարհ:

«Երասխի ափերից մինչև էջմիածին,-գրում է Հովսեփյան Կաթողիկոսը,-պողոտայի երկու կողմերը, վանքի ընդարձակ անտառի ու ճեմարանի բակի և պարտեզի մեջ, պարիսպների տակ փռված էին մոտավորապես 150 000 փախստականներ: Ճանապարհի հոգնածությունը, սննդի պակասությունը, համաճարակներն իրենց ավերն էին գործում: Տարածվել էր ժանտախտը: Մարդիկ փոսեր էին փորում արդեն մա-

հացածներին թաղելու համար»: Ահա այսպիսին էր դաժան իրականությունը:

Եվ այս ամենն ինչպե՞ս արդյոք եղերերգու չդարձներ Սիամանթոյին և չընդվզեցներ ճակատագրի դեմ, ինչպե՞ս պախարակել չտար մարդկային արդարությունը և ինչպե՞ս չխենթացներ Կոմիտաս Վարդապետին, և արդյոք ինչպե՞ս մեր ողջ ժողովրդի մայրը կոչված լինելու այս հաստատությունն իր պարիսպներից ներս չկրեր հիշատակներ, չկրեր մասունքներ այդ անմեղ զոհերի:

Տեսե՛ք Մայր Աթոռ Ս. Էջմիածինը՝ սրբացած գաղթական հայորդիների արյունով և մասունքներով՝ հիշատակներ ցեղասպանության: Ո՛ր կողմ քայլեք՝ մասունք և հուշարձան-Կաթնաղբյուր՝ եղեռն վերապրած հայի արցունքով, խաչքարերի համաձուլվածք այս Տաճարի մոտ: Հուշարձաններից առավել վկայարաններ են սրանք, որտեղ խոսում են նահատակների հոգիները, վկայարան, որ ուխտի ենք կանգնելու և ուխտ ենք կնքելու Աստծո հետ, ուխտ՝ հավատարիմ մնալու նահատակների հիշատակին, ուխտ ենք կնքելու՝ մեր կյանքով, ստեղծագործ մեր աշխատանքով հաստատելու մեր հավատարմությունը նրանց սուրբ հիշատակին:

Լացն ու ողբը չէ, սակայն, մեր ճամփան, աշխարհին մենք լացով, թղթե մեր շերեփով հետաքրքիր չենք, աշխարհին հետաքրքիր չենք մեր՝ իրենց նկատմամբ արված նվիրվածության հավաստիացումներով և ոչ էլ ինքնասիրությունից ավելի այլասիրությամբ, այսինքն՝ ինքնամերժ այլասիրությամբ: Քրիստոնեությունը դա չէ, քրիստոնեությունն ինքնությունը հաստատող այլասիրությունն է: Այս Ս. Եկեղեցին՝ հարյուր երեսուներկու իր Հայրապետներով, երբե՛ք ու երբեք պատերազմի փող չհնչեցրեց և չի հնչեցնելու՝ ո՛չ այլամերժության և ո՛չ ատելության՝ որոմներ սերմանելով իր հավատացյալների մեջ: Եթե մի ձայն, մի պատգամ հնչել է այս Ս.

Սեղանից և այս սուրբ կամարների ներքո եղել է կոչ միաբանության, եղել է հրավեր խաղաղության:

Եվ այսօր, Ապրիլյան նահատակների ոգեկոչման այս օրը, նույնն է հրավերն այդ. հրավեր հավատարմության նահատակների հիշատակին, կոչ միաբանության, հրավեր դարձի դեպի արմատները: «Յանուն Յիսուսի Քրիստոսի ամենայն ծունր կրկնեսցի» (Փիլիպ. Բ 10),-ասում է առաքյալը, Հիսուս Քրիստոսի անվան առջև բոլորը թող ծնրադրեն: Խաղաղություն է Հիսուսի անունը, սեր է Նրա անունը, միաբանություն և մանավանդ կյանք է Հիսուսի անունը, և բոլորս ծունր պիտի դնենք միաբանության, սիրո և կյանքի տաճարներում, որպեսզի ապրենք, ապրենք հիշատակով նահատակների:

Պիտի աղոթենք նրանց աղոթքի վայրերում, պիտի սիրենք այնպես, ինչպես իրենք սիրեցին, պիտի նվիրվենք այնպես, ինչպես իրենք նվիրվեցին իրենց ազգային արժեքներին և արժանապատվությանը: Այլոց ականակուռ պատմուճանները մեր մարմնին բարեձև չեն, այլոց շքեղ դղյակներն անհարմար են մեզ, մեր համեստ պարեգոտը մեզ առավել սրտամոտ է, դրանով ենք մենք հետաքրքիր այս աշխարհին, քանի որ մերն է այդ պարեգոտը: Մեր տունը դղյակ չէ, մեր տունը հյուղակ է, խրճիթ, բայց մերն է, մերը, ուր ապրեցին, գործեցին և որին նվիրվեցին մեր նահատակները: Մենք մեր դեմքով, մեր գույնով, մեր տնով ու տարազով ենք հետաքրքիր աշխարհին: Եվ աշխարհի բազմազանության մեջ այդ առանձնահատկություններով է, որ մեզ մարդիկ և հանրությունները ճանաչելու են:

Արդ, սիրելի՛ քույրեր և եղբայրներ, սիրե՛նք մեր տունը, մեր հայրենիքը, տունը, ուր ապրեցին Ապրիլյան նահատակները: Գեթ եղեռնի ցավով միավորվենք: Ապրիլյան նահատակների մահվանից հետո կյանքի 89-րդ այս հանգրվանին վերստին հիշենք, որ ապրում են նրանք, ովքեր պատրաստ են մեռնելու, և մեռնում են նրանք, ովքեր իրենց ապրած

ժամանակում արդեն իսկ մահացած են: Մահն ամենասարսափելին չէ, որ պիտի մարդու որդիների հետ պատահի, ամենից սարսափելին և ամենից երկյուղալին մոռացումն է, մսխված, չօգտագործված կյանքը: Մոռացումով մոռացվում է ոչ միայն մոռացվածը, այլ նաև մոռացողը:

Արդ, ապրիլ 24-ի նահատակների հիշատակով վերստին հիշենք, որ ապրելու համար անհրաժեշտ է սովորել մեռնել, պարտավոր ենք հիշել, որ ընդհանուր շահի առջև պարտավոր ենք սովորել մոռանալ անձնական և եսական ցանկացած դրսևորում:

Ահա այս է, սիրելի՛ քույրեր և եղբայրներ, ապրիլ 24-ի խորհուրդը, խորհուրդ աղոթքի, խորհուրդ անդրադարձումի, խորհուրդ մտահայեցողության: Եվ այս հայեցողությամբ է, որ խնդրում ենք Տիրոջից, որ գթա Իր արարչական սիրով, ամենողորմ Իր սիրով Ապրիլյան անմեղ զոհերի հոգիները և նրանց կարգի Իր երկնային երանական լուսեղեն բարձունքներում:

Թող Տերը ամենագութ Իր ողորմությամբ հավիտենական Իր հարկերում լույսերի մեջ պահի և պահպանի մեր անմեղ նահատակների հոգիները: Թող Տերը ուժ, կորով, վճռականություն պարգևի մեր ժողովրդի բոլոր զավակներին՝ զորացնելով ամենքիս մեջ կամքն ապրելու, զորացնելով ամենքիս մեջ կամքը՝ հիշելու և հավատարմություն դրսևորելու անմեղ նահատակների հիշատակին, ապրելու և ստեղծագործելու, նվիրվելու և աշխատելու այնպես, ինչպես որ դա արեցին Ապրիլյան նահատակները՝ Տիրոջից իրենց պարգևված կյանքի տարիներին այժմ և հավիտյանս հավիտենից. ամեն:

ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ

(ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՊԱՏԱՐԱԳԻ ԱՌԻԹՈՎ)

Մայր Աթոռ Սբ. Էջմիածին
3 հոկտեմբերի, 2004 թ.

«Որով իշխանութեամբ առնես զայդ»
(Մատթ. ԻԱ 23)

Սիրելի՛ հավատացյալ քույրեր և եղբայրներ,

Այսօր կուզեմ նախևառաջ որդիական երախտագիտություն և հավատարմություն բերել Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսին, սրանից մեկ շաբաթ առաջ՝ սեպտեմբեր 26-ին, նվիրական և սրբազնասուրբ այս Խորանին եպիսկոպոսական բարձր ծառայության կոչվելու առիթով: Շնորհակալություն նաև հոգևոր եղբայրներիս, ովքեր իրենց աղոթքներով, իրենց զորակցությամբ աջակից են ինձ, որպեսզի դույզն հաջողությամբ կարողանամ իրականացնել դժվարին և պատասխանատու այս առաքելությունը: Հայցում եմ հավատացյալներիդ աղոթքները տկար անձիս համար, որպեսզի կարողանամ փոքր ինչ արդարացնել այն հույսերը, այն ակնկալությունները, որոնք կապվում են յուրաքանչյուր նորոգ ձեռնադրյալի հետ: Նախախնամական եմ տեսնում, որ այսօր սրբազնասուրբ այս բեմից ընթերցված սուրբգրային հատվածներում շոշափվում էր մի նյութ, որը լավագույն ուղենիշը կարող է լինել ինձ, որ կոչվել եմ նոր բարձրագույն իշխանության՝ եպիսկոպոսական իշխանության՝ արժեցնելու այդ իշխանությունը ծառայությամբ:

Ահավասիկ այդ դրվագներից մեկը, որը ամփոփված է Մարկոսի Ավետարանի տասնմեկերորդ գլխում: Երբ Քրիստոս շրջում էր Երուսաղեմում, արդեն իսկ բավական համբավ ձեռք բերած՝ որպես հրաշագործ, սքանչելագործ անձ և նաև իր աշակերտների կողմից՝ սիրված և հռչակված, մոտենում են նրան փարիսեցիները, դպիրներն ու սադուկեցիները, ովքեր գիտակներն էին հրեական օրենքների և կանոնների: Մոտենում են և ասում, թե՝ մենք գիտենք, որ դու հմուտ մեկնիչ ես, այր ես սքանչելագործ, և կուզենք իմանալ, թե ի՞նչ իշխանությամբ ես այդ ամենը կատարում: Բնականաբար, Տիրոջ սքանչելագործությունների մասին նրանք արդեն իսկ տեղյակ էին, որովհետև մինչ այդ Տիրոջը խնդրել էին, որպեսզի իրենց նշան ցույց տար, սքանչելիք կատարեր՝ հավաստելու համար Իր աստվածությունը, Իր բացառիկությունը:

Այս անգամ արդեն հարցը փոխված էր. հարցը ուղղվում էր Քրիստոսին՝ պարզելու, թե այն ամեն հրաշագործությունները, որոնք կատարվում են, ի՞նչ իշխանությամբ են կատարվում: Տիրոջը հարցնում են, թե՝ ո՞վ տվեց Քեզ այդ իշխանությունը: Քրիստոս հանդարտ և, ամբողջապես հասկանալով հարցադրումը կատարողների ետին միտքը, կրկին պատասխանում է հարցով՝ իսկ դուք կարող եք ինձ ասել՝ Հովհաննես Մկրտիչը, որ եկավ, քարոզեց ինձնից առաջ, արդյոք երկնքի՞ց էր առաքված, թե՞ երկրից, այսինքն՝ իր իշխանությունը երկնքի՞ց էր գալիս, թե՞ մարդկանցից էր տրված: Ավետարանիչն այստեղ նաև մի հետաքրքիր արտահայտություն է անում: Ասում է, որ հրեա վերնախավի ներկայացուցիչները սկզբից մտածեցին պատասխանել, որ Հովհաննես Մկրտչի հայտնությունը, իշխանությունը երկրից էր, սակայն հետո երկնչեցին: Վախեցան, որովհետև ժողովրդի շրջանում Հովհաննես Մկրտիչը համակրանք, սեր և հարգանք էր վայելում: Բայց նաև միաժամանակ հիշեցին, որ

եթե պատասխանեն՝ երկնքից է, ինքնաբերաբար հարց պետք է առաջանար՝ իսկ եթե երկնքից էր, ինչո՞ւ թույլ տվեցիք նրան սպանել: Ահա այս իրավիճակում չփոթված, մտամոլոր՝ նրանք ասացին՝ չգիտենք, թե որտեղից էր Հովհաննես Մկրտչի իշխանությունը: Այնուհետև Քրիստոս ասում է՝ եթե դուք չեք կարող իմ հարցին պատասխանել, ես էլ չեմ ցանկանում ձեր հարցին պատասխանել:

Առաջին հայացքից թվում է, թե Քրիստոս հարցով ընդամենն իրեն տրված հարցը փակեց, և, սակայն, քիչ հետո պարզվում է, որ երկրորդ հարցադրումով Քրիստոս նաև պատասխանում է Իրեն ուղղված հարցին: Պատասխանի մեջ Տերը մատնանշում է այն անձին՝ Հովհաննես Մկրտչին, ով տեղեկացրել էր Իր գալստյան մասին, ով նաև բացահայտել էր Իր իշխանության աղբյուրը: Իսկ ո՞րն է այդ իշխանության աղբյուրը. երբ Եսայի մարգարեն հորդոր է կարդում ժողովրդին, ասում է. «Յուսացեալ լիցի մարդն յԱրարիչ իւր» (Եսայի ԺԷ 7): Ահա իշխանության աղբյուրը և ակունքը: Իշխանությունը ոչ թե տրվում է մեկ այլ անձի կողմից, իշխանությունը ոչ թե ծնվում է անձի մեջ, այլ իշխանությունը ծնվում է Աստծու նկատմամբ մարդու հավատարմությունից, մարդու՝ Աստծուն ապավինությունից: Ահա այս է իշխանության աղբյուրը սուրբգրային հայտնության մեջ և քրիստոնյաներիս ընկալումների և ըմբռնումների մեջ:

Իշխանության մասին իր ըմբռնումները ներկայացնում է նաև Պողոս առաքյալը: Ունենալով հսկայական իշխանություն հավատացյալների վրա, լինելով համապատիվ առաքյալներին և լինելով քրիստոնեության մեծագույն ջատագովներից մեկը, իր խոսքն ուղղելով կորնթացիներին՝ իր այդ մեծ իշխանությամբ հանդերձ ասում է. «Եղբայրնե՛ր, ես խնդրում եմ, որպեսզի դուք փոխվեք և մշտապես բարիք գործեք, ոչ թե նրա համար եմ ուզում, որ բարիք գործեք, որպեսզի ես փառավորվեմ և ես երևամ ընտիր, այլ որպեսզի ձեզ հա-

մար լավ լինի, ցանկանում եմ, որպեսզի դուք ավելի զորավոր լինեք, զորավոր լինեք՝ նույնիսկ ի դին իմ տկարանալու» (հմմտ. Բ Կորնթ. ԺԳ 7):

Ահա իշխանության ևս մեկ բացահայտում, ևս մեկ աղբյուր: Ուրեմն՝ իշխանության դրսևորումը նաև առաջին հերթին սերն է, սեր, որ է ծառայության մեջ, սեր, որ դրսևորվում է բարի արդյունքով: Բարսեղ Կեսարացի Հայրապետը՝ մեծագույն Հայրապետներից մեկը Ընդհանրական Սուրբ Եկեղեցու, երբ անդրադառնում է իշխանությանը և մեկնաբանում է՝ հարստությո՞ւնն է արդյոք իշխանությունը. ո՛չ, հարստությունը կողոպտվում է, մսխվում է. գեղեցկությո՞ւնն է արդյոք իշխանությունը. ո՛չ, գեղեցկությունը խամրում և մաշվում է: Ֆիզիկական ո՞ւժն է իշխանությունը. ո՛չ, այն տարիքի հետ թուլանում է: Եվ վերստին ու վերստին անդրադառնալով, մատնանշելով իրական աղբյուրն իշխանության՝ ասում է, որ իրական իշխանությունը Տիրոջ կողմից ընծայված բարեհաճությունն է անձին, որ փոխհատուցվում է անձի հանդեպ Տիրոջն ընծայված հավատարմությամբ:

Պողոս առաքյալը Կորնթացիներին ուղղված երկրորդ թղթում վերստին նշում է, որ իշխանությունը, որը տրված է իրեն, տրված է ոչ թե քանդելու, ոչ թե ամայացնելու, ոչ թե տակնուվրա անելու, այլ կառուցելու համար: Եվ այն իշխանությունը, որը հաստատված է սիրո, ծառայության պատրաստակամության վրա, այդ իշխանությունը մշտապես գործում է և մշտապես զորացող է: Իշխանության մասին ուրիշ մի առիթով Քրիստոս խոսում է, երբ առաքյալների հետ շրջում էր, և մի անգամ հարց է տրվում, թե ո՞վ է առաքյալների մեջ մեծը: Քրիստոս պատասխանում է՝ ձեզնից ով փոքրն է, նա է ձեզանից ավելի մեծ. ով սպասավոր է, նա է իշխան, չեկա սպասավորություն վերցնելու, եկա սպասավորելու, եկա ծառայելու: Ահա Քրիստոսի պատգամն ամենքիս:

Եվ այսօր, սիրելի՛ քույրեր և եղբայրներ, ես մի նախախնամական, ես մի խորհրդանշական իրադարձություն եմ տեսնում, երբ աշխարհասփյուռ մեր գաղթօջախներից Ամենայն Հայոց Հայրապետի հովանավոր աջի և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի նվիրական այս կամարների ներքո են հավաքվել Հայ Բարեգործական Ընդհանուր Միության աշխարհասփյուռ գավակները և անդամները: Այս օրերին Հայաստանի Հանրապետությունում՝ մեր Հայրենիքում, անցկացվում է Հայ Բարեգործական Ընդհանուր Միության ութսուներեքերորդ ընդհանուր համաժողովը: Պատահական չեմ տեսնում այս զուգադիպությունը, որովհետև Բարեգործական Ընդհանուր Միությունն իր պատմության ողջ ընթացքին ծառայություն է բերել մեր ժողովրդին: Մի դիպուկ արտահայտությամբ՝ Հայ Բարեգործական Ընդհանուր Միությունը կոչվել է Սփյուռքի հայոց կառավարություն, Սփյուռքի հայոց իշխանություն և այդ իշխանությունը եղել է ծառայության, նվիրումի կառավարություն: Ծառայություն, որ բազմաթիվ հայկական գաղթօջախներում ստեղծել է դպրոցներ և եկեղեցիներ: Որքան հայ երիտասարդներ կրթություն են ստացել Հայ Բարեգործական Ընդհանուր Միության հոգածությամբ: Այն եղել է և շարունակում է մնալ կարևորագույն սնող զարկերակներից մեկը ազգային մեր կյանքում՝ ինչպես Հայաստանում, այնպես և Սփյուռքում:

Այսօր նաև ուրախությունն ունեմ հայտնելու, որ այն իշխանությունը, որը տրվում է մեզանից յուրաքանչյուրին՝ քրիստոնյա անունը կրելու, և այն իշխանությունը, որը տրվում է մեզ՝ ձեռնադրությամբ քահանա կոչվելու, այդ իշխանությունը կրելու են գալիս նաև նոր եկեղեցականներ, նոր հոգևորականներ, և Տիրոջ կամքով, Վեհափառ Հայրապետի օրհնությամբ՝ հաջորդ կիրակի, հոկտեմբեր 10-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում վերստին այդ իշխանությունն է տրվելու քսան նորընծա եկեղեցականների, շուրջ քսան եկե-

ղեցականների, ովքեր գալու են համալրելու, մեկտեղելու իրենց ջանքերը, համախմբվելու, որպեսզի առավել առաջընթաց ապրի առաքելությունը նվիրական այն հաստատության, որը դարերի հոլովույթի մեջ փաստել է, որ միակն է և անփոխարինելին, բացառիկն է այս ժողովրդի կյանքում, և այդ հաստատությունը Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին է, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը իր կենտրոնով և աստվածարյալ իր Հայրապետով: Եվ այս իշխանությունը՝ ծառայության իշխանությունը, վստահ ենք, որ պիտի կարողանա նոր արդյունքներ ապահովել մեր ժողովրդի կյանքում: Այս իշխանությունն է՝ ծառայական իշխանությունը, որ պիտի ծաղկում, զարթոնք և բարգավաճում բերի մեր Հայրենիքին, մեր գաղթօջախներում ազգային մեր կյանքին:

Թող Տերը հովանավոր Իր Աջով, ամենախնամ Իր ողորմությամբ մշտապես ծաղկեցնի մեր հոգում, զարթնեցնի մեր հոգում միմյանց ծառայելու, միմյանց սիրելու, միմյանց մտահոգություններով և ուրախություններով բաժնեկից լինելու ապրումը և պարգևը:

Շնորհք, սեր և աստվածային սրբարար զորությունն ընդ ձեզ և ընդ ամենեսյանսդ. ամեն:

ԱՌԱՔԵԼԱՇԱՎԻՂ ԾԱՌԱՅԱԿԻՑՆԵՐ

(ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՌԻԹՈՎ)

Երևանի Սբ. Գրիգոր Լուսավորիչ Մայր Եկեղեցի
10 հոկտեմբերի, 2004 թ.

Սիրելի՛ հավատացյալ քույրեր և եղբայրներ,

Այսօր բացառիկ ուրախություն է Առաքելական մեր Սուրբ Եկեղեցում, քանզի ամենքս՝ հոգևոր և աշխարհական դասով, Ամենայն Հայոց Հայրապետի հովանավոր աջի օրհնության ներքո, համախմբվել ենք Սուրբ Գրիգոր Լուսավորչի անունը կրող նվիրական և 1700-ամյակին ընծայված այս տաճարում, համախմբվել ենք՝ կատարելու, մասնակից լինելու մեր աղոթքներով ձեռնադրության արարողությանը տասնինը նորընծայյալների: Տասնինը անձեր, ովքեր իրենց ուսումնառությունը Գևորգյան Հոգևոր ճեմարանում և քահանայից պատրաստման լսարանում անցնելուց հետո հանձնառություն դրսևորեցին, պատրաստակամություն ունեցան լծվելու այն առաքելությանը, իրենց անձերի վրա կրելու այն կոչումը, որն ավանդվեց մեզ մեր Տեր Հիսուս Քրիստոսից և որն իրականացվեց մեր հայրերի կողմից:

Ահա այսօր՝ բացառիկ ուրախության այս օրն անդրադառնում եմ Տիրոջ այն խոսքերին, որոնք արձանագրված են Ղուկասու Ավետարանի իններորդ գլխում. «Ոչ ոք արկանէ ձեռն զմաճով և հայիցի յետս»: («Ոչ ոք չի կարող ձեռքը մաճին դնել և ետ նայել) (Ղուկ. Թ 62): 17 դարեր առաջ, երբ քրիստոնեությունը պետականորեն հաստատվեց մեր երկրում, նվիրական այս հողի վրա, և 20 դարեր

առաջ, երբ տակավին նոր էր քրիստոնեությունը մուտք գործել մեր աշխարհ, մեր հայրերը, արձագանքելով Տիրոջ կոչին, վճռականորեն դրեցին իրենց ձեռքը այն մաճին, որը կոչվում է սիրո ու ծառայության առաքելություն: Ահա այսօր նվիրական այդ շղթան շարունակվում է, և 20 դար անց, երբ մեր Եկեղեցին Հայաստանի նորանկախ Հանրապետության իրողությամբ նոր շունչ և նոր զարթոնք է ապրում, վերստին այդ առաքելությանն են լծվում, այդ ծառայության մաճին ձեռքներն են դնում 19 նոր ընծայյալ քահանա հայրեր:

Սիրելի՛ հոգևոր եղբայրներ, ընծայացուներ, այսօր գիտեմ, թե որքան հուզումնալից է տրոփում ձեր սիրտը, և ինչ իղձերով ու նվիրական ապրումներով է հորդում ձեր արյունը: Գիտեմ՝ որքան պատրաստակամ եք, գիտեմ՝ խանդավառության ջերմ զգացումով լցված եք ձեր ծառայությունը բերելու Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն: Այս արարողության ընթացքում ընթերցեցինք աղոթքներ, մաղթանքներ, որոնց նշանակությունը և առանցքը մեկն է՝ ծառայություն և անմնացորդ ծառայություն Տիրոջը և սրբազան մեր Եկեղեցուն:

Քրիստոնեական ծառայությունը ծառայությունների մեջ թերևս այն միակն է, որ երկվություն չի հանդուրժում, միակն է, որ ասում է. «Չեք կարող երկու տիրոջ ծառայել» (Մատթ. Զ 24): Քրիստոս, երբ Իր աշակերտներին ուղարկեց, առաքեց ծառայագործության, ասաց. «Ձեզ հետ մի վերցրեք ո՛չ գավազան և ո՛չ մախաղ, ո՛չ հաց և ո՛չ արծաթ դրամ» (Ղուկ. Թ 3): Ուրեմն և մեր՝ հոգևորականներիս առաջին առաքելությունը մեր ծառայության մեջ անմնացորդ նվիրումն է մեր առաքելությանը, այն ծառայությանը, որը կոչված ենք իրականացնելու: Եվ վերստին մեր ծառայության համար անդրադառնալով այն օրինակներին, որ Քրիստոս տվեց մեզ, հիշենք, որ երբ Քրիստոս վերստին մեկնեց դեպի Սամարիա, որտեղից այնուհետև պետք է գնար Երուսաղեմ, ցանկացավ

իջևանել սամարացիներից մեկի տանը, և սակայն երբ սամարացին իմացավ, որ Քրիստոս այնուհետև պետք է մեկնի Երուսաղեմ, դռները փակեց Նրա առջև և չթողեց, որ Քրիստոս իր աշակերտների հետ օթևանի իր տանը: Աշակերտները, ի պատասխան, անմիջապես, ասացին. «Տե՛ր, եկ՝ երկնքից հրդեհ բերենք, կրակ բերենք և այս մարդկանց հրդեհենք, որովհետև իրենք չգիտեն, թե ում առջև են դուռը փակում»: Քրիստոս սակայն պատասխանում է. «Ո՛չ, Մարդու Որդին չեկավ կորստյան մատնելու»՝ Մարդու Որդին չեկավ ավերելու, ոչնչացնելու, այլ եկավ կառուցելու ու փրկելու: Եվ ահա երկրորդ այն առաքելությունը, որին լծվելու եք դուք հետայսու ձեր հոգևոր ծառայագործության ընթացքին, պետք է լինի ոչ թե քանդել, ոչ թե խռովություն սերմանել, այլ սեր քարոզել, կառուցել, ջերմացնել իրարից մերժված սրտերը, իրար մոտեցնել չհանդուրժող անձերին: Ահա այս է լինելու ձեր առաքելությունը, սիրելի՛ եղբայրներ, ձեր ծառայագործության, ձեր քահանայագործության ընթացքին:

Եվ մաղթանքս է, որ մեր ժողովուրդն իրապես, որպես ձեր կոչմանը արժանի հոգևորականների, ձեզ դիմի հենց այդպես:

Տիրոջ սերը, շնորհն ու օրհնությունը ձեզ և ամենքի հետ. ամեն:

ԽՍՔԻ ՃԱՆԱՊԱՐՀ

(Բաբվի ջարդերի հիշատակի առիթով)

Մայր Աթոռ Սբ. Էջմիածին
23 հունվարի, 2005 թ.

«Զի դու ես մեր Հայր»
(Եսայի ԿԳ 16)

Սիրելի՛ քույրեր և եղբայրներ, այսօր ազգիս Վեհափառ Հայրապետի՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի մասնավոր տնօրինությամբ՝ Պատարագի սրբազան արարողության ընթացքին կատարելու ենք հոգեհանգստյան արարողություն՝ ի հանգիստ 1990 թ. Բաքվում զոհված հայերի հոգիների: Նախախնամական է, որ մեր Հայրերի իմաստուն տնօրինությամբ՝ սուրբգրային այսօրվա ընթերցվածում Եսայի մարգարեի շրթներով Տիրոջն ուղղված խոսքում ասվում է. «Դու ես մեր հայրը: Աբրահամը չգիտէր մեզ, Իսրայէլը մեզ չէր ճանաչում, բայց դու, Տէ՛ր, Հա՛յր մեր, փրկի՛ր մեզ, որովհետև սկզբից ի վեր մեզ վրայ է քո անունը» (Եսայի ԿԳ 16):

Քանի՛-քանի անգամներ մեր ժողովուրդը՝ որպես հավաքականություն, այլևս հոգնելով և հուսախաբ լինելով մարդկանց շարքերում Աստծուն փնտրելուց, վերստին դարձել է դեպի ճշմարիտ աստվածճանաչողություն, վերստին դարձել է դեպի Աստված և իր հոգսերը, իր ցավերը, իր տառապանքներն ու ողբերգությունները պատմել Նրան՝ վերստին հաստատելով, որ Աստված է իր Տերը: Ոչ ոք, նաև նրանք, ովքեր ստեղծեցին ազգերի կարծեցյալ եղբայրության ներքո

մի հսկա բռնապետություն, ի զորու չէին ազգերի և ժողովուրդների միջև առաջացնել եղբայրության, բարեկամության իրական համագործակցության ոգի:

Ահա այդպիսին էր այն համակցությունը, բռնի համակցությունը, որ կոչվում էր Խորհրդային Միություն, որի լուռ հայացքի ներքո տակավին 1988 թվականից, երբ մեր ժողովուրդը հերոսական ջանքերով, հերոսական մաքառումների գնով ընթանում էր այն ճանապարհով, որի բարձունքն անկախության ու ազատության լույսն էր, ահա այդ տարիներին բռնիորեն, ոճրագործ ճանապարհներով փորձ արվեց կասեցնել մեր ժողովրդի ընթացքը:

Համառոտ թվարկումն իսկ այն ողբերգությունների, այն հալածանքների, որոնք տեղի ունեցան մեր ժողովրդի զավակների հետ, բավական է, որպեսզի ցանկացած թերահավատ, ցանկացած տարակույս ունեցող անձ խոնարհեցնի իր գլուխը կամքի և տոկունության առջև այն ժողովրդի, որի զավակները լինելու պատիվը և կոչումը ունենք մենք ամենքս: 1988 թ.-ի ահռելի երկրաշարժ, Սումգայիթի, Կիրովաբադի ոճրագործություններ և ահա այս ողբերգական շղթայի օղակում ևս մեկ ոչ պակաս քստմնելի, ոչ պակաս սահմռկեցուցիչ մի տեսարան՝ Բաքվի ջարդերը, ջարդեր, որոնց ցավն արդեն տասնհինգ տարի ուղեկից է մեր ժողովրդին, որոնց վերքերը տակավին սպիացած չեն:

Ականատեսների վկայությամբ՝ այդ օրը՝ հունվար 13-ի գիշերը, հարյուրավոր հայեր ենթարկվեցին սոսկալի տանջանքների ու չարչարանքների և սպանվեցին: Մի ամերիկացի դիվանագետ պատմում է, թե ինչպես ծերանոցի տասնչորս ծերեր ուղղակի կենդանիորեն, ողջ-ողջ թաղվեցին, ուրիշներ պատմում են, թե ինչպես խուժանը կրակի շուրջը հավաքված տաքանում էր հաջորդ իր ջարդն ու կողոպուտն սկսելուց առաջ: Եվ ինչպե՜ս այս երևույթը հրեշավորությամբ տարբե-

րել 1915 թվականի սոսկալի Ցեղասպանությունից, ինչպե՛ս այն չորակել Ցեղասպանություն:

Մեզ սպանում էին ոչ թե նրա համար, որ մենք եղբայրասպան ենք՝ իբրև Կայենը և ոչ էլ Տիրասպան՝ որպես Հուդան, այլ մեզ սպանում էին մեկ բանի համար, մենք հա՛յ ենք, քրիստոնյա՛ ենք, և ոչ ոք չէր կարող մեզ վրա դատապարտության կնիք դնել որպես դավաճանի և որպես Տյառնասպանի և կամ եղբայրասպանի:

Մեր դատապարտությունը մեկն էր. այն, որ մենք պատկանում էինք մի ժողովրդի, որին կոչում են «Հայ»: Եվ ահա այսօր մենք, համախմբված այս սուրբ տաճարում, Վեհափառ Հայրապետի բարձր հովանու ներքո, կոչված ենք աղոթելու, կոչված ենք մեր հայացքները դեպի վեր բարձրացնելու՝ հանգստություն հայցելու հոգիներին այն նահատակաց, ովքեր այդ օրերին իրենց հոգին ավանդեցին: Մենք հավատում ենք, որ, Վազգեն Վեհափառի խոսքերով, մահը դառնում է նախերգանքը հավիտենական կյանքի, մենք հավատում ենք, որ մահը ամենասարսափելին չէ, որ կարող է կատարվել քրիստոնյայի հետ, բայց նաև հավատում ենք, որ այն ձեռքերը, որ ի զորու են կտրել Աստծո կողմից պարգևված կյանքի թելը, այդ ձեռքերը պիտի չորանան:

Մենք հավատում ենք նաև, որ Աստված, որ Իր հովանին տարածում է ինչպես արդարների, այնպես և մեղավորների վրա, տեր պիտի լինի ինչպես մեզ՝ ապրողներիս ու ողջերիս, այնպես և մահացածներին, և մենք մի օր վերստին պիտի հանդիպենք մեր նահատակված, զոհված, սպանդի ենթարկված քույրերին, եղբայրներին, մանուկներին ու ծերերին: Թող Աստծո ամենախնամ Աչը մշտապես հովանի լինի ամենքիս, մխիթարություն բերի մեզ, և թող մեր պատմության դառը փորձառությունը վկայություն լինի մեզ, որ մենք պետք է համախումբ լինենք, պետք է տարակույսներ չու-

Նենանք դեպի հաղթանակ գնալու մեր ճանապարհին, չարժեզրկենք այն բոլոր հալածանքներն ու դժբախտությունները, որոնք բաժին հասան մեզ դեպի անկախություն և ազատություն մեր հաղթարշավի ճանապարհին: Թող Աստված ամենողորմ Իր սիրով, ամենագութ Իր Աջով մեզ ամենքիս մխիթարություն պարգևի և հանգստություն բերի զոհված հոգիներին:

«Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի. ամէն»:

ՃՇՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎՈՐԴՆԵՐ

Մայր Աթոռ Սբ. Էջմիածին
2 հոկտեմբերի, 2005 թ.

«Ոչ կարեմք ինչ հակառակ կալ ճշմարտութեանն,
այլ վերակացու եմք ճշմարտութեանն»
(Բ Կորնթ. ԺԳ 8)

Ճշմարտություն: Որքա՜ն առաձգական, որքա՜ն անհստակ է հնչում այն այսօրվա մարդկանց շրթներին: Որքա՜ն անորոշ ընկալումների և հասկացողությունների տեղիք է տալիս այս մեկ բառը: Յուրաքանչյուր անձ մեկ պատկերացում է դնում «ճշմարտություն» բառի տակ, բայց միաժամանակ՝ որքա՜ն պարզ, որքա՜ն հստակ, որքա՜ն մեկին է այն Պողոս առաքյալի շրթներին: Հեթանոսաց առաքյալն է, որ վստահորեն, առանց երկմտության, հայտարարում է. «Ոչ թե ճշմարտությանը հակառակորդ ենք, այլ ճշմարտության պաշտպաններն ենք»:

Այս էր առաքյալի պատգամը Հունաստանի քաղաքներից մեկում՝ Կորնթոսում ձևավորված քրիստոնեական համայնքին, մի քաղաք, որն այդ ժամանակաշրջանում հայտնի էր իր վկայությամբ, ուր իր այցելություններով Պողոս առաքյալը ձևավորել էր քրիստոնեական առաջին համայնքը, ուր նաև մի շարք անձինք հայտնի էին իրենց ջերմեռանդ բարեպաշտությամբ, ջերմեռանդ վկայությամբ: Ժամանակի հոսանքները, ժամանակի թյուրընկալումները չփոթ էին առաջացրել այս համայնքում: Քրիստոնյա եղբայրների միջև վիճաբանություն էր ծագել, և Պողոս առաքյալն իր հեղինակությամբ վերստին կոչված էր հարթեցնելու Կորնթոսի համայնքում հերձված դառնալու սպառնացող վիճակը: Եվ երբ նրան մեղադրում են,

թե ինքը ոչ այնքան վճռական է, նա պատասխանում է. «Քավ լիցի, որ ես իմ իշխանությունը գործադրեմ քանդելու համար, որովհետև իշխանությունն ինձ տրվեց ոչ թե քանդելու, այլ կառուցելու համար, որովհետև ես ճշմարտության հետևորդն եմ և ոչ թե հակառակորդը, և եթե ճշմարտությունն ինքնաբերաբար կարողանա հաստատվել ձեր համայնքից ներս, ես ուրախ կլինեմ, եթե չօգտվեմ իմ այդ իշխանությունից»:

Ահա այս է այսօրվա Սուրբ Գրոց պատգամը՝ քաղված Պողոս առաքյալի՝ Կորնթացիներին ուղղված երկրորդ նամակից, սիրելի՛ հավատացյալներ, որ մատուցվեց այսօրվա Սուրբգրային ընթերցվածների միջոցով ամենքիս խորհրդածությանը: Եվ հակառակ, որ բազում անգամներ հնչել է «ճշմարտություն» բառը, այսօր, պատմության սկզբնավորման ակունքներից սկսյալ, տակավին հստակ չէ, որոշ չէ «ճշմարտություն» հասկացության ընկալումը մարդկանց մտածումների մեջ:

Հուսալքված այլևս իրենց կյանքում տեղ գտած անբարո դրսևորումներից, մարդկային հարաբերությունների մեջ տեղ գտած անընդունելի երևույթներից, երբ արդեն անկարելի էր դարձել այդ հարաբերությունների մեջ նշմարել անգամ ջերմությունը, ազնվությունը, անկեղծությունը, շիտակությունը, հին հռոմեացիները հակված էին ենթադրելու, որ ճշմարիտ էր միայն մեկ բան, որ ոչինչ ճշմարիտ չէ:

Հին հույները ճշմարտությունը կապում էին գեղեցկության հետ, ոմանք՝ ուժի հետ՝ վերջինս հայտարարելով իբր ճշմարտության բացարձակ և միակ աղբյուր: Անցան ժամանակներ, սակայն ո՛չ ուժով, ո՛չ գեղեցկությամբ և ո՛չ նյութական արժեքներով անկարելի եղավ հաստատել ճշմարտությունն աշխարհի վրա: Այսօր՝ Քրիստոսի գալուստից երկու հազար տարի հետո, տակավին արդիական է, տակավին այժմեական է այն հարցը, որը Քրիստոսին տվեց այն կուսակալը, ով հայտնի է իր չեզոք, անդեմ, աննկարագիր կեցվածքով, որին պատմությունը հիշում է «Պիղատոս» անունով:

Երբ Քրիստոսին տարան նրա մոտ, հարցրեց. «Արդյո՞ք դու թագավոր ես»: Քրիստոս պատասխանեց. «Ես չասացի, դու ասացիր, որ Ես թագավոր եմ, և Ես եկել եմ ճշմարտությունը ներկայացնելու»: Եվ այստեղ Պիղատոս հնչեցնում է հարցումը, որ դարեր շարունակ հուզել է բարոյախոսներին, իմաստասերներին և ընդհանրապես՝ մարդկանց: Ի՞նչ է ճշմարտությունը: Առաջին հայացքից մենք, Ավետարանի մեջ չգտնելով Քրիստոսի պատասխանը այս հարցումին, տարակուսանքի մեջ ենք հայտնվում: Արդյո՞ք Քրիստոս Ինքը ևս չգիտեր, թե ինչ է ճշմարտությունը: Բայց Ավետարանի համապարփակ իմացությունը միանշանակ պատասխան է տալիս այս հարցումին. «Ե՛ս, Ե՛ս եմ Ճշմարտությունը և Ճանապարհը»,- պատասխանում է Քրիստոս: Եվ Իր լուռ, խոնարհ, հեզ կեցվածքը Պիղատոսի առջև ընդամենը հանդիմանություն էր՝ «կանգնած Ճշմարտության առջև՝ ճշմարտությո՞ւն ես փնտրում, լույսերի մեջ՝ ճրա՞գ ես փնտրում»:

Ճշմարտությունը խաղաղություն է: Երբե՛ք ու երբե՛ք ճշմարտությունը հաստատվելու համար բռնության և կոպտության կարիք չունի: Ճշմարտությունն ի զորու է ինքն իրեն հաստատելու, որովհետև ճշմարտության աղբյուրն Ինքն Աստված է, իսկ Աստված խաղաղության իշխան է: Երբ մարգարեն Աստծուն պիտի տեսներ, նրա առջևով հսկա փոթորիկ է անցնում, և Սուրբ Գրքում ասվում է, որ Աստված այնտեղ չէր: Հետևում է ավելի հզոր մի փոթորիկ, և վերստին պարզվում է, որ Աստված այդտեղ էլ չէր, դրան հաջորդում է մի մեղմ զեփյուռ, մի հանդարտ քամի, և մարգարեն ասում է, որ ահա Աստված այդ հանդարտության, այդ խաղաղության մեջ էր:

Երկրորդ՝ ճշմարտությունը ծառայության մեջ է: Տեր Հիսուս Ինքն ասաց. «Ես չեկա սպասավորություն ընդունելու, այլ եկա սպասավորություն կատարելու, և նա, ով ցանկանում է ձեր մեջ մեծը լինել, պարտավոր է առաջին սպասավորը լի-

նել»: Ուրեմն՝ ճշմարտության արտահայտման եղանակը սպասավորությունն է, ինքնազոհողությունը և ծառայությունը:

Երրորդ՝ ճշմարտությունը չի կարող հարաբերվել աշխարհային պայմանականությունների հետ, մարդը չի կարող իրեն կաշկանդել աշխարհային կապերով, նյութական արժեքներով և հավակնել, որ ճշմարտության ջատագով է:

Հակոբոս առաքյալը նշում է, որ բոլոր պարգևները, բոլոր նվերները մեզ ընծայված են Տիրոջից: Ահա մենք ճշմարտության ջատագով, հետևող, պաշտպան կարող ենք լինել այն ժամանակ միայն, երբ ընդունենք երկնքից եկած պարգևները, երկնքից եկած բարեմասնությունները, բարոյական արժեքների, հոգևոր արժեքների կրողը և զարգացնողը լինենք:

Չորրորդ՝ ճշմարտությունն անաչառ է, մերկ, չարչարված՝ ինչպես այն հաստատողը, փշե պսակով՝ ինչպես Քրիստոս, երբ խաչափայտին բարձրացավ, քանզի ճշմարտությունն աչառություն չունի: Ճշմարտությունն աշխարհային կաշկանդումներով կապկպված և պայմանավորված չէ: Պիտի գնանք, պիտի ընթանանք ծառայության, պիտի ընթանանք անաչառության, պիտի ընթանանք աշխարհային կապանքներից ձերբազատվելու և խաղաղության հաստատման ճանապարհով, որպեսզի կարողանանք իրական ճշմարտությունը, Տիրոջ ավանդած ճշմարտությունը հաստատել այս աշխարհի վրա, և այն ժամանակ միայն կարող ենք հռչակել Պողոս առաքյալի նման, որ մենք ճշմարտության հակառակորդները չենք, մենք ճշմարտության սպասավորներն ենք՝ համեստ և խոնարհ սպասավորները: Եվ մեր այս սպասավորության մեջ թող օրհնի մեզ Տերը, օրհնի մեր ընթացքը, այժմ և հավիտյանս հավիտենից. ամեն:

ԿՅԱՆՔԸ՝ ԱՂՈԹՔ ԱՌ ԱՍՏՎԱԾ

(ԴԱՏԱՎՈՐԻ ԿԻՐԱԿԻԻ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ)

Մայր Աթոռ Սբ. Էջմիածին
26 մարտի, 2006 թ.

Սիրելի՛ քույրեր և եղբայրներ,

Մեծի Պահոց այս ճամփորդության մեջ, այսօրվա հանգրվանը, այսօրվա կիրակին, մեր հայրերի տնօրինմամբ անվանվել է Դատավորի կիրակի, Անիրավ դատավորի կիրակի: Որտեղի՞ց է առաջացել այս անունը: Ղուկասի Ավետարանի տասնութերորդ գլխում Քրիստոս պատմում է Անիրավ դատավորի և այրի կնոջ առակը, որում ասվում է, թե մի քաղաքի մեջ մի անիրավ դատավոր կար, և այս դատավորի անիրավությունը բնութագրելու համար Հիսուս կատարում է երկու հաստատում. ասում է՝ մարդկանցից չէր ամաչում և Աստծուց չէր երկնչում: Այսինքն՝ անամոթ էր և աներկյուղ՝ Աստծուց երկյուղ չունեցող: Երկյուղ, որից, ինչպես Աստվածաշնչում է ասվում, սկսվում է մարդու իմաստությունը: Անամոթությունը հաճախ շփոթվում է համարձակության հետ:

Ահա այս դատավորը, որը ամոթ ու երկյուղ չուներ, մշտապես անտեսում է մի այրի կնոջ խնդրանքը: Կինը մի վեճ ուներ իր հարևանի հետ և անընդհատ իր հետևողական, նպատակասլաց ջանքերով ցանկանում էր իր արդար դատի, արդար վճռի ելքը տեսնել: Եվ Քրիստոս ասում է, որ, անշուշտ, դատավորը անամոթ և աներկյուղ էր, բայց որոշում է ի վերջո վճիռ կայացնել և լուծում տալ այս կնոջ խնդրին: Եվ վերջում ի՞նչ է եզրակացնում Քրիստոս: Ասում է, որ եթե

երկրային դատավորը, որ ամոթ և երկյուղ չուներ, վերջի-վերջո լուծում տվեց այս կնոջ խնդրանքին, ապա երկնային դատավորը, ով իրական արդարության կրողն է, որքա՜ն ևս պիտի ընդառաջի մեզ: Ահա այս է այն առակը, որի հիման վրա այս կիրակին կոչվել է Անիրավ դատավորի կիրակի:

Ահա այս Դատավորի կիրակիի խորհուրդը լուսաբանելու, պարզաբանելու համար մեր Եկեղեցու հայրերը մեր ուշադրությունը բևեռում են աղոթքի վրա, ուստի այս կիրակին նվիրված է հետևողական, նպատակասլաց աղոթքին: Ահա աղոթքի էությունը և նրա մատուցման եղանակը բացահայտելու համար մեր հայրերը այսօրվա Սուրբգրային ընթերցվածների շարքում զետեղել են նաև երկու հատված Եսայու մարգարեությունից և Պողոս առաքյալի՝ Փիլիպեցիներին ուղղված թղթից:

Ի՞նչ է ասում Եսայի մարգարեն: Նա, որպես Տիրոջ խոսնակ, Տիրոջ դժգոհությունն է փոխանցում Իսրայելի ժողովրդին, այն հատվածին հատկապես, ովքեր հավատարիմ չեն գտնվել Տիրոջ հետ կնքած ուխտին: Եվ ասում է, որ՝ դուք պիտի դատապարտվեք, սակայն նրանք, ովքեր որ մշտապես պահել են ուխտն Ինձ հետ, այսինքն՝ Աստծո հետ, պիտի ժառանգեն այն բարիքները, որոնք իրենց համար նախատեսված են եղել: Հետևաբար, նրանք պիտի կարողանան ճաշակել իրենց սերմանած ծառերի պտուղները, այսինքն՝ չպիտի ասպատակվեն, չպիտի ենթարկվեն օտարների, թշնամիների հարձակումներին: Պիտի վայելեն Տիրոջ ներկայության ամբողջ բերկրանքը: Եվ մի հետաքրքիր խոսք է այստեղ ասում Եսայի մարգարեն. Տիրոջը հավատարիմ եղողները նախքան որ Տիրոջից մի բան խնդրեն, Տերն արդեն գիտի, թե ինչ պիտի խնդրեն, արդեն իսկ առանց իրենց խնդրանքը մատուցելու, Նա նրանց տալիս է այն, ինչ իրենք պիտի խնդրեն:

Եսայի մարգարեի այս խոսքերի շնորհիվ հասկանում ենք, որ աղոթքի լավագույն արտահայտություններից մեկը

հավատարմությունն է Տիրոջը: Եվ բնավ պարտադիր չէ խոսքերով մատուցել աղոթքը: Արդեն ծառայական պատրաստակամությամբ անձը կարող է իր խնդրանքը, իր ակնկալությունները, իր ցանկությունները հայտնել Տիրոջը: Եվ ով այդ ամենը մատուցի, նա կստանա:

Երկրորդ ընթերցվածը, ինչպես ասացինք, Պողոս առաքյալի՝ Փիլիպեցիներին ուղղված թղթից է: Այստեղ առաքյալն, իր զգացումները, իր մտածումները կիսելով Փիլիպեում բնակվող հավատակիցների հետ, ասում է. «Քավ լիցի, որ ես ինձ կատարյալ համարեմ, քավ լիցի, որ ես ինձ համարեմ մեկը, որ ուսանելու, հավատքի մեջ ընթանալու տեղ չունի, այլ իմ պարզ ձգտումը, պարզ ցանկությունն այն է, որպեսզի ես, մոռանալով իմ հետևում մնացածները, ձգտեմ դեպի առաջ, դեպի նպատակակետը իմ, որ է Քրիստոս»:

Զափազանց հետաքրքրական, հոգեբանական նրբություն են պարունակում Պողոս առաքյալի այս դիտարկումը: Փորձենք բացատրել այդ պահը: Մենք՝ իբրև ժողովուրդ, իբրև ազգ, ունենք որոշակի պատմական անցյալ, ունենք որոշակի հիշողություն: Սակայն այդ հիշողություններից ոչ բոլորն են, որ քաջալերում են մեզ, օգնում են մեզ, որպեսզի մենք հասնենք մեր նպատակին: Մենք ունեցել ենք մեր պատմության մեջ թե՛ պարտություններ ու ձախորդություններ, և թե՛ հաջողություններ ու հաղթանակներ:

Հիշյալ ընթերցվածում Պողոս առաքյալի ասածը հետևյալն է. ես փորձում եմ անցյալի մեջ արձանագրած իմ ձախորդությունները, անհաջողությունները մոռացության մատնել, կենտրոնանալ հաջողությունների վրա, որպեսզի հասնեմ բաղձալի նպատակակետին՝ Քրիստոսին: Այդպես է վարվում նաև այրի կինը: Եթե այրի կինն իր անընդհատ կրկնվող այցելությունների ընթացքին դատավորի մոտ հիշեր նախորդ անգամ իր ունեցած խորը հուսախաբությունը, վստահաբար ինքը հաջորդ անգամ այլևս դատավորի մոտ չէր գա: Բայց

հաջողության գրավականը այն էր, որ ինքը երբեք չկորցրեց լավատեսությունը, չսևեռվեց ձախողությունների վրա:

Արդ, սիրելի՛ քույրեր և եղբայրներ, հետևյալն է այսօրվա խորհրդի պատգամը.

առաջին՝ երբեք չպետք է դադարել աղոթելուց՝ Աստծո նկատմամբ հավատարմություն դրսևորելուց,

երկրորդ՝ աղոթքին պետք է ուղեկից դարձնել հետևողական ու գործնական ջանքը,

և երրորդ՝ ամենակարևորը, աղոթքի ժամանակ երբեք չպետք է հուսահատվել:

Հաճախ կարելի է ականատես լինել տրտնջացողների, թե աղոթեցինք, բայց պատասխան չստացանք: Իհարկե, սա սխալ պատկերացում է: Նախ՝ այն պատճառով, որ միշտ չէ, որ մենք գիտենք, թե մեզ ինչ է հարկավոր և երկրորդ՝ աղոթքի պատասխանը տրվում է մեզ տարբեր կերպով:

Արդյո՞ք մեր այսօրվա գոյությամբ մենք պարտական չենք մեր հայրերի աղոթքներին: Ուրեմն և մեր աղոթքների պատասխանը կարող են ստանալ նաև մեր ժառանգները:

Ուրեմն՝ աղոթող սիրտը երբեք ամոթով չի մնա. ամեն:

ԳՈՐԾԸ՝ ԿՅԱՆՔԻ ՉԱՓՈՐՈՇԻՉ

Մայր Աթոռ Սբ. Էջմիածին
9 հուլիսի, 2006 թ.

Սիրելի՛ հավատացյալ քույրեր և եղբայրներ,

Այսօր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի նվիրական կամարների ներքո հոգևոր և աշխարհական քույրերով և եղբայրներով համախմբվել ենք՝ աղոթակցելու միմյանց Սուրբ Պատարագի Սրբազան արարողության ընթացքին և նաև ապրելու հիշատակներով այս Սուրբ Տաճարի, այս Սուրբ հաստատության, պայծառության տեսիլքով ապրած նվիրյալների՝ Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի և տեր և տիկին Ալեք և Մարի Մանուկյանների: Անձեր, ովքեր իրենց կյանքը ընծայեցին մեր ժողովրդին, մեր Եկեղեցուն՝ տենչալով մեր Եկեղեցու և մեր ազգի երջանկությունը, պայծառությունը և բարօրությունը: Ավելի դիպուկ խոսք ես չեմ կարող գտնել բնորոշելու համար իրենց անձերը, քան այն, ինչ որ ընտրեց հենց ինքը՝ Գարեգին Ա Ամենայն Հայոց կաթողիկոսը: Մարդու կյանքը չափվում է գործերով:

1996 թվական: Սգում էր համայն հայությունը. մեծ բարեգործների շառավղից կյանքին հրաժեշտ էր տվել Ալեք Մանուկյանը, և այս առիթով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից ժամանած պատվիրակությունը՝ երջանկահիշատակ Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի գլխավորությամբ, մեկնեց իր մխիթարությունը, իր աղոթքները, իր սփոփանքը բերելու Մանուկյան ողջ ընտանիքին և հավատավոր բարեպաշտ զավակներին: Եվ այս առիթով, կարծես թե գնահատելով նաև իր իսկ կյանքը, Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը

հետևյալն ասաց. «Ո՛վ ազնվազարմ Ալեք Մանուկյան, քո այս մահվան օրը մեր մտածումները ուղղվում են ոչ թե քո մահվանը, այլ քո կյանքին»:

Իրապես, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու երկու նվիրյալներ այսօր իրենց հիշատակով մեզ ոչ թե մղում են խորհելու իրենց մահվան մասին, այլ ավելի՝ իրենց կյանքի մասին: Խորհել են տալիս, որ մարդու կյանքը չի չափվում միայն այն ժամանակահատվածով, որչափ ինքն ապրել է այս երկրի վրա, այլ չափվում է այն գործով, որն ինքը կատարեց ի փառս Աստծու՝ իր երկրի, իր ժողովրդի և, առհասարակ, մարդկության համար:

Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոս. հինգ տարիներ եղան երջանկահիշատակ Հայրապետի գահակալության տարիները, հինգ տարիներ, սակայն բազում ճանապարհներ, արձանագրած բազում հաջողություններ եկեղեցականների պատրաստության մարզում, եկեղեցաշինության մեջ, հինգ տարիներ, սակայն շոշափելի հաջողություններ հրատարակչական մարզում, և կարծես հանգուցյալ Հայրապետը մեղրահոս մի խոսք եղավ և մի նշխար եղավ, որ բաշխվեց մշտապես իր ժողովրդին, և այս հինգ տարիների ընթացքին իրապես ժամանակով չչափվող մի գործունեություն ծավալեց և այդ իր գործը գնահատանքը եղավ նաև իր անձի: Տիար Ալեք Մանուկյան. դժվար է խոսել մի անձի մասին, ով իր բազմաբեղուն գործունեությամբ նվաճել է ոչ միայն Հայաստանը, այլև Սփյուռքի ընդարձակ տարածքը: Մի դիպուկ արտահայտությամբ՝ Հայ Բարեգործական Ընդհանուր Միությունը կառավարությունն էր հռչակված ընդհանուր Սփյուռքի, և երկար տարիներ Ալեք Մանուկյանը եղավ այդ կառավարության ղեկավարը՝ շարունակելով ավանդներն իր վաստակաշատ երախտավոր նախնիների: Նրա հիշատակները սփռված են ոչ միայն Սփյուռքում, այլև առատորեն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում: Առաջին փողոցներից մեկը, որ

վերակոչվեց Երրորդ Հանրապետության տարիներին, եղավ Ալեք Մանուկյանի անվան փողոցը: Ալեք Մանուկյանի անվամբ և օրինակով սերունդներ դաստիարակվեցին: Ազգային առաջին հերոսներից մեկը եղավ տիար Ալեք Մանուկյանը:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տարածքում խոսում են իր արարումները, քարերը և գործերն են աղաղակում, կլինի գանձատունը՝ 1982 թվականին հիմնադրված և կառուցված երջանկահիշատակ Վազգեն Վեհափառի գահակալության շրջանին, կլինի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարը, որտեղ Մանուկյան գերդաստանի՝ Ալեք և Մարի Մանուկյան գերդաստանի հարուստ ավանդները շարունակեցին իրենց ժառանգները, և շարունակեցին նաև նվիրական գործը Գալուստ Գյուլպենկյանի, որ դրանից առաջ հովանավորել էր նորոգությունը Էջմիածնի Մայր Տաճարի:

Ահա նվիրական այս հիշատակներով է, որ ապրում ենք մենք այսօր՝ մեր հոգիներում ու մտքերում կրելով երջանկահիշատակ մեր Հայրապետի՝ Գարեգին Ա Ամենայն Հայոց Հայրապետի, հոգելույս Ալեք և Մարի Մանուկյանների լույս հիշատակները: Այսօր մենք համախմբվել ենք այստեղ Ամենայն Հայոց Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի բարձր հովանու ներքո՝ կատարելու հոգեհանգստյան արարողությունն այս նվիրյալների՝ Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի և տեր և տիկին Ալեք և Մարի Մանուկյանների լույս հիշատակները վերստին վերարծարծելու մեր հոգիներում և հոգեհանգստյան պաշտոն մատուցելու՝ ի հանգիստ նրանց հոգիներին: Այս առիթով ողջունում ենք նրանց հիշատակը մեզ հետ վերապրելու եկած իրենց հարազատներին՝ Սարգսյան ընտանիքին՝ հանձին Եսթեր Սարգսյանի և իրենց մերձավորների, Մանուկյան գերդաստանի՝ հանձին տիկին Լուիզ Մանուկյան Սիմոնի և իր ընտանիքի անդամների ու մերձավորների: Հայցում ենք Տիրոջ մխիթարությունը մեզ հետ նաև իրենց, որպեսզի ապրենք, ապրենք այս նվիրյալնե-

րի հիշատակներով, աշխատենք, ջանանք կյանքի կոչել այն տեսիլքները, ինչ որ չհասցրին անել իրենք իրենց երկրավոր կյանքի ընթացքին:

Թո՛ղ Աստված խաղաղություն պարգևի ննջեցյալներին և մեզ զորացնի նրանց հիշատակներով: Այժմ և հավիտյանս հավիտենից. Ամեն:

ԿԵՆԱՑ ՏՆՏԵՍՆԵՐ

(ՏՆՏԵՍԻ ԿԻՐԱԿԻԻ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ)

Մայր Աթոռ Սբ. Էջմիածին
11 մարտի, 2007 թ.

«Եւ գովեաց Տէրն զտնտեսն անիրաւութեան,
զի իմաստութեամբ արար»:
(Ղուկ. ժ 28)

Այս խոսքերը քաղված են ավետարանական այսօրվա ընթերցվածից, որը քիչ առաջ մատուցվեց մեզ սրբազան այս խորանից՝ որպես այս օրվա համար մեր մտքերին նախատեսված խորհրդածության նյութ:

Մեծի Պահոց շրջանի չորրորդ այս կիրակին մեր Եկեղեցու Տոնացույցում անվանվում է Անիրավ տնտեսի կիրակի: Ամեն տարի մենք Մեծի Պահոց շրջանին անդրադառնում ենք, մեր խորհրդածության նյութ ենք դարձնում Անիրավ տնտեսի առակը, սակայն ամեն անգամ, երբ վերստին մեր մտքերը սևեռվում են ավետարանական այս հիասքանչ դրվագին, վերստին հայտնաբերում ենք, վերստին բացահայտում ենք մեզ համար աստվածճանաչողության լուսավոր նոր ծալքեր: Եվ ուրեմն, կրկին ընթերցենք, կրկին խորամուխ լինենք այդ առակի բովանդակությանը:

Քրիստոս այս առակը պատմեց, երբ շրջապատված էր բազմաթիվ փարիսեցիներով, բազմաթիվ դպիրներով և նաև Իր համախոհներով, Իր աշակերտներով, ովքեր մեծավ մասամբ կազմված էին մաքսավորներից և մեղավորներից: Հիսուս պատմեց Անառակ որդու առակը, որի հիշատակը

մենք նշեցինք նախորդ կիրակի, երբ վերարծարծվում է մեղավորի զղջման գաղափարը: Տերն այնուհետև պատմում է Անիրավ տնտեսի առակը, որում ասվում է, թե մի մեծատուն կար, որը մի տնտես ուներ և որին վստահել էր իր տնտեսության մեկ մասը: Եվ մի օր ինքն այս տնտեսի մասին ամբաստանություն է լսում, թե տնտեսը վատնում է իր ունեցվածքը: Նա անմիջապես իր մոտ է կանչում տնտեսին ու ասում նրան. «Այս ինչ է, որ քո մասին լսում եմ: Դու վատնում ես իմ ունեցվածքը, ուստի այլևս չես կարող ինձ մոտ իբրև տնտես աշխատել. պետք է տաս քո տնտեսության հաշիվը և աշխատանքից ազատվես»:

Այն կտրականությամբ, որով մեծահարուստը դիմում է տնտեսին, այլևս տարակույսի տեղ չի թողնում, որ տնտեսը մեղավոր էր: Փաստն իբրև այսպիսին է ընդունում նաև տնտեսը: Նա որևէ ձևով չի ցանկանում արդարանալ, քանզի գիտեր, որ մեղավոր է և հայտնվում է աշխատանքը կորցրած մարդու, գործազրկության առջև կանգնած մի մարդու իրական մտատանջությունների առջև: Նա մտածում է. «Ինչպե՞ս պիտի շարունակեմ ես ապրել. աշխատել չեմ կարող, իսկ մուրալ, բնականաբար, թույլ չի տալիս իմ հեղինակությունը, իմ դիրքը, հասարակության մեջ ունեցած երբեմնի իմ կշիռը»:

Այս որոնումների մեջ տնտեսը հանգում է հետևյալ եզրակացության. «Հասկացա, թե ինչ պիտի անեմ, պիտի, ուրեմն, հրավիրեմ ինձ մոտ բոլոր պարտապաններին և պիտի զեղչեմ նրանց ունեցած պարտքերը, որպեսզի, պաշտոնս չպահպանելու պարագային, գեթ ձեռք բերեմ նոր բարեկամներ, որոնք, հավանական է, հաջորդ տարիների ընթացքին իմ հետագա ապրուստի, աշխատանքի, հեղինակության և կշռի պահպանման համար կարող են օգտակարություն ունենալ»:

Այսպես մտածելով՝ իր մոտ է հրավիրում պարտապաններին և նրանցից առաջինին ասում է. «Որքա՞ն պարտք ունես

դու»: Վերջինս պատասխանում է, որ այսքան տակառ, այսքան լիտր ձեթ: Տնտեսը ձեթի պարտքի ուղիղ կեսը զեղչում է:

Այնուհետև կանչում է մյուս պարտապանին, որը պարտք էր ցորեն: Եվ նույն կերպ զեղչում է նաև նրա պարտքը:

Ահա մինչև առակի այս հատվածը որևէ արտառոց, որևէ տարօրինակ գործողություն դրանցում նկատելի չէ: Մեր ամենօրյա կյանքի անբաժան մասն են նման երևույթները, և յուրաքանչյուրս էլ մեր կյանքի այս կամ այն հանգրվանին եթե գեթ ոչ մեր, ապա մեր ծանոթների, մեր մտերիմների, մեր բարեկամների կյանքում նման երևույթի ականատես ենք եղել: Եվ սակայն, տարօրինակը առակի վերջին մասում է, ուր ասվում է. «Եվ լսելով տնտեսի կատարած աշխատանքը (որը, ըստ էության, զեղծարարություն էր)՝ Տերը գովեց անիրավ տնտեսին»:

Այս արտահայտությունը, որը բնաբան ենք ընտրել մեր քարոզի, նաև բանալին է, մեխն է ողջ առակի: Ավետարանը, որն արդարության, ճշմարտության, ազնվության պատգամն է բերում մեր կյանքից ներս, հանկարծ ու հանկարծ իր մեջ պարունակում է մի գովասանք՝ ուղղված զեղծարարության, անիրավության ճանապարհով ձեռք բերված էժան հեղինակությանը: Եվ առաջին հայացքից իրապես այս տպավորությունն է ստացվում: Որոշ անձեր գայթակղվել են, նույնիսկ հռոմեական կայսրերից մեկն այս պատճառով է քրիստոնյաներին մեղադրել ուղղակի զեղծարարությունը, անազնվությունը, անիրավությունը հովանավորելու մեջ: Եվ այդպիսի տպավորություն կարող է առաջանալ նաև այսօր: Ինչո՞ւ հանկարծ տնտեսը, ով անիրավություն է գործում, արժանացավ գովասանքի:

Մեր մարդկային, ընկերային հարաբերությունների տրամաբանության մեջ որևէ ձևով չի տեղավորվում այս իրողությունը: Դժվար թե գտնվի մի մեծահարուստ, ով նման ներողա-

միտ վերաբերմունք դրսևորի իր ունեցվածքն այդպես քամուն տվող տնտեսների նկատմամբ: Որևէ երկրի օրենսդրության մեջ կա՞ որևէ պահանջ, որով արդարացվի նման գեղծարարության մեջ գտնվող տնտեսը: Եվ Հայաստանի մեջ ունենք հարուստներ, սակայն չենք տեսել նման մի օրինակ, երբ հարուստն այդպիսի ներողամտության արժանացնի իր տնտեսին: Շատ պարզ է. այսպես գործելու դեպքում հարուստը, շատ շուտով կզրկվի հարստությունից: Եվ, ուրեմն, պետք է ոչ թե առակը վերծանել, մեկնաբանել պարզ ընկերային, մարդկային հարաբերությունների շրջանակներում, այլ նրա մեկնաբանության համար հարկավոր է փնտրել մեկ այլ տիրույթ, մեկ այլ տարածք:

Ի՞նչ են ասում այս առակի մասին մեր Եկեղեցու Հայրերը: Նրանք ասում են, որ մեծահարուստն առակին բնորոշ այլաբանական մեկնությամբ խորհրդանշում է Աստծուն, Ով ստեղծել է տիեզերքը, երկիրն ու երկինքը և այն ամենը, ինչ գտնվում է այդ տիրույթում: Իսկ ո՞վ է տնտեսը: Տնտեսի մասին Սուրբ Գրոց մեկնիչները ասում են, որ կան չորս կարգի տնտեսներ՝ ինչպես մեր Սրբազան Հայրապետներից Ներսես Շնորհալին է այս դասակարգումը ամփոփել և ի մի բերել: Առաջին՝ երկնային տնտեսությունը, որտեղ բնակվում են Աստծու կողմից արարված հրեշտակները, նրանց իբրև տնտեսներ են կարգված հրեշտակապետերը: Այս տնտեսը, սակայն, բնականաբար, հրեշտակ չէր: Երկրորդ՝ տնտեսը մարդն է, ով ստեղծվեց եդեմի պարտեզում, ի դեմս Ադամի՝ ողջ մարդկությունն է, որին հանձնված է ամբողջ արարչագործությունը խնամելու, իր պետքերին ծառայեցնելու համար:

Երրորդ՝ տնտես են նաև մարգարեները, Եկեղեցու վարդապետները և ընդհանրապես՝ հոգևորականները, որոնց խնամքին է հանձնված հանձնված Եկեղեցին՝ որպես հոգևոր տնտեսություն: Այս շարքը կարելի է ընդարձակել. տնտես-

ներ են բոլոր նրանք, ովքեր ունեն հանձնառություն, ունեն պարտականություն մի որևէ ոլորտում՝ լինի դա հոգևոր, նյութական թե ցանկացած տնտեսություն. բոլոր նրանք, ովքեր հանձնառություն ունեն, պատասխանատվություն ունեն՝ բոլորը տնտեսներ են: Բայց տնտեսներ են նաև նրանք, ովքեր հիշյալ խմբավորմամբ չորրորդ դասի մեջ են մտնում, ովքեր չունեն որևէ պարտականություն, չունեն որևէ պաշտոն, չունեն որևէ հանգամանք, այլ պարզ մարդիկ են: Այդ մարդկանց ևս հանձնված է տնտեսություն, և այդ մարդկանց տնտեսությունն իրենց շնորհված կյանքն է:

Եթե առակը մեկնաբանում ենք մարդ-Աստված հարաբերությունների տիրույթում, եզրակացնում ենք հետևյալը. այն ամենը, ինչ ունի մարդը՝ իբրև տնտես, չի պատկանում իրեն, այլ տրված է ի տնօրինություն, ի գործածություն, որպես նվեր: Տեսե՛ք, մենք ոչինչ չենք արել, որպեսզի կյանք ունենանք, մեզ համար ամենից կենսական, ամենից կարևոր հանգրվանը մեր ծնունդը, մեզանից կախված չէ, մենք չենք վաստակել այն, այլ տրված է մեզ: Իսկ այն, ինչ մեզ տրվում է, ինչի համար մենք գին չենք վճարել, բնականաբար, կոչվում է նվեր:

Ահա այս նվերն էր տրված տնտեսին, այդ նվերն է տրված մեզ. կյանքը՝ իր բոլոր կարելիություններով, իր նյութական ու հոգևոր հարստություններով, իր բոլոր ձիրքերով ու շնորհներով, և մենք յուրաքանչյուրս՝ իբրև տնտեսներ, ունենք այդ կարելիությունները և տնտեսն ենք դրանց: Եվ տնտեսը՝ որպես տնօրինողն այդ կարելիությունների, այն գործածեց հասարակությանը, մարդկությանը բարօրություն բերելու համար: Այն ամենը, ինչ որ տվել է մեզ Աստված, երբևէ չի ակնկալում, որ պետք է վերադարձնենք ուղղակիորեն:

Այն, ինչ Աստծու կողմից տրված է մեզ, այդ ամենը մենք կարող ենք վերադարձնել Աստծուն, հասարակությանը՝

մեր ընկերոջը ծառայեցնելու միջոցով: Դրա համար Աստված ասում է. «Սիրի՛ր ընկերոջդ, ինչպես քո անձը»: Եվ սա կարևորագույն պատգամներից մեկն է. սիրի՛ր Աստծուն և հանուն Աստծու նկատմամբ քո ունեցած սիրո, քո կարելիություններն ի գո՛րծ դիր, գործադրի՛ր մարդկանց կարիքների համար: Ուրեմն, մինչև այն հանգրվանը, երբ տնտեսը մեծատան ունեցվածքը գործադրում էր ընդամենը իր կարիքների համար, նա չարիք էր գործում, և դատապարտվեց իր տիրոջ կողմից, բայց երբ սկսեց իր տնօրինության ներքո գտնվող կարելիությունները գործադրել պարտապանների, դրա կարիքն ունեցող անձանց կարիքների բավարարման համար, նա իրապես արժանացավ գովասանքի, արժանացավ գնահատանքի: Ահա սա է այս առակի բացատրությունը, այստեղ է այս առակի բանալին: Եվ, ուրեմն, մենք յուրաքանչյուրս կարող ենք արժանանալ Տիրոջ գովասանքին, եթե մեր տնօրինության ներքո գտնվող պարագաները, կարելիությունները, հնարավորությունները գործադրենք մեր, մեզ շրջապատող անձանց բարօրության, նրանց այլևայլ կարիքների, հիվանդությունների ապաքինման համար:

Շատ հաճախ մարդիկ ասում են. «Մենք չգիտենք, թե որն է Տիրոջ կամքը, ինչպե՞ս կարող ենք հասկանալ, թե սխալ ենք վարվում Տիրոջ կողմից մեզ ընծայված կարելիությունների նկատմամբ: Այնպես, ինչպես Աստված տնտեսին ասաց, մեզ չի ասում, հաշիվ չի պահանջում»: Բայց Աստծո ասածը շատ հստակ է: Նա ասում է՝ շատ որոշ է Իմ ասելիքը յուրաքանչյուրին, և այդ ասելիքները ամփոփված են, ինչպես Քրիստոս ԵՒս քանիցս հաստատում է Սուրբ Գրքի մեջ: Եվ այդ հայտնությունները պահպանելու միջոցով է, որ մենք պիտի հասկանանք Տիրոջ կամքը:

Այսօր բազմաթիվ տնտեսներ կան, և ահավասիկ տեսնում ենք, թե տնտեսության չարաշահումը ինչպիսի հետևանքների կարող է հասցնել:

Տնտեսներ են նրանք, ովքեր տնօրինում են զանգվածային լրատվության միջոցները, տնտեսներ են նրանք, ովքեր տնօրինում են մշակութային հաստատությունները: Միացրե՛ք հեռուստաալիքներից շատերը և կտեսնեք քարոզ հեշտասիրության, քարոզ՝ ուղղված մարդու մեջ ցանկամոլության, նյութական արժեքների նկատմամբ տենչանքի առաջացման:

Նյութը դառնում է մի առանցք, որի շուրջ պտտվում են մտքերը, որին ձգտում է ամեն սիրտ: Մինչդեռ տնտեսության վարման աստվածահաճո նպատակը թելադրում է այդ բոլոր կարելիությունները, այդ տնտեսությունը գործադրել մարդկանց կրթման, դաստիարակության, առողջացման համար: Այնինչ տնտեսության անիրավ ձևով տնօրինելը առաջ է գալիս այն ժամանակ, երբ յուրաքանչյուր տնտես ինքն իրեն տեր է կարծում այն ամենին, ինչն իրեն վարձակալությամբ է տրված, գործածության է տրված, այլ ոչ թե՝ ըստ հաճույից գործադրելու և ծառայեցնելու անառողջ տարբեր հակումներին: Եվ ուրեմն, ինչ կարող ենք անել նման իրավիճակներից խուսափելու համար:

Երբ անապատական հայրերից մեկին հարցնում են, թե՝ վարդապե՛տ, ի՞նչ պիտի անենք, որ փրկվենք, անապատական Հայրը, առանց շտապելու, պատասխանում է, որ փրկվելու համար հարկավոր է գիտենալ հետևյալը. առաջին՝ ինչ որ խոսում ես, ինչ որ կատարում ես, հաստատ իմացի՛ր, որ այդ մասին Աստված գիտի, Աստված տեսնում է քո բոլոր գործերը և կարդում քո բոլոր մտքերը:

Հաճախ մենք զգուշանում ենք մեր շարժումներից, մեր խոսքերից, երբ իմանում ենք, որ մի երկրորդ կամ երրորդ անձ պիտի իմանա այդ մասին: Նույնիսկ հատուկ գործիքներ են դրվում տարբեր ծառայությունների կողմից՝ իրենց հետաքրքրող անձերի խոսքերին, գործողություններին իրազեկ դառնալու: Եվ մարդկանց կողմից չափազանց զգուշավո-

րություն է հանդես բերվում իրենց որոշակի մտադրությունը ծածկելու համար: Բայց պետք է իմանանք, որ ցանկացած գործիք ընդամենը խամրող, ճախող նմանակում է այն սուր հայացքի, որ Աստված ունի մեզանից յուրաքանչյուրի նկատմամբ: Աստված գիտի մեր մասին ավելին, քան մենք կարծում ենք, գիտի ավելին, քան վկայում են մեր մասին մեր պահվածքը կամ խոսքը: Տերը կարդում է մեր սիրտը: Նա տեսնում է մեր սիրտը, ինչպես Աստվածաշնչում է ասվում. «Աստված, որ քննում է մեր սրտերն ու երիկամները»:

Երկրորդ պատգամը, որ տալիս է անապատականը, հետևյալն է. «քո ցանկացած գործողության, խոսքի համար պիտի կարողանաս հիմնավորումներ գտնել Աստվածաշնչի մեջ»: Այն ամենը, ինչ որ մենք խոսում ենք, ինչ որ մենք անում ենք, պետք է կարողանանք փաստարկել, պետք է կարողանանք հիմնավորել այն խոսքերով, այն հայտնությամբ, որը մեզ տրվեց Սուրբ Գրքի միջոցով: Ահա այս երկու խրատն է տալիս անապատականն իրեն հիշյալ հարցումն ուղղած անձին:

Ուստի, սիրելի՛ հավատացյալներ, սիրելի՛ քույրեր և եղբայրներ, մենք տնտես ենք, մեր հանձնառությունը իբրև տնտես մենք կարող ենք երբևիցե արդարացնել, եթե մեզ շնորհված կարելիությունների, մեզ շնորհված տնտեսության վարման մեջ առաջնորդվենք հիմնականում հետևյալ սկզբունքներով: Մենք չենք կարող մեր տնտեսության՝ մեզ շնորհված կյանքի, առողջության, մեր հարստության, նյութական և հոգևոր արժեքների հետ վարվել այնպես, ինչպես ցանկանանք: Մենք պարտք ունենք պահպանել այն, ինչպես Աստվածաշնչում է նախանշված, և ինչպես Աստված է ակնկալում մեզնից:

Երբեմն պատահում է, որ մենք մարդկայնորեն թերանում ենք մեր պարտականությունների մեջ, այսինքն՝ չենք վարվում այնպես, ինչպես իրական սրտացավ տնտեսը կվար-

վեր իր ունեցվածքի հետ: Այնժամ մեզ հնարավորություն է տրվում զղջման, ապաշխարության միջոցով վերստին դառնալու իրական տնտեսի կերպարին և կրկին արժանանալու Տիրոջ գովասանքին: Ահա Մեծի Պահոց այս շրջանում վերստին արդիական է, վերստին շեշտակի կերպով նշվում և զգալի է դառնում մեզ համար ապաշխարության և վերադարձի անհրաժեշտությունը մեր կյանքում:

Թող Աստված մեզ այդ կամքը շնորհի, որպեսզի մեր ամենօրյա մտազբաղումների, ամենօրյա հնարավոր սայթաքումների մեջ կամք ունենանք՝ վերստին անդրադառնալու մեր կատարած քայլերին, սխալներին, մեր վրիպումներին, սայթաքումներին և շարժվենք այն շավղով, որը մեզ համար ուղենշված է:

Տիրոջ օրհնությունը ամենքիս հետ, այժմ և հավիտյանս. ամեն:

ԴԱՏԱՊԱՐՏՈՒԹՅՈՒՆԻՑ ՓՐԿՈՒԹՅՈՒՆ՝ ԽԱՉՈՎ

(ԽԱՉՎԵՐԱՑԻ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ)

Մայր Աթոռ Սբ. Էջմիածին
16 սեպտեմբերի, 2007 թ.

«Զի ոչ առաքեաց Աստուած զՈրդի Իւր յաշխարհ, թէ դատեսցի զաշխարհ, այլ զի փրկեսցի աշխարհ Նովաւ»:
(Յովհ. Գ 17)

Ահա այսպիսի խոսքերով է դիմում Քրիստոս Իր շուրջը հավաքված մարդկանց՝ բացահայտելով Իր մարդեղության նպատակը: Քրիստոս եկել էր մարդկանց փրկության համար, այլ ոչ թե՝ դատապարտության: Նա եկել էր մի իշխանությամբ, Պողոս առաքյալի խոսքերի համաձայն՝ կառուցելու, նորոգելու և ոչ թե՝ քանդելու և կործանելու: Եվ նրանք, ովքեր Քրիստոսի առաջ դուռ էին փակում, արեգակի լույսի առաջ պատուհան էին փակում, այլևս պետք չունեին դատապարտվելու Քրիստոսի կողմից, կարիք չկար, որպեսզի Աստված դատապարտեր նրանց վերստին, որովհետև լույսի և խավարի միջև ընտրելով խավարը՝ նրանք արդեն իսկ դատապարտված էին: Խավարը նրանց մեծագույն դատապարտությունն էր, և Աստված չէ, որ նրանց պիտի դատապարտեր:

Խաչվերացի կիրակին է այսօր, սիրելի՛ քույրեր և եղբայրներ: Խաչվերացի կիրակիի ավետարանական ընթերցվածը, սակայն, այսօր ոչ մի ձևով անդրադարձ չի կատարում խաչին, հակառակ, որ Քրիստոս Իր քարոզության ընթացքին, առաքյալներն իրենց առաքելության ընթացքին բա-

զում անգամներ անդրադարձումներ կատարեցին խաչին և խաչի խորհրդին: Մեր իմաստուն հայրերի տնօրինությամբ, սակայն, այսօրվա ավետարանական դրվագը գալիս է մեզ խորհրդածության մղելու, որ խաչը և Քրիստոս նույնական են: Քրիստոս Իր ամբողջ երկրավոր կյանքի ընթացքում եղավ խաչակիր, Իր կյանքը և խաչակրությունը համարժեք երևույթներ դարձան: Եվ ահա այդ պատճառով է, որ մեր հայրերի տնօրինությամբ խորհրդածության նյութ է դարձել ավետարանական այն դրվագը, որը խոսում է Իր առաքելության բուն նպատակի մասին. «Ես չեկա դատապարտելու, Ես եկա, որպեսզի աշխարհը փրկություն ունենա»:

Գիտենք, որ խաչը դատապարտության, չարչարանքի գործիք էր, անարդ մի գործիք մինչ Քրիստոս, որով չարչարվում և մահվան էին դատապարտվում այն անձինք, ովքեր խիստ հանցագործություններ, պատժելի և դատապարտելի գործեր էին կատարում: Սակայն Քրիստոսի Խաչելությամբ և Հրաշափառ Հարությամբ խաչի իմաստն ամբողջովին փոխվեց-շրջափոխվեց: Այն չարչարանքի և մահվան գործիք լինելուց վերափոխվեց հաղթանակի, փրկության խորհրդանիշի:

Քրիստոնյաների մեծ մասը կրում է խաչը, ոմանք՝ իրենց պարանոցին, ոմանք՝ հագուստների վրա, կրծքներին կամ թիկունքներին և հաճախ առիթ չեն ունենում անդրադառնալու, թե խաչի բուն էությունը, նշանակությունը, խորհուրդն ինչ է: Մեր Եկեղեցու՝ խաչի հանդեպ պաշտամունքի աստիճան հասնող հարգանքը վերստին մեզ անդրադառնալ է տալիս, թե ինչու համար է այս ակնածալից վերաբերմունքը խաչի նկատմամբ, որը, թերևս, վերապահված է միայն Աստծուն: Դրա պատճառը, սիրելի՛ քույրեր և եղբայրներ, այն է, որ մենք խաչը նույնացրել ենք Տիրոջ առաքելության հետ, խաչի մեջ տեսել ենք Քրիստոսի առաքելության շարունակությունը, խաչի մեջ տեսել ենք այն հաստատությունը՝ եկեղեցին,

որը կոչված է Քրիստոսի երկրավոր կյանքի ավարտից հետո շարունակելու Իր առաքելությունը երկրի վրա: Եվ ահա խաչի հանդեպ այս վերաբերմունքով է պայմանավորված եկեղեցական մի շարք տոնակատարություններ՝ նվիրված խաչին, որոնցից ամենից կարևորը Խաչվերացի տոնն է, մեր ժողովրդական լեզվով ասված՝ Սբխեչը:

Այս տոներից յուրաքանչյուրի ընթացքում մենք անդրադառնում ենք, թե խաչն ինչպիսի զորություն, ինչպիսի կենսատու ուժ է պարգևում մեզ ամենքիս:

Հիշեցեք, թե Քրիստոս Իր երկրային կյանքի ընթացքին, երբ բարձրացավ Գողգոթայի բարձունքը՝ հաղթանակով պսակելու Իր առաքելությունը, հարություն առնելու Գողգոթայի բարձունքից, ինչպես ազատագրվեց մահվան տագնապից: Հիշեցեք, թե ինչպես Գեթսեմանիի պարտեզում արյուն-քրտինք թափելով՝ Նա դիմում էր Հորը. «Հա՛յր, հեռացրո՛ւ Ինձնից այդ բաժակը, որպեսզի չլինի թե այսպիսի դառնությամբ և զրկանքներով մահ ճաշակեմ»: Եվ սակայն աղոթքի մեջ նա սփոփանք գտավ, ազատվեց մահվան տագնապից, իսկ մահվան տագնապը, ինչպես ասված է, ավելի սոսկալի է, քան ինքը՝ բուն մահը: Եվ նա, ով պատրաստ է հաղթահարելու մահվան տագնապը, նաև կճաշակի հաղթանակի քաղցրությունը: Մահվան տագնապն այսպես իրենց վրայից թոթափեցին մեր հայրերը, այդպես թոթափեցին Վարդանանց քաջերը, երբ Ավարայրի ճակատամարտի նախօրյակին ամենքը մասնակցություն ունեցան Սրբազան Պատարագին, ամենքը հաղորդվեցին Տիրոջ Մարմնին և Արյանը, իրենց վրայից թոթափեցին մահվան սոսկումը, տագնապը և ընթացան դեպի հաղթանակ, դեպի ազատագրություն: Եվ հիրավի, նա, ով պատրաստ չէ մեռնելու, նա չի կարող ճաշակել հաղթանակի քաղցրությունը: Նա, ով չի ցանկանում մահանալ, մեռնել հանուն ազատության, նա չի ճաշակի ազատության քաղցրությունը: Այդպիսի պատրաստակա-

նությամբ, վճռականությամբ ընթացան Արցախյան հերոսամարտի մեր քաջամարտիկները, ովքեր իրենց վրայից թոթափեցին մահվան տագնապը, մահվան սոսկումը և ընթացան դեպի խաչը: Եվ ահա խաչի խորհուրդն այդ պայքարի, այդ հաղթանակի ոգին է, որ ներշնչում է առաջին հերթին մեզ:

Ավետարանում մեր Տեր Հիսուս Քրիստոսի կողմից ասված մի շատ գեղեցիկ արտահայտություն կա, որ խաչի մասին խորհրդածություններ կատարելիս մշտապես առնչակցվում է խաչի գաղափարի հետ: Երբ Քրիստոս խոսում է երկնքի արքայության մասին, ասում է. «Բռունք հափշտակեսցեն զարքայութիւնն երկնից» (Երկնքի արքայությունը կարող են նվաճել, գրավել հաստատակամները, վճռականները), եթե կուզեք, ժողովրդական լեզվով՝ զոռբաները, նրանք, ովքեր պատրաստ են հանուն երկնքի արքայության զոհելու այն ամենը, ինչն իրենց կապում է երկրավոր այս կյանքի հետ: Նրանք պատրաստ են զոհելու իրենց նյութական բարեկեցությունը, պատրաստ են զոհելու, նույնիսկ՝ թողնելու իրենց հարազատներին, պատրաստ են ուրանալու իրենց անձը, ինչպես որ Քրիստոս պատվիրում է. «Թողե՛ք ձեր հարազատներին, ուրացե՛ք նույնիսկ ձեր անձը, ձեր ուսերը ազատ կացուցե՛ք, որպեսզի Իմ խաչը այնտեղ տեղ ունենա»: Եվ իրապես, Քրիստոսին ծառայելու համար պետք է թոթափել, պետք է հրաժարվել երկրավոր հոգսերից, պետք է հրաժարվել այն կապանքներից, որոնցով մենք կապված ենք մեզ շրջապատող աշխարհի հետ: Եվ միայն այդ ժամանակ մեր ուսերը ազատ կլինեն՝ բառնալու համար Տիրոջ Խաչը: Մեր կռնակը ազատ կլինի, պատրաստ կլինի վերցնելու այդ խաչը, որը, Քրիստոսի խոսքերով, ծանր է, խիստ ծանր է, բայց նաև քաղցր է:

Սիրելի՛ քույրեր և եղբայրներ, ցանկանում եմ վերստին միասին խաչակնքենք, մեր մեջ զգանք Քրիստոսի զորությունը, մեր մեջ զգանք Տիրոջ ուժը, այն կարողությունը, որ

մեզ շնորհեց Իր խաչով, և հետայսու խաչը մեզ վրա կրելուց առաջ խաչն ապրենք, խաչն առավել մեր սրտերի մեջ կրենք, քան մեր պարանոցներին, և աղոթենք միասնաբար Տիրոջը. «Քրիստոս Աստված, երբ Դու գաս Քո փառքով, լուսեղեն ամպերի մեջ, այնժամ մենք, տեսնելով Քո Խաչը, թող երբեք չամաչենք, երբեք գլխիկոր չներկայանանք Քեզ, Քո Խաչի զորությամբ, բաց ճակատով՝ հպարտորեն ընդառաջ ելնենք Քեզ, փարվենք Քեզ՝ որպես Քո հոտի զավակները, և ունենանք այն փրկությունը, որ պատրաստեցիր աշխարհի համար, մեզ համար այժմ և հավիտյանս հավիտենից. ամեն»:

ԽՍՂՍՂՈՒԹՅԱՆ ՀՍՂԹՍՆՍԿԸ
(ԾԱՂԿԱՁԱՐԴԻ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ)

Մայր Աթոռ Սբ. Էջմիածին
16 մարտի, 2008 թ.

«Եթէ գիտէիր դու գոնէ յաւուրս յայսմիկ զիաւաղաղութիւնն Քո, բայց այժմ ծածկեցաւ յերեսաց քոց»:
(Ղուկ. ԺԹ 42)

Քրիստոսի խոսքերն են, սիրելի՛ քույրեր և եղբայրներ, խոսքեր, որոնք բխում են հառաչող հոգուց, վշտացած սրտից՝ ի տես Երուսաղեմի ժողովրդի: Վերջին անգամ էր մուտք գործում Քրիստոս Երուսաղեմ, վերջին անգամ, դրա համար և՝ արտաքին բացառիկ շուքով, աշակերտների և ժողովրդի բազմության ցնծալի բացականչություններով: Ահա այդ օրն է, որ մենք այսօր միասին մեր սուրբ եկեղեցիներում, մեր հավատացյալների բազմությամբ տոնախմբում ենք այսօր, տոն, որը մեզանում անվանվում է Ծաղկազարդ: Ծաղկազարդ է և դրա համար եկեղեցում գտնվող մեր հավատացյալներից շատերն իրենց ձեռքին ունեն ուռենու ճյուղեր՝ ի նշան իրենց ուրախության, ի նշան հաղթանակի: Ու այսպես նաև երկու հազար տարիներ առաջ Քրիստոսին դիմավորեցին Փրկչին հավատացող սրտերը՝ իրենց ձեռքին ունենալով արմավենու, դափնենու ճյուղեր՝ բացականչելով. «Օվսաննա, օրհնություն Դավթի որդուն»:

Այս շքեղ ընդունելությունը, սակայն, ոչնչով չէր ամոքում Քրիստոսի վշտացյալ սիրտը, և Ղուկաս Ավետարանիչն ասում է. «Նա ուրախությամբ մուտք գործեց, սակայն երբ տեսավ Երուսաղեմը, լաց եղավ ժողովրդի վրա, լաց եղավ և

ասաց. «Գեթ հիմա, ո՛վ ժողովուրդ, ո՛վ Իմ ժողովուրդ, գեթ այս պահին, երբ արդեն հասել է երկրային Իմ առաքելության ավարտը, գոնե այս պահին ճանաչեիր քո խաղաղությունը: Սակայն, ավա՜ղ, արդեն ուշ է,- շարունակում է Քրիստոս,- որովհետև խաղաղությունը ծածկվեց քո աչքերից»:

Տարբեր անձեր տարբեր ժամանակներում եկել են այս աշխարհ, խաղաղության փնտրտուքը դարձրել իրենց առաքելություն և փորձել հաղորդ տալ մարդկանց խաղաղության ձգտումին: Եկել են մարդիկ, ովքեր աննախընթաց ավերածություններով, աննախընթաց կոտորածներով են փորձել աշխարհի վրա հաստատել այդ խաղաղությունը: Սակայն խաղաղությունն ավերածություններով, խաղաղությունը կոտորածներով, խաղաղությունը նախճիրներով չես կարող հաստատել: Խաղաղությունն արդարության պտուղն է, արդարությունը՝ մարդու բնական ձգտումը և բնական զգացումը: Արդարությունը չես կարող հաստատել կռիվներով: Արդարությունը մարդու բնական վիճակն է, յուրաքանչյուրի սպասումների պատասխանը, և այն ժամանակ է խաղաղությունը ժամանում և բնակվում մեր հոգիներում, երբ տեսնում ենք այդ արդարությունը՝ վերականգնված և արդարությունը՝ տիրապետող մեր կյանքից ներս: Շատերն եկան և խաղաղություն վաճառեցին, բայց փողոցներում ու հրապարակներում վաճառվող խաղաղությունը որևէ առնչություն չունի քրիստոնեական խաղաղության հետ: Քրիստոնեական խաղաղության բնակավայրը մարդու հոգին է, իսկ ճշմարտության ճանաչողությունը կարևորագույն դրույթն է խաղաղությունն ընկալելու: Մի մարդ, որ չի ճանաչում ճշմարտությունը, չի կարող խաղաղություն ունենալ: Անորոշությունները, ապագայի մշուշոտությունը որևէ ձևով չեն կարող նպաստել մեր մեջ խաղաղության զգացումի զորացմանը:

Այսօր, սիրելի՛ քույրեր և եղբայրներ, մենք ևս կարոտ ենք խաղաղության, կարոտ ենք ճշմարտության, կարոտ ենք

արդարության, կարոտ ենք ապահովության, կարոտ ենք համերաշխության և եղբայրության: Եվ ի՛նչը կարող է հագեցնել մեր այս կարոտը, ի՛նչը կարող է հագեցնել մեր քաղցը և մեր ծարավը: Երբեմն մեր խաղաղության, ապահովության, համերաշխության հաղուրդը մենք փորձում ենք հագեցնել փողոցներում, ինքնակոչ փրկիչների կողմից վաճառվող ապրանքներով: Փրկիչներ, ովքեր առաջարկում են մեզ խաղաղություն, փրկիչներ, որոնք մեզ վաճառում են արդարություն, փրկիչներ, որոնք վաճառում են մեզ ապահովություն: Բայց Փրկիչը մեկն էր, և Նա եկավ այդ արդարությունը, խաղաղությունը և ապահովությունը մեզ փոխանցելու ոչ թե բռնությունների ճանապարհով, այլ նախընտրեց Ինքը նահատակվել, քան նահատակել: Նա է մեր Փրկիչը, Նա է մեր առաքյալը, Նա է մեր Տերը, Նա է մեր այն ամենը, ինչով կարող ենք մենք հպարտանալ: Եվ Նա ասաց, որ քրիստոնյայի համար շատ ավելի նախընտրելի պիտի լինի այդ արդարության, ազատության և խաղաղության համար մեռնել, քան թե մեռցնել: Չկա՛ քրիստոնյայի համար ավելի մեծ պատիվ, քան ճշմարտության քարոզչության մեջ նահատակությունը: Եվ միայն այդ ճանապարհով է, որ երկու հազար տարի շարունակում է բաշխվել քրիստոնեական խաղաղության, արդարության պատգամը ժողովրդին և չի սպառվում: Բազում ամբարներ, բազում պահեստանոցներ դատարկվել են, սպառվել են, բազում ավազաններ ցամաքել են, բայց այն քարոզչությունը, խաղաղության այն պատգամը, արդարության այն պատգամը, որ բերեց Քրիստոս, այսօր չի սպառվում, որովհետև Նա, Ով փոխանցեց մեզ, նահատակվեց, զոհաբերվեց Իր փոխանցած գաղափարների և արժեքների համար: Եվ այսօր նրանք, ովքեր իրենք իրենց կոչել են արդարության, խաղաղության, ազատության ջատագով, պատրա՞ստ են արդյոք նման զոհողության: Ուստի պետք է հետևեցնենք, որ սին և ունայն է նրանց քարոզչությու-

նը: Սին և ունայն, որովհետև միակ ճշմարտությունը, միակ իրական ազատությունը բնակվում է մեր ժողովրդի հոգին դարձած այս տաճարի մեջ, այս եկեղեցում, որը հաստատվեց հենց Իր՝ Միածին Փրկչի ձեռքով: Եվ այդ ազատությունը, արդարությունը և խաղաղությունն ունենալով է, որ պիտի կարողանանք Քրիստոսին ասել. «Օվսաննա, օրհնություն Քեզ, Դավթի որդի, օրհնությո՛ւն, որ եկար այսօր, ժամանեցիր մեր բնակարաններից ներս, օրհնությո՛ւն Քեզ, որ եկար այս սուրբ տաճար, օրհնությո՛ւն Քեզ, որ վերստին եկար ավելացնելու, հավելելու մեր լավատեսությունը, ներշնչելու մեզ հույս, հավատ և այն ամենը, ինչով որ մենք կարողանալու ենք շարունակել մեր կյանքը»:

Սիրելի՛ քույրեր և եղբայրներ, փոխանցում եմ ձեզ ամենայն ուրախությամբ Քրիստոսի գալստյան ողջույնը: Քրիստոս արդեն ժամանել է մեր մեջ, այստե՛ղ է գտնվում: Եվ մենք այսօր՝ Ծաղկազարդի այս նվիրական օրը, չլինի թե լսենք այն խոսքերը, որ հնչեց Հրեաստանում, թե՝ ուշ է արդեն, որովհետև խաղաղությունը ծածկվել է ձեր երեսներից: Մենք հրավիրված ենք փարվելու այն խաղաղությանը, որ մեզ բերեց Քրիստոս, փարվելու այն ճշմարտությանը, որ մեզ բերեց Քրիստոս, փարվել այն արդարությանը, որ մեզ բերեց Քրիստոս, և Իր միջոցով, Իր կողմից հաստատված այս Սուրբ Եկեղեցու միջոցով կարող ենք ճանաչել այդ իրական արժեքները:

Տիրոջ օրհնությունը, խաղաղությունը և ճշմարտությունը մեզ և ամենքիս հետ, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

ՏԱՌԱՊԱՆՔԻՑ ԿՅԱՆՔԻ ԴԱՍ

(ԱՊՐԻԼԻ 24-Ի ԱՌԻԹՈՎ)

Մայր Աթոռ Սբ. Էջմիածին
24 ապրիլի, 2008 թ.

«Մեռան արդարքն՝ և եղև զոչնում յոյժ»:
(Առակ. ԺԱ 4):

Սիրելի՛ քույրեր և եղբայրներ, ապրիլի 24-ն է, դարձյալ կանգնած ենք հիշատակի առջև՝ 20-րդ դարասկզբին աննախադեպ դաժանությամբ և հրեշավորությամբ նահատակված մեր քույրերի և եղբայրների: Առավոտյան, երբ տակավին արևի շողերը նոր սկսել էին ջերմացնել հողը, ՀՀ նախագահի և Ամենայն Հայոց Կաթողիկոսի գլխավորությամբ, պետական ավագանին և մեր Եկեղեցու բարձրաստիճան եկեղեցականությունը այցելեցին Ծիծեռնակաբերդի հուշահամալիր, ուր խորհրդականորեն ամփոփված են ավելի քան մեկ և կես միլիոն մեր քույրերի և եղբայրների մարմինները, այցելեցին աղոթք մատուցելու նրանց հոգիների հանգստության համար, այցելեցին հարգանքի և խոնարհումի իրենց տուրքը բերելու անմեղ զոհերի հիշատակին, և տակավին մինչև ուշ երեկո պիտի շարունակվի խոնարհումի, հավատարմության և հարգանքի այդ երթը: Բազմահազար հայորդիներ խումբ առ խումբ պիտի բարձրանան նվիրական այդ բարձունքը՝ իրենց խոնարհումը վերստին մատուցելու անմեղ զոհերի հիշատակին: Ամեն անգամ, երբ մենք վերստին ու վերստին մեր հոգիների մեջ ժամադրվում և հանդիպում ենք ապրիլյան մեր նահատակներին, երեք հարցեր են հնչում յուրաքանչյուրիս մտքում՝ ինչո՞ւ պատահեց՝ առաջին հարցը, երկրորդ հարցը՝ ինչպե՞ս կատարվեց, երրորդ հարց՝ ի՞նչ է կատարվելու, ի՞նչ

է լինելու: Ավելի պարզ խոսքերով ասված՝ ո՞րն էր նպատակը այդ ոճրագործության, ի՞նչ եղանակով կատարվեց այդ ոճրագործությունը և երրորդ՝ ի՞նչ է լինելու մեր պատասխանն այդ ոճրագործությանը, ի՞նչ դասեր ենք քաղելու մենք այդ ոճրագործությունից, ցեղասպանությունից:

Բազում անգամներ ասվել է, թե ինչու այդպիսի հրեշավոր ծրագիր հղացվեց: Մի ժողովուրդ, որ հեռավոր երկրներից գաղթելով՝ տիրացել է մեր հայրենիքին, բնականաբար, մշտապես իր վախը պիտի կրեր հոգու մեջ, որ մի օր վերադարձնելու է այդ երկիրն իր բնիկ տերերին, և ահա այս մտավախությունը ստիպեց, հարկադրեց օսմանցիներին՝ ծրագրել իր նախընթացի մեջ գոյություն չունեցող հրեշավոր մի ծրագիր. Հայաստանը՝ առանց հայերի: Չկա՛ հայություն՝ չկա՛ հայկական հարց: Եվ ահա հարյուր հազարավոր հայեր, ավելի քան մեկ և կես միլիոն հայեր տարագրվեցին իրենց բնակավայրերից, աքսորվեցին և տարվեցին հեռավոր տափաստաններ, Դերզորյան անապատներ, ուր և աննախադեպ դաժանությամբ սրախողխող արվեցին և սրի քաշվեցին: Հազարավոր ընտանիքներ ոչնչացվեցին, հազարավոր մանուկներ որբացան, հազարավոր կանայք այրիացան: Ինչպես ա՛յս ոճիրը, ինչպես ա՛յս նախճիրը բանաստեղծի և արդարության նկատմամբ ըմբոստ չդարձներ Սիամանթոյին, ինչպես վրեժխնդիր չդարձներ Վարուժան բանաստեղծին, ինչպե՛ս չխենթացներ Կոմիտասին, ինչպե՛ս այսօր մեր քույրերի և եղբայրների արցունքները չքամեր աչքերից, ինչպե՛ս մորմոքել չտար մեր սրտերը: Նպատակը շատ պարզ էր, որքան դիպուկությամբ ընտրված, նույնքան սոսկալի հրեշավորությամբ ծրագրված և իրականացված ծրագիր, որն իր տեսակի մեջ նախընթացը չէր ունեցել:

Ամենից կարևոր հարցը, սակայն, որ ծառացել է և արդեն իննսուներեք տարի շարունակում է ծառացած մնալ յուրաքանչյուրիս առջև, այն է, թե ի՞նչ դասեր ենք քաղել մենք

ցեղասպանությունից: Բազմաթիվ պետություններ և ժողովուրդներ այսօր, փա՛ռք Տիրոջ, և՛ շնորհակալություն, և՛ երախտագիտություն ու խոնարհում այդ պետությունների ժողովուրդներին, ընդունել են Հայոց ցեղասպանությունը և դատապարտության խոսք հնչեցրել: Ցեղասպանության հարցը դարձել է այն փորձաքարը, ուր քննության է ենթարկվում յուրաքանչյուր երկրի հավաքական խիղճը: Երկրներ, որոնք ճանաչել են ցեղասպանությունը, նրանք մեր նկատմամբ հավատարմությունը չէ, որ արտահայտել են իրենց վերաբերմունքով, այլ նախ և առաջ արտահայտել են իրենց հավատարմությունն իրե՛նց իսկ դավանած արժեքների, իրե՛նց իսկ դավանած սրբությունների նկատմամբ: Ցեղասպանությունը միանգամայն անընդունելի, մերժելի և դատապարտելի երևույթ է: Ահա այս հավատքի ու համոզումի նկատմամբ է, որ իրենց հավատարմությունը հայտարարել են այս երկրները, և այսօր մարդկության և հատկապես հայության ակնկալությունն է, որ նույն սկզբունքներին, նույն արժեքներին հավատարմություն դրսևորի հենց ցեղասպանության հեղինակը: Հեղինակն այդ հավատարմությունը դրսևորելով է, որ կարող է սրբել տակավին արյունով շաղախված իր ձեռքերը: Մեր ժողովուրդն ատելությամբ չէ, որ այսօր լցված է ցեղասպանություն իրականացնողների նկատմամբ, մեր ժողովուրդը պարզապես ծարավի է արդարության:

Աստվածաշունչը՝ Առակաց գիրքն ասում է. «Արդարը մեռավ, և նրա հետևից մնաց մեծ զղջում և ցավ» (Առակ. ԺԱ 4): Եվ ակամա հարց ենք տալիս՝ արդյո՞ք արդարը միշտ այդպես պիտի մահանա: Արդարի մահն ավելին է, քան կյանքը մեղսավորի, արդարի մահն ավելին արժե, քան կյանքը նրանց, որոնք արդարության վերաբերյալ պատկերացում չունեն:

Ի՞նչ դասեր ենք քաղել ցեղասպանությունից: Մեր հայրերը թշվառության մեջ անգամ հայրենիք թողեցին մեզ,

արդյո՞ք մենք մեզ փոխանցված հայրենիքը, ժառանգություն ստացած հայրենիքը պիտի կարողանանք փոխանցել մեր սերունդներին: Նահատակ հայորդիներն իրենց հայրենասիրության պարտքը վճարեցին, իրենց ինքնության պահպանության գինը հատուցեցին, և մենք պիտի կարողանանք այդ գինը վճարել ա՛յս հայրենիքը զորացնելու, ա՛յս հայրենիքն ամրացնելու, ա՛յս հայրենիքի պայծառության համար ապրելու ճանապարհին:

Ս. Գիրքն ասում է. «Յանուն Յիսուսի Քրիստոսի յամենայն ծունր կրկնեսցի» (Հիսուս Քրիստոսի անունով թող բոլորը ծնկի իջնեն) (հմմտ. Եսայի ԽԵ 23, Հռոմ. ԺԴ 11): Մենք պարտավոր ենք ծնկի իջնել բոլոր ա՛յն արժեքների առջև, բոլոր ա՛յն նահատակների առջև, որոնք հաստատում են մեզ մեր աստվածպաշտության մեջ: Հայրենիքի նկատմամբ, եղբոր նկատմամբ սերը լավագույն վկայությունն է մեր աստվածսիրության: Հայրենիքի զորացումը լավագույն պատասխանն է՝ ուղղված ցեղասպանության հեղինակներին: Ինչպես Արմաշի դպրեվանքի նշանավոր շրջանավարտներից մեկը՝ Շահե արքեպս. Գասպարյանն է ասում. «Մեր դպրեվանքի ամեն մի հաջողություն մի շառաչուն ապտակ է ցեղասպանության հեղինակների երեսին»:

Արդարև, մեր ցանկացած հաջողություն, ազգային մեր ցանկացած համախմբում, միախմբում և միաբանություն՝ շառաչուն մի ապտակ է ցեղասպանության հեղինակներին: Այո՛, մեր երախտագիտությունը հայտնել ենք և հայտնում ենք բոլոր ա՛յն պետություններին, բոլոր ա՛յն ժողովուրդներին, որոնք կիսում են մեր ցավը, որոնք միացել են մեր ձայնին՝ դատապարտության խոսք հնչեցնելու ցեղասպանության առնչությամբ: Բայց ցեղասպանության հարցի վերջնական լուծումը պատկանում է մեզ՝ մեր ժողովրդին: Օգնի՛ր քեզ, և ամենքը կօգնեն քեզ, ահա պատգամը՝ օգնի՛ր քեզ:

Ուրեմն, սիրելի՛ քույրեր և եղբայրներ, օգնե՛նք մեզ, ձեռք ձեռքի՛ սեղմենք, սիրտ սրտի՛, հայացք հայացքի՛, միասին քայլենք միասնության համախմբումի զարգացման ճանապարհներով: Հայրենիքը վեր է, քան մենք, հայրենիքը վեր է, քան մեր հավակնությունները, մեր զգայնությունները, մեր պատկերացումները: Եկեղեցին, հայրենիքը և մեր ժողովրդի ինքնության պահպանությունը սրբազան ա՛յն գաղափարականները, սրբազան ա՛յն արժեքներն են, որոնց առջև պիտի ծունր իջեցնենք մեր բոլոր տեսակի տարաձայնությունները՝ կլինեն դրանք գաղափարական, թե, առավել ևս, նյութական: Մեր Եկեղեցին մշտապես իր Ս. Խորաններից հնչեցրել է միաբանության կոչը, կոչ, որը միայն կարող է դառնալ պատասխանը բոլո՛ր տեսակի արհավիրքների, բոլո՛ր տեսակի ոճրագործությունների: Եթե տարրալուծվենք, եթե անմիաբանությունը, անհամերաշխությունը քայքայի մեր միաբանության շենքը, մենք պիտի դատապարտվենք չգոյության: Ուրեմն՝ թող այս Ս. Խորանից Տիրոջ լույսի հետ ամենքիս հոգիները շաղկապվեն միմյանց՝ միաբանության ջերմությամբ, համերաշխության սիրով և լույսով, և Տիրոջ օրհնությունը կլինի մեզ հետ, Տիրոջ օրհնությունը և լույսը կհանգչեն մեր նահատակների լո՛ւյս հոգիների վրա: Թող Տերը հավերժ հանգստություն պարգևի մեր նահատակների հոգիներին և մեզ զորացնի իրենց հիշատակը վառ և պայծառ պահելու մեր առաքելության ճանապարհին:

Շնորհք, սեր և խաղաղություն ընդ ձեզ, ընդ մեզ և ընդ ամենեսյանս. ամեն:

ՍՆՆԴԱԿՍՆՈՒԹՅԱՆ ՊԱՐԳԵՎ

Մայր Աթոռ Սբ. Էջ□ածին
12 հոկտեմբերի, 2008 թ.

«Աղաչեմք զքեզ՝ մարդասէր Տէր, առաքեա զՀոգիդ Սուրբ, ի ջուրս յայս. և օրհնեա՛ և սրբեա՛ զսա, և տո՛ւր սմա զշնորհն Յորդանանու և արա՛ զսա օրհնութեան աղբիւր, անապականութեան պարգև, մեղաց լուծումն, հիւանդաց բժշկութիւն, դիւաց ահագին խորտակումն, ախտաժետաց առողջութիւն...»
(Ճաշոց)

Սիրելի՛ քույրեր և եղբայրներ,

Շուրջ տասն օր առաջ Վեհափառ Հայրապետի ձեռամբ, բարձրաստիճան եկեղեցականների մասնակցությամբ, բազմահազար ուխտավորների աղոթական զորակցությամբ Մայր Աթոռ Ս. Էջմիածնում կատարվեց վերջին շրջանի հոգևոր կարևորագույն իրադարձություններից մեկը. օրհնվեց Սրբալույս Մյուռոնը: Արարողություն, որն ազգային եկեղեցական մեր կյանքում մեծ խանդավառություն առաջ բերեց: Այսօր բազմաթիվ հավատացյալներ, ուխտավորներ ժամանել են Մայր Աթոռ Ս. Էջմիածին՝ ստանալու Սրբալույս Մյուռոնից բաշխվող օրհնությունը: Եվ ահա տասն օր հետո Նորին Սրբության մասնահատուկ տնօրինությամբ այս օրը, այս կիրակի կատարվելու է Ջրօրհնյաց արարողություն, որի ընթացքում Սրբալույս Նորաբեփ Մյուռոնը հեղվելու է այս կաթսաների մեջ լցված ջրի մեջ՝ այն սրբելով, մաքրելով չարի բոլոր տեսակի ազդեցություններից և ներգործություններից, այն դարձնելու համար բուժարար, հոգու նորոգության համար անհրաժեշտ հոգևոր մի նյութ: Քիչ հետո, այդ արարո-

ղության ընթացքում վերստին աղոթք պիտի վերառաքվի Տիրոջը՝ ասելու. «Ո՜վ Տեր Աստված, առաքի՛ր Քո Սուրբ Հոգին այս ջրերի վրա, դարձրո՛ւ այն այնպիսին, ինչպիսին Հորդանան գետն էր, որը շնորհն ունեցավ իր մեջ կրելու Տիրոջը, այն դարձրո՛ւ մեղքերի լուծում, հիվանդներին՝ բժշկություն, ախտերով տառապողների համար՝ առողջություն»:

Իրապես նախախնամական էր, որ այսօր սուրբգրային ընթերցվածքի մեջ ևս մի ստվար հատված նվիրված էր ջրին: Ջուրը, ինչպես որ աղոթքն է ասում, կյանքի և օրհնության աղբյուր է: Եսայի մարգարեն երբ խոսում է եգիպտացիների մասին՝ կանխատեսելով նրանց վրա հասնող պատուհասները, քանի որ եգիպտացիները հալածել էին Իսրայելի ժողովրդին՝ Աստծո ժողովրդին, նրանց համար կանխատեսում է խիստ մռայլ ապագա և հետևյալն է ասում. «Եգիպտացիները ծովափնյա ջրակույտերից են խմելու, որովհետև գետը նվազելու է և ցամաքելու է: Գետերն ու գետերի ջրադարձները քաշվելու են, հավաքված բոլոր ջրերը ցամաքելու են, և բոլոր մարգագետինները, եղեգի բոլոր խիտ թավուտներն ու լորամարգերը ցամաքելու են, գետի եզերքներին եղած ողջ կանաչը, բոլոր հերկերը, որոնք գետի ջրով են մշակվում, խորշակահար չորանալու են: Ձկնորսները տրտմելու են, գետի մեջ բոլոր կարթ գցողները հոգոց են հանելու, ցանց և ուռկան գցողները սուգ են անելու, ամաչելու են նաև բարակ կտավ մանող կտավագործները և նրանք, որ բեհեզ են գործում, բոլոր արհեստավորները տրտմությամբ են համակվելու, բոլոր տարազագործները տխրելու են»:

Ջուրը կյանքի աղբյուր է: Բոլոր նրանք, ովքեր ընդդիմանում են Տիրոջ կամքին, զրկվում են կյանքի այդ աղբյուրից: Երբ երկիրը ցամաքում է, ջրից զրկվում են մարդիկ. իսկապես օրհնությունն է, որ վերցվում է այդ ժողովրդի, այդ երկրի վրայից: Ջուրը նաև հիվանդության դեմ առողջարար մեծ բուժամիջոց է: Կարդացել եք ամենքդ Նոր Կտա-

կարանի մեջ՝ Գործք Առաքելոցում, Պրոբատիկեի ավազանի մասին դրվագը, ուր ասվում է, թե այնտեղ՝ ավազանի մեջ, հավաքվում էին բազմաթիվ հիվանդներ, բազմաթիվ ախտաժետներ, և նրանք, ովքեր կարողանում էին հասնել այդ ավազանին, ջրերի մեջ բուժում էին գտնում իրենց հիվանդությանը: Ջուրը նաև մաքրության խորհրդանիշն է. հիշում եք նաև, երբ աշխարհը ապականության մեջ այլևս կործանվում էր, Աստված միակ միջոցը, միակ բալասանը, որ առաջադրեց մարդկությանը, ջրհեղեղով աշխարհը լվանալն էր, ջրհեղեղով մարդկային մեղքերը քավության առաջնորդելն էր: Ահա այսպիսի մաքրություն ենք ստանում մենք յուրաքանչյուրս Մկրտության արարողության ժամանակ, երբ, սուզվելով ավազանի ջրերի մեջ, օրհնություն ենք ստանում, աղոթքի այն խոսքով, թե՝ Տեր Աստված, լվա այս երեխայի, մկրտվողի մեղքերն այս ջրի մեջ և նրան որդեգիրը և ժառանգակիցը դարձրու Սուրբ Հոգու և Քո Որդու:

Ջուրը նաև, ինչպես նշված է մեր աղոթքի մեջ, որ քիչ հետո պիտի ընթերցվի, մեղքերին թողություն է պարգևում՝ թույլ չտալով, որ մեղքերը և սատանայի ներգործությունը ազդեցություն գործեն մեզ վրա: Ահա այս ջուրն է, որ քիչ հետո պիտի օրհնվի՝ նրա մեջ հեղելով Մյուռոնի սրբարար հեղուկը, պիտի դառնա մեր ժողովրդի համար օրհնության նոր աղբյուր:

Սիրելի՛ քույրեր և եղբայրներ, ջրի այսօրվա օրհնությունը վերստին մեր մտքերն ուղղել է տալիս մեր միջավայրի, մեր մթնոլորտի, մեր երկրի նկատմամբ հոգացողությանը, բնական միջավայրի անաղարտ պահպանությանը, որպեսզի յուրաքանչյուրս կարողանանք գնահատել նյութական այն արժեքները, որոնք պայմանավորում են մեր բնական և առողջ կենսակերպը: Եվ նաև մեզ վերստին անդրադարձնել է տալիս հոգևոր մաքրության անհրաժեշտությանը, որ յուրաքանչյուրս պարտավոր ենք վերստին սրբվել, մաքրվել,

վերստին այս ջուրը ևս մեկ առիթ դարձնել՝ անդրադառնալու համար հոգևոր մեր ընթացքին, անդրադառնալու համար մեր կյանքի տարատեսակ խոտորումներին, սայթաքումներին՝ այլևս չկրկնելու վճռականությամբ:

Թող Տիրոջ օրհնությունն ամենքիս հետ լինի, և այս ջուրը, որը քիչ հետո պիտի բաշխվի ձեզ՝ իր մեջ կրելով սրբարար հեղուկը՝ Սրբալույս Մյուռոնը, թող առողջություն բերի ձեր ընտանիքներին, քաջալերանք, առույգություն, ուժ, կորով և նորոգություն մեր ժողովրդի զավակներին, որպեսզի կարողանանք միմյանց սիրել, անսակարկ և անկաշառ միմյանց նվիրվել, միմյանց հանդեպ լցվել ամբողջական բարությամբ, անշահախնդիր բարությամբ և աստվածաշավիղ ընթացքով շարունակել մեր կյանքը:

ԴԵՊԻ ՆՎԱՎԱՅՆԳԻՍՏԸ ՅԱՎԻՏԵՆՈՒԹՅԱՆ
(ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՃՐԱԳԱԼՈՒՅՑԻ ԱՌԻԹՈՎ)

Մայր Աթոռ Սբ. Էջմիածին
11 ապրիլի, 2009 թ.

«Յարիցէ Աստուած, և ցրուեսցին ամենայն թշնամիք նորա»
(Սաղմ. ԿԷ 2)

Ձեզանից ո՞վ չի բախվել մահվան ահռելի իրողության հետ: Ձեզանից ո՞վ չի ունեցել կորուստներ, ո՞ւմ սիրտը չի մղկտացել և չի ճմլվել հարազատի կորստից: Ո՞վ չի կորցրել հայր կամ մայր, զավակ, եղբայր կամ քույր:

Արդյոք ո՞վ հարյուր, հազար անգամ չի աղոթել Աստծուն և ասել. «Տե՛ր Աստված, երանի մեկ անգամ մահվան ստվերը, մահվան խավարը պատռվեր, և մեր կորսված սիրելին, հարազատը, մեր հայրը, մայրը ետ վերադառնային և վերստին այցելեին մեզ ու ասեին մեզ, որ «մահ» կոչված այս մեծ անորոշությունն ընդամենը մեկ հանգրվանն է մեր կյանքի»: Եվ ահա այսօր մեր աղոթքները պատասխան են գտել, և ահա այսօր մեր երազները կատարվել են, մեր իղձերը՝ մարմին առել: Հիսուս Հարություն է առել, վերադարձել է այն մեկը մահվան խորխորատներից, վերադարձել է այդ մեկը, որպեսզի մեզ ասի. «Ո՛վ մարդիկ, ձեր հարազատները, ձեր ննջեցյալները կորսված չեն, և երևի թե այդ ննջեցյալներն ավելի կենդանի են, քան շատ ու շատ ողջեր»: Հիրավի, այդ պատճառով է ասվում սաղմոսում. «Յարիցէ Աստուած և ցրուեսցին ամենայն թշնամիք նորա» (Սղմ. Կէ 2): Ցրվեցին մեր հոգին մաշող թշնամիները՝ տառապանքը, կասկա-

ծը, տրտմությունը: Ցրվեցին բոլոր նրանք, ովքեր Քրիստոսի Հարության առաջին իսկ օրվանից կասկածով վերաբերվեցին Նրա Հարության անսուտ ճշմարտությանը: Նրա Հարության առաջին իսկ օրից ասեկոսեներ, զրույցներ տարածվեցին, թե աշակերտները գողացան Տիրոջ մարմինը, և այն լուրը, թե Քրիստոս հարություն է առել, ընդամենը մի ստահոդ առասպել է: Բայց պատմությունը վկա, բյուրավոր հավատացյալ հոգիների վկայությունները վկա, որ Քրիստոս իրապես և վավերական հարություն է առել:

Քրիստոսի Հարությունից ընդամենը երկու օր առաջ Պիղատոս անունով հռոմեական կուսակալը հարց ուղղեց Նրան՝ նկատելով որպես շարքային քարոզիչներից մեկը: Պիղատոսը հարցրեց, թե ի՞նչ է ճշմարտությունը, քանի որ Քրիստոս Իրեն կոչում էր ճշմարտության քարոզիչ: Հավիտենական մի հարց, որը հուզել է բազմաթիվ մտքեր, հարց, որը հետաքրքրությունն է շարժել բազմաթիվ իմաստունների և իմաստասերների, հարց, որի պատասխանը, սակայն, մինչև Քրիստոս, մարդկությունը, և այսօր էլ նրանք, ովքեր Քրիստոսի լույսից հեռու են ապրում, չեն կարողանում գտնել:

Հավիտենական հարցին Քրիստոս պատասխանեց հավիտենական մի պատասխանով, որը, սակայն, խոսքերով չէր արտահայտվում, պատասխան, որը կյանքի վկայություն էր, պատասխան, որը շարունակում է հուզել բյուրավոր մտքեր, փոխակերպել բյուրավոր հոգիներ, և այդ պատասխանը Քրիստոսի հարության վավերական ճշմարտությունն էր: Ավետարանն ասում է. «Ծանիջիք զճշմարտութիւնն, և ճշմարտութիւնն ազատեսցէ զձեզ» (Հովհ. Ը 32): Ըստ երևույթին, մենք յուրաքանչյուրս մեզ համար ունենք դավանած ճշմարտություններ, բայց հաճախ մենք հուսախաբ ենք լինում, երբ տեսնում ենք, որ, այսպես կոչված, հայտարարված ճշմարտությունները չեն ազատում մեզ, չեն փրկում մեզ մեր մտատանջություններից, չեն փրկում մեզ մեր թշնամի-

ների լարած որոգայթներից, չեն փրկում մեզ այն բոլոր պատուհասներից ու փորձություններից, որոնք օրեցօր ավելի ահագնացող թափով ծառանում են մեր առջև: Եվ սակայն, այն ճշմարտությունը, որ Ավետարանը կոչում է մեզ ճանաչելու, ահա այդ ճշմարտությունն է, որ այսօր հայտնվում է մեզ՝ Քրիստոսի անսուտ Հարությունը: Ճանաչեցեք Հարությունը, ճանաչեցեք Ճշմարտությունը և դուք կհասկանաք, որ այս երկրավոր կյանքն ընդամենը մի խղճուկ և ճղճիմ հատվածն է հավիտենական կյանքի, որին կոչված ենք ամենքս: Ճանաչենք այդ ճշմարտությունը և կհասկանանք, որ առօրյա դավադրություններն ու խարդավանքները, առօրյա մեր մտահոգություններն ու մտահուզումները, առօրյա մեր ամեն տեսակի զգայնություններն ընդամենը անիրական ու խղճուկ «իրականություններ» են՝ համեմատությամբ հավիտենական այն կյանքի, որը պիտի ժառանգենք: Ահա այս ճշմարտության մասին է վկայություն տալիս Ավետարանը, և որը բացահայտում է Քրիստոսի անսուտ և ճշմարիտ Հարությունը:

Սիրելի՛ քույրեր և եղբայրներ, մենք անցանք քառասնօրյա պահքի նավարկության մի երկար շրջան, հասանք լուսավոր և խաղաղ այն նավահանգիստը, ուր պիտի հանգչեն մեր հոգիները՝ Քրիստոսի Սուրբ Հարության լույսերի մեջ: Եվ այսօր, ինչպես Ոսկեբերան հայրապետն է պատգամում. «Ժամանակը չէ միմյանց մեղադրելու՝ պաս պահելու կամ չպահելու մեջ, ժամանակը չէ միմյանց նկատմամբ կշտամբանքներ փոխանակելու, ժամանակը չէ միմյանց նկատմամբ ունեցած անհանդուրժողականությունը դրսևորելու, այլ բոլորովին հակառակը՝ ժամանակն է թոթափելու միմյանց նկատմամբ խոչընդոտներ հարուցող զգայնությունները, ժամանակն է եղբայրական և մերձավորական սիրով փայփայելու միմյանց»: Իրապես հարյավ Քրիստոս, և Քրիստոսի հարությունն այսօր միավորում է մեզ ամենքիս: Միավորում

է և ներշնչում վերստին այն միակ և բացարձակ ճշմարտությունը, որ ոչինչ չարժե երկրավոր այս կյանքում մեր թշնամությունը շարժելու, ոչինչ չարժե այս կյանքում, որպեսզի մենք միմյանց նկատմամբ անհաշտ և ոխերիմ տրամադրություններով լցվենք, այլ, բոլորովին հակառակը, հարկ է, որ սիրենք միմյանց, լցվենք միմյանց նկատմամբ հաշտությամբ, համբերատարության ոգով ու սիրով: Այս է Տիրոջ Սուրբ Հարության օրը՝ Զատկական այս նախատոնակին, մեր Եկեղեցու պատգամը, այս է Քրիստոսի ակնկալությունը և սպասումը մեզանից և այս է, որ մեզ վերստին ու վերստին ասել է տալիս. «Քրիստոս յարեաւ ի մեռելոց, մեզ և ձեզ մեծ աւետիս»:

Քրիստոս յարեաւ ի մեռելոց:

Ի ՅԻՇՄՏԱԿ ՆԱՀՄՏԱԿՆԵՐԻ

(ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ)

Մայր Աթոռ Սբ. Էջմիածին
24 ապրիլի, 2009 թ.

Մարդկանց մյուս արարածներից զանազանող կարևոր առանձնահատկություններից մեկը հիշողությունն է: Եվ մենք այդ հիշողությամբ վերստին վերապրում ենք ապրիլյան նահատակների նվիրական հիշատակը: Մենք պատմությանն այսօր նայում ենք խորը ցավով, բայց, իբրև քրիստոնյաներ, գիտենք տարանջատել մեղքը մեղավորից: Մեղավորի նկատմամբ մենք ատելություն չենք տածում, մենք դատապարտում ենք մե՛ղքը, մենք դատապարտում ենք ցեղասպանությո՛ւնը: Ցեղասպանություն կատարողների նկատմամբ մեր հոգիներն ատելություն չեն շնչում, պարզապես մեր մեջ հաղթանակում է լավատեսությունը, որ մի օր ցեղասպանության, ոճրագործության հեղինակները կհրաժարվեն, կտարբերակեն, կառանձնացնեն իրենք իրենց՝ մեղքից: Այդ լավատեսությունն է այսօր վերստին հավաքել մեր ողջ ժողովրդին:

Մեր ժողովուրդը մեկ հոգի, մեկ սիրտ, մեկ բռունցք դարձած՝ որպես մշտամրմունջ աղոթք, քայլում է դեպի Ծիծեռնակաբերդի բարձունքը՝ իր հարգանքի տուրքը, իր խոնարհումը և իր աղոթքը մատուցելու Ցեղասպանության անմեղ զոհերի հիշատակին: Այսօր Ցեղասպանության զոհերի հիշատակին հարգանքի տուրք, խոնարհում և աղոթք մատուցելու համար մեր ժողովրդի բազմահազար զավակներ այցելեցին Ծիծեռնակաբերդի բարձունք:

Եվ այս պահին կրկին ցանկանում եմ հիշել երջանկահիշատակ Վազգեն Հայրապետի խոսքը, որը որպես ժայռացած և արարատացած երդում՝ պետք է դրոշմվի յուրաքանչյուրիս մտքի ու մտածողության մեջ: «1915 թ. ապրիլ 24-ից՝ այդ եղեռնագործությունից և ցեղասպանությունից հետո, հայությունն այլևս իրավունք չունի սխալվելու»: Իրավունք չուներ սխալվելու ճակատագրական այնպիսի պահերի, ինչպիսին էր 1988 թ., իրավունք չունի սխալվելու նաև այսօր: Չափազանց դժվարին, չափազանց ճակատագրական, դրամատիզմով լեցուն մի ժամանակաշրջան ենք ապրում: Ապրում ենք մի երկրում, որտեղ խաչաձևվում են տարբեր երկրների շահերը: Ապրում ենք մի ժամանակաշրջանում, երբ տարբեր օտարամուտ հոսանքներ ներխուժում են հայկական օջախներ, հայրենական բնօրրան՝ պղտորելու մեր անդորրը, օտարացնելու, շփոթեցնելու մեր մտքերը, և այսօր ապրիլյան նահատակների հիշատակի նկատմամբ մեր ակնածանքը, սերը և զգացումները պիտի օգնեն ու աջակցեն մեզ, որպեսզի հավատարիմ մնանք նրանց տեսիլքին, նրանց իղձերին, հավատարիմ մնանք, մանավանդ, նրանց հավատքին:

Թող Տիրոջ օրհնությունը, թող Տիրոջ աջը մշտապես հովանի լինեն մեր ժողովրդին, թող Ս. Հոգու մխիթարությունները վերստին դան հայության հավաքական հոգին սփոփելու դառն կորուստներից: Եվ թող հանգստություն, խունկ և օրհնություն, մշտամրմունջ աղոթք լինի ապրիլյան զոհերի հիշատակին:

Շնորհք, սէր, խաղաղութիւն եղիցին ընդ ձեզ, ընդ մեզ և ընդ ամենեսեանս. ամէն:

ՍՆԿՈՏՐՈՒՄ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴ

(ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԵՎ ՇՈՒՇԻԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԹՅԱՆ ՋՈՀԵՐԻ ՀՈԳԵՀԱՆԳՍՏՅԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԱՌԻԹՈՎ)

Մայր Աթոռ Սբ. Էջ□ածին
9 մայիս, 2009 թ.

«Եւ եղև երեկոյ և եղև վաղորդայն, օր մի»:
(Ծնունդոց Ա 5)

Այսպես է բնութագրում կյանքի հաջորդականությունը, շարունակականությունն Աստվածաշունչ մատյանը. ցերեկը հաջորդում է գիշերին, կյանքը՝ մահվանը, լույսը՝ խավարին, և վերջապես, հաջողությունը և հաղթանակը հաջորդում են դժբախտություններին ու պարտություններին:

Սիրելի՛ քույրեր և եղբայրներ, օրեր առաջ մեր սրտերը միացան ցավի զարկերով: Ոմանք անձամբ՝ իրենց ներկայությամբ, ոմանք՝ մտովի, քայլեցին դեպի Ծիծեռնակաբերդի բարձունքը՝ հարգանքի և խոնարհումի տուրք մատուցելու ցեղասպանության անմեղ զոհերի հիշատակին: Աղոթեցինք նրանց հոգիների հանգստության համար, սրտառուչ աղոթեցինք, որպեսզի Տեր Աստված երբեք նման փորձությունների, նման դժբախտությունների այլևս չմատնի մեզ: Եվ ահա ապրիլյան օրերից հետո մենք մուտք ենք գործել մայիս ամիս, որը մեր պատմության մեջ, մեր ժողովրդի տարեգրության մեջ հատկանշվում և հատկորոշվում է որպես հաղթանակների ամիս:

Եվ այսօր մենք՝ որպես միակամ, միասիրտ ժողովուրդ, հավաքվել ենք այստեղ՝ Աստծո հետ հանդիպման նվիրական այս ժամադրավայրում՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում՝ վերստին մեր աղոթքն ուղղելու հաղթանակի զոհերի հոգիների հանգստության համար:

Այո՛, մենք՝ որպես քրիստոնյաներ, հաղթել գիտենք, որովհետև գիտենք նվիրական գաղափարների համար մեր կյանքով և արյամբ վճարել: Մենք, 1941-1945 թթ. նախկին Խորհրդային Միության կազմում փոքր հանրապետություններից մեկը լինելով, առավելագույն թվով մասնակցություն բերեցինք: Զոհվեցին շուրջ 40-50 միլիոն մարդիկ, որոնց մեջ նաև բազում հայորդիներ, ովքեր բնավ աննշան դեր չխաղացին հաղթանակի կերտման և հաղթանակի ապահովման գործում: Անցան տարիներ, և հաղթանակի խորհուրդը համալրվեց Շուշիի ազատագրման նշանակալի հաղթանակով: Տասնյոթ տարիներ առաջ հայորդիները, վերստին զինված հավատքի վահանով և խիզախության սուսերով, գրոհեցին արցախյան Շուշի նշանավոր բերդը, և Շուշին վերջապես ազատագրվեց պարտադրված գերությունից:

Ահա այսօր մենք հավաքվել ենք այստեղ՝ մեր խոնարհումի տուրքը մատուցելու այդ հաղթանակները կերտած, զոհված անձերի հոգիների հանգստության համար: Եվ ուրախ ենք, որ այդ խոնարհումի տուրքը այսօր մեզ հետ կիսում են հայրենիքից և սփյուռքից ժամանած բազում հայորդիներ: Ուրախ ենք ողջունելու ներկայությունը Հայաստանի «Հայաստան համահայկական հիմնադրամի» հոգաբարձուների խորհրդի բոլոր անդամներին, մեր բարերարներին, նվիրյալ հայորդիներին՝ Միացյալ Նահանգներից, Կանադայից, Սիրիայից և աշխարհի չորս ծագերից, որոնց այսօր հաղթանակի և միասնության ոգին համախմբել է, և այս միասնականությամբ է, որ հրավիրում ենք ամենքին՝ մասնակցություն բերելու, աղոթելու Նորին Սրբության կողմից հանդիսապետվող հոգեհանգստյան այս արարողությանը:

Խունկ, օրհնություն բյուրավոր մեր նահատակների՝ հաղթանակը կերտած հայորդիների հիշատակին և աղոթք նրանց հոգիների հանգստության համար. ամեն:

ԾԱՌԱ ՔՐԻՍՏՈՍԻ

(Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ 12 ԵՎ ԾՆՆԴՅԱՆ 60-ԱՄՅԱ ՀՈԲԵԼՅԱՆՆԵՐԻ ԱՌԻԹՈՎ)

Մայր Աթոռ Սբ. Էջմիածին
4 նոյեմբեր, 2011 թ.

«Ես ծառայ քոյ եմ, ծառայ և որդի աղախնոյ քոյ»:
(Իմաստ. Սողոմոնի Թ 5)

Մեծարգո՛ Նախագահ Հայաստանի Հանրապետության,
Մեծարգո՛ Նախագահ Արցախի Հանրապետության,
Գերաշնորհ, հոգեշնորհ և արժանապատիվ եղբայրներ,
Հարգելի՛ ներկաներ,

Այսօր մենք աղոթք մատուցեցինք Աստծուն՝ վասն արևշատության և արդյունավոր գահակալության Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Հայրապետի գահակալության 12-րդ և ծննդյան 60-րդ տարեդարձների առիթով:

60 տարի... Ապագա Հայրապետը ծնվեց 1951 թվականին Ոսկեհատ գյուղում, հոգսաշատ ու օրվա աշխատանքով ապրող Գրիգոր հոր և Խաթուն մոր ընտանիքում՝ չորս քույրերի և երկու եղբայրների հետ: Ապագա Հայրապետի մանկությունը չանցավ բարեկեցության ու փափկության մեջ: Մանկական անհոգության հետ ունեցավ զրկանքներ, կիսեց իր ծնողների չքավորությունը ու կարիքները, բայց ունեցավ ուրախություն՝ ունենալու հավատավոր ծնողներ, ովքեր մշտապես Աստծունն էին և Աստծո կոչին արձագանքում էին. «Տե՛ր Աստված, մենք Քո ծառան ենք և որդիները Քո աղախնու»:

Այսպես մեծացավ ապագա Հայրապետը և այսպես մի օր էլ ինքը արձագանքեց Աստծո կոչին, թե՝ «Տեր Աստված, ես

Քո Ծառան եմ և որդին Քո աղախնու»: Այսպես այցելեց եկեղեցի՝ հոր հետ համբուրելով Սուրբ Էջմիածնի ամեն մի քարն ու սյունը: Այսպես ընդունվեց Հոգևոր ճեմարան, ուսանեց ու ավարտեց, մեկնեց արտերկրյա ուսման, վերադարձավ ու ներկայացավ երջանկահիշատակ Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսին, և Վազգեն Ա Հայրապետի ազդու հայացքի ներքո վերստին դիմեց Աստծուն և հաստատեց իր պատկանելությունը. «Տե՛ր Աստված, ես Քո ծառան եմ և որդին Քո աղախնու»:

Ապագա Հայրապետը ստանձնեց Արարատյան Հայրապետական թեմի Առաջնորդական Փոխանորդի պարտականությունները, և Աստված խոսեց ապագա Հայրապետի հետ, և Գարեգին Եպիսկոպոսի ծնողների աղոթքները մարմին առան նրա գործերում: Առաջնորդական գործունեության շուրջ 30 տարիների ընթացքին Խորհրդային Հայաստանի պիոներ պալատները անկախ Հայաստանի սկզբնավորմամբ դարձան Հայորդաց տներ՝ մանուկների հոգիների քրիստոնեական կրթարաններ, Սևանում լքված մի շենք դարձավ Դպրանոց՝ Վազգենյան անվամբ, բարենորոգվեցին եկեղեցիներ, կազմակերպվեց Հայաստանում երիտասարդների առաջին քրիստոնեական միությունը, եկեղեցիները տաքացան նաև մարդկային շունչերից: Հայաստանի ազատագրումով ապագա Հայրապետը լծվեց Քրիստոսի ազատագրմանը՝ աստվածմերժության բռնաճիրաններից: Իր ծնունդից 48 տարիներ հետո ապագա Հայրապետը բազմեց Հայրապետական գահին՝ վերստին հաստատելով Տիրոջն իր հավատարմությունը. «Տե՛ր Աստված, ես Քո ծառան եմ և որդին Քո աղախնու»: Այսպես դիմագրավեց ընտրության իսկ օրն առաջին և ահավոր փորձությանը Ազգային ժողովում գործված սարսափելի ոճրագործությանը, երբ սպանվեցին ՀՀ Վարչապետը, Աժ Նախագահը և ազգի մյուս նվիրյալները: Հայրապետը ցավ ու ողբերգություն ապրեց Հայաստանի ներքաղաքական ցնցումների ու լարվածությունների համար, ուրախացավ Հայաստանի հաջողություններով, չընկճվեց, երբ չհասկաց-

վեց, չհուսահատվեց, երբ չհաջողեց, չչարացավ, երբ հանիրավի և անհիմն մեղադրվեց, խոստովանեց ու զղջաց, երբ սխալվեց և միշտ ու հարատև կարդաց առ Աստված. «Տե՛ր, Քո ծառան եմ և որդին Քո աղախնու» և շարունակեց հուսալ... և շարունակում է հուսալ:

Գարեգին Ծառայ Քրիստոսի Ողորմութեամբ Աստուծոյ և կամօքն ազգիս Եպիսկոպոսապետ և Կաթողիկոս Ամենայն Հայոց: Արդ, Վեհափա՛ռ Տեր, ի դիմաց Գերագույն Հոգևոր խորհրդի, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Միաբանության, Մայր Աթոռի պաշտոնեության, հավատավոր մեր ժողովրդի, թույլ տվեք նվաստիս մատչիլ Ձերդ Սրբության Աջոյն ամենայն ակնածանոք և շնորհավորել Ձերդ Սրբության տարեդարձը և բարեմաղթել երջանիկ, արգասաբեր գահակալություն, արևշատություն և մշտանորոգ բյուր բարիք:

Թո՛ւյլ տվեք նաև հոգևոր եղբայրներիս անունից շնորհակալություն հայտնել ՀՀ և Արցախի իշխանություններին՝ մեր Եկեղեցու հովվապետի ազգաշեն ու եկեղեցաշեն ծրագրերին ըստ ամենայնի աջակից լինելու համար: Մեր գնահատանքը՝ մշակույթի և արվեստի գործիչներին, կրթության մշակներին, ազգային ու բարեսիրական հաստատություններին ներկայացուցիչներին ու համայն մեր ժողովրդին՝ Հայոց Եկեղեցուն և Հայոց Հայրապետին միշտ սատար ու օգնական լինելու պատրաստակամության համար:

Մեր շնորհակալությունն ենք բերում նաև ՀՀ-ում հավատարմագրված դիվանագիտական առաքելությունների ղեկավարներին ու ներկայացուցիչներին՝ Հայոց Հայրապետի հանդեպ մշտապես դրսևորած ուշադրության ու աջակցության համար:

Թող Ամենաբարին Աստված անսասան պահի Հայրենի մեր Երկիրը, Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, ապավեն լինի Վեհափառ Հայրապետին և առատապես օրհնի Քրիստոսասեր աշխարհասփյուռ մեր ողջ ժողովրդին:

ՎԵՐՔԴՍՐՔ ԴԵՊԻ ՏՈՒՆ

(ԱՆԱՌԱԿԻ ԿԻՐԱԿԻԻ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ)

Մայր Աթոռ Սբ. Էջմիածին
24 փետրվարի, 2013 թ.

«Հայր, մեղայ յերկինս և առաջի քո»:
(Ղուկ. ԺԵ 21)

Սիրելի՛ քույրեր և եղբայրներ,

Այս խոսքերը քաղված են Ղուկաս Ավետարանչի այն պատումից, որն աստվածաշնչյան մեկնիչներն անվանել են «Անառակ որդու առակ»: Առակ, որը շատերին քաջ հայտնի է, առակ, որի պատգամին մենք ունկնդրում ենք Մեծի Պահոց յուրաքանչյուր երրորդ կիրակի օրը:

«Մի մարդ երկու որդի ուներ,-պատմում է Ավետարանիչը:- Որոշ ժամանակ անց կրտսեր որդին մոտենում է հորը և խնդրում. «Հա՛յր, տո՛ւր քո ունեցվածքի ինձ հասանելիք բաժինը, որպեսզի ես առանձնանամ և իմ կյանքով ապրեմ»: Հայրը կատարում է կրտսեր որդու խնդրանքը, փոխանցում է իր ունեցվածքի այն մասը, որը բաժինն էր կրտսեր որդու: Եվ Ավետարանիչն ասում է՝ կրտսեր որդին, վերցնելով իր ունեցվածքը, մեկնեց օտար աշխարհ: Թե նա որքան ապրեց օտար աշխարհում, հստակ չի նշվում Ավետարանում: Բայց որոշ ժամանակ անց նրա ունեցվածքը, կարողությունները սպառվում են, և նա ստիպված վարձկանությամբ է հայթայթում իր ավուր հացը: Եվ Ավետարանչի խոսքերով՝ խոզերի համար կերակուրներն են մինչև անգամ նախընտրելի դառնում նրան սովի պատճառով: Այստեղ ինքն իրեն հարց է ուղղում. «Անգամ ստրուկները, անգամ ծառաներն իմ հոր օջախում

ավելի լավ են սնվում, ավելի ապահով են, ավելի հանգիստ են, քան ես: Ինչո՞ւ օտար աշխարհում ես պիտի խոզերի համար նախատեսված կերակուրներով ապրեմ, ինչո՞ւ այսքան օտարացում, ինչո՞ւ հեռացում, միգուցե վերադառնա՞մ իմ հայրական օջախ և կարողանամ վերականգնվել»: Այս որոշումը որդին ի գործ է դնում. վերադառնում է ընտանիք, և հայրը նրան ընդունում է գրկաբաց, որովհետև, Ավետարանի խոսքերով, կորսված էր այդ որդին և գտնվեց, մահացած էր և հարություն առավ: Ահա այստեղ է, որ որդին հնչեցնում է բնաբանի մեջ քիչ առաջ բերված խոսքերը. «Հա՛յր, մեղանչեցի քո դեմ և երկնքի առաջ»: Զղջման, խորը զղջման, խորն ափսոսանքի, խորն ապաշխարանքի արտահայտություն: Եվ ասում է Ավետարանը, որ Հայրը զվարակ մորթեց, խնջույք կազմակերպեց և արտահայտեց իր անասելի ուրախությունը:

«Անառակ որդու առակում» հատկանշական է երկու իրողություն: Առաջին՝ փախուստ դեպի ազատություն, և երկրորդ՝ փախուստ ազատությունից: Կրտսեր որդին կարծում էր, որ պատասխանատվությունից, հոգսերից, բեռից զուրկ նոր աշխարհ ու կյանք փոխադրվելով՝ ավելի ազատ և անկաշկանդ պիտի լինի: Հոգեբանորեն նա արդեն տանից հեռացած էր անգամ այն ժամանակ, երբ տակավին այնտեղ էր բնակվում, նա օտարացել էր այդ միջավայրից, նրան անտանելի էր թվում այն միապաղաղությունը, միօրինակությունը, որն ինքը տեսնում էր հայրական օջախում: Եվ իր համար կարծեք թե նախընտրելի էր ամեն մի ցնցում, բայց ոչ այդ միօրինակությունն ու միապաղաղությունը: Եվ այս հոգեբանական մղումը նրան տարավ օտար աշխարհ: Պատահական չէ, որ Ավետարանիչն ընտրում է «օտար աշխարհ» արտահայտությունը: Այդ աշխարհն օտար էր ոչ այն պատճառով միայն, որ անծանոթ էր, այլև օտար էր իր արժեքներով, ընկալումներով, հարաբերություններով: Մարդիկ հակված են երբեմն-երբեմն փախուստ տալ իրականությունից: Այդպես

փախուստ տվեցին իսրայելացիներն անապատում Աստծուց և հակվեցին կռապաշտությանը և ոսկե հորթին պաշտամունք մատուցեցին: Այսօր ևս շատերը փախուստ են տալիս իրականությունից, հայրական օջախից՝ պարզապես միապաղաղ, միատեսակ, կյանքից խուսափելով: Այսօր գոյություն ունեն աղանդավորական զանազան ուղղություններ, կլինեն դրանք հոգևոր, թե քաղաքական աղանդներ, և մարդիկ երբեմն ձանձրույթից, միապաղաղությունից, միօրինակությունից և Աստծու հետ հաջողված չլինելու անվստահությունից երբեմն հակվում են այս կամ այն աղանդավորական հոսանքին: Նորից եմ կրկնում, կարևոր չէ՝ այդ հոսանքը կրոնական է, քաղաքական, թե տնտեսական: Բայց այդպիսի հոսանքներին հարելու միակ պատճառն անվստահությունն է, սեփական արժեքների մեջ ամուր չլինելու գործոնը:

Երկրորդ պատկերը, որն ընդգծվում է «Անառակ որդու առակ»-ի մեջ, փախուստն է ազատությունից: Բոլորս փախչում ենք դեպի ազատություն, ձգտում ենք ազատության և տեսնում ենք, որ հաճախ այդ ազատությունը իսկական փորձանք է դառնում մեզ համար: Ազատությունը, որ խարսխված չէ արժեքների վրա, ազատությունը, որը Աստծու հետ միության մեջ չէ, իրապես փորձանք է և այդ փորձանքից փրկվելու համար միայն մնում է զղջումը:

Իրականում ի՞նչ արեց անառակ որդին: Հաղթահարեց ինքն իրեն: Առաջին հայացքից թվում է մեխանիկական մի գործողություն՝ լքել ընտանիքը, մտափոխվել և վերադառնալ: Բայց չափազանց դժվար է սեփական կերպարից, գործելաոճից և սխալներից հրաժարվելը. նշանակում է ինքդ քեզ հաղթահարել: Եվ այդ վճռականությունը, այդ քաջությունն ունեցավ անառակ որդին. ունեցավ՝ ինքն իրեն հաղթահարելով, առանց երաշխիք ունենալու, որ ներման կարժանանա: Բայց ներողամտության արժանանալու հիմնական գրավա-

կանը զղջումն է: Ահա այդ զղջումն ու ապաշխարանքն ունեցավ կրտսեր որդին:

Հարց է առաջանում՝ ի՞նչ առնչություն ունի «Անառակ որդու առակը», ընտանիքից փախուստը, ընտանիք վերադառնալը Մեծի Պահոց այս շրջանի հետ: Վստահ եմ՝ պատասխանն այնչափ ակնհայտ է, որ անհրաժեշտություն չկա նույնիսկ լուսաբանելու: Մենք բոլորս, որպես մարդիկ, անկումների և վերելքների ճանապարհ ենք անցել: Բոլորս կյանքի ինչ-որ մի հատվածում անառակ որդի ենք: Մարդիկ հակված են սխալվելու, ընկնելու: Ահա այս պատճառով պետք է, որ Մեծի Պահոց շրջանում ևս մեկ անգամ խորհենք մեր ընթացքի մասին: Խորհենք, որ հակառակ անկումներին, պատրաստ և վճռական լինենք նաև ոտքի կանգնելու: Ինչպես մի մտածող ասում էր. «Ես չեմ սիրում այն ձեռքերը, որոնք մշտական ճերմակության մեջ են, այլ սիրում եմ այն ձեռքերը, որոնք ցեխի մեջ աղտոտվելուց հետո պահպանում են ճերմակությունը և մաքրությունը»: Մենք ամեն օր կեղտոտվում ենք, աղտոտվում, բայց ամեն օր նաև մեզ չպիտի լքի ջանքը՝ այդ ցեխից, այդ աղտոտությունից ազատվելու: Իսկ անմաքրությունից ազատվելու միայն մեկ ճանապարհը հաղթահարելն է սեփական անձը: Հպատակեցնել սեփական անձը աստվածային պատգամներին և պատվիրաններին: Եվ Մեծի Պահոց այս շրջանը նաև Անառակ որդու օրինակով այդ հպատակեցման և հնազանդեցման ոգին է, որ ներշնչում է այսօր մեզ:

Թող Աստված Իր Սուրբ Հոգով զորացնի մեր մեջ հնազանդության, հաշտության, բարեպաշտության և Աստծու հանդեպ մշտական սիրո մեջ ազատության հասնելու ոգին:

Շնորհք, սեր և խաղաղություն մեզ բոլորիս հետ այժմ և հավիտյանս հավիտենից. ամեն:

ՏՈՆ ՀԱՂԹՈՒԹՅԱՆ

(ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՃՐԱԳԱԼՈՒՅՑԻ ԱՌԻԹՈՎ)

Մայր Աթոռ Սբ. Էջմիածին
30 մարտի, 2013 թ.

«Զի ես յաղթեցի աշխարհի»:
(Հովհ. ԺԶ 33)

Խոսքեր՝ քաղված Ավետարանից՝ արտաբերված Քրիստոսի շուրթերից: Խոսքեր, որոնք հարյուրամյակների մշուշի միջից լույսի նման ճեղքում են խավարը, ջերմացնում բոլոր այն սրտերը, որոնք ապավինում են Քրիստոսին. «Ես հաղթեցի աշխարհին»:

Իրապես, սիրելի՛ քույրեր և եղբայրներ, այսօր հաղթանակի տոն է, տոնն է Քրիստոսի Հարության. տոն, որը մահվան, չարի ու խավարի դեմ կյանքի, բարու ու լույսի հաղթանակն է: Համայն քրիստոնյա մարդկությունը հարյուրամյակներ շարունակ իր հոգին է ընծայել Քրիստոսին, Հարության տոնի օրը հոգևոր բերկրանք ապրելով՝ մասնակցել մատուցվող Պատարագին: Ամբողջ քրիստոնյա աշխարհը զատկական օրերին խանդավառված է ու գոտեպնդված:

Հաճախ, հատկապես խորհրդային հասարակարգի տարիներին, մարդկանց մտքերի մեջ փորձում էին մխրճել այն գաղափարը, որ քրիստոնեությունը թույլերի, տկարների ու նվաստացվածների կրոն է: Դժբախտաբար, այսօր էլ նման մտայնություններ կան: Հաճախ կարելի է լսել, այսպես կոչված, հայրենասերներից, որ եթե մենք քրիստոնյա չլինեինք, եթե Քրիստոսի վարդապետությանը չհետևեինք և ստիպված

չլինեինք մի երեսին ապտակ հասցնողին մյուսը դեմ տալ, մենք շատ ավելի հզոր պետություն կունենայինք, շատ ավելի ուժեղ կլինեինք: Բայց նրանք մոռանում են մի պարզ ճշմարտություն, որ Քրիստոս շատ ավելի ուժեղ էր, քան բոլոր այն առաջնորդները, ովքեր երբևիցե հավակնել են մարդկանց իրենց հետևորդ դարձնել, որովհետև ուժեղ լինելու համար պարտադիր չէ ամեն հասցված ապտակին հակահարված տալ: Վկան է մարդկության 2000-ամյա պատմությունը: Անձն ավելի ուժեղ է, երբ իր մեջ ուժ, համբերություն և դիմադրություն ունի ապտակներն անպատասխան թողնելու, որովհետև վստահ է, որ այդ հաղթանակը վերջիվերջո իրենն է լինելու:

Անտարակույս, Քրիստոս կարող էր հրեշտակների գնդերին պատգամել և Աստծուն խնդրել, որ չարչարանքները, տառապանքները, մարդկանց կողմից հասցված վիրավորանքներն Իրենից հեռու վանվեին: Հրեշտակների գնդերն ընդամենը մեկ վայրկյանում, հաշվված րոպեներում պիտի անէացնեին այն բոլոր չար ուժերին, ովքեր համարձակվել էին Աստծո Որդուն չարչարանքի, տառապանքի, մատնության, խաչելության և, վերջապես, մահվան մատնելու: Բայց խաչը, տառապանքը, չարչարանքը դարձան այն միջոցները, որոնցով արժեք և բովանդակություն ստացավ Քրիստոսի Հարությունը: Հասցված ապտակները, որոնք անպատասխան էին մնացել, պատասխանը գտան հարության հրաշքի մեջ: Ահա այս պատճառով է, որ Հարությունը դարձավ խորհրդանիշը հաղթանակի:

Քրիստոսի Հարությունը, սակայն, մի պարզ հաղթանակ չէ: Այն բարության մեջ հարատևող և չարիքը չեզոքացնող հաղթանակ է: Հաճախ մարդիկ հաղթանակը դարձնում են ինքնանպատակ: Ժամանակակից մտածողության մեջ՝ թե՛ քաղաքականության, թե՛ տնտեսության ոլորտում, մարդիկ կարծում են, թե ամեն ինչ կարելի է, ամեն ինչ թույլատրելի

է՝ ի սեր հաղթանակի: Սա ևս մի սխալ, այլասերված մտածողություն է: Հաջողությունը ֆետիշացվում է, հաղթանակը դարձվում՝ գերնպատակ: Տեսե՛ք, երբեմն պատահում է, որ բազմաթիվ գործարարներ հաջողության հասնելու, նյութական շահ ապահովելու համար դիմում են բազմապիսի միջոցների, հակառակ, որ գոյություն ունեն մրցակցության քաղաքակիրթ և ընդունված պայմաններ: Բայց քանի որ կարևորագույն արժեքը թյուրըմբռնված հաղթանակն է համարվում, այդ իսկ պատճառով ամենայն ինչ արտոնելի է թվում:

Մինչդեռ սրանք հաղթանակներ են, երբ հաղթողն ակամա հայտնաբերում է, որ իր կորուստները շատ ավելին են, քան իր նվաճումները: Պատմագիտության մեջ կա մի արտահայտություն, որ կոչվում է «Պյուրոսյան հաղթանակ»: Սա մի թագավորի մասին է, ով իր թշնամիների դեմ, հակառակորդների դեմ հաղթանակ ունեցավ, բայց վերջում պարզվեց, որ իր զորքերի մեջ կորուստները շատ ավելին են: Ահա այսպիսին են այն բոլոր հաղթանակները, որոնք ձեռք են բերվում ի գին ուրիշներին պատճառված տառապանքի, ի գին ընտանիքին, հարազատներին, մերձավորներին պատճառած վնասների և կորուստների: Հիշենք՝ ինչ է ասում Աստված. «Ի՞նչ օգուտ է մարդուն, եթե նա ամբողջ աշխարհը շահի, բայց իր հոգին կորցնի»: Իսկ մարդը, ով իր գերնպատակը դարձրել է այսպիսի հաղթանակը, իրապես, ոչ միայն կորցնում է իր մերձավորներին, զինակիցներին, իր ընտանիքին, այլև կորցնում է ամենաթանկը, որ պարգևել է Աստված իրեն՝ իր հոգին: Իսկ հոգին կորցնելուց հետո ոչ մի հաջողություն և ոչ մի հաղթանակ չի կարող բովանդակություն ստանալ: Ահա Քրիստոս հարություն առավ, որպեսզի իրական այդ հաղթանակի զգացողությունը փոխանցի մեզ, հաղթանակ, որը պայմանավորված է չարի դեմ դիմադրությամբ՝ հարատևելով բարու մեջ, տառապանքից չխուսափելով, բայց հարատև,

հետևողականորեն, քայլ առ քայլ դեպի բարու հաղթանակն ընթանալով:

Ահավասիկ, բարու այս հաղթանակն ենք մենք տոնում, սիրելի՛ քույրեր և եղբայրներ: Եվ ինչո՞ւ չնչենք այն խանդավառությա՛մբ, ոգևորությա՛մբ, ինչո՞ւ մեր հոգիները չցնծան այդ հաղթանակով և ուրախությամբ, հակառակ, որ կյանքում, մեր շրջապատում կան շատ երևույթներ, որոնք վշտացնում են մեր հոգին և մեզ նեղսրտություն են պատճառում: Քրիստոսի հաղթանակը բերում է այն հույսն ու վստահությունը, որ մի օր այդ դառնությունները, անարդարությունները պիտի վերանան մեր կյանքից: Մեզ տրված չէ իմանալ, թե մեր աղոթքներն Աստծու կողմից երբ են արձագանք ստանալու: Մեզանից յուրաքանչյուրը մեկական պատասխանն է իր ծնողների, իր նախնիների կողմից Աստծուն ուղղված աղոթքի: Եվ գուցե այսօր մեր աղոթքի պատասխանը մեր ընկալումներով ուշանա, բայց դրա պատասխանը, դրա արձագանքն անպայմանորեն լինելու է, մեկին՝ որպես առողջություն իր զավակներին, մյուսին՝ իբրև բարեբախտություն իր կյանքի:

Թո՛ղ Աստված այս վստահությունը պարգևի ամենքիս, և Քրիստոսի լույս Հարության շնորհներն ու օրհնություններն ամենքիս հոգիների մեջ զորություն դարձնի՝ դիմակայելու համար բոլոր տեսակի դժվարություններին ու մարտահրավերներին:

Տիրոջ օրհնությունը, սերը և շնորհն ամենքիս հետ, այժմ և հավիտյանս հավիտենից. ամեն:

Քրիստոս յարեաւ ի մեռելոց:

ԽԱՉԱԿՐՈՒԹՅՈՒՆ

(ԽԱՉՎԵՐԱՑԻ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ)

Մայր Աթոռ Սբ. Էջմիածին
15 սեպտեմբերի, 2013 թ.

Սիրելի՛ քույրեր և եղբայրներ,

Այսօր մեր Եկեղեցին տոնախմբում է Խաչվերացի տոնը, որը նվիրված է խաչի պանծացմանը, խաչի գաղափարի և խորհուրդի վերարծարծմանը:

Մեր Եկեղեցին խաչին նվիրել է չորս տոն, որոնցից կարևորագույնը, մեծագույնն ահա այսօր ենք տոնախմբում: Քրիստոնեությունն արտահայտող առավել բնութագրական մեկ այլ խորհրդանիշ դժվար թե հնարավոր լինի գտնել, քան՝ խաչը: Խաչով մենք արտահայտում ենք մեր պատկանելությունը: Եվ այսօր Սուրբ Գրոց ընթերցումները մեր մտածումները սևեռում են Սուրբ Խաչի խորհրդին:

Խաչի մասին բազում են անդրադարձումները սուրբգրային տնտեսության մեջ: Բայց այսօր ցանկանում եմ առանձնացնել դրանցից երկուսը: Երկու արտահայտություն, որոնք լիարժեք արտահայտում են խաչի խորհուրդը մեր քրիստոնեական ընկալումներում և մտածողության մեջ:

Առաջինը, որն ամփոփված է Մատթեոսի Ավետարանում, ուղղակիորեն արտահայտված է Քրիստոսի կողմից, երբ Փրկիչը, դիմելով Իր աշակերտներին, ասում է, թե՝ ով ցանկանում է հետևել ինձ, «...առցէ զխաչ իւր և եկեսցէ զկնի իմ» (Մատթ. ԺԶ 24):

Երկրորդ հատվածն արդեն Պողոս առաքյալի շուրթերից է մեզ փոխանցվում. «Այլ ինձ քաւ լիցի պարծիլ, բայց ի խաչն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի» (Գաղ. Զ 14): Ահա երկու հատվածներ՝ մեկը Քրիստոսի շուրթերով փոխանցված մեզ, մյուսը՝ Պողոս առաքյալի: Մեկում Քրիստոս պատգամում

է վերցնել խաչը, հետևել Իրեն, մյուսում՝ Պողոս առաքյալը դիմում է հավատացյալներին՝ ասելով, որ իր միակ պարծանքը, միակ հպարտությունը Տիրոջ խաչն է: Առաջին հայացքից, կարծեք թե, տարբեր խաչերի մասին է խոսքը: Մեկում խաչը ներկայացված է որպես բեռ, ծանրություն, իսկ Պողոս առաքյալի վկայությամբ՝ խաչը ներկայանում է իբրև հաղթանակի, պարծանքի առարկա:

Մենք բոլորս քաջ գիտենք, որ խաչը նախաքրիստոնեական շրջանում դատապարտության գործիք էր: Խաչը Հռոմեական կայսրության շրջանին մի գործիք էր, որը առանձնացվել էր ոչ միայն մահվան դատապարտելու, այլև հատկապես նվաստացումը, արհամարհանքն ու արգահատանքն առավել ընդգծելու համար, որովհետև հռոմեացի քաղաքացիները բոլորովին այլ ճանապարհով էին մահվան մատնվում՝ երբեմն՝ թունավորումով, երբեմն՝ գլխատմամբ. մինչդեռ խաչելությունը վերապահված էր բացառաբար նրանց համար, ովքեր պետք է ստանային հասարակության արգահատանքն ու արհամարհանքը: Ահա Քրիստոս այդպիսի մահվան մատնվեց: Ուրեմն՝ խաչը նախաքրիստոնեական շրջանում գալիս էր վկայելու, մատնանշելու արհամարհված, նվաստացման ճանապարհով մահվան մատնված մարդկանց տառապանքը, որը ոչնչով չէր կարող արժանանալ ո՛չ պարծանքի, ո՛չ էլ գնահատանքի:

Եվ ահա, Քրիստոս եկավ, և մարդիկ վերցնելով իրենց խաչը, հետևեցին Նրան. Նա փոխեց խաչի իմաստն ու բովանդակությունը: Նա պատգամեց՝ «վերցրե՛ք ձեր խաչը», որն իր մեջ արտացոլելու էր գիտակցական զոհողության խորհուրդը: Հաճախ իրենց քրիստոնյա կարծող մարդիկ սխալ են ընկալում քրիստոնեության խաչակրության իմաստը: Ոմանք կարծում են, թե որքան արտահայտիչ լինի տառապանքի ցուցադրումը, այնքան ավելի մեծ կլինի հավանականությունը, որ մարդիկ քեզ իբրև քրիստոնյա պիտի ընկալեն: Բայց քա՛վ լիցի, քրիստոնեությունը երբեք ու եր-

բեք տառապանքը պաշտամունք չի դարձրել: Տառապանքը քրիստոնյաների համար դարձել է ընդամենը հարազատների, մտերիմների նկատմամբ իրենց սերն ու անձնազոհությունն արտահայտելու գիտակցական մի միջոց: Այդպիսին է այն մայրը, որն անձնազոհաբար կրում է իր զավակի տառապանքը հիվանդության ժամանակ կամ մանկության տարիներին՝ խնամք ու հոգատարություն դրսևորելով: Այդպիսին է զինվորը, որը պաշտպանում է իր հողը՝ կյանքը զոհելով հայրենիքի համար: Ահա այս տառապանքն է, որ Քրիստոս նկատի ունի և մեզ հորդորում է կրելու այդ խաչը: Բայց այն տառապանքը, որ մարդիկ սեփական բացառիկությունն ընդգծելու մտայնությամբ են ցուցադրում, որևէ կերպ առնչություն չունի քրիստոնեության հետ:

Հիմա անդրադառնանք Պողոս առաքյալի խոսքերին, թե խաչը՝ որպես պարծանք, հպարտություն է հավատացյալների համար: Ուրեմն՝ խաչը դարձավ ժամանակի մեջ այն կամուրջը, որտեղ տառապանքը վերածվեց հաղթանակի: Եթե մինչև Քրիստոսի խաչելությունը խաչն ընդամենը տառապանքի խորհրդանիշ էր, ապա Քրիստոսի Հարությունից հետո խաչը գերազանցապես դարձավ հաղթանակի, հպարտության և պարծանքի առարկա: Պողոս առաքյալն իր հորդորն ուղղեց մեզ՝ հպարտանալու այնպիսի տառապանքով, զոհողությամբ, որի վերջնահանգրվանը, արդյունքը հաղթական Հարությունն է: Եվ ահավասիկ, Հարության ժառանգորդներն ենք մենք այսօր Սուրբ Խաչի այս տոնակատարության մեջ, Հարության ժառանգորդն ու խաչակիրն է եղել մեր Եկեղեցին իր ողջ պատմության ընթացքին, և այդ խաչակրությունը, այդ հաղթանակի տոնահանդեսը մինչև այսօր շարունակվում և շարունակվելու է նաև ապագայում:

Թող Խաչը ապավեն և պահապան լինի մեզ ամենքիս այժմ և հավիտյանս հավիտենից. ամեն:

ԱՆՓՈՓՈԽ ԲԱՐԵԿԱՄԸ

Մայր Աթոռ Սբ. Էջմիածին
29 մայիսի, 2014 թ.
«Եւ ահաւասիկ ես ընդ ձեզ եմ՝ զամենայն աւուրս,
մինչև ի կատարած աշխարհի»
(Մատթ. ԻԸ 20)

Սիրելի՛ քույրեր և եղբայրներ,

Այս խոսքերը քաղված են Մատթեոսի Ավետարանից. խոսքեր, որոնք հնչել են Քրիստոսի՝ մեր Տիրոջ շուրթերից, երբ կատարվելու էր Համբարձման հրաշազարդ իրադարձությունը:

Ավետարանում պատմվում է, թե Տիրոջ մատնությունից, չարչարանքներից ու խաչելությունից ինչպես էին ահաբեկվել Փրկչի աշակերտները: Իրենց Վարդապետի՝ Հիսուս Քրիստոսի խաչելությունը, թաղումը և մահը որևէ ձևով չէր համընկնում Մեսիայի մասին նրանց պատկերացումներին ու ակնկալիքներին: Աստված մահացավ: Սա ուղղակի մի դատապարտություն էր: «Մի՞թե Աստված ամենազոր չէ, թե՞ Հիսուսը, ում իրենք հավատացին, Աստծո Որդին ու սպասված Մեսիան չէր»: Մարկոս Ավետարանիչը, հիշելով աշակերտներին, ասում է. «Երկյուղում էին, քանի որ ահավոր սարսափի մեջ էին գտնվում» (Մարկ. ԺԶ. 8):

Տիրոջ հրաշափառ Հարությունը մխիթարություն բերեց առաքյալներին, սակայն երկյուղը և ապագայի հանդեպ անորոշությունը խոր արմատներ էին նետել նրանց հոգիների մեջ: Ահա ինչպես է Մատթեոս ավետարանիչը նկարագրում աշակերտների հանդիպումը Հարուցյալ Տիրոջ հետ Գալիլիայում, Համբարձումից առաջ. «Իբրև տեսին զնա, երկիր պագին նմա, և ոմանք յերկուացան» (Մատթ. ԻԸ 17): Այո՛, Սուրբ Հարությունից հետո բազում անգամներ հանդիպելով Քրիստոսին, լսելով նրա մխիթարիչ պատգամները, չոչափե-

լով նրա վերքերն ու համոզվելով, որ իրապես հարություն է առել, այնուհանդերձ աշակերտները տակավին տարակուսանքի մեջ էին:

Հարուցյալ Քրիստոս Համբարձումից առաջ Իր շուրջ հավաքեց հուսալքված աշակերտներին, պատգամներ տվեց ու մխիթարություն պարգևեց նրանց սրտերին՝ ասելով. «Ես ձեզ հետ եմ մինչև աշխարհի վախճանը»:

Ասում են, թե միջին վիճակագրությամբ, մարդը երկու քառորդ ժամվա ընթացքում բազում փոփոխությունների է ենթարկվում. փոխվում են նրա տրամադրությունը, հարաբերությունները, փոխվում է վերաբերմունքը, անգամ՝ հայացքները: Եվ այս համատարած փոփոխությունների մեջ հնչում է Քրիստոսի՝ անփոփոխ, կայուն և հավիտենական բարեկամության կոչը. «Ես ձեզ հետ եմ մինչև աշխարհի վախճանը»:

Կյանքում հաճախ բարեկամությունը և թշնամությունը քայլում են կողք կողքի և դժվար են տարբերակվում: Հաճախ փշերը մարդկանց մատուցվում են բամբակների մեջ, թույները՝ մեղրի ու քաղցրավենիքի: Քրիստոս, սակայն, անդավաճան է Իր բարեկամության մեջ և վճռական՝ Իր հայտարարության մեջ. «Ես ձեզ հետ եմ մինչև աշխարհի վախճանը»: Նա մեզ հետ է թե՛ մեր ուրախության, թե՛ նեղության, թե՛ հուսահատության և թե՛ խանդավառության մեջ:

Այս աշխարհում Քրիստոսի առաքելության շարունակողը, մարդկանց հետ լինելու մեծ և սքանչելի առաքելությունն իրականացնողը մեր ժողովրդի կյանքում դարեր շարունակ եղավ մեր Սուրբ Եկեղեցին՝ իր բոլոր կառույցներով, նվիրյալ հոգևորականներով ու սպասավորներով: Մեր Եկեղեցին Ավարայրում քաջամարտիկների հետ եղավ, եղավ Սարդարապատում, որին շինականների, քաղաքական ու մտավորական գործիչների հետ իրենց մասնակցությունը բերեցին բազում նվիրյալ եկեղեցականներ: Այսօր նաև մեր Եկեղեցու անսասանության, առաքելության արդյունավորման կարևորագույն տոնն է: Քիչ հետո մենք կատարելու ենք Հայրապետական մաղթանք այս Սուրբ Սեղանի առջև՝ աղոթելով

Տիրոջը, որ մնայուն հաջողություն պարգևի մեր Եկեղեցու առաքելությանը, արդասավոր դարձնի մեր եկեղեցականների ջանքերը՝ ուղղված մեր ժողովրդի բարօրությանը:

Սիրելի՛ քույրեր և եղբայրներ, այսօր նաև հիշատակն է հայրապետական աթոռի՝ Սուրբ Էջմիածին տեղափոխության:

Սրանից հիսուն տարի առաջ՝ 1951 թվականին, երջանկահիշատակ Գևորգ Զ Ամենայն Հայոց Կաթողիկոսի և Մեծի Տանն Կիլիկիո երջանկահիշատակ Գարեգին Ա Հովսեփյանց Կաթողիկոսի եղբայրական սերտ գործակցությամբ հիմքերը դրվեցին, որպեսզի նշվի Սուրբ Աթոռի փոխադրության 500-ամյակը: Խոսքերն ավելորդ են, երբ խոսում են փաստերը:

Մեր Եկեղեցին՝ իր մեծ առաքելությամբ, ժողովրդի կյանքում իր վճռական ներկայությամբ, նոր վկայություն է՝ համաձայն Քրիստոսի խոստման՝ լինելու ժողովրդի հետ:

Արդ, սիրելի՛ քույրեր և եղբայրներ, միասնաբար աղոթենք մեր Եկեղեցու պայծառության, նրա առաքելության արդյունավորության համար:

Թո՛ղ Աստված օրհնի ու զորացնի մեր ժողովրդի զավակներին, երկար ու քաջառողջ կյանք պարգևի Ամենայն Հայոց Հայրապետին՝ ծաղկուն պահելով հայրապետական գավազանը, Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսին՝ ուժ, կորով և կարողություն իր նվիրյալ ծառայության մեջ՝ ի նպաստ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության: Մեր հայացքն ուղղենք Երուսաղեմի Հայոց Պատրիարքությանը՝ աղոթելով տերունական սրբավայրերը նվիրումով պահպանող մեր եղբայրների համար՝ Ամենապատիվ Պատրիարք Սրբազանի առաջնորդությամբ, աղոթենք Կ. Պոլսի Հայոց Պատրիարքության համար, մեր թեմերի, առաջնորդությունների, մեր համայնքների զարգացման և հզորացման համար:

Տիրոջ սերը, օրհնությունն այսօր և հավիտյանս ամենքիս հետ այժմ և միշտ և հավիտյանս. ամեն:

ԸՆԹՍՅՎԱԾ ԿՅԱՆՔ

(ԵՐԿՐԱՊԱՀԻ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ)

Մայր Աթոռ Սբ. Էջմիածին
8 մայիսի, 2014 թ.

Սիրելի՛ բարեպաշտ քույրեր և եղբայրներ: Այսօր մայիսի 8-ն է: Այսօր Երկրապահի օրն է: Օր, որ մեզ առիթ է պարգևում անդրադառնալու երկրապահի առաքելությանը:

Ուրախ եմ, որ այսօր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում համախմբվել են ԵԿՄ անդամներից շատերը՝ առաջնորդությամբ կենտրոնական վարչության ղեկավար կազմի: Ուրախ եմ նաև այստեղ ողջունելու ներկայությունը Աժ փոխնախագահի՝ Տիար Էդուարդ Շարմանազովի, ով ներկայացնում է հայրենի մեր պետությունը, ուրախ եմ նաև ողջունելու ներկայությունը Աժ պատգամավորների, պաշտոնյաների, երկրապահների, մեր զոհված ազատամարտիկների ծնողների, քույրերի, հարազատների: Բարի եք եկել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, սա ձեր տունն է, ձեր օջախը, օջախն է և սրբությունը համայն հայության, Թող Տերն օրհնի և զորացնի ձեզ:

Ամենայն Հայոց Կաթողիկոսի մասնավոր տնօրինությամբ մայիսի 8-ը՝ այսօր, նշվում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում: Այսօր մենք Պատարագ ենք մատուցում և քիչ հետո Պատարագի ավարտին կատարելու ենք նաև հոգեհանգստյան արարողություն՝ ի հանգիստ զոհված ազատամարտիկների հոգիների:

Ես այսօր վկայակոչելու եմ Պողոս առաքյալի խոսքերը՝ ուղղված իր աշակերտ Տիմոթեոսին: Երբ Պողոս առաքյալը հասել էր իր առաքելության ավարտին, նամակ է ուղղում իր աշակերտ Տիմոթեոսին, որում նշում է. «Բարի պատերազմ

մղեցի, առաքելությունս իրականացրի և հավատս պահեցի»: Սիրելի՛ երկրապահներ, Պողոս առաքյալի խոսքերը վերաձևակերպելով՝ ցանկանում եմ դիմել ձեզ. դուք բարու պատերազմը պատերազմեցիք, ձեր առաքելությունն իրականացրիք և ձեր հավատը պահեցիք:

Պատերազմների պատճառները տարբեր են, սակայն հիմնական պատճառն այն է, որ մի ժողովուրդ ցանկանում է տիրանալ, իսկ մեկ այլ ժողովուրդ չի ցանկանում ստրուկ լինել, չի ցանկանում տիրապետվել: Այսպիսի փորձառության միջով անցավ նաև մեր ժողովուրդը: Տարբեր ազգեր ժամանակի ընթացքին ցանկացան մեզ տիրանալ, և մշտապես մեր ժողովուրդը ցույց տվեց իր ինքնությունը պահպանելու վճռականությունը: Այսպիսի իրավիճակ մենք ունեցանք քսան տարի առաջ՝ Արցախի ազատագրման տարիներին, երբ մեր ժողովուրդը ցույց տվեց իր դիմադրության ոգին, ցույց տվեց իր՝ ինքնության համար զոհվելու պատրաստակամությունը: Ահա այստեղ ներկա անձանցից շատերը մասնակից եղան այդ պատերազմին, շատերի հոգիները երկնքում են հանգչում՝ Վազգեն Սարգսյան, Մոնթե Մելքոնյան, շատ-շատ ազատամարտիկներ: Այստեղ՝ Մայր Տաճարում բազմած անձանցից շատերը պատերազմի մասնակից են, պարզապես պատերազմի լեգենդ, ովքեր իրենց ուսերի վրա են առել պատերազմի ծանրությունը, կրել են նրա զրկանքները: Նստած են մայրեր, ովքեր իրենց որդիներին են կորցրել այդ պատերազմում, որոնցից պակաս հերոսական ջանք չի պահանջվել լռեցնելու իրենց մեջ ցավի մրմուռը և ամրացնելու գիտակցումը, որ իրենց որդիները նահատակվել են հանուն իրենց երկրի ազատության, հանուն ինքնության և հավատի: Սիրելի՛ երկրապահներ, սիրելի՛ ժողովուրդ, այսօր դուք հպարտ եք, և ձեզնով հպարտ ենք նաև մենք, որովհետև դուք տվեցիք հայրենիքին այն ամենը, ինչ թանկ է ձեզ համար, ինչպես Վազգենը կասեր, և ձեռք բերեցիք հպարտություն: Մենք

Պողոս առաքյալի հետնորդները դարձանք, քանզի բարի պատերազմ մղեցինք: Մեր պատերազմները երբեք չեն եղել նվաճողական, չեն եղել, ոչ էլ այլոց իրավունքները ոտնահարող, այլ եղել են մեր ինքությունն ու հավատը պաշտպանելու համար մղված արդարացի պատերազմներ, և այսօր մենք հպարտ ենք, որ գիտենք մեր ինքնությունը պաշտպանել: Ինչպես մեղք է այլոց իրավունքների նկատմամբ ոտնձգություն կատարելը, այնպես մեղք է նաև սեփական ինքնությունը չպաշտպանելը: Արցախյան ազատամարտով մենք ձերբազատվեցինք այդպիսի մի ոտնձգությունից, մենք թույլ չտվեցինք ոտնահարել մեր ինքնությունը, թույլ չտվեցինք պղծել մեր սրբությունները, թույլ չտվեցինք մեր հայրենիքի և Եկեղեցու սահմանների նկատմամբ ոտնձգություն կատարել, և Աստված օրհնեց մեզ: Այդ օրհնության վկայությունն է ցեղասպանության ահռելի կորուստներից հետո մեր ժողովրդի վերածնությունը, մեր ժողովրդի մեջ կենսունակության հորդացող աղբյուրը: Եկող տարի մենք նշելու ենք նաև Ցեղասպանության 100-ամյա տարելիցը: Մեր յուրաքանչյուր ծրագիր պետք է ուղղված լինի մեր կենսունակության ամրացմանը: Մեծ գործիչներից մեկն իր հուշերում գրում է. «Երբ ես պատանի էի՝ ձգտում էի փոխել աշխարհը, երբ երիտասարդ էի՝ ուզում էի փոխել ընկերներիս, երբ ամուսնացա՝ ուզում էի փոխել ընտանիքս և միայն մահվան մահճում հասկացա, որ պետք է փոխեի ինքս ինձ և ինքս ինձ փոխելով՝ ես թերևս կփոխեի թե՛ աշխարհը, թե՛ ընկերներիս և թե՛ ընտանիքս»:

Սիրելի՛ երկրապահներ, Արցախի ազատամարտում դուք փոխեցիք ինքներդ ձեզ, ինչպես Պողոս առաքյալը փոխեց ինքն իրեն՝ աշխարհը փոխված տեսնելու համար: Ուրեմն՝ շարունակե՛նք փոխել ինքներս մեզ, փոխե՛նք մեր վերաբերմունքը դիմացինի նկատմամբ, փոխե՛նք մեր վատ զգա-

ցումները մեր նմանների նկատմամբ, և կփոխվեն թե՛ մեր կյանքը, թե՛ մեր ժողովուրդը, և թե՛ մեր երկիրը:

Թող Աստված հավատքի ամրություն և վճռականություն ու կամքի զորություն պարգևի մեզ և թող հավերժ լինի ԵԿՄ ընթացքը՝ սրբության նկատմամբ՝ պատկառանքի, հայրենիքի նկատմամբ՝ սիրո և ընտանիքի նկատմամբ՝ ջերմության:

Շնորհը, սերը և խաղաղությունը լինեն ձեզ և ամենքիս հետ, այժմ և հավիտյանս հավիտենից. ամեն:

ՀԱՏՈՒՑՈՒՄ

(ԳԱԼՍՏՅԱՆ ԿԻՐԱԿԻԻ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ)

Մայր Աթոռ Սբ. Էջմիածին
22 մարտի, 2015 թ.

«Զայն Տեառն որ հայրուցանէ զհայրուցումն հակառակորդաց»
(Եսայի ԿԶ 6)

Սիրելի՛ քույրեր և եղբայրներ,

Այսօր Մեծի Պահոց վեցերորդ կիրակին է: Մենք վերապրեցինք հինգ կիրակիների իրադարձությունները. Բուն Բարեկենդանի նախամեղանչական մարդու ուրախությանը հաղորդ դառնալով, խորհրդածելով մարդու՝ դրախտից արտաքսման պատճառների շուրջ, այնուհետև անդրադառնալով դեպի դրախտ վերադառնալու նրա ճիգերին, որն ամփոփված էր «Անառակ որդու» առակի մեջ, ապա հաղորդ դարձանք տնտեսի գործերին, ով ջանք չէր խնայում իր հնարամտությունները գործադրելու միջոցով հաճոյանալ տիրոջը: Նախորդ կիրակի անդրադարձանք «Անիրավ դատավորի ու այրի կնոջ առակին», որտեղ փառաբանվում էր համառ ու հետևողական աղոթքը: Այսօր, մի տեսակ, ամփոփումն է այդ բոլոր իրադարձությունների, և մեր հայացքները սևեռված են լինելու այդ ամենի հանրագումարին՝ վերջին դալուստին: Վերջին դալուստի մասին Ավետարանը չափազանց սակավախոս է: Ի պատասխան այդ մասին հարցադրումների, Քրիստոս ասում է, որ ոչ ոք չգիտի դատաստանի օրը և պարզապես բավարարվում է մի քանի նշանների ակնարկումով. այդ օրերին կլինեն սով, սրածություն, պատերազմներ, եղբայրը եղբոր դեմ կլինի, պետությունը՝ պետության, արևելքից լույս կփայլատակի, և Մարդու Որդին Իր խաչի նշանով պի-

տի երևա լուսավոր ամպերի վրա: Եվ այդժամ կլինի հատուցում. ինչպես Սուրբ Գիրքն է ասում՝ նրանք, ովքեր բարիք գործած կլինեն, կարժանանան հավիտենական օրհնության, իսկ նրանք, ովքեր ամբարիշտ կհամարվեն՝ հավերժական դատապարտության: Այսինքն՝ վերջին գալուստի խորհրդածությունների հիմքում ընկած է հատուցման գաղափարը: Այդ իրադարձությունը Սուրբ Գրքում ներկայացված է որպես համատիեզերական իրադարձություն. եթե արարչագործությամբ սկսվում է տիեզերքի պատմությունը, ապա վերջին գալուստով այն պիտի ավարտվի: Քրիստոսի երկրորդ գալստյան մասին շատ են խոսել քրիստոնյաները: Հաճախ մարդիկ վերջին դատաստանը մի սարսափազդու տեսարանով են նկարագրում: Ասում են՝ մարդիկ պետք է հարություն առնեն, որպեսզի դատապարտվեն: Եվ ձևավորվում է վախի մի մթնոլորտ. բավարար չէ, որ մարդիկ այս աշխարհի վրա հիվանդանում են, տառապում, ենթարկվում բազմաթիվ փորձություններ, այդքանից հետո տպավորություն է ստեղծվում, որ Աստված այնքան դաժան է, որ մահվանից հետո մարդկանց հարություն պիտի տա և դատաստանի ենթարկի, տանջի, նրանց ատամների կրճտոցը, լացն ու կոծը պիտի լսվի, ինչպես դժոխքի պատկերը ներկայացված է Ավետարանում: Բայց ուղղափառ ընկալման մեջ բացարձակապես չի տեղավորվում Աստծո՝ դաժան ու վրեժխնդիր լինելու գաղափարը: Վերջին գալուստի և հատուցման գաղափարն ընդամենը մեզ հիշեցնում է՝ լա՛վ իմացեք, այն ամենը, ինչ դուք կատարեք այսօր այստեղ, արձագանք է գտնելու հավերժության մեջ. եթե լինեք բարեգործ, հավատարիմ՝ Աստծո պատվիրաններին, բնականաբար, պիտի ժառանգեք օրհնություն, իսկ եթե ամբարշտություն գործեք, ձեր իսկ ամբարշտությունը՝ որպես վկա, ներկայանալու է Տիրոջ վերջին դատաստանի ժամանակ:

Այսօր մենք Աստվածաշնչի ընթերցումներով ներկայացրեցինք այն նյութը, որի շուրջ պիտի խորհրդածենք: Ընթերցեցինք Եսայու մարգարեության ԿԶ գլխից մի հատված: Խոսելով մարդկանց գործերի մասին՝ Եսայի մարգարեն ասում է, որ կարևորը Աստծո հանդեպ մարդու հնազանդությունն է և խոնարհությունը: Ցուցամոլությունը, կեղծ բարեպաշտությունը ոչնչով չեն կարող օգնել մարդուն և հավելում. «Բայց անօրենը, որ ինձ եզ է զոհաբերում, նույնն է, թե մարդու գանգ է ջախջախում, իսկ նա, որ ոչխար է զոհաբերում, նույնն է, թե շուն է մորթում» (Եսայի ԿԶ 3): Այսինքն՝ վերջին դատաստանին հաշվի է առնվելու ոչ թե այն, թե ի՛նչ ընծաներ ենք մատուցել Աստծուն՝ մեր բարեպաշտությունն ի ցույց դնելու համար, այլ՝ թե իրականության մեջ ինչպիսի հավատարմություն, վստահություն, ինչպիսի խոնարհություն ենք դրսևորել Աստծո նկատմամբ, որն է եղել մեր գործը: Եվ այս կիրակի օրվա հատուցման գաղափարի շեշտադրումը գալիս է ամփոփելու Մեծ Պահքի մեր խորհրդածությունները՝ հիշեցնելով, որ այս շրջանով չսահմանափակվենք: Մենք մշտապես կենտրոնացած պիտի լինենք հատուցման գաղափարի վրա: Դուք, անշուշտ, տեղյակ եք բումերանգի պատկերին: Կա մի գործիք, որը, երբ նետում ես, վերադառնում է: Մարդու գործը և խոսքը նման են հենց այդ «զենքին»: Հին Կտակարանում է ասվում՝ նրանք, ովքեր ամբարիշտ կգտնվեն, մինչև յոթ սերունդ կդատապարտվեն: Իսկ նրանք, ովքեր հնազանդությամբ, խոնարհությամբ կծառայեն Աստծուն, նրանք յոթ սերունդ օրհնություն պիտի ստանան: Եթե անգամ Աստվածաշնչին ծանոթ չլինենք, աստվածաբանական կրթություն չունենանք, մեր իսկ անձնական փորձառությունից կարող ենք տեղեկանալ, որ մեր կատարած այս կամ այն գործը մշտապես վերադառնում է իր հետևանքով: Այս հավատքն է, որ մեր ժողովրդական խոսքով ասել է տալիս, թե՝ այն բարիքը, որ դու այսօր գործում ես, թող քո գա-

վակների առջև գա: Այսպիսով՝ բարության ու չարության շղթայականությունը սերտորեն առնչվում է մեր կրոնական ապրումի հետ:

Սիրելի՛ քույրեր և եղբայրներ, կարծում եմ, որ այս խորհրդածությունը չափազանց կարևոր է պահեցողության, կրոնական ապրումի մեջ. մշտապես պետք է հիշենք ու կենտրոնանանք այն գաղափարի վրա, որ այն ամենը, ինչ անում ենք, հավերժության մեջ արձագանք է գտնելու, անդրադարձ է ունենալու մեր և մեր զավակների կյանքում՝ մինչև յոթ սերունդ: Ուրեմն այսօրվա պատգամը հետևյալն է՝ յուրաքանչյուր անձ պարտավոր է հիշել, որ մի օր ինքը պատասխան է տալու իր արարքների համար: Եթե անգամ մարդն իր խղճի առջև պատասխան չի տալու, անպայման պատասխան է տալու Աստծո՛ առջև: Մենք չենք կարող վկայակոչել այս կամ այն անձին՝ ասելով՝ ահա նա այսպես վարվեց, ուրեմն՝ ես ևս կարող եմ նրա նման վարվել: Հիշո՞ւմ եք այսպիսի մի դեպք: Երբ Ադամը դրախտում պտղից ճաշակեց, և Աստված հարցրեց, թե նա պտղից ինչո՞ւ ճաշակեց, նախահայրը վկայակոչեց Եվային: Արդյո՞ք Եվայի կողմից պտղի ճաշակումը իրավունք էր տալիս Ադամին նույն կերպ վարվելու:

Մեր արածների համար ինքներս ենք առաջին հերթին պատասխանատվություն կրում, ուստի պետք է հիշել պատասխանատվության մասին, և այդ պատասխանատվությունը կրելու ճանապարհին երբեք ու երբեք չվկայակոչել ուրիշներին: Ամեն մեկս՝ որպես առանձին անհատ, ինքներս ենք պատասխան տալու թե՛ մարդկանց, թե՛ մեր խղճի և թե՛ Աստծո առջև: Այս գիտակցումով կանգնենք Աստծու առաջ, որպեսզի հատուցման օրը մեր արատները, ամբարշտությունները մեզ հետ չառերեսվեն, այլ բերվեն մեր հավատարմությունը, բարեպաշտությունն ու սերը մարդկանց և Աստծո նկատմամբ, այժմ և հավիտյանս հավիտենից. ամեն:

ՅՆԱՁԱՆԴ ԵՎ ՉԱՐՁԱՐԱԿԻՑ՝ ԽԱՉՅԱԼԻՆ

(ԽԱՉՎԵՐԱՑԻ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ)

Մայր Աթոռ Սբ. Էջմիածին
13 սեպտեմբերի, 2015 թ.

«Խաչն յայտ առնէ զիւաչեցելոյն...»
Եզնիկ Կողբացի

Սիրելի՛ քույրեր և եղբայրներ,

Այս խոսքերը պատկանում են Եզնիկ Կողբացուն, որ եղավ հմուտ քարոզիչ, հավատքի պաշտպան, Քրիստոսի «ընտիր անոթ», որի մեծ վաստակը Եկեղեցու զորացման ու հավատքի պաշտպանության գործում դույզն-ինչ չի խամրել տասնհինգդարյա հեռավորությունից: Նվիրյալ վարդապետը ահա այսպես է բանաձևում խաչի վերաբերյալ իր ըմբռնումները. «Խաչը հայտարարում է Խաչյալի մասին»:

Այսօր Խաչվերացն է՝ Սուրբ Խաչին նվիրված մեծագույն տոնը, որը հատուկ ընդգրկված է շարքում այն հինգ տոնների, որոնք ընդունված է կոչել Մեծ կամ Տաղավար տոներ: Ավանդաբար Սուրբ Խաչի տոնը մեր ժողովուրդը նշում է մեծ ոգևորությամբ: Դարեր շարունակ հոգևոր անհուն ուրախությամբ հաղորդակցվում ենք այս հաղթանակին, որ Քրիստոս ունեցավ մահվան նկատմամբ: Այս հաղթանակի տոնախմբության մեջ անգամ չենք մոռանում այն գինը, որ վճարվեց այդ հաղթանակին հասնելու համար: Երբ փառաբանում ենք խաչը, մեր մտապատկերում ուրվագծվում է այն տառապալից ճանապարհը, որն անցավ մեր Տեր Հիսուս Քրիստոս՝ մեր փրկության համար: Խոսում ենք խաչի մասին՝ մտածելով Խաչյալի մասին և անդրադառնում այն չարչա-

րանքներին, որոնք Տերը կրեց խաչի վրա, երբ անարգվեց ու նվաստացվեց շատերի կողմից, պատվեց փշե պսակով և խոցվեց գեղարդով: Հիշում ենք նաև Սիմոն Կյուրենացուն, ով հարկադրաբար տարավ խաչը դեպի Գողգոթա, որի վրա գամվեց Փրկիչը, հիշում ենք Խաչյալի ծնողներին՝ Հովսեփին ու Մարիամին, հիշում ենք ուրացումը աշակերտների: Հիշում ենք, որ երբ Տերը խաչի տառապալից ճանապարհն էր անցնում, մի քանիսը միայն քաջություն ունեցան խոստովանելու, որ Քրիստոսի աշակերտներն են:

Եվ այսօր, այս պատկերների առջև անդրադառնում ենք այն իրողությանը, որ հավատալ Աստծուն՝ չի նշանակում սոսկ ընդունել Նրա գոյության փաստը, հավատալ Աստծուն՝ նշանակում է հանձն առնել խաչի տառապանքները, հանձն առնել այն զոհողությունները, որոնք վճարեց Քրիստոս՝ մարդկության փրկության համար: Այլ խոսքով՝ հավատալ՝ նշանակում է խաչակից լինել Քրիստոսին, լինել նրա հետ տառապանքների մեջ, զրկանքների մեջ, հոգեկան այնպիսի վիճակներում, երբ թվում է, թե անգամ Աստված է լքել քեզ, հավատարիմ մնալ Քրիստոսի խաչին և առաքելությանը:

Այսօր ժամանակները փոխվել են, մարդը դարձել է հարմարավետության սիրահար, ընդլայնվել են մարդկային հնարավորության սահմանները: Այն ճանապարհը, որը դարեր առաջ մարդիկ հաղթահարում էին տարիներով, այսօր գիտատեխնիկական առաջընթացը հնարավորություն է ստեղծում դա անել մի քանի ժամում, սակայն մարտահրավերները, սիրելի՛ քույրեր և եղբայրներ, հաճախ նույնն են, նույնն են գայթակղությունները, նույնն է նյութապաշտության մրցավազքը, նույնն է եսասիրությունը, նույնն է ամբարտավանությունը: Նույնն են նաև գայթակղությունները ընտանիքում. երբեմն զավակները անարգում են իրենց ծնողներին, ծնողները՝ արհամարհում զավակներին, եղբայրները ուրանում են իրենց եղբայրներին: Սակայն այս ամենի հետ ան-

փոփոխ է Տիրոջ պահանջը մարդկանցից, անփոփոխ են Ավետարանի պատվիրաններն ու սկզբունքները: Ավետարանը և Տիրոջ պատվիրանները չեն կարող փոխվել և հարմարեցվել ժամանակի պայմանականություններին, օրենքներին ու բարքերին: Ավետարանը Տիրոջ խոսքն է, և բացարձակ է նրա ճշմարտությունը. դրա համար է ասված՝ երկինքն ու երկիրը կանցնեն, բայց Աստծո խոսքը երբեք ու երբեք չի անցնի: Բարքերը, մտածումները կփոխվեն, սակայն Տիրոջ պատվիրանները կմնան հավետ ու հավերժական: Աստվածային խոսքի և պատվիրանների խորհրդանիշը խաչն է: Խաչի նկատմամբ մեր վերաբերմունքն այլևս նույնականացված է Տիրոջ հետ, ինչպես Եղնիկ Կողբացին է նշել, խաչը հայտարարում է Խաչյալի մասին: Եվ այսօր մենք տոնախմբում ենք նաև Խաչյալի հաղթանակը՝ հաղթանակ մահվան նկատմամբ:

Մահվան նկատմամբ վախն ուղեկցում է մարդուն ողջ կյանքի ընթացքում: Մենք մշտապես այդ վախի ազդեցության տակ ենք, վախն է գերիշխում մեր բոլոր գործողություններում, սակայն խաչը՝ Քրիստոսի հաղթանակը մահվան նկատմամբ, եկավ մահն ընկճելու, մահվան տագնապը մեզանից հեռացնելու:

Սիրելի՛ քույրեր ու եղբայրներ, մաղթում եմ, որ այս հաղթանակի զգացումը մշտապես ուղեկից լինի մեզ, և մենք հիշենք, որ պատկանում ենք Աստծուն, պատկանում Նրան, Ով ի զորու է մահը չեզոքացնելու, մահը դատապարտելու մահվան, Ով ի զորու է մեզ նույնպես մասնակիցը դարձնելու մահվան նկատմամբ հաղթանակի շքերթին: Մեր ժողովուրդն ու Եկեղեցին ողջ պատմությունը դարձրել են մահվան նկատմամբ հաղթանակ. մենք վերապրել ենք բազմաթիվ փորձություններ, վերապրեցինք նաև մեծագույն փորձությունը Ցեղասպանության, որի 100-րդ տարելիցն ենք ոգեկոչում, և այդ հաղթանակի զգացումով ու դրա գիտակցմամբ է, որ շարունակում ենք մեր երթը: Ընդամենը երկու շաբաթ

հետո, որպես այդ հաղթանակի շոշափելի վկայություն, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ կատարելու ենք մահվան դեմ հաղթանակի խորհրդանիշներից մեկի՝ սրբալույս Մյուռոնի օրհնության արարողությունը: Սրբալույս Մյուռոնը աղոթքով բաշխվելու է մեր ողջ ժողովրդին՝ այն հավատով, որ պետք է հաղթվեն մահեր, ինչպես մկրտության արարողության ընթացքում յուրաքանչյուր հայորդու դրոշմի ժամանակ հնչեցվում է. «...թող այս Մյուռոնը լուսավորի քո աչքերը, որպեսզի երբեք մահ չտեսնես»:

Թող Աստված խաչի խորհրդով զորացնի մեզ և մասնակիցը դարձնի մահվան նկատմամբ Քրիստոսի հաղթանակի շքահանդեսին, այժմ և հավիտյանս հավիտենից:

Շնորհք, սէր, խաղաղութիւն ընդ ձեզ և ընդ ամենեցուն. ամէն:

ԿՅԱՆՔ՝ ԱՍՏԾՈՒ ՀԵՏ

(ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՃՐԱԳԱԼՈՒՅՑԻ ԱՌԻԹՈՎ)

Մայր Աթոռ Սբ. Էջմիածին
5 հունվարի, 2016 թ.

«Մի՛ երկնչիք, զի ահաւասիկ աւետարանեմ ձեզ ուրախութիւն մեծ» (Ղուկ. Բ 10):

Սիրելի՛ քույրեր և եղբայրներ,

Կյանքն սպասում է, տենդագին սպասում: Մենք միշտ սպասման մեջ ենք՝ երբեմն բարի լուրերի ու ավետիսների, իսկ երբեմն էլ՝ գույժի ու դժբախտության:

Սպասումը մարդկային կյանքի ամենաբնորոշ հատկանիշներից է: Մարդիկ սպասման մեջ էին նաև ավելի քան 2000 տարի առաջ. նրանք սպասում էին ավելի լավ ու երանելի կյանքի: Սպասումների մեջ էին նաև մի քանի հովիվներ, ովքեր դաշտերում արածեցնում էին իրենց խաշները: Նրանց այցելեց հրեշտակը՝ համաձայն Ղուկաս ավետարանչի պատումի, և ավետեց Քրիստոսի ծնունդը. «Մի՛ վախեցեք,- դիմեց նրանց հրեշտակը,-քանզի ես ձեզ մեծ ուրախության ավետիս եմ փոխանցում, ուրախության, որ լինելու է բոլոր մարդկանց համար»:

Քրիստոս ծնվել էր. ծնվել էր՝ որպես իրագործում Աստծու խոստման, որպես պատասխան մարդկային սպասումի, և սա է ավետման ուրախությունը, ուրախություն, որ, ինչպես հրեշտակն է ասում, բոլորինս է: Եվ այս ուրախությունն է հազարավոր տարիներ, անընդմեջ ու շարունակաբար փոխանցվում եկեղեցիներից, ծավալվում տներում ու հրապարակներում, բակերում ու փողոցներում, բայց մարդիկ շարունակում են լինել տխուր ու տրտում, դժբախտ ու հոգնած, վախեցած ու տագնապահար: Որքա՜ն դժվար է այսօր ուրախանալ, որքա՜ն

դժվար է լինել լավատես: Տառապանքը, կարծեք, գրոհել է աշխարհ: Թվում է, թե մարդն ու բնությունը դժոխային դաշինք են կնքել՝ դժբախտություններով ու փորձանքներով ահաբեկելու մարդկությանը, արմատախիլ անելու լավատեսության վերջին ծիլերը: Հետևում ենք լրատվամիջոցներին՝ Մերձավոր Արևելքում՝ կրոնամոլների կողմից բռնություններ ու սպանդ, աշխարհի ամենաապահով թվացող անկյուններում՝ ահաբեկչություններ ու մարդկային զոհեր, Հայաստանի ու Արցախի սահմաններում՝ երիտասարդ ու թանկ կյանքերի՝ զինվորների կորուստներ, մղկտացող ընտանիքներ, խորտակված հույսեր ու երազներ: Գրեթե ամեն օր մահվան գույժ՝ երիտասարդների անիմաստ վիճաբանության և ծեծկռտուքների հետևանքով, ընտանեկան գժտությունների պատճառով, ճանապարհային պատահարների ու առողջական անհաղթահարելի խնդիրների բերումով: Ամենուր սողոսկող աղքատություն ու թշվառություն, անօգնականություն ու հուսահատություն՝ հացի ու ջերմության կարոտություն: Եվ այս ամենի մեջ, կարծեք, խամրել է ու գունաթափվել հրեշտակի ավետիսը, թե՝ մեծ ուրախություն եմ ավետում ձեզ:

«Ո՞ւր է այս ուրախությունը, ինչպե՞ս ապրենք այս ուրախությունը,- հարցնում են շատերը,- ինչպե՞ս խեղդենք տառապանքի ու դառնության աղաղակող ճիչը»:

Շատերը ցավերն ու վշտերը խեղդում են գինարբուքներում, ոգելից խմիչքների հեղեղատներում, խենթ ու շվայտ երգերում ու պարերում, ոմանք մխիթարությունը փնտրում են մոլախաղերում, մյուսների ապաստանը դառնում է սեռական այլասերումը՝ որպես այլընտրանքային ուրախություն, որի կյանքը նույնքան կարճ է, որքան տևողությունը վայելքի: Այլք լավագույն դեպքում ինքնամոռաց տրվում են աշխատանքին՝ աշխատանքային ծանրաբեռնվածություններին հորձանուտում մոռացության մատնելու տագնապներն ու վախերը:

Եվ չկա՞ արդյոք ճար ու հնար՝ ճաշակելու իրական ուրախությունը, հրեշտակի խոստացած ուրախությունը. հարցնում ենք. «Ո՞ւր մնաց Քրիստոսի ծննդյան ուրախությունը»:

Քրիստոս ասում է. «Դուք այժմ տրտմություն ունեք, բայց ես կրկին պիտի տեսնեմ ձեզ, և ձեր սրտերը ուրախությամբ պիտի լցվեն, և ձեր ուրախությունը ձեզնից ոչ ոք չի կարող խլել» (Հովհ. ԺԶ 22):

Եվ արդ, ուրախությունը տագնապների ու վախերի, տառապանքների ու ողբերգությունների մոռացումը չէ, դրանց հաղթահարումը չէ և ոչ էլ՝ դրանց բացակայությունը: Լինել ուրախ՝ նշանակում է վայելել Տիրոջ մնայուն ներկայությունը, զգալ Աստծու մշտական խնամքն ու աջակցությունը, ապրել կյանք Աստծո հետ: Էմմանուել է մանուկ Հիսուսի անունը, որ նշանակում է՝ Աստված մեզ հետ: Աստծու՝ մեզ հետ լինելու վստահությունն ու հավատքն է աղբյուրը ուրախության: «Տերն իմ օգնականն է, և ես չպիտի վախենամ»,- ասում է Պողոս առաքյալը:

Մահերն ու տառապանքները մարդկանց ուղեկիցներն են մարդկության պատմության ողջ ընթացքում: Մարդը դատապարտված է տառապանքի ու մահվան, ամենանվիրական երազանքներն իսկ խեղդվում են խանձարուրում, բայց Տերը մեզ խոստում է տվել՝ լինելու մեզ հետ միշտ՝ ուրախության թե տխրության օրերին, հաջողության թե ձախորդության մեջ:

Սիրելի՛ քույրեր և եղբայրներ, կյանքի տառապանքներն ու ձախորդությունները չդարձնենք պատրվակ՝ Տիրոջ ուրախությունից հեռանալու, ուրախությունը մեզ հետ է՝ Տիրոջ ներկայությամբ, և Տերը մեր հույսն ու ապավենն է: Տիրոջ ծննդյան ավետիսն Իր մշտական խնամքի ու հոգատարության անլռելի ղողանջն է, և սա մեր ուրախությունն է: Լինենք ուրախ, որ Աստված երբեք չլքի մեզ, և թող օրհնյալ լինի Աստվածորդու ծնունդը:

ՔՐԻՍՏՈՍ ԾՆԱՎ ԵՎ ՅԱՅՏՆԵՑԱՎ

ԿՅՍՆՔԻ ԵՎ ՄԱՀՎԱՆ ՈՓՈՐՈՒՄ

(ԽԱՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԻ ԱՌԻԹՈՎ)

Մայր Աթոռ Սբ. Էջմիածին
25 մարտի, 2016 թ.

«Ի խաչ հան զդա, ի խաչ, ի խաչ, ի խաչ հան զդա»
(Մրկ. ԺԵ 14)

Դատապարտության այս խոսքերով ավարտվեց Հիսուս Քրիստոսի նկատմամբ իրականացած դատավարությունը:

Հրեաները վաղուց էին մտադրվել դատապարտելու և մահվան մատնելու Աստծո Որդուն: Զատիկին նախորդող օրերի իրադարձությունները, սակայն, եկան հաստատելու, որ Քրիստոսի նկատմամբ հետապնդումները այլևս մուտք են գործել եզրափակիչ փուլ: Իրադարձությունները զարգանում են կայծակնային արագությամբ և դրամատիզմով: Զատիկին նախորդող երրորդ օրը Քրիստոս, իմանալով հանդերձ հրեաների կողմից իր դեմ ծրագրված դավադրության մասին, իր աշակերտների հետ մեկնում է տոնակատարելու Զատիկը: Հիսուս Վերնատանն է: Նա մոտենում է աշակերտներին, լվանում է նրանց ոտքերը՝ հարուցելով ամենքի զարմանքը, բայց ավանդելով խոնարհության անօրինակ մի դաս: Ապա աշակերտների հետ բազմում է սեղանի շուրջ, օրհնում, բարձրացնում բաղարջ հացը և պատվիրում. «Սա իմ մարմինն է, կերե՛ք այն», ապա խմում գինու բաժակից և ասում. «Սա իմ արյունն է, խմեցե՛ք այն», «Սա կատարե՛ք իմ հիշատակի համար» (հմմտ. Ղուկ. ԻԲ. 17-20): Այնուհետև Քրիստոս խոսում է միասնության մասին, ավանդում վերջին դա-

սերը՝ սիրո, խաղաղության, հաշտության, համերաշխության, և եզրափակում. «Իմ խաղաղությունն եմ թողնում ձեզ, ոչ այն խաղաղությունը, որ աշխարհն է տալիս, այլ մի խաղաղություն, որ Աստծուց է պարգևված» (հմմտ. Հովհ. ԺԴ. 27): Խռովված է Հիսուսի հոգին. նա գիտի իրեն սպասվելիք ճակատագրի մասին. սպասում է մատնությանը, չարչարանքներին, սպասում է նվաստացմանը, անարգանքին, խաչելությանը, թաղմանը: Տագնապած, խռովված է Հիսուսի հոգին: Այս տագնապների մեջ նա շրջում է հայացքը դեպի Հուդան և ասում. «Ահա՛ հասավ քո ժամանակը, գործի՛ր, ինչպես որ գիտես» (հմմտ. Հովհ. ԺԳ. 27):

Ընթրիքի ավարտին, երբ արդեն օրը երեկոյանում էր, Հիսուս աշակերտների ընկերակցությամբ երեկոյի տարածվող խավարի հետ մեկնում է դեպի Գեթսեմանիի պարտեզ: Խավարը իջել էր Գեթսեմանիի պարտեզի վրա, խավար, որի համաբանությունն է Եկեղեցում այս պահի մթությունը: Նրանցից առանձնացնում է երեքին՝ Պետրոսին, Հակոբոսին և Հովհաննեսին ու մեկնում աղոթքի: Խռովքը, տագնապը, ներքին հոգեկան ոգորումները ուղեկցում էին Հիսուսին: «Հա՛յր»,- ասում է նա.- «Հեռացրո՛ւ, խնդրում եմ, այս փորձությունը ինձանից, հեռացրո՛ւ այն չարչարանքները, տանջանքները, տառապանքները, որոնք վիճակված են ինձ կրելու» (հմմտ. Մատթ. ԻԶ. 39): Կռիվ է Հիսուսի հոգու մեջ, կռիվ է մարդկային և աստվածային սկզբունքների միջև: Մարդկային տկարությունը փորձում է առավելության հասնել աստվածային ամենազորության նկատմամբ, բայց ի վերջո այս պայքարը հանգուցալուծվում է աստվածային սկզբի հաղթանակով: «Հա՛յր»՝ համակերպված և իր ճակատագրի հետ հաշտված հոգով աղաղակում է Քրիստոս. «Հա՛յր, թող լինի քո կամքը, և ոչ թե՝ իմ կամքը» (հմմտ. Մատթ. ԻԶ. 42):

Ինքնատիրապետումը, հավասարակշռությունը վերջնականապես վերագտած՝ Հիսուս վերադառնում է իր աշակերտ-

ների մոտ և հենց այդ նույն պահին, ինչպես ասում է Ավետարանիչը, Գեթսեմանիի պարտեզ է խուժում մարդկանց մի «ոհմակ»՝ մատնիչ Հուդայի առաջնորդությամբ, հրեա աստիճանավորներ և հռոմեացի զինվորներ (հմմտ. Մատթ. ԻԶ. 47): Հուդան համբույրով մատնում է Տիրոջը՝ Հիսուսին, և զինվորականները ձերբակալում են Նրան և տանում դեպի քահանայապետի տուն: Տեղի է ունենում մարդկության պատմության մեջ, երևի թե, օրինակը չունեցող մի դատավարություն, անօրինակ՝ իր անարդարությամբ և իր զավեշտականությամբ, զավեշտական՝ իր բեմականացված խեղկատակությամբ և անարդար՝ արդեն վաղօրոք հայտնի դրդապատճառով: Հրեաների համար փաստարկներ պետք չէին: Նախանձը փաստարկներ չի փնտրում, նախանձի սնունդը պատրվակներ են՝ դատավճիռը իրականացնելու համար: «Մահապա՛րտ է, մահապա՛րտ է այս մարդը»,- եզրահանգում են հրեաները: Խարանը դրված էր: Միայն ժամանակի հարց է Քրիստոսի մահապատիժը: Հրեա քահանայապետի տնից Քրիստոսին տանում են դեպի Պիղատոսի ատյան: Պիղատոսը, ով բազմաթիվ դատավճիռներ էր կայացրել, մահապատիժներ տեսել, արյունալի տեսարանների մասնակցել, անգամ Պիղատոսը պատճառ չտեսավ մահվան դատապարտելու Հիսուսին: Նա պատասխանեց. «Ես անպարտ եմ տեսնում այս անձին» (հմմտ. Հովհ. ԺԹ. 4), բայց հրեա աստիճանավորները չբավարարվեցին Քրիստոսին աստվածպղծություն մեղսագրելով, նրանք գնացին մինչև վերջ, գնացին սադրանքի, Պիղատոսին մեղադրեցին կայսեր նկատմամբ անհավատարմության մեջ, քանի որ Հիսուս, ըստ նրանց, ոչ միայն աստվածապիղծ, ոչ միայն աստվածուրաց էր, այլ նաև պետական դավաճան: «Նա իրեն հռոմեացիների ու հրեաների թագավոր է երևակայում, որով և հակառակ է կայսեր», - ասում էին նրանք և հետո շարունակում. «Ունենք մենք այլ թագավոր, բացի կայսրից» (Հովհ. ԻԹ. 17): Եվ Պիղատոսը

բազմաթիվ փորձերից հետո վերջապես ընկրկում է և նահանջում՝ ժառանգելով անկամության խարանը: Եվ Քրիստոս, այսպիսով, դատապարտվում է մահվան, կրում է նվաստացումներ, անարգանք ու չարչարանքներ: Սկսվում է Տիրոջ չարչարանքների, տառապանքների երկարատև ճանապարհը:

«Ի խաչ հան զդա, ի խաչ, ի խաչ» (Մրկ. ԺԵ. 14):

Այսօր, սիրելի՛ քույրեր և եղբայրներ, սրբազնասուրբ այս տաճարում մենք կոչված ենք վերապրելու Տիրոջ Մատնության և Չարչարանքների հիշատակները: Վաղը հիշատակելու ենք Խաչելությունը, այնուհետև՝ Թաղումը և վերջապես մասնակից ենք լինելու Տիրոջ հաղթական Հարությանը: Բայց այսօր մենք խորհրդածելու ենք Տիրոջ Մատնության և Չարչարանքների շուրջ: Արդ, խորհե՛նք Տիրոջ մատնության մասին, չարչարանքների մասին, խորհե՛նք, թե ինչպես Նա, ով երբեք չէր մատնել՝ մատնվեց, Նա, ով երբեք չէր դավաճանել՝ դավաճանվեց, Նա, ով երբեք չէր չարչարել՝ չարչարվեց, Նա, ով երբեք չէր հարվածել՝ հարված ստացավ, Նա, ով երբեք մահվան չէր դատապարտել՝ մահվան դատապարտվեց, Նա, ով եկել էր կյանք պարգևելու՝ մահվան բաժին դարձավ:

Քրիստոս ասում է. «Ես այդ ամենը արեցի ձեզ համար, ես եկա՝ ինձ վրա վերցնելու ձեր մեղքերը»: Հավատո՞ւմ ենք Քրիստոսի խոսքերին, հավատո՞ւմ ենք, որ Նա եկավ մեր մեղքերը վերցնելու՝ իր չարչարանքներով: Եթե հավատում ենք, ապա հետևե՛նք Քրիստոսի օրինակին, եթե հավատում ենք, ընտրենք աստվածասիրությունը՝ փոխանակ անձնասիրության, ընտրենք բարեսիրությունը՝ փոխանակ արծաթասիրության, ընտրենք խոնարհությունը՝ փոխանակ հպարտության և, վերջապես, ընտրենք կյանքը՝ փոխանակ մահվան: Չարչարակի՛ց լինենք Քրիստոսին, միանա՛նք Քրիստոսի վստահությանը, որ Աստված փրկելու է մեզ բոլոր տեսակի փորձություններից, փարատե՛նք վախը, հեռանա՛նք տագնապներից, թոթափե՛նք անհավատությունը, հեռո՛ւ վա-

նենք մեզանից խռովքը, հավատա՛նք Աստծո ամենակարողությանը, հավատա՛նք Նրա աջակցությանը, որ ի զորու է չարչարանքներից, տառապանքներից փրկել մեզ: Կրթվածը անկիրթ է դառնում, հարուստը աղքատանում է, գեղեցիկը՝ տգեղանում, բայց Տիրոջն ապավինողը միշտ ու միշտ հաղթանակում է: Տիրոջը հուսացողը երբեք ամոթով չի մնա:

Աղոթում ենք Չարչարված Փրկչին, որ Իր Ամենազորությամբ գոտեպնդի Իրեն հավատացողներիս՝ ամենօրյա մեր տագնապների ու խռովքների մեջ:

Թող Տիրոջ Սուրբ Մատնության և Սուրբ Չարչարանքներով Աստված միխիթարություն, համբերություն և կորով պարգևի մեզ, այժմ և հավիտյանս. ամեն:

ՎԵՐԱԴԱՐՁ ԴԵՊԻ ԴՐԱԽՏ

(ԲՈՒՆ ԲԱՐԵԿԵՆԴԱՆԻ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ)

Մայր Աթոռ Սբ. Էջմիածին
26 փետրվարի, 2017 թ.

«Յորում ցնծայր զուարճացեալ
անտիրական խնդութեամբ»
(Շարական)

Սիրելի՛ քույրեր և եղբայրներ,

Այս խոսքերը քաղված են մեր եռամեծ վարդապետներից մեկի՝ նշանավոր հայրապետ Ներսես Շնորհալու հեղինակած շարականից, որը նվիրված է Բուն Բարեկենդանին՝ այսօրվա տոնին: Շատերդ ծանոթ եք այս տոնին: Ամեն տարի այն նշվում է մեր Եկեղեցում՝ որպես Մեծ Պահքի առաջին կիրակի: Բոլոր Եկեղեցիներին բնորոշ է այս տոնը: Մեր Եկեղեցում այն անվանվում է Բուն Բարեկենդան՝ բարի կենդանություն, որն ուղղակիորեն առնչվում է մեր նախահայրերի՝ Ադամի և Եվայի դրախտային կյանքի հետ: Բարեկենդանը քաջածանոթ է նաև մեր ժողովրդին՝ մեր ժողովրդական մշակույթից: Շատերդ կհիշեք Հովհաննես Թումանյանի հեքիաթների մեջ նշանավորված Բարեկենդանի կերպարը, երբ ասվում է, որ Բարեկենդանին նախապատրաստվում էին, սնունդ էին հայթայթում և անգամ վերջին խնայողությունները նվիրում էին այդ տոնի նախապատրաստություններին:

Քրիստոնեական մշակույթի մեջ Բարեկենդանը նշանավորվել է ժողովրդական տոնախմբություններով ու ուրախություններով: Ինչո՞ւ եմ այս ամենն ասում. որպեսզի վերստին չեշտադրեմ այն կարևորությունը, որ ունեցել է Բարեկենդանը մեր ժողովրդի կյանքում: Բարեկենդանի բուն

շեշտադրումը վերաբերում է դրախտին և այն ունի գաղափարական երկու ծալք, երկու խորք և երկու հարթություն: Որպես տոն՝ այն առաջին հերթին պարունակում է հիշատակները մեր նախածնողների՝ Ադամի և Եվայի դրախտային կյանքի իրականության: Եվ երկրորդ, որպես տոն՝ Բուն Բարեկենդանը մեր հայացքներն ու մտածումները ուղղում է քրիստոնյայի համար ամենանվիրական ու փափագելի նպատակին, թե ինչպես մարդը կարող է վերադառնալ կորսված դրախտ, որից մեր նախահայրերը՝ Ադամն ու Եվան, զրկվեցին՝ Տիրոջ կամքի հանդեպ իրենց անհնազանդության հետևանքով:

Սիրելինե՛ր, այս պատճառով Բարեկենդանի խորհուրդը ընկալելու համար նախ անհրաժեշտ է հասկանալ, թե ինչ է դրախտը: Ամեն մեկի պատկերացումների մեջ դրախտն ուրվագծվում է տարբեր երանգներով: Դրախտի մասին պատկերացումներ ունեն բոլոր կրոնները: Օրինակ՝ կրոններից մեկը աշխարհային վառ գույներով է ներկայացնում դրախտը՝ այն պատկերելով որպես հմայիչ էակների հետ մշտական կեցություն: Ուրիշ մի կրոն դրախտը ներկայացնում է որպես երկրային իրողություններից վերացած լինելու մի իրականություն: Ի՞նչ է ասում Ս. Գիրքը դրախտի մասին:

Դրախտի մասին առաջին ըմբռնումները արտացոլված են Ս. Գրքի հենց առաջին էջերում: Այստեղ, երբ ներկայացվում է արարչագործությունը, խոսվում է այն մասին, թե ինչպես Աստված ստեղծեց աշխարհը՝ ողջ տիեզերքը, կենդանիներին, բույսերին և հետո՝ նաև մարդուն: Ապա ասվում է, թե Ադամն ու Եվան դրվեցին դրախտում և վայելում էին այն ամենը, ինչ ստեղծվել էր Աստծո կողմից և ունեին իշխանություն բոլոր արարածների նկատմամբ: Ահա այս սուրբգրային հաստատման հիման վրա, ինչպես քիչ առաջ հիշեցի Ներսես Շնորհալի Հայրապետը երկնել է իր շարականը: Ի՞նչ է ասում Ներսես Շնորհալին: Ասում է, որ Աստված Իր պատ-

կերը (նկատի ունենալով հոգին, բանականությունը և ազատ կամքը) խառնեց հողին՝ այդ հողից ու իր պատկերից ստեղծելով մարդուն: Մարդուն իր փառքը չնորհեց և նրան տեղադրեց դրախտում, որտեղ մարդը զվարճանում էր անտխրական խնդությամբ: Այսինքն՝ դրախտը մի վայր է, ուր չկա լաց, չկա տխրություն, չկա հոգս, չկա թշնամություն, չկա մահ և չկա այդ ամենի նկատմամբ ո՛չ մի վախ: Տագնապները չեն հուզում մարդկանց. մարդ տագնապ, վախ չունի վաղվա հիվանդությունների նկատմամբ, վաղվա հասնող սովի նկատմամբ, թշնամության նկատմամբ: Բայց, դժբախտաբար, այս դրախտը փլուզվում է, որովհետև Ադամը և Եվան անհնազանդ են գտնվում Տիրոջ կամքին, և այստեղ սկիզբ է առնում մարդկային մի նոր ու ողբերգական պատմություն: Մարդու կյանք են ներխուժում ցավը, տրտմությունը, տառապանքը, վախը և մահը. վախ՝ ամեն ինչի նկատմամբ, վախ՝ չքավորությունից, վախ՝ սովից, վախ՝ մեռնելուց, վախ՝ հիվանդանալուց, և այս վախերի մեջ մարդն անընդհատ ձգտում է վերականգնել կորսված դրախտի պատկերը, ձգտում վերստին վերադառնալ դրախտ, որտեղ չկա հոգս, չկա ցավ, չկա տրտմություն:

Եվ Բուն Բարեկենդանի տոնը, սիրելի՛ քույրեր և եղբայրներ, կոչված է ամենքիս հայացքներն ուղղելու այն ճանապարհին, որը կարող է մեզ առաջնորդել դեպի այդ կորսված դրախտը: Մարդկության ողջ պատմությունը դրախտ վերադառնալու ձգտում է: Դուք գիտեք, որ բժշկության մեջ մի տերմին է օգտագործվում՝ «ինքնաբուժություն», գիտենք նաև, որ Աստված կոչվում է «բժիշկ»: Մարդիկ մեղսագործությունից հետո դարձել են հիվանդ, բայց երբ մարդը կորցնում է կապն իր բժշկի հետ, նա զբաղվում է ինքնաբուժությամբ: Երբ մենք առանց Աստծո փորձում ենք դրախտը վերականգնել մեր կյանքում, դա հանգեցնում է ավելի մեծ ողբերգության, քան կարող է լինել նման ջանք առհասարակ չգործադրելիս: Ահա առանց Աստծո դրախտը վերականգնե-

լու ձգտումն է, որ շատերին դարձնում է հարբեցող, ագահ, իշխանատենչ: Սա ընդամենը մի չարդարացված ինքնաբուժություն է՝ կորսված դրախտը վերականգնելու: Բայց ի՞նչ է ասում Շնորհալի Հայրապետը: Երբ իր շարականի մեջ խոսում է Բարեկենդանի մասին, ասում է, որ մարդն անտխրական խնդությամբ զվարճանում էր, որովհետև միշտ վայելում էր Աստծո տեսությունը: Այսինքն՝ մենք դրախտը կարող ենք վերականգնել միայն այն ժամանակ, երբ սկսենք անմիջական զրույցի մեջ գտնվել Աստծո հետ, իսկ բուն Բարեկենդանը մեկնարկն է Մեծի Պահոց շրջանի և այն երկար ճանապարհի, որը մեզ կոչված է առաջնորդելու Աստծո տեսությանը:

Սիրելի՛ քույրեր և եղբայրներ, մեզ համար Աստծուն տեսնելու, դրախտը վերականգնելու միակ և ճշմարիտ ճանապարհը Աստծո հետ քայլելն է: Ցանկացած փորձ՝ առանց Աստծո դրախտ կերտելու, դատապարտված է ձախողման, ցանկացած փորձ՝ առանց Աստծո հաղթահարելու ներքին վախերը, հաղթահարելու տագնապները, հաղթահարելու հոգսերը, ընդամենը մնալու է ձախողակ փախուստ իրականությունից: Մենք իրականությունից չենք կարող փախուստ տալ՝ լուծած լինելով իրականության մեջ հառնած հիմնախնդիրները: Այդ խնդիրները լուծողը միայն Աստված է, Ով ասում է. «Ձեր հոգսերը ինձ վրա գցե՛ք, ես պատրաստ եմ այն կրելու» (հմմտ. Ա. Պետ. Ե. 7, Մատթ. ԺԱ. 28):

Այսօր ամեն մարդ զբաղված է իր հոգսերով, և դժվար թե գտնվի մի մարդ, որ պատրաստ կլինի տևական սիրահոժարությամբ դիմացինի հոգսերը կրել իր ուսերին: Անգամ, եթե այդպիսի պատրաստակամություն դրսևորի, մարդկային տկար ուժերը թույլ չեն տալու, որ ինքն ամբողջական սփոփանք և մխիթարություն բերի այդ հոգսերով ծանրաբեռնված մարդուն: Սակայն Աստված Ինքը կամավորաբար մեզ հրավիրում է մեր հոգսերը փոխանցել Իրեն, մեզ մնում է ընդամենը հավատալ այդ իրականությանը, հավատալ, որ

մենք կարող ենք մեր հոգսերը փոխանցել Աստծուն: Մի՞թե մեզ համար այդչափ թանկ են այդ հոգսերը, մի՞թե այդչափ թանկ են վաղվա մտատանջումներով ծանրաբեռնված զգացումները: Մենք պետք է հրաժարվենք այդ զգացումներից, այդ մտատանջություններից, բայց ոչ թե՝ ինքնաբուժությամբ, այլ՝ այդ հոգսերը հանձնելով Աստծուն:

Ահա Մեծի Պահոց շրջանի այս քառասուն օրերի ընթացքին մենք պետք է քայլ առ քայլ այդ հոգսերը թողնենք Աստծուն՝ որպես կատարյալ վստահության արտահայտություն: Մենք պիտի համարձակորեն դիմենք Աստծուն. «Աստվա՛ծ, Դո՛ւ ստեղծեցիր մեզ և Դո՛ւ վերցրու մեր հոգսերը, Դո՛ւ տուր մեզ ուժ, Դո՛ւ տուր մեզ կարողություն՝ այդ հոգսերը հաղթահարելու»: Որքան ժամանակ որ մենք կկարողանանք Աստծո տեսությունը, մերձավորությունը զգալ ու վայելել, այնքան ժամանակ մենք անխոցելի կլինենք ցանկացած հոգսի, վախի ու տագնապի նկատմամբ:

Ուրեմն, սիրելի՛ քույրեր և եղբայրներ, սիրով, հանձնառությամբ, ամենայն համարձակությամբ մուտք գործենք Մեծի Պահոց շրջան, որն ընդամենը հրաժարում չէ որոշակի կերակրատեսակներից, այլ այդ ամենի հետ մեկտեղ՝ առաջին հերթին Աստծո հետ հաղորդակցվելու հնարավորություն: Ես բարի երթ եմ մաղթում մեզ այս ճամփորդության ընթացքին: Թող Աստված օրհնի մեր ընթացքը և մեզ պարգևի համբերատարություն, հարատևություն՝ Աստծո հետ մերձենալու մեր ընթացքն արդյունավորությամբ պսակելու համար:

Տիրոջ սերը, օրհնությունը ձեզ և մեզ հետ, այժմ և հավիտյանս. ամեն:

ՔՐԻՍՏՈՆՅԱՅԻ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԴՐՈՇՄԱՆՇԱՆԸ
(ԽԱՉՎԵՐԱՑԻ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ)

Երուսաղեմի Սբ. Հակոբյանց Տաճարում
24 սեպտեմբերի, 2017 թ.

Սիրելի՛ քույրեր և եղբայրներ,

Փառք եմ տալիս Տիրոջը և եղբայրական իմ սերն ու երախտագիտությունն եմ հայտնում իմ հոգևոր ավագ եղբորը՝ Երուսաղեմի Սրբազան Պատրիարք Ամեն. Կ. Նուրհան արք. Մանուկյանին՝ Խաչվերացի հրաշազարդ տոնի առիթով Տիրոջ սրբազան վայրում՝ Սրբոց Հակոբյանց Նվիրական անունը կրող այս տաճարում պատարագ մատուցելու այս հրաշալի առիթի համար:

Պատարագի մատուցումը անփոխարինելի առիթ է հոգով զորանալու, նորոգվելու, Տիրոջ սրբազան կերպարով ու առաքելությամբ և Աստծո հետ անմիջական հաղորդակցության մեջ գտնվելու: Այս պահին հոգուս պարտքն եմ համարում Սրբոց Հակոբյանց Զինվորյալ Միաբանությանը փոխանցելու Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի ողջույններն ու օրհնությունը՝ մաղթելով, որ Սրբոց Հակոբյանց Միաբանությունը՝ Սրբազան Պատրիարքի առաջնորդության ներքո, նույն նախանձախնդրության մեջ շարունակի պահապան և պաշտպան լինել Տերունական սրբազան վայրերին:

Սուրբ Խաչին նվիրված այս տոնի առիթով հոգուս մեջ անդադար արձագանքում է Տիրոջ խոսքը, խոսք, որը 2000 տարի շարունակ ոգեշնչել, քաջալերել և առաջնորդել է քրիստոնյա հոգիներին. «Ա՛ռ զխաչ քո և ետ զկնի իմ», «Ա՛ռ քո խաչը և ետևիցս արի՛»: Սրանք խոսքեր են, որոնք հազա-

բամյակներ շարունակ հնչել են քրիստոնյաների շրթներից, խոսքեր, որոնց հետևել են Քրիստոսին նվիրված հոգիները, խոսքեր, որոնք արտաբերում է մեր Տերը՝ ցույց տալու համար այն ճանապարհը, որով պիտի ընթանային իր հետևորդները. «Ա՛ռ զԽաչ քո և ետ զկնի իմ»:

Այս աշխարհի իշխաններն ու առաջնորդները կոչեր են ուղղում մարդկանց՝ հետևելու իրենց, կոչեր են ուղղում մարդկանց՝ առաջնորդվելու իրենց գաղափարներով, իրենց տեսիլքներով և իրենց հայացքներով: Միակ առաջնորդը, սակայն, որ մարդկանց կանչեց հետևելու Իրեն, վերցնելով նրանց խաչը, Քրիստոս է: Խոսել Քրիստոսին հետևելու մասին՝ առանց շալակելու սեփական խաչը, նշանակում է դատապարտված լինել խորը մոլորության և ինքնախաբեության: Զկա՛ Քրիստոսի հետևողություն՝ առանց խաչակրության, չկա՛ քրիստոնեություն՝ առանց տառապանքի միջոցով հաղթանակի հասնելու վճռականության: Զկա՛ և չի՛ կարող լինել Հարություն, չի՛ կարող լինել հաղթանակ՝ առանց տառապանքների և տանջանքների, ինքնազոհաբերության և զոհողությունների հովտի միջով անցնելու: Քրիստոս մեզ կոչ է անում Խաչի միջոցով ընտրել ինքնազոհողության, ինքնազրկանքի, զոհաբերության ճանապարհը:

Մարդն իր ծննդյան օրից դատապարտված է տառապանքի, դատապարտված է զրկանքի: Կյանքի ամենաուրախ պահերին տխրությունը մեզ չի լքում, ամենաերջանիկ պահերին անգամ մեր հոգին ստվերվում է թախծի զգացումներով: Մարդկային կյանքում լիարժեք չէ ուրախությունը, ամբողջական չէ երջանկությունը մարդկային կյանքից ներս, և Քրիստոս կոչ է անում լիարժեք երջանկություն և լիարժեք ուրախություն ձեռք բերելու համար կամավորաբար ընտրել ինքնազոհողության՝ խաչի ճանապարհը: Միայն ուրիշին մատուցած ծառայությամբ է, որ մարդը գտնում է իր լիարժեք և լիակատար երջանկությունը:

Տարիներ առաջ, երբ կանխասացություն եղավ, թե աշխարհի վախճանը մոտենում է, մի մեծահարուստ քարայր գնեց և անվտանգությունը ապահովելու համար հայթայթեց սնունդ և անհրաժեշտ բոլոր պարագաները: Նա մտածում էր, թե պիտի փրկվեր Աստծու դատաստանից, մտածում էր, թե բոլոր մարդիկ պիտի կորստյան դատապարտվեն, բայց ինքը պիտի կարողանար փրկվել: Անշուշտ, չիրականացան աշխարհի վախճանի մասին կանխասացությունները: Սա բոլորովին այլ հարց է: Քրիստոս ասում է. «Աշխարհի վախճանը կլինի այն ժամանակ, երբ Աստված կամենա»: Բայց մարդն առաջնորդվեց այն միամիտ մտածումով, թե ինքը խույս պիտի տա աշխարհի վախճանից: Շատերի համար գուցե խելամիտ քայլ էր այս մեծահարուստի արարքը, բայց մեզ՝ քրիստոնյաներիս համար՝ խեղկատակություն:

Ի՞նչ արժե կյանքը, եթե զրկված պիտի լինես քո հարազատներից, ի՞նչ արժե կյանքը, երբ ստիպված պիտի լինես պահպանել ընդամենը քո ֆիզիկական, մարմնական գոյությունը: Ի՞նչ արժե կյանքը, եթե այն պիտի չգնահատվի և չարժևորվի քո նմաններին մատուցած ծառայությանդ համար և ի՞նչ արժե կյանքը, եթե ընդամենը նվիրված պիտի լինի նյութական պատիվներին:

Խաչի խորհուրդը, սիրելի՛ քույրեր և եղբայրներ, ահա խորհրդանշում է քրիստոնյայի ճանապարհը, քրիստոնյայի կյանքը՝ ապրվա՛ծ մարդկության համար, ապրվա՛ծ իր նմանների համար: Շատերը թերևս զարմանան, երբ լսեն, թե քրիստոնեության, Հայ Եկեղեցու մեջ գոյություն ունեն հինգ կարևոր տոներ, և այդ հինգ կարևոր տոներից մեկը նվիրված է մի խաչի, մի գործիքի, մի նշանի: Սա պատահականություն չէ, և զարմանալի ոչինչ չկա: Մեր հայրերի դիպուկ բնորոշմամբ. «Խաչը յայտ առնէ զխաչեցեալն»: Խաչը բացահայտում է Խաչյալին, խաչը խոսում է Խաչյալի մասին, խաչը պարզաբանում է Խաչյալի առաքելությունը: Իրապես, ես

չգիտեմ՝ ի՞նչ զգացում պիտի առաջացներ մեր մեջ Քրիստոսի Հարությունը, եթե դրան նախորդած չլիներ Խաչելության ճանապարհի տառապանքը: Ես չգիտեմ՝ ինչպիսի՞ն պիտի լիներ մեր ժողովուրդն այսօր, եթե նրան նախորդած չլիներ խաչակրությունը, նախորդած չլիներ իր ինքնության՝ քրիստոնեական Իր պատկանելիության համար մղված քաջարի, տևական ու համառ պայքարը: Ինչպիսի՞ն պիտի լիներ Սրբոց Հակոբյանց Զինվորյալ Միաբանության կյանքն այսօր, եթե այն պայքար չլիներ հանուն խաչի հաստատման: Ինչպիսի՞ն պիտի լիներ ձեր կյանքը, սիրելի՛ քույրեր և եղբայրներ, որ այսօր ուխտավորաբար ժամանել ենք այստեղ՝ Սուրբ Երուսաղեմ, Սրբոց Հակոբյանց այս Մայր Տաճար, եթե ձեր ճանապարհը, ձեր կյանքը զարդարված չլիներ Քրիստոսի խաչը հաստատելու, Քրիստոսի խաչի ճանապարհով անցնելու ամենօրյա մաքառումներով և պայքարներով: Մեր ժողովուրդը չափազանց լավ գիտի խաչի արժեքը, մենք մեզ դարձրել ենք ո՛չ միայն խաչակիրներ, այլև անձեր, ովքեր խաչով են ապրում: Մենք մարդիկ ենք, ովքեր ամեն օր խաչը դարձրել են իրենց առաքելության, իրենց կյանքի առանցքը: Այսօր ես ուրախությամբ և հպարտությամբ կանգնած եմ Սրբոց Հակոբյանց այս Մայր Տաճարի խորանի առջև և հազար փառք եմ տալիս Աստծուն, որ խաչով սպառազինված այս Միաբանության շնորհիվ կանգուն և կայուն է Պատրիարքությունը Սրբո Երուսաղեմի: Անվտանգ ու պաշտպանված են մեր սրբավայրերը և իրենց հյուրընկալ դռներն են բացում հարյուրավոր հայարյուն ուխտավորների առջև՝ նորգվելու և զորանալու ոգով: Ես այսօր՝ Սբ. Խաչվերացի տոնի նվիրական այս առավոտ, աղոթք եմ մատուցում առ Աստված, որպեսզի Խաչի զորությամբ օրհնի և զորացնի մեր ժողովրդի բոլոր զավակներին՝ աշխարհի բոլոր անկյուններում: Այսօր մեր ժողովուրդը կանգնած է բազմաթիվ մարտահրավերների և դժվարությունների առջև: Բազմաթիվ դժվարությունների

առջև է նաև մեր երկիրը, մեր հայրենիքը: Դժվարությունների առջև են Սփյուռքում բնակվող մեր հայրենակիցները: Բոլոր ծրագրերը, բոլոր մեխանիզմները, որոնք կոչված են ապահովելու մեր փրկությունն ու գոյատևությունը, կարող են ձախողվել, եթե խարսխված չեն մեր ինքնությունը կազմող հիմնական բաղադրիչների վրա: Մեր ինքնության աղբյուրը մեր հավատքն է, մեր հարատևության գրավականը խաչի ճանապարհն է՝ հանձնառության և զոհողության ճանապարհը: Առ ոչինչ կլինեին մեր բոլոր հույսերը և կանխասացությունները հայոց փրկության և ապագայի նկատմամբ, եթե մենք պատրաստ չլինեինք խաչի նկատմամբ հավատարմությամբ և սիրո դրսևորումով՝ մեկս մյուսի նկատմամբ հոգատարություն, սրտացավություն և ուշադրություն ունենալ:

Ոմանք ասում են, թե հայերն իրավունք չունեն իրարից նեղվելու, բայց հայերն իրարից չնեղվելու համար պարտավոր են նախ և առաջ մեկը մյուսին չնեղացնել: Խաչելության ճանապարհ՝ նշանակում է զոհողության ճանապարհ: Խաչելության ճանապարհ՝ նշանակում է դեպի հաղթանակ ընթանալու ճանապարհ: Քրիստոնեությունը տկարության, թուլության, նահանջի կրոն չէ, ինչպես ոմանք թյուրիմացաբար ընկալել են և արտահայտվում են: Քրիստոնեությունը հաղթող կրոն է, Քրիստոնեությունը հաղթության ճանապարհ է, քրիստոնյան զորավոր անձ է, ով արհամարհել գիտի դժվարությունները, ով բռնությունից և սպառնալիքից չի երկնչում:

Մենք աղոթում ենք, որ Տիրոջ Սուրբ Խաչի հովանու ներքո նորոգվի մեր ժողովրդի կյանքում հանձնառության ոգին, սիրո ոգին, զոհողության ոգին, ի փառս Աստուծո և ի մխիթարություն մեր բոլոր զավակներին, այսօր և հավիտյանս հավիտենից. ամեն:

ՀԱՎԱՏՈՎ ՄԻԱՎՈՐՅԱԼ Ի ՔՐԻՍՏՈՍ

ԱՄՆ Հայոց Արևմտյան Թեմ,
Սբ. Ղևոնդյանց Մայր Տաճար
5 նոյեմբերի, 2017 թ.

«Մայր իմ և եղբարք իմ սոքա են,
որ զբանն Աստուծոյ լսեն՝ և առնեն»
(Ղուկ. Ը 21)

Իմ շնորհակալությունը և եղբայրական սերն եմ փոխանցում Արևմտյան Թեմի Հայոց առաջնորդ Հովնան արք. Տերտերյանին՝ ջերմ հյուրընկալության համար: Վերջին տասն օրերը հոգևոր մխիթարության, նորոգության և ոգեշնչումի օրեր եղան ոչ միայն Արևմտյան Թեմի տարածքից ներս ապրող հայորդիների համար, այլև մեզ համար, ովքեր եկել են Հայաստանից: Հայկական ցանկացած համայնքում գտնվելու օրերը, երբ ականատես և հաղորդակից ես լինում հայրենիքից հեռու գտնվող հայերի հավատքին, նվիրումին, կապվածությանը հայրենիքին, հոգևոր արժեքներին, իսկապես հոգևոր խնդություն և բերկրանք է բերում մեր հոգիներին: Հայի հոգին մշտապես գտնվում է Հայաստանում, ուր էլ որ նա գտնվի՝ Միացյալ Նահանգներում, Ծայրագույն Արևելքում, թե Եվրոպայում:

Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. Ամէն:

Սիրելի՛ քույրեր և եղբայրներ, ես իմ հոգու խորքից ջերմ ողջույններ, սեր և օրհնություն եմ փոխանցում ձեզ՝ հեռավոր ձեր քույրերից և եղբայրներից, ովքեր գտնվում են Հայաստանում:

Այսօր չափազանց խորհրդանշական էր սրբազան այս բեմից ներկայացված տեսնել մի հետաքրքրական դրվագ Քրիստոսի կյանքից: Ղուկաս ավետարանիչը պատմում է, որ Քրիստոսին են մոտենում Իր հետևորդներից ոմանք՝ ասելով. «Տե՛ր իմ, ահա դրսում գտնվում են քո մայրը և եղբայրները, նրանք եկել են քեզ տեսնելու, բայց ժողովրդի չափազանց մեծ բազմության պատճառով չեն կարողանում մոտենալ Քեզ»: Քրիստոս մի ուշագրավ պատասխան է տալիս: Ասում է. «Իմ մայրը և իմ եղբայրները նրանք են, ովքեր լսում են Տիրոջ խոսքը և կատարում»: Այս դրվագը չափազանց հետաքրքրական է այն առումով, որ Քրիստոս բացահայտում է մերձավորության մի նոր և ավելի բարձր մակարդակ: Նա նշում է, որ ազգակցությունը կապված է ոչ միայն արյունակցության, այլև՝ արժեքների ընդհանրության և հավատքի միության հետ:

Մենք յուրաքանչյուրս ունենք ընտանիք՝ զավակներ, ծնողներ, հարազատներ, եղբայրներ, քույրեր և ամեն մեկս բնականորեն արձագանքում ենք Աստվածաշնչի կոչին. «Սիրի՛ր քո հորը և մորը», «Սիրի՛ր քո մերձավորին», «Սիրի՛ր քո ընկերոջը». դա ամենքիս սրբազան պարտականությունն է: Ծնողի նկատմամբ հարգանք դրսևորել, զավակի նկատմամբ՝ հոգատարություն, եղբայրների և քույրերի նկատմամբ՝ մշտական խնամք: Բայց Քրիստոս հարազատության սահմանները ընդարձակում է: Նա ասում է. «Բոլոր նրանք, ովքեր լսում են Աստծո խոսքը և կատարում, նրանք բոլորը մեր հարազատներն են, մեր եղբայրներն են, մեր քույրերն են և մեր մերձավորներն են»:

Ինչու եմ ասում՝ նախախնամական էր այսօր այս ավետարանական դրվագի ներկայացումը: Որովհետև, սիրելի՛ քույրեր և եղբայրներ, մեր Եկեղեցին, մեր ժողովուրդը հավատքի վրա կառուցված մի ընդհանրություն են, մի հավաքականություն: Մենք յուրաքանչյուրս կապված ենք մեր

ծնողներին, մեր քույրերին, մեր եղբայրներին՝ արյունակցական կապով, բայց կապված ենք նաև մեկս մյուսի հետ՝ մեր հավատքի մեկությամբ, մեր ազգային ընդհանրությամբ, մեր մշակութային ու ազգային ընկալումներով: Ահա թե ինչու մեկս մյուսի նկատմամբ պարտավոր ենք դրսևորել այն հոգատարությունն ու խնամքը, որը մենք ցուցաբերում ենք մեր ծնողների, մեր անմիջական հարազատների նկատմամբ:

Իհարկե, ոչ միայն Միացյալ Նահանգներում, այլ նաև հայրենիքից հեռու ցանկացած վայրում, մեզնից չափազանց մեծ ջանք է պահանջվում մեր ազգային-հոգևոր միությունը պահելու: Իհարկե, Հայաստանում չափազանց դյուրին է անդամագրված մնալ այդ ընտանիքին: Եվ իհարկե, ահռելի դժվար է օտար, մեզ համար ոչ հարազատ միջավայրում պահպանել մեր հավատքը, մեր մշակույթը, մեր ինքնությունը, բայց սա այն գինն է, որը մենք պետք է վճարենք մեր փրկության համար:

Շատերի համար կարող է հարց առաջանալ. ինչո՞ւ ես պետք է պահպանեմ իմ ազգային և կրոնական ինքնությունը, հայկական ինքնությունը, երբ դա որևէ առավելություն չի շնորհում ինձ այնպիսի մի միջավայրում, ուր ավելի ընկալված են ոչ հայկական արժեքներն ու մշակութային բարքերը: Ինչո՞ւ պետք է անգլերենի փոխարեն, անգլերենի հետ միաժամանակ իմ զավակը սովորի հայերեն: Ինչո՞ւ պետք է հաճախի հատկապես Հայ Եկեղեցի, ինչո՞ւ պետք է հատկապես հայ կյանքի, հայ մշակույթի մեջ հասակ առնի և մեծանա, երբ ընթացիկ կյանքի պայմանները բացարձակապես չեն պարտադրում դա: «Մեզ բավարար է իմանալ անգլերեն, բավարար է այստեղ ուսանել բարձրագույն ուսումնական հաստատություններում, բավարար է տեղի մշակութային կյանքին հաղորդակից լինել, հասարակական զարգացումներին ներգրավված լինել և դա, հավանաբար, մեզ կերաշխավորի հաջողություններ ընթացիկ կյանքում, և բացարձակապես

մենք պարտավորված չենք, - կմտածեն մարդիկ, - պահպանելու հայկական մեր ինքնությունը»: Անշուշտ, դժվար է տրամաբանական պատճառ գտնել բոլոր այս հարցադրումներին: Պատասխաններ կարող են տրվել այս հարցերին ոչ թե մտքով, այլ՝ սրտով: Ոչ ոք չի կարող մեզ տրամաբանորեն բացատրել, թե մենք ինչո՞ւ պետք է սիրենք մեր մորը, ինչո՞ւ պետք է սիրենք մեր հորը, ինչո՞ւ պետք է սիրենք մեր հայրենիքը: Պատասխանը շատ պարզ է: Պիտի սիրենք, որովհետև նրանք մե՛րն են: Մենք պիտի սիրենք մեր Եկեղեցին, որովհետև այն մերն է: Պիտի սիրենք մեր երկիրը, որովհետև այն մե՛րն է: Ոչ ոք իր լավը մեզ չի փոխանցելու: Մենք պետք է փորձենք ինքներս չենացնել, բարեկարգել, ծաղկեցնել մեր օջախը՝ մեր տունը: Հեռանալ սեփական ինքնությունից՝ նշանակում է մերժել այն արմատները, որի վրա կառուցված է քո գոյությունը: Մերժել ինքնությունը՝ նշանակում է օտարանալ այն կենսատու աղբյուրից, որը ոռոգում է քո արմատները:

Անշուշտ, եթե մենք բավարարվենք ընդամենը մեր ֆիզիկական գոյությամբ, մեզ համար թերևս նպաստավոր լինի մեր կյանքի տարիներն անցկացնել՝ ընդամենը արձագանքելով այսօրվա հոգսերին, այսօրվա կյանքի պայմաններին: Բայց չէ՞ որ մենք էակներ ենք, որոնք կոչված են կյանքի կոչելու, իրագործելու մեզ հետ կապված Աստծո ծրագրերը: Մենք էակներ ենք, որոնց կյանքի տևողությունը չի սահմանափակվում ընդամենը երկրավոր կյանքի տիրույթում: Եթե մարդկային կյանքի բովանդակությունից դուրս բերվի հավիտենական կյանքի գաղափարը, այն ընդամենը կսահմանափակվի բուսական կյանքի տրամաբանությամբ: Մենք կդադարենք լինել շնչող հոգիներ, մենք կլինենք ընդամենը բույսեր, որոնք աշխարհիս երեսին ինչ-որ մի ժամանակ լինում են և չորանում: Մինչդեռ Տիրոջից մեզ խոստացված երկրավոր այս կյանքի օրերից հետո մեր կյանքը շարունակվելու է երկնավոր կյանքով, երկնային իրականությամբ: Այս վստահությունն է, որ

հայության մեջ ներարկել է հավատքը, կապել մեզ հոգևոր արժեքների հետ, կապել հայրենիքի հետ, կյանքի մեջ առաջնահերթ դարձրել հոգևոր-բարոյական արժեքները՝ նյութն ընդամենը ծառա և աղախին դարձնելով այդ արժեքների և հոգևոր կյանքի առաջընթացի համար:

Միացյալ Նահանգների մեր ժողովուրդն առաջին անգամ չէ, որ իր այս վկայությունը տվել է մեր ժողովրդի կյանքում, նա հարազատ ժառանգը և հարազատ զավակն է մնացել այն հավաքական ամբողջության, որ կոչվում է հայ ժողովուրդ և հայ Եկեղեցի:

Այսօր կյանքի այս ծանր և դժվարին պայմաններում, դո՛ւք, սիրելի՛ հավատացյալներ, վերստին եկել եք ձեր պարտքը, ձեր հարգանքը մատուցելու ձեր Աստծուն՝ սուրբ Եկեղեցու միջոցով: Թող Աստված օրհնի ձեր ջանքերը, թող Աստված ուժ, կարողություն պարգևի ամենքիդ՝ կապված մնալու հավատքի ընդհանրությամբ միացած մեր ժողովրդի մյուս զավակների հետ: Թող Աստված ուժը և կորովը անպակաս անի ձեր հոգիներում, որպեսզի, համախմբված Միացյալ Նահանգների Արևմտյան Թեմի հովանու ներքո, աչքի առջև ունենալով Աստծուն և հայացքն սևեռած դեպի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, դեպի Հայրապետը Հայոց, միշտ շարունակե՛ք, համառորե՛ն շարունակեք կապված մնալ մեր սուրբ Եկեղեցուն և մեր հայրերին և լսեք Աստծո պատվիրանները, Աստծո պատգամները ու կատարեք դրանք, և ինչպես Քրիստոս է ասում. դուք կլինեք Քրիստոսի՝ մեր Տիրոջ հարազատները, որովհետև լսում եք և կատարում, որովհետև լսում եք և կապված մնում բոլոր նրանց, ովքեր կատարում են Տիրոջ պատգամներն ու պատվիրանները:

Տիրոջ սերը և օրհնությունը ձեզ, մեզ և ամենքիս հետ, այժմ և հավիտյանս հավիտենից. ամեն:

ՎԱ՞Խ, ԹԵ՞ ԹԵՐԱՀԱՎԱՏՈՒԹՅՈՒՆ

ԱՄՆ Հայոց Արևմտյան Թեմ,
Վեն Նայսի Սբ. Պետրոս Եկեղեցի
12 նոյեմբերի, 2017թ.

«Մի՛ երկնչիր, միայն հաւատա՛...»
(Ղուկ. Ը 50)

Նախ և առաջ կուզեմ ողջունել և մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի սերը, օրհնությունը և սիրո պատգամը փոխանցել մեր բոլոր հայրենակիցներին, ովքեր ներկա են սրբազան այս արարողությանը: Ողջույն ձեզ՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից, ողջույն ձեզ՝ հայրենիքից: Թող թույլ տրվի ինձ, որպես համեստ մի սպասավոր Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցվո, այստեղ բերած լինելու հայրենիքի սերը, հեռու-հեռավոր այս աշխարհում կայք և բնակություն հաստատած մեր հայորդիներին:

Երկրորդ՝ կուզեմ իմ եղբայրական սերը և շնորհակալությունը հայտնել Միացյալ Նահանգների Արևմտյան Թեմի առաջնորդ Հովնան սրբազանին՝ իր ջերմ հյուրընկալության համար և սրբազան այս խորանին պատարագելու հնարավորության համար: Նաև կուզեմ իմ գնահատանքը և գոհունակությունը հայտնել այս ծուխի, այս եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Շնորհք քահանային՝ ամենայն նախանձախնդրությամբ և հոգատարությամբ իր առաքելությունը իրականացնելու համար: Եվ իհարկե, իմ եղբայրական սերը՝ մեր Հայր Տաճատին՝ իր ազնիվ զգացումների և ջերմ խոսքերի համար:

Սիրելի՛ քույրեր և եղբայրներ, մենք եկեղեցվո մեջ յուրաքանչյուր պատարագի ընթացքին կատարում ենք ընթեր-

ցումներ Սուրբ Գրքից, որովհետև մեր առաքելությունը ոչ այլ ինչ է, քան Սուրբ Գրքի, Տիրոջ Խոսքերի վրա կառուցված մի գործունեություն: Հայրերից մեկն ասում է. «Ձեր բոլոր շարժումները, ձեր բոլոր գործողությունները այնպես կատարեք, որպեսզի կարողանաք հիմնավորումներ գտնել Սուրբ Գրքից»: Ահա այս պատճառով և այս տրամաբանությամբ է, որ մենք ամբողջ պատարագի խորհուրդը, ամբողջ ծիսական կյանքը եկեղեցու կառուցում ենք Սուրբ Գրքի վրա: Եվ այսօր ընթերցվեց Ղուկասի ավետարանից մի հատված, որտեղ ներկայացվում էր Հայրոս անունով մի մարդու աղջկա հարության պատմությունը: Քրիստոս այստեղ ներկայացված է իր հրաշագործությունների ողջ բազմազանությամբ: Նա մի կողմից՝ բուժում է դիվահարին, մյուս կողմից՝ բժշկություն է շնորհում արյունահոսող կնոջը, իսկ ահա այստեղ հրաշագործություններից մեծագույնը հարությունն է: Ինչպե՞ս կարելի է հավատալ, որ մահացած մարդը վերստին կարող է կենդանանալ, վերստին կարող է շունչ առնել: Ահա այսպիսի տատամսումների և անվստահության մեջ էին մարդիկ: Պատմությունը հետևյալն է: Հայրոսը, որ ժողովարանի պետն էր՝ ղեկավարը, ելել էր Քրիստոսին ընդառաջ. և երբ տեսավ նրան, ասաց. «Վարդապե՛տ, իմ աղջիկը մոտ է մահվանը, խնդրում եմ, օգնի՛ր նրան, խնդրում եմ, բժշկի՛ր նրան»: Բայց այդ պահին մոտենում են իր մտերիմ մարդիկ և ասում. «Այլևս ուշ է, աղջիկդ մահացել է և Վարդապետին պետք չկա հոգնեցնելու»: Սակայն Քրիստոս, դառնալով դեմքով դեպի ժողովրդապետը՝ աղջկա հայրը, պատգամում է հետևյալը՝ մի՛ վախեցիր, մի՛ վախեցիր, միայն հավատա, և աղջիկդ կապրի, մի՛ վախեցիր:

Եվ Հայրոսի աղջիկը իրապես հարություն է առնում: Նահանջում է վախը և հաղթանակում վստահությունը: Որքա՜ն շատ են այսօր վախերը մեր կյանքում, որքա՜ն շատ են վախերը մեզանից յուրաքանչյուրի կյանքում: Մենք վախե-

նում ենք աղքատությունից: Դրա համար ամեն օր փորձում ենք հարստություն կուտակել, որպեսզի չդատապարտվենք աղքատության ու չքավորության: Մենք վախենում ենք տգեղությունից, մեզ համար մտահոգության մեծ առարկա է, թե մարդիկ ինչպես կգնահատեն մեզ: Արդյո՞ք գեղեցիկ են մեր մազերը, արդյո՞ք թորշոմած չէ մեր դեմքը, արդյո՞ք մեր մարմինը սլացիկ է: Եվ այս վախն արտահայտելու համար մենք հաճախ դիմում ենք վիրահատությունների, որպեսզի ավելի գեղեցիկ երևանք: Մենք վախենում ենք օդանավից՝ մտածելով, որ օդանավը արկած կունենա, և կկործանվենք: Ոմանք վախենում են փակ տարածությունից, ուրիշները վախեր ունեն իրենց հարազատների համար: Ահա սեղանի վրա դրված են թղթեր, որտեղ մարդիկ գրել են իրենց հարազատների անունները: Մայրը՝ իր զավակների առողջության և հաջողության համար է աղոթում, զավակները խնդրում են ողջություն և առողջություն իրենց ծնողների համար: Վախեր, վախեր և վախեր: Եվ Սուրբ Գիրքը ոչ այլ ինչ է, քան՝ վախի դեմ մի դեղատոմս: Սուրբ Գրքի սկզբից մինչև վախճանը Աստծո կողմից պատգամ է հղվում՝ մի՛ վախեցեք, մի՛ վախեցեք, Ես ձեզ հետ եմ: Եսայի մարգարեն իր մարգարեության 41-րդ գլխում պատգամում է իրեն հավատարիմ ժողովրդին. «Մի՛ վախեցեք, ես կօգնեմ ձեզ, մի՛ վախեցեք, ես ձեզ հետ եմ, ձեր բոլոր թշնամիները ձեր առջև պիտի խոնարհվեն, ձեր բոլոր ոսոխները պիտի ամաչեն, լեռներ ու սարեր պիտի խոնարհվեն ձեր առջև, և ձորերը պիտի հավասարվեն»: Վախի հաղթահարման ճանապարհն ապավինությունն է առ Աստված, վստահությունն է առ Աստված, որը և կփրկի մեզ: Պետրոս առաքյալն ասում է, որ Աստված մեզ վախկոտության ոգի չտվեց: Նա մեզ տվեց նվիրումի, սիրո և զոհողության ոգի: Այո՛, վախը նշան է անհավատության, վախը նշան է անվստահության, վախը նշան է Տիրոջ նկատմամբ ունեցած ոչ բավարար ապավինումի և վստահության: Հովհան-

նես առաքյալն ասում է, որ Աստծո սիրո մեջ երբեք վախ չկա: Վախը բացակայում է նրա հոգում, ով ապավինում է Աստծուն: Բայց մեր առաքելությունն ընդամենը մեր հոգին վախից ազատելը չէ, այլ այդ վախի հաղթահարումը՝ Աստծո սիրո հեղինակության ու գերակայության ճանաչումով:

Սիրելի՛ քույրեր և եղբայրներ,

Այսօր դուք, ինչպես Միացյալ Նահանգների ամեն մի քաղաքացի, ամեն մի բնակիչ՝ անկախ կրոնից, սեռից, դույնից, բոլորդ, ինչպես Հայաստանում, ինչպես Եվրոպայում ու Ծայրագույն Արևելքում և մինչև Անտարկտիդա, ունեք ձեր վախերը: Այսօր դուք հաղթահարում եք վախերն ու տագնապները տնտեսական կյանքի, այսօր դուք հաղթահարում եք վախերը ընկերային կյանքի: Վախենում ենք՝ արդյո՞ք մենք պիտի կարողանանք մեր մտերիմների հետ մեր շփումները շարունակել, պիտի կարողանա՞նք մեր գավակների, մեր ընտանիքի անդամների հետ մեր կապերը ամրապնդել կամ չտկարացնել: Մենք մեր փորձառությունից գիտենք, որ ընկերային հարաբերությունների ամրությունը պայմանավորված է ոչ թե նրանով, որ մենք պարզապես ուզում ենք ընկերներ ձեռք բերել, այլ այդ բարեկամությունը հիմնված է արժեքների վրա: Այսօր մեր գերագույն արժեքը մեր հավատքն է: Հավատք, որով միայն կարող ենք հաղթահարել մեր վախերը, հավատք՝ Աստծո նկատմամբ և սեր՝ մերձավորների նկատմամբ:

Իհարկե, այսօրվա կյանքի ընթացքները բնավ նպաստավոր չեն, որպեսզի մենք կարողանանք կառչած մնալ մեր հավատքին, որպեսզի բավարար չափով գնահատված լինեն մարդկանց հավատո զգացումները: Բայց, իհարկե, նաև գիտենք պատմությունից, որ երբեք էլ այնպես չի եղել, որ մարդկանց մեծամասնությունը հակված լինի աստվածապաշտության: Հիշե՛նք ջրհեղեղյան պատմությունը: Քանի՞սը հավատացին Աստծուն: Հիշե՛ք Սոդոմ-Գոմորի կործանման

պատմությունը: Քանի՞ հոգի ապավինեցին Աստծուն, քանի՞ հոգի փորձեց իր վախերը հաղթահարել՝ Աստծուն ապավինելով: Շատ քիչ մարդիկ: Եվ այսօր դուք, որ հավաքվել եք այս սուրբ եկեղեցում, վախերը, տագնապները, մտահոգությունները, վստահաբար, փարատում եք՝ Աստծուն ապավինելով: Աղքատության հանդեպ վախը չի կարող դառնալ ագահության և կեղեքման պատճառ, չի կարող դարձնել մարդկանց հանցագործ: Տգեղությունից ունեցած վախը չի կարող դառնալ պատճառ սեփական մարմինը փորձարկումների առարկա դարձնելու: Եվ չի՛ կարելի զավակի նկատմամբ դրսևորած հոգատարությունը դարձնել մշտապես նրա նկատմամբ վերահսկողություն իրականացնելու պատճառ: Լավագույն մայրը նա է, ինչպես ասում է մտածողներից մեկը, ով որդուն հասցնում է այն աստիճանի, որ նա այլևս իր կարիքը չունենա: Ա՛յս է իր առաքելությունը: Եվ ուրեմն՝ մեր վախերի միակ հաղթահարման միջոցը Աստված է: Մարդկանց վախերից մեծագույնը մահն է: Քրիստոս Ինքը զարկեց մահվան դագաղի վերջին մեխը: Մահն այլևս վերացած է, մահը մի ստվեր է, մահը իրականություն չէ, մահը մի կեղծիք է: Իրականը կյանքն է, իրականը ապրումն է, իրականը Քրիստոսի ներկայությունն է մեր կյանքում: Մենք երբեք չենք վախենում ննջասենյակից խոհանոց գնալ: Եվ հարց է առաջանում, ինչո՞ւ պետք է վախենանք՝ երկրավոր կյանքից տեղափոխվել մի ուրիշ կյանք: Սա նույնքան իրական է, որքան ննջասենյակից խոհանոց գնալը: Եվ Աստծո պատգամն է մեզ, որ երկնավոր կյանքը մենք ընկալենք որպես գոյություն ունեցող մի իրականություն: Երկնավոր կյանքն ըմբռնենք որպես մեզ համար հասանելի, մատչելի մի իրականություն, և այդ ժամանակ մեր վախերը կհաղթահարվեն, և այդ ժամանակ հարությունը գերիշխող ներկայություն և իրականություն կդառնա մեր կյանքում: Եվ որպեսզի, սիրելի՛ քույրեր և եղբայրներ, չբավարարվենք ընդամենը աղոթքի մասին խո-

սելով, որը լավագույն միջոցն է զրուցելու համար Աստծու հետ, եկեք միասին աղոթքով եզրափակենք մեր այս խոսքը: Եվ խնդրում եմ ամենքիդ, միասին ինձ հետ կրկնեք աղոթքը, միասնաբար մեր ջերմեռանդ սրտի մաղթանքները բարձրացնենք Երկնավորին. «Տե՛ր Աստված, ամենողո՛րմ Տեր, ողորմի՛ր մեզ՝ մեղավորներիս: Դու, որ բժշկեցիր դիվահարին, որ առողջություն պարգևեցիր հիվանդներին, քայլելու շնորհը տվեցիր կաղերին, շնորհի՛ր մեզ, որ հաղթահարենք մեր վախերը, խոնարհեցրո՛ւ մեր թշնամիներին, փրկի՛ր մեզ չարի կապանքներից և մշտապես Քո Աջը հովանի՛ դարձրու մեզ, որպեսզի լինենք քաջ, անվախ և կառչած մնանք Քո Սուրբ Անվանը. ամեն»:

Տիրոջ սերը, օրհնությունը ձեզ և մեզ հետ այժմ և հավիտյանս հավիտենից. ամեն:

ԽՈՆԱՐՀՈՒԹՅՈՒՆԸ՝ ԻԲՐԵՎ ՄԵԾՈՒԹՅԱՆ ՄԻԱԿ ԳՐԱՎԱԿԱՆ

Մոսկվայի Սբ. Պայծառակերպություն
Մայր Տաճար
19 նոյեմբերի, 2017 թ.

Զի որ փոքրիկն է յամենեսին ի ձեզ՝ նա՛ եղիցի մեծ»
(Ղուկ. Թ 48)

Գոհությո՛ւն և փա՛ռք եմ մատուցում Տիրոջը, որ շնորհը պարգևեց ինձ՝ պատարագ մատուցելու Ռուսաստանի օրհնյալ հողում վեր խոյացած այս նվիրական տաճարում՝ աղոթակցությամբ հոգևոր մեր եղբայրների և հավատավոր հայորդիների: Այս սուրբ խորանից եղբայրական սերս ու շնորհակալությունս եմ հայտնում Ռուսաստանի և Նոր Նախիջևանի Հայոց Թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տ. Եզրաս արք. Ներսիսյանին և հոգևոր դասին՝ ամենայն ջերմությամբ ընդունելու և այս գեղեցիկ առիթը ընձեռելու համար:

Սիրելի՛ քույրեր և եղբայրներ, բոլորս չէ, որ միմյանց ճանաչում ենք և հաղորդակից ենք միմյանց կյանքին և գործունեությանը: Բայց Աստված, Ում հավատում ենք, եկեղեցին, որը մեզ միավորում է, որևէ դժվարություն չի ստեղծում մեկս մյուսին ճանաչելու, իրարով ապրելու և զորանալու համար: Մենք միևնույն ավազանի ծնունդն ենք, հավատում ենք միևնույն Աստծուն և զավակներն ու ժառանգներն ենք միևնույն ժողովրդի: Եվ այսօր նվիրական այս տաճարը լեցուն է հայ հավատացյալներով, ովքեր իրենց հայացքներն ուղղել են դեպի Աստված՝ Տիրոջից օրհնություն, խաղաղություն, համերաշխություն և սեր հայցելու:

Այսօր դուք ունկնդիր եղաք Սուրբ Գրքի համապատասխան ընթերցումներին: Առհասարակ, Ավետարանը խորությամբ ըմբռնելու համար մենք պետք է յուրաքանչյուր հատված ընթերցենք ընդհանուր տեքստի տրամաբանության մեջ: Բայց Ավետարանի, Սուրբ Գրքի բացառիկությունից մեկն էլ նաև այն է, որ յուրաքանչյուր հատված ինքնին պատգամ է, ինքնին խորհուրդ և խորհրդածության լեցուն մի շտեմարան: Եվ ի՞նչ է ասվում այսօրվա ընթերցվածում, որ Ղուկաս ավետարանչի Թ գլխի 44-51 համարներն են: Ավետարանիչը սրան նախորդող հատվածում հիշատակում է Քրիստոսի բժշկությունները՝ մանրամասն պատմելով, թե ինչպես Տերը բուժեց արյունահոսող կնոջը, կատարեց իր մեծագույն հրաշքներից մեկը՝ հարություն պարգևեց մահացած աղջնակին, այնուհետև բուժեց դիվահարին, ընկնավորին, որը երկար ժամանակ տառապում էր դևերի սարսափից: Ահա այսպիսի հրաշագործությունների նկարագրումից հետո ներկայացված է Քրիստոսի խոսքն իր աշակերտներին: Փրկիչն ասում է, որ Մարդու Որդին մատնվելու է մարդկանց ձեռքը, մահանալու է և երրորդ օրը հարություն է առնելու: Սա Քրիստոսի կողմից հնչեցված այն հազվադեպ կանխասացություններից մեկն էր, որով Տերը հայտնում էր Իր մահվան և հարության մասին: Ղուկաս ավետարանիչն ասում է, որ աշակերտները չէին կարողանում հասկանալ, թե ինչի մասին էր խոսում: Հավանաբար, աշակերտների համար միակ հասկանալին այն էր, որ Քրիստոս մահանալու է, մինչդեռ հարությունը նրանց համար չափազանց դժվար ըմբռնելի էր: Ավետարանիչը շարունակում է պատմել, որ այս խոսքերից հետո աշակերտների մեջ վեճ է առաջանում, թե ո՞վ է իրենցից մեծը, ո՞վ է առաջինը և ո՞ւմ պետք է հետևեն մյուս աշակերտները: Ըստ երևույթին, լսելով Քրիստոսի հնարավոր մահվան մասին, նրանք արդեն մտածում էին իրենց միջից ղեկավար ընտրելու մասին: Եվ ամեն մեկը թերևս իրեն էր տեսնում առաջնային դիրքերում, իրեն էր համարում մեծը:

Բնական է, որ առաքյալների մեջ մարդկային այդպիսի զգացում կարող էր առաջանալ, քանի որ մինչև այդ պահը նրանք չէին հասկանում, թե ով է իրենց առաջնորդը, ում հետ են իրենք շրջում և ինչ առաքելություն են ունենալու աստվածային տնօրինության մեջ: Քրիստոս աստվածային իր ողջ զորությամբ ու փառքով տակավին բացահայտված չէր նրանց:

Քրիստոսի կողմից աշակերտների այս մտահոգություններին տրված պատասխանով բացահայտվում է մեծության քրիստոնեական ըմբռնումը: Տերն իր մոտ է կանչում մի մանկան և ասում է, որ պիտի լինեք այս երեխայի նման, շարունակելով, - «ով այս մանկանը ընդունի, կընդունի Ինձ և ձեր միջից մեծը, հզորը, առաջինը կլինի նա, ով կլինի այս մանկան պես»:

Մենք մեր առօրյա փորձառությունից գիտենք, թե մարդիկ ո՞ւմ են համարում առաջին, ո՞ւմ են համարում հզոր, ո՞ւմ են համարում առաջնորդ և ղեկավար: Հաճախ մարդիկ՝ իբրև ղեկավարների մեծարում են նրանց, ովքեր ոտնահարում են իրենց իրավունքները, ովքեր կարողանում են վախ և սարսափ ներշնչել իրենց: Բայց, ի հակադրություն մարդկային այս ընկալումների, Քրիստոս մեծ է համարում նրանց, ովքեր կլինեն երեխայի նման իրենց մեջ: Սա բոլորովին այլ մոտեցում է: Քրիստոսի ընորոշմամբ մեծ է նա, ով մանուկ է, անմեղ է: Տերը ուսուցանում է, որ իրական մեծությունը համեստության մեջ է, խոնարհության մեջ է:

Իհարկե, ժամանակակից մարդու համար չափազանց դժվար է ընկալել այս իրողությունը: Մենք գրեթե ամեն օր չփվում ենք մարդկանց հետ, ովքեր իրենց հնարավորություններով փորձում են հոգեբանական ու բարոյական ճնշման ենթարկել մեզ: Իհարկե, դժվարությունները պաշարում են մեզ, և մենք երբեմն նույնիսկ օրվա հացի հայթաթելու խնդիրներ ենք ունենում: Մենք գիտենք, որ երբևէ չպիտի ցանկանայինք չփվել այնպիսի մարդկանց հետ, ովքեր պար-

տաղրում են իրենց առավելությունը մեր նկատմամբ, որոնց հետ հաղորդակցությունն ամեն անգամ մի մեծ փորձություն է դառնում մեզ համար: Եվ Ավետարանն ասում է, որ այդպիսի մարդիկ չեն կարող լինել առաջիններ: Մարդկանց շարքում առաջին կարող են լինել նրանք, ովքեր հոգատարություն ունեն, ովքեր հեզություն ունեն, որոնցից հեռու է մեզ հետ նյութական արժեքների շուրջ մրցակցության մեջ մտնելու գայթակղությունը: Այսօրվա աշխարհը, դժբախտաբար, հիմնված է մրցակցության վրա, մրցակցություն՝ նյութական արժեքներ ստեղծելու, մրցակցություն՝ պաշտոնի հասնելու, մրցակցություն՝ մյուսների նկատմամբ առավելություն ստանալու: Մինչդեռ Քրիստոսի առաջարկած մրցակցության դաշտը բոլորովին այլ է: Նա ասում է՝ եթե ցանկանում եք մրցակցել, մրցակցեք համեստության մեջ, եթե ցանկանում եք մրցակցել, մրցակցեք հեզության և խոնարհության մեջ, մրցակցեք մեկդ մյուսի նկատմամբ սեր դրսևորելու մեջ: Առաջնորդը, առաջինը լինելու հավակնող մարդը, ով չունի այսպիսի արժանիքների ու առաքինությունների շուրջ մրցակցելու կամք, չի կարող իրական առաջնորդ լինել:

Սիրելի՛ քույրեր և եղբայրներ, մենք բոլորս Աստծո առջև առաջիններ ենք, առաջիններ ենք՝ Իր նկատմամբ մեր նվիրվածությամբ, առաջիններ ենք՝ Իր կողմից մեզ ընծայված սիրով և հոգատարությամբ, և կմնանք այդպիսին, քանի դեռ մեկս մյուսի նկատմամբ ունենք սեր, ունենք հոգատարություն, ունենք նվիրվածություն, ունենք խնամք: Դժբախտ են այն մարդիկ, ովքեր մտածում են, որ մարդու կյանքի տևողությունը երկարաձգվում է ընդամենը ծնունդից մինչև մահ: Մեր կյանքն ավելին է, քան երկրավոր կյանքի տևողությունը: Եվ արդ մենք հավերժության ճամփորդներ ենք և ոչ սակավակյացներ:

Երկինքն է մերը, երկրավոր հողակտորով չգայթակղվենք: Արժե՞ արդյոք երկինքը զոհել երկրին, հավիտենականությունը՝ ժամանակավորին: Զավեշտալի չե՞ն արդյոք մարդկային

ջանքերն ուժեղ ու անհաղթահարելի ներկայանալու, երբ մահը կայծակնային հարվածով ավարտին է մոտեցնում երկրավոր գոյությունը: Լինել մեծ՝ ուրեմն՝ նշանակում է խոնարհվել Աստծո կամքի առջև, թույլ տալ, որ Աստված գործի անձիդ մեջ, ծառայել ոչ թե անձին, այլ ծառայել սրբություններին ու առաքինություններին:

Գիտեմ, որ Հայրենիքից հեռու չափազանց դժվար է կառչած մնալ այդ արժեքներին: Տարբեր են կյանքի պայմանները, տարբեր է մշակույթը, որքան էլ ընդհանրություններ ունի, տարբեր է լեզուն, և ձեզանից յուրաքանչյուրից լրացուցիչ ջանք, լրացուցիչ եռանդ է պահանջվում՝ կառչած մնալու այս Սուրբ Եկեղեցուն: Բայց մենք, հակառակ բոլոր դժվարություններին Ռուսաստանի մեջ, Միացյալ Նահանգներում, Ծայրագույն Արևելքում թե աշխարհի որևէ այլ մասում շարունակում ենք կառչած մնալ մեր երկրին, մեր Եկեղեցուն, մեր ավանդույթներին: Կառչած ենք մնում ոչ թե այն առումով, որ դա մեզ համար առավելություն է ստեղծում, այլ այն պարզ պատճառով, որովհետև դա մերն է: Ոչ ոք չի կարող բացատրել, թե ինչո՞ւ է սիրում իր մորը, ոչ ոք չի կարող բացատրել՝ ինչո՞ւ է սիրում իր ընտանիքը: Մեզանից պահանջվում է ընդամենը սիրել և նվիրվել:

Եվ այս հավատքով մաղթում եմ ամենքիդ ուժ և զորություն, հայցում Տիրոջ օրհնությունը և թող Աստուծո սերը, օրհնությունը լինի ձեզ հետ, ամենքիս հետ. Ամեն:

ՀԱՅՐԵՆՅԱՑ ՊԱՇՏՊԱՆՆԵՐ

(5-ՐԴ ՄՈՏՈՀՐԱՁԳԱՅԻՆ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԲՐԻԳԱԴԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ 25-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՌԻԹՈՎ)

Մայր Աթոռ Սբ. Էջմիածին
28 նոյեմբերի, 2017 թ.

«Որ զմահ ոչ գիտէ, երկնչի ի մահուանէ.
իսկ որ գիտէ զմահ, ոչ երկնչի ի նմանէ»
(Եղեշե)

Մարդկային կյանքը ոչ այլ ինչ է, քան մահվան տագնապի և նույն ինքը հաղթահարում: Մահը վախճան ու ավարտ չէ՝ իր աշխարհգալուստով հայտարարեց Քրիստոս՝ մեր Տերը և Փրկիչը:

Մեծարգո՛ նախագահ Ազգային Ժողովի Արա Բաբլոյան,

Մեծարգո՛ գեներալ-լեյտենանտ Մանվել Գրիգորյան,

Պետական ավագանու հարգարժա՛ն ներկայացուցիչներ,

Սիրելի՛ կամավորականներ, քույրե՛ր և եղբայրնե՛ր ի Քրիստոս:

Այսօր բարձր նախագայությամբ և օրհնությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի ամենքս համախմբվել ենք Հայոց Սրբություն Սրբոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում՝ նշելու 25-րդ տարեդարձը Հայոց բանակի հիմնասյուներից մեկը կազմող 5-րդ մոտոհրաձգային կամավորական բրիգադի, որը կազմավորվեց արցախյան ազատամարտի ու Հայոց անկախության պայքարի մաքառումներում: Արցախյան ազատամարտը և Հայոց անկախության հաստատումը ոչ այլ ինչ են,

քան մահվան մերժում ու կյանքի հաստատում: 5-րդ բրիգադի մարտիկների կյանքն ընծայաբերվեց նվիրական այս գաղափարների իրագործմանը:

Խոսել կամավորականների խմբի կազմավորման մասին՝ նշանակում է վերապրել հայոց ազատագրական պայքարի հերոսական իրադարձությունները:

Հիշել 5-րդ բրիգադի կազմավորման մասին՝ նշանակում է վերակենսավորել 90-ականների հաղթական ոգին, ոգի, որը չի ճանաչում վախ, ոգի, որը մերժում է մահը, վանում անվստահությունը, ոգի, որը ներշնչված է Աստծուց ու թրծված Ավարայրի ու Սարդարապատի հերոսամարտերում:

Մեր ժողովուրդն իր հոգում տակավին կրում է զրկանքների ու անգին կորուստների ցավը, որ վճարվեց հերոսական հաղթանակի համար: Ցավերով ու կորուստներով հանդերձ՝ մեր հոգին նորոգված է հաղթանակի բերկրանքով, մահվան դեմ հաղթանակի բերկրանքով: Մեր պատերազմը, սակայն, տակավին ավարտված չէ: Իրավ է ասված՝ կյանքը պայքար է: Այս մասին խոսում է Քրիստոս, երբ ասում է. «Հուր եկա արձակելու երկրի վրա» (հմմտ. Ղուկ. ԺԲ. 49): Սա հուրն է սիրո՝ ընդդեմ ատելության, սա հուրն է խաղաղության՝ ընդդեմ պատերազմի, սա հուրն է համերաշխության՝ ընդդեմ խռովության և, վերջապես, սա հուրն է Կյանքի՝ ընդդեմ մահվան: Այս հուրը չի կարելի մարել, չի կարելի հրաժարվել այս հրից: Մեր ժողովուրդը պատմության իր խավարը ցրել է սիրո, համերաշխության, արդարության ու կյանքի այս հրով:

Տրվել պառակտման գայթակղությանը, փնտրել թշնամիներ յուրայիններ մեջ, մերժել հեղինակություններին ու վարկաբեկել, կեղեքել, նվաստացնել ու անտեսել զրկվածներին՝ նշանակում է չիջանել մեր կյանքի հուրը, մեր ճամփի լույսը:

Հարազատնե՛ր ի Քրիստոս,

Մեր ժողովրդի զավակներն իրենց կյանքով վճարեցին, որ մենք կյանք ունենանք, կյանքով վճարեցին, որ մենք ապրենք խաղաղ, ապրենք մեր ինքնության մեջ, խոսենք մեր լեզվով, ապրենք մեր հավատով, պահենք մեր ավանդույթներն ու կենսաոճը, նվիրվենք մեր հայրենիքին, եկեղեցուն ու սրբազան արժեքներին:

Այսպես պիտի ապրի Հայաստանը և այսպես մահվանը պիտի հաղթահարի հայությունը:

Մեր շնորհավորանքներն ենք բերում ամենքս 5-րդ բրիգադի տարեդարձի առիթով, մեր խոնարհումը՝ հայոց անկախության համար զոհված զինվորներին ու զորականներին:

Մեր առանձնահատուկ շնորհավորանքը 5-րդ կամավորական բրիգադի բոլոր անդամներին, որոնց վաստակը անուրանալի է հայոց նորօրյա ազատամարտի պատմության մեջ և բանակաշինության գործում:

Տիրոջ սերն ու օրհնությունը ձեզ և ամենքիս հետ, այժմ և միշտ և հավիտյանս. ամեն:

Վեհափա՛ռ Տեր, ահա Ձեր առջև են հայոց նվիրյալ մարտիկները: Թո՛ւյլ տվեք խնդրել Ձեր աղոթքն ու օրհնությունը՝ Ձեր զավակների համար, հայոց խաղաղ ու պայծառ ապագայի համար:

ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴԸ՝ ԻԲՐԵՎ ՍԻՐՈ ԴՐՍԵՎՈՐՈՒՄ

(ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՃՐԱԳԱԼՈՒՅՑԻ ԱՌԻԹՈՎ)

Մայր Աթոռ Սբ. Էջմիածին
5 հունվարի, 2018 թ.

«Քրիստոս ծնաւ և յայտնեցաւ,
ձեզ և մեզ մեծ աւետիս»

Սիրելի՛ քույրեր և եղբայրներ,

Հոգու ուրախությամբ ողջունում եմ ամենքիդ և փոխանցում մեր Տիրոջ և Փրկչի Սուրբ Ծննդյան ավետիսը. «Քրիստոս ծնավ և հայտնեցավ»: Սա մի ավետիս է, որ 2000 տարի արձագանքում է հավատավոր սրտերում՝ դառնալով ուրախության ու մխիթարության անսպառ ու հորդառատ մի աղբյուր:

Փրկչի Սուրբ Ծնունդը մի իրադարձություն է, որը հեղաշրջեց մարդկության պատմությունը, իրադարձություն, որը ջերմացրեց սառած հոգիները, փշրեց քարացած սրտերը և բացեց հորիզոնը ապագայի՝ հույսով լուսավորված:

Այսօր մենք դառնում ենք հովիվներ, ովքեր փառաբանում են Փրկչին, դառնում ենք Արևելքից ճամփորդած իմաստուններ, ովքեր երկրպագում են ու ընծաներ մատուցում Մանուկ Հիսուսին: Այսօր մենք հաղորդակցվում ենք Աստծո մարդեղության՝ զոհաբերության մեծագույն խորհրդին:

Աստծո զոհաբերությունը մարդկանց համար սկսվում է ոչ թե Գողգոթայից, այլ՝ Սուրբ Ծնունդից: Երևակայությունն անգամ անզոր է Աստծո մարդեղության հրաշքի առջև: Աստված, Ով աներևույթ է, դառնում է երևելի: Աստված, Ով

անսահման է, դառնում է սահմանավոր: Տիեզերքը տեղավորվել է հյուլեի մեջ, ծառը՝ ամփոփվել պտղի պատյանում: Մի՞թե հրաշք չէ սա, մի՞թե կա ավելի մեծ զոհաբերություն, քան մեծությունից կամավորապես փոքրանալը, բարձրությունից խոնարհվելը:

Մարդիկ միտք ու հոգի են մաշում, դիշերը ցերեկին խառնում՝ վեր բարձրանալու, մեծության հասնելու, հասարակական դիրք ու ծառայողական առաջընթաց ունենալու համար, մինչդեռ Աստված աներևակայելի Իր բարձրությունից խոնարհվում է ու մարդկային մարմին զգենում: Շատերի համար անհասկանալի է Քրիստոսի զոհաբերության խորհուրդը: Մարդ, որ հնարամտության ու հաջողության արդյունք է համարում ուրիշին զոհելը, նվաճելը, գավթելը, կուտակելը, չի կարող հասկանալ զոհվելու, նվիրվելու և բաժանելու արժեքը:

Սուրբ Գրքի ողջ պատմությունը բացահայտում է Հիսուսի աներևակայելի զոհաբերության խորախորհուրդ գաղտնիքը: «Աստված այնքան սիրեց աշխարհը, որ մինչև իսկ Իր Միածին Որդուն տվեց, որպեսզի ով Նրան հավատում է, չկորչի»,-ասում է սուրբ Հովհաննես Ավետարանիչը, այնուհետև ավելացնում,-«Ավելի մեծ սեր ոչ ոք չունի, քան այն, որ մեկն իր կյանքը տա իր բարեկամների համար»:

Մարդկանց հանդեպ անսահման սերն է, որ Աստծուն դարձրեց մարդ, երկնքից իջեցրեց երկիր, բարձրությունից խոնարհեցրեց, մեծությունից փոքրացրեց: Սերն առանց զոհաբերության միևնույնն է, թե՝ արևն առանց ջերմության: Զոհաբերությունը սիրո բովանդակությունն է, իմաստն ու ամբողջությունը: Սիրել Աստծուն, սիրել Հայրենիքը, սիրել ընտանիքին կամ բարեկամին՝ առանց պատրաստ լինելու զոհվել նրանց համար, նշանակում է դատարկախոսությունը դարձնել մասնագիտություն, նշանակում է խոսել, անվերջ խոսել սիրո մասին, բայց՝ չսիրել: Սիրել՝ նշանակում է նվիր-

վել, սիրել՝ նշանակում է զոհվել, զրկվել, զիջել, չբարկանալ ու չնախանձել: Սիրել այնպես, ինչպես Քրիստոս սիրեց, սիրել անմնացորդ ու անպայմանավոր: Աստված սիրեց մարդկանց ոչ նրա համար, որ նրանք կատարյալ էին ու զերծ՝ թերություններից, այլ նրա համար, որ այդ սերը փրկություն դառնա նրանց համար և ազդու պատգամ՝ սթափության և զգոնության՝ հրաժարվելու անօրինություններից ու ապականություններից: Սիրեց, որ մարդիկ Իր օրինակով ձգտեն բարուն, լուսավորվեն, ձգտեն սրբությանն ու անապականությանը:

Որքա՜ն շատ են այսօր խնդիրներն ու մարտահրավերները, որ սկիզբ են առել սիրո ու զոհաբերության ոգու պակասից: Քանի՞ ընտանիքներ կպահպանվեին, եթե ամուսինները փոխանակ մտածեին միայն ու միայն իրենց հետաքրքրությունների ու քմահաճույքների մասին, անսային իրենց կողակցի, իրենց զավակների ու հարազատների մտահոգություններին ու կարիքներին:

Որքա՜ն պատերազմներ, հակամարտություններ, ահաբեկչություններ կխնայվեին աշխարհին ու մարդկությանը, եթե եսակենտրոնության ու իշխանատենչության փոխարեն սիրո ու զոհաբերության ոգին գերակայեր մարդկային հարաբերություններում:

Ինչո՞ւ պիտի թշվառության ու չքավորության մատնվեին աշխարհում բյուրավոր անձեր, դառնային փախստական ու գաղթական, եթե ագահության ու աչքածակության փոխարեն հոգատարության ու խնամատարության քրիստոսապատկեր օրինակին հետևեին մարդիկ:

Սիրելի՛ հավատացյալ քույրեր և եղբայրներ,

Մենք մի ժողովուրդ ենք, որ դարերով վկայել ենք մեր սերը Աստծո և մարդկանց նկատմամբ, նախընտրել ենք զոհվել, քան թե զոհել, նվիրվել, քան թե ծառայեցնել, և դա մեզ երբեք չի տկարացրել, այլ, ընդհակառակը, դարձել է մեր

գոյատևման գրավականն ու երաշխիքը: Մեր սիրո մեջ երբեք կեղծիք խառնված չի եղել, այլ այն շաղախված է եղել զոհաբերությամբ, խնամատարությամբ ու սրտակցությամբ: «Երանի է տալը, քան առնելը»,-ասում է Սուրբ Գիրքը: Մեր երջանկությունը մենք գտել ենք զոհաբերության ու նվիրաբերության մեջ:

Այսօր զոհաբերության միջոցով երջանկության հասնելու տոնն է, տոն, որ պարգևեց մեզ մեր Տերը՝ Հիսուս Քրիստոս:

Հետևենք մեր Տիրոջ օրինակին, ուժ առնենք աստվածային Իր սիրուց: «Սիրեցեք ձեր ընկերոջն այնպես, ինչպես ինքներդ ձեզ»,- ասում է Սուրբ Գիրքը: Գտեք ձեր դրախտն ընկերոջ ժպտացող աչքերի մեջ:

Ողջունեք սիրով և ուրախությամբ՝
Քրիստոս ծնավ և հայտնեցավ
Ձեզ և մեզ մեծ ավետիս:

ԿՅԱՆՔԻՑ ԱՌԱՎԵԼ ...

(ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՃՐԱԳԱԼՈՒՅՑԻ ԱՌԻԹՈՎ)

Երևան, Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի
5 հունվարի, 2019 թ.

«Քրիստոս սիրեաց զմեզ,
և մատնեաց զանձն իւր վասն մեր պատարագ
և զենումն Աստուծոյ ի հոտ անուշից»
(Եփ. Ե. 2):

Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. ամէն:

Սիրելի՛ քույրեր և եղբայրներ, շուրջ երկու հազարամյակ քրիստոնյա աշխարհը տոնախմբում է Քրիստոսի ծնունդը, ունկնդրում հրեշտակների օրհնաբանությունը. «Փառք ի բարձունս Աստուծոյ և յերկիր խաղաղութիւն և ի մարդիկ հաճութիւն»: Հոգու հայացքով ճեղքում ենք դարերի պատնեշը, հովիվների հետ վկաները դառնում Հիսուս Մանկան ծնունդի, արևելյան մոգերի հետ ընծաներ մատուցում Նրան: Զգում ենք, կարծեք, կույս Մարիամի երկունքի ցավերը, վերապրում Հովսեփի հայրական սրտի տագնապը՝ այնպես, ինչպես զավակի ծննդյան սպասող ամեն մի ծնող:

Ծնունդ է սա, իսկական մի ուրախություն. ինչպես կասեր շարականագիրը՝ «Երկինքը ցնծում էր և երկիրն ուրախանում» (Շարակնոց):

Մարդկային հայացքը, ուրախությունից բացի, այլ բան չի կարող տեսնել ծնունդի մեջ: Ծնունդը մարդկային կյանքի շարունակությունն է, նրա կատարելագործման ու զարգացման հնարավորությունը: Այսպես է կյանքի բնական և օրինաչափ ընթացքը: Այսպիսին է մարդկային արձագանքը նաև Քրիստոսի Սուրբ Ծննդյանը:

Բայց արդյո՞ք մարդկանց միայն երկրավոր ուրախություն՝ ծննդյան սովորական ուրախություն պարգևելու համար եկավ Քրիստոս:

Քրիստոսի ծնունդը աստվածային ծանր ու հոգեմաշ մի որոշման արդյունք էր: Ծնվելու էր ոչ թե պարզապես մի մարդ, այլ Ինքը Աստված՝ նույն Ինքը, Ով ստեղծել է մարդուն, Ով Տերն է ծնունդի ու մահվան, և Նա կամավորաբար մուտք է գործում մի հովիտ, որտեղ պետք է հաղթահարվի տառապանքն ու տագնապը, ուր մահն է տիրակալ, և մարդկային մեղքերի հեղձուցիչ մթնոլորտում անհետացել է երջանկությունը, ալեկոծվել խաղաղությունն ու բեկվել համերաշխությունը:

Քրիստոսի ծնունդը... Ահա: Այն, ինչ ընծա է մարդկանց աչքերում, զոհաբերություն է Աստծու ծրագրում: Առաքյալն ասում է. «Քրիստոս սիրեց մեզ և իր անձը մատնեց մեզ համար՝ որպես պատարագ և անուշահոտ զոհ» (հմմտ. Եփ. Ե. 2): Շատերը մտածում են, որ Հիսուսի զոհաբերությունն սկսվում է Նրա մատնությամբ, շարունակվում չարչարանքներով և վախճանին հասնում Գողգոթայի վրա՝ խաչելությամբ ու մահվամբ: Բայց մի՞թե զոհաբերություն չէ Անսահմանափակի ինքնասահմանափակումը մարդկային մարմնում, մի՞թե զոհաբերություն չէ ինքնաազատազրկումը Նրա, Ով ազատության իրական Կրողն ու Պարգևողն է:

Իսկ ինչո՞ւ Քրիստոս հանձն առավ այս զոհաբերումը: Արդյո՞ք Նա մարդկանց Իր ամենազորությամբ տպավորելու ցանկությամբ էր տարված, թե՞ կարիք ուներ փորձելու մարդկային զգայական կյանքի վայելքները:

Ինչո՞ւ... այս է ողջ հարցը: Քրիստոսի Ծննդյան առեղևույթ ուրախությունը հաճախ խանգարում է այս հարցին պատասխան տալ: Ուրախանում ենք այնքան, մինչև, կարծեք, մոռանում ենք ուրախության բուն պատճառը: Մինչդեռ ամենից մեծ ուրախությունն այն է, որ Նա ծնվեց մեզ

փրկելու համար: Սա հերթական ծնունդ չէ... այո՛, Նա ծնվեց մեզ փրկելու համար:

Բայց ի՞նչ է փրկությունը՝ կհարցնեն ոմանք Պիղատոսի հավակնոտությամբ: Ինչի՞ց էր պետք փրկել մարդուն: Մարդուն պետք էր փրկել նույն ինքը մարդուց՝ այն մարդուց, ով ուտում է իրեն չպատկանող ծառի պտղից, ով ամբարտավանում ու հպարտանում է իր չունեցած արժանիքներով, ով նախանձում է դիմացինի ոչ միայն առավելություններին, այլ անգամ հիվանդությանն ու չքավորությանը: Պետք էր փրկել այն մարդուց, որ Աստծուց բարիքն առնելով՝ ծառայեցնում էր սատանային: Պատկերացրեք մի ամբողջ աշխարհ՝ մեղքի ու անհնազանդության պատճառով բանտարկված տառապանքի խուցերում և Քրիստոսի փրկագործությամբ ազատված դժոխքից:

Պատկերացրեք մարդուն, ով անհայտությունից մարմին առնելով՝ ամեն անգամ տագնապով է նայում կյանքին, ով ամեն օրվա հետ քայլ առ քայլ մոտեցնում է նրան իր վախճանին: Եւ հանկարծ Քրիստոս լուր է բերում մեզ, որ մենք անհայտությունից դեպի անհայտություն չենք գնալու: Նա Իր ծնունդով խաղաղություն է պարգևում մեզ՝ կյանքի իմաստի ու նպատակի մասին Իր ուղերձով:

Նա բացում է մահվան սոսկալի սև վարագույրները, պարզում մահվանից անդին ձգվող և չսպառվող կյանքի պարգևը: Կյանքից առավել կյանքի պարգևը:

Այս է Քրիստոսի ծնունդի, Նրա իրական զոհաբերության արժեքը: Այս է անսպառ ու անտխրական ուրախության, խնդության աղբյուրը: Էմմանուել է Նրա անունը, որ նշանակում է Աստված մեզ հետ է: Աստված մեզ հետ է, և ի՞նչ կա առավել հուսադրող, քան այս հավատքը:

Սիրելի՛ քույրեր և եղբայրներ, այո՛, Աստված մեզ հետ է: Սուրբ Ծննդյան այս տոնակատարությունը ևս մեկ առիթ է, որ մենք՝ մարդիկս, ևս լինենք Աստծու հետ: Աստված բա-

ցահայտեց մեզ հետ լինելու Իր կամքը՝ Իր զոհաբերությամբ, Իր կամավոր ազատագրկումով, Իր խոնարհումով, Իր Խաչի տառապալից ճանապարհով:

Ո՛չ, Նա մեզնից զոհեր չի պահանջում Իր համար: Նա ասում է՝ «Ողորմություն եմ կամենում, ոչ թե՝ զոհ»: Նա ասում է. «Չեմ ուզում առնել ձեր ողջակեզների հոտը, ուզում եմ տեսնել ձեր զղջման արցունքը, ձեր մաքրված հոգին, կարիքավորների համար ցավացող ձեր սիրտը, հալածվածներին աջակցող ձեր ոգին, սրբությունների հանդեպ ձեր նախանձախնդրությունը»: Ուրեմն՝ Սուրբ Ծննդյան տոնի մեր խորհրդածության առանցքը դարձնենք Քրիստոսի զոհաբերության խորհուրդը, Նրա կամավոր աննման հանձնառությունը:

Ուրախանանք, հոգո՛վ ուրախանանք, որ այնչափ թանկ ու կարևոր ենք Աստծու համար, որ Նա եկավ, դարձավ մեզ նման: Ուրախ լինենք, որ բացահայտել ենք կյանքի իմաստն ու նպատակը: Եւ ուրախ լինենք, որ գտել ենք երջանկության գաղտնիքը:

Սուրբ Ծնունդով բացվող այս Նոր տարին դիմավորենք հաշտության հոգով, հրաժարվենք թշնամանքից ու հակառակությունից: Քրիստոսի ծնունդով բացվող հոգիներում տեղ չի մնում մրցակցության ու նախանձի համար: Կյանքն ապրենք որպես պարգև ու զոհ՝ ընծայված Աստծուն: Վերադարձնենք Աստծուն այն, ինչ պատկանում է Նրան և աղոթենք. «Ո՛վ Աստուած, զքոյս ի քոյոց քեզ մատուցանեմք. ամէն»:

Քրիստոս ծնաւ և յայտնեցաւ,
Զեզ և մեզ մեծ աւետիս:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ԼՈՒՅՍԸ ԿՅԱՆՔԻ

(ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՃՐԱԳԱԼՈՒՅՑԻ ՊԱՏԱՐԱԳԻՆ)

Ս. Գայանե վանք
20 ապրիլ 2019 թ.

«Սակաւ և ցաւագին են կեանք մեր,
և ոչ գոյ բժշկութիւն ի վախճանի մարդոյ.
և չերևեցաւ որ դարձաւ ի դժոխոց»
(Իմաստ. Բ. 1):
«Այսօր խաւարն հալածեցաւ անգիտութեան և
յարուցեալն Քրիստոս ծագեաց մեզ լոյս գիտութեան»:
(Շարակնոց)

Սիրելի՛ քույրեր և եղբայրներ,

Ավագ Շաբաթվա խորհրդաշատ այս օրերին մեր մտորումներն ու զգացումները կապված են մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի տնօրինական կյանքի վերջին՝ չափազանց կարևոր և ամենքիս համար ճակատագրական իրադարձությունների հետ:

Վերապրեցինք անչափ դառն իրադարձությունները, որ Մարդ դարձած Աստված կրեց նույն մարդկանցից: Վերստին հիշեցինք, թե ինչպես Նրա ձեռնասուն աշակերտներից մեկը՝ Իսկարիովտացի Հուդան, դրամի դիմաց մատնեց իր Վարդապետին: Մեր աչքերի առջև անցան պատկերները ժամանակի իշխանավորների կողմից Քրիստոսի նկատմամբ իրականացված հետապնդումների, որոնք ուղեկցվեցին խարդավանքներով, զրպարտություններով և կազմակերպված՝ կեղծ ու անօրինական դատավարությամբ:

Այդ օրերի քահանայապետը՝ Կայիափան, արդեն ձևակերպել էր Քրիստոսի նկատմամբ հրեական վերնախավի քա-

դաքական դատավճիռը. «...ճիշտ կլինի,– ասում էր նա,– որ ժողովրդի համար մեկը մեռնի» (հմմտ. Հովհ. ԺԲ.):

Քրիստոսի աճող ժողովրդականության և քարոզչության դիմագրավման միակ ճամփան այս էր մնացել քահանայապետի համար:

Ղուկաս ավետարանիչը պատմում է, թե անգամ սպասավորներն ու պահակներն էին ծաղրում Նրան, հարվածում, փակում էին դեմքը, տանջանքի ենթարկում և ապա ասում. «...դե մարգարեացիր, գուշակիր, թե ո՞վ հարվածեց քեզ» (հմմտ. Ղուկ. ԻԲ. 63-65):

Ամենքին թվում էր, թե անարգելով Քրիստոսին, Աստծուն ծառայություն են մատուցում (հմմտ. Ղուկ. ԻԲ.):

Վերջապես հասնում է ողբերգական իրադարձությունների վախճանը: Անլուր տառապանքների ու տանջանքների ենթարկվելուց հետո Քրիստոս խաչվում է, մահանում և թաղվում: Մարդ, ում հետ հույսեր էին կապել աշակերտները, այլևս չկա՝ մահացել է, վերջացել, անէացել, փոշիացել: Աշակերտները և Նրան հավատացողները թևաթափ են, հուսահատ ու մոլորված:

Սա է կյանքը մարդու, նրա հոգեվիճակը, վարքագիծը մինչ այն պահը, քանի դեռ նա տեղյակ չէ Քրիստոսի Հարության մասին: Ընկճված և անհույս է մարդը, երբ չի ճանաչել Հարության խորհուրդը, չի ըմբռնել այն ճշմարտությունը, թե Քրիստոսի Հարությամբ ջնջվեցին կյանքի սահմանները, և այն դարձավ անվերջանալի ու անսահման, հավիտենական մի իրականություն:

Այսօր՝ Հարության տոնին, նշում ենք կյանքի հավերժության տոնը:

Մեր առջև երկու պատկեր է, երկու հոգեվիճակ, երկու աշխարհայացք: Մենք տեսնում ենք մարդուն՝ Քրիստոսի Հարությունից առաջ, առանց Նրա Հարության հավատքի,

ապա նաև Քրիստոսի Հարությունից հետո, Նրա Հարությամբ լուսավորված:

Մենք տեսնում ենք մարդուն, ով կորցրել է հույսն ու կյանքի նպատակը, խարխափում է անորոշության մեջ, երերում, ափեափ զարկվում ու հառաչում. «Ի՜նչ կարճ ու դառն է մեր կյանքը, ի՜նչ անճար ենք մենք մահվան դիմաց, չկա ու չկա մեկը, որ մահվանից հետո վերադառնա» (Հմմտ. Իմաստ. Բ. 1):

Մյուս կողմից՝ մեր առջև մարդն է, ով ապրել ու ապրում է Քրիստոսի Հարության ճշմարտությունը: Որոշ է նրա նպատակը, անընկճելի՝ նրա ոգին, բազմաթիվ անկումներից հետո նա գիտե վեր կենալ, փորձությունները նրա համար փորձանքներ չեն, այլ՝ հնարավորություններ, խավարը չի մթագնում այդ մարդու հոգին, այլ ընդամենը խթանում է ավելի ու ավելի շուտ հասնել լույսին:

Սա Հարությանը հավատացող, դրանով ապրող մարդն է, որ օրհներգում է. «Այսօր անգիտության խավարը հալածվեց, և Հարուցյալ Քրիստոս մեզ գիտության լույսը պարգևեց» (Շարակնոց):

Այո՛, մենք լույսի պարգևը ստացանք՝ ճանաչելու մեր ինքնությունը, ըմբռնելու մեր կյանքի նպատակը: Դատապարտումը, նվաստացումը, չարչարանքները, զրկանքները ոչինչ են համեմատ այն հոգեվիճակի, երբ չգիտես, թե ինչու ես ապրում, երբ անպատասխան է մնում այն հարցը, թե որտեղից ես եկել և ուր ես գնում:

Սիրելի՛ քույրեր և եղբայրներ, շատերն ասում են, որ աշխարհի մեծագույն սպառնալիքը տնտեսական ճգնաժամն է, ուրիշներ՝ թե էկոլոգիական մարտահրավերները, այլոք կարծում են, որ մարդկային իրավունքների ու ազատությունների դեմ կատարվող ոտնձգությունները: Վարկածները շատ են, վտանգները՝ բազմաթիվ:

Տիրոջ Հարության ճշմարտությունը, սակայն, տեղ չի թողնում կասկածի, որ մարդկության և աշխարհի մեծագույն ճգնաժամը նպատակի կորուստն է, երբ մարդ չգիտի՝ ինչո՞ւ է ապրում կամ եթե անգամ մտածում է, որ գրել է երկրի մեջ, ապա դա այնքան հեռու է իրական նպատակից՝ հավիտենական կյանքի նպատակից, որքան գետնաքարշ ավազաբլուրը՝ երկնամերձ լեռից:

Քրիստոսի Հարությունն ամեն ինչ իր տեղն է դնում: Հարությունը մարդկանց հայացքները բարձրացնում է երկրից, հողից, գետնից, ուղղում է դեպի երկինք, վեր ու ավելի վեր: Հարության լույսի ներքո ապրողը չի կարող կլանվել երկրավոր նպատակներից. հարստությունը նրա համար այլոց ծառայելու միջոց է, փառքը և ճանաչումը՝ առաքինի գործերի բնական արդյունք, գեղեցկությունը՝ Աստծու արարչական հանճարի արտահայտություն: Հարությանը հավատացողը, նրանով ապրողը երբեք չի շտապում, նրան երբեք չեն կրծում ձախողված լինելու կասկածները: Նա գիտի, որ Աստված հաջողությունը արդեն տվել է իրեն, երբ ծնվել է, երբ կյանքի պարգև ստացել, ճանաչել Նրան ու Նրա Հարությունը:

Քրիստոսի հարությամբ փրկություն եղավ մեզ համար: Հեռու մնալ Քրիստոսի հարության ճշմարտությունից՝ կնշանակի, ինչպես բանաստեղծը կասեր, խարխուլ մակույկով հանձնվել ծովին: Ընդունել Հարությունը որպես ճշմարտություն՝ կնշանակի խարխափել կյանքի աննպատակության և անհուսության լաբիրինթոսում:

Եթե չբացենք մեր հոգու առագաստները Հարության ճշմարտության Մեծ Նպատակի առջև, ստիպված կլինենք մեր անհուսությունը խեղդել երկրավոր զբաղումների մեջ: Այսպես են մարդիկ դառնում խաղամոլ, գինեմոլ ու թմրամոլ և այս պատճառով դիմում անձնասպանության:

Երբ երկիրն է քո հոգու միակ հանգրվանը, գվարճանքները, հաճույքը կամ մահն են դառնում քո մխիթարությունները:

Արդ, հեռո՛ւ վանենք մեզանից ամեն թերահավատություն, ամուր ու վառ պահենք Տիրոջ Հարության հանդեպ հավատը: Հավատքով է կյանքը չսպառվող ու չվերջացող մի իրականություն: Տիրոջ Հարության հավատքով է կյանքը պարգև ու ոչ թե՝ պատիժ:

Թող Հարուցյալ Տերն իր գիտության լույսը տարածի հայ օջախներում, բոլոր սրտերում ու հոգիներում, ամենքիս մեջ, որ ճանաչենք Կյանքի նպատակը, ապրենք հույսի մեջ, ապրենք փրկության հասնելու և անսպառ կյանքի պարգևը ժառանգելու համար:

Այս հավատով և ուրախությամբ ենք վերստին կարդում Տիրոջ հարության ավետիսը և հրեշտակներին ձայնակից օրհնաբանում.

Քրիստոս յարեաւ ի մեռելոց
Օրհնեալ է Յարութիւնը Քրիստոսի:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Խնդրեցէք՝ և տացի՛ ձեզ, հայցեցէք՝ և գտջի՛ք, բախեցէք՝ և բացցի՛ ձեզ 5

Երկու խոսք 7
Ճշմարիտ ճանապարհ առ Աստված *(անդրանիկ քարոզ)* 11
Հրավեր փրկության 17
Քրիստոսի Ծնունդը *(Սուրբ Ծննդյան ճրագալույցի առիթով)* 21
Փրկության սպասումով *(Տյառնընդառաջի տոնի առիթով)* 25
Տիրամոր ժառանգորդներ *(Ավետման տոնի առիթով)* 29
Անմահ «տեսիլք» 33
Փրկության բաղձալի ուղին *(Տյառնընդառաջի տոնի առիթով)* 37
Քրիստոսի Ծննդյան հայելու առջև *(Սուրբ Ծննդյան ճրագալույցի առիթով)* 41
Արդարոցն՝ կյանք հավիտենական 46
Ուխտ հիշատակի *(Մեծ Եղեռնի 89-րդ տարելիցի առիթով)* 53
Ճառայության իշխանություն *(եպիսկոպոսական առաջին պատարագի առիթով)* 59
Առաքելաշավիղ ծառայակիցներ *(քահանայական ձեռնադրության առիթով)* 65
Խաչի ճանապարհ *(Բաքվի ջարդերի հիշատակի առիթով)* 68
Ճշմարտության հետևորդներ 72
Կյանքը՝ աղոթք առ Աստված *(Դատավորի կիրակիի օրվա առիթով)* 76
Գործը՝ կյանքի չափորոշիչ 80
Կենաց տնտեսներ *(Տնտեսի կիրակիի օրվա առիթով)* 84
Դատապարտությունից փրկություն՝ խաչով *(Խաչվերացի տոնի առիթով)* 93
Խաղաղության հաղթանակը *(Ճաղկապարզի տոնի առիթով)* 98
Տառապանքից՝ կյանքի դաս *(ապրիլի 24-ի առիթով)* 102
Անապականության պարգև 107
Դեպի նավահանգիստը հավիտենության *(Սուրբ Հարության ճրագալույցի առիթով)* 111

Ի հիշատակ նահատակների *(Հայոց ցեղասպանության օրվա առիթով)* 115
Անկոտրում հայ ժողովուրդ *(Հայրենական մեծ պատերազմի և Շուշիի ազատագրության կոհերի հոգեհանգստյան արարողության առիթով)* 117
Ճառա Քրիստոսի *(Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի գահակալության 12 և ծննդյան 60-ամյա հոբելյանների առիթով)* 119
Վերադարձ դեպի տուն *(Անառակի կիրակիի օրվա առիթով)* 123
Տոն Հաղթության *(Սուրբ Հարության ճրագալույցի առիթով)* 127
Խաչակրություն՝ ի հաղթական հարություն *(Խաչվերացի տոնի առիթով)* 131
Անփոփոխ բարեկամը 134
Ընծայված կյանք *(Երկրապահի օրվա առիթով)* 137
Հատուցում *(Գալատյան կիրակիի օրվա առիթով)* 141
Հնազանդ և չարչարակից՝ Խաչյալին *(Խաչվերացի տոնի առիթով)* 145
Կյանք՝ Աստծու հետ *(Սուրբ Ծննդյան ճրագալույցի առիթով)* 149
Կյանքի ու մահվան ոգորում *(Խավարման կարգի առիթով)* 152
Վերադարձ դեպի դրախտ *(Բուն Բարեկենդանի օրվա առիթով)* 157
Քրիստոնյայի ինքնության դրոշմանշանը *(Խաչվերացի տոնի առիթով)* 162
Հավատով միավորյալ ի Քրիստոս 167
Վամ, թե՞ թերահավատություն 172
Խոնարհությունը՝ իբրև մեծության միակ գրավական 178
Հայրենյաց պաշտպաններ *(5-րդ մոտոհրաձգային կամավորական բրիգադի կազմավորման 25-րդ տարեդարձի առիթով)* 183
Սուրբ Ծնունդը՝ իբրև սիրո դրսևորում *(Սուրբ Ծննդյան ճրագալույցի առիթով)* 186
Կյանքից առավել ... *(Սուրբ Ծննդյան Ճրագալույցի առիթով)* 190
Հարությունը՝ լույսը կյանքի *(Սուրբ Հարության Ճրագալույցի պատարագին)* 194
Բովանդակություն 198

ԱՐՇԱԿ ԵՊՍ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՈՐՈՆՈՒՄՆԵՐ

Հրատարակչության տնօրեն՝	Տ. Արարատ քահանա Պողոսյան
Հրատարակչական խորհրդի անդամներ՝	Տ. Մկրտիչ եպս. Պռոշյան, Տ. Ռուբեն վրդ. Զարգարյան, Տ. Ասողիկ աբդ.Կարապետյան, Տ. Արարատ քհն. Պողոսյան, Տ. Գաբրիել քհն. Վարդանյան, Գևորգ Տեր-Վարդանյան, Կարեն Մաթևոսյան
Նյութերը հավաքագրեց՝	Տ. Գաբրիել քհն. Վարդանյան
Լեզվաոճական խմբագիր՝	Նանա Գրիգորյան
Սրբագրիչներ՝	Զարուհի Անտոնյան, Հասմիկ Սրապիոնյան
Էջադրումը՝	Տ. Ղևոնդ ավ. քհն. Մայիլյանի

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
Ս. ԷՋՄԻԱԾԻՆ - 2019

ISBN 978-9939-59-239-8

Տ. ԱՐՇԱԿ ԵՊՍ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանը (ավազանի անունով՝ Սամվել) ծնվել է 1973 թ. օգոստոսի 5-ին Արմավիրի մարզի Ոսկեհատ գյուղում:

1980–1990 թթ. ուսանել է տեղի միջնակարգ դպրոցում:

1990–96 թթ. ուսանել է Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

1996 թ. մայիսի 19-ին ձեռնադրվել է սարկավագ:

1997 թ. պաշտպանել է ավարտաճառ «Հնդկահայ գաղութը և Մայր Աթոռի նվիրակությունը Հնդկաստանում» թեմայով:

1997 թ. դեկտեմբերի 14-ին ձեռադրվել է կուսակրոն քահանա:

1998 թ. նշանակվել է Մայր Աթոռի պարետ:

1999 թ. մարտին ծառայության է կոչվել Մայր Աթոռի «Էջմիածին» պաշտոնական ամսագրի խմբագրությունում՝ որպես գլխավոր խմբագրի պաշտոնակատար:

2000 թ. հունվարին նշանակվել է նորաստեղծ «Մայր Աթոռ-Թեմեր» գրասենյակի վարիչ-տնօրեն:

2001 թ. առ այսօր իրականացնում է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի դիվանապետի պարտականությունները:

2001 թ. պաշտպանել է վարդապետական թեզ՝ «Նվիրակությունը Հայոց Եկեղեցում» թեմայով և ստացել վարդապետական աստիճան:

2004 թ. սեպտեմբերի 26-ին ստացել է եպիսկոպոսական օծում:

2003–07 թթ. ուսանել և ավարտել է ԵՊՀ իրավաբանության ֆակուլտետը՝ ստանալով իրավաբանի որակավորում՝ «Իրավագիտություն» մասնագիտությամբ:

2004 թ.-ից Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ է:

Հեղինակ է մի շարք հոդվածների և 2 գրքի՝ «Նվիրակությունը Հայոց Եկեղեցում» և «Ս. Էջմիածինը և Ս. Գրիգոր Լուսավորիչը հայ մատենագրության մեջ»:

Պետական կառույցների և գիտակրթական հաստատությունների կողմից արժանացել է մի շարք շքանշանների և պատվավոր կոչումների: